

Նոր Տարուան Բացառիկ

ASBAREZ ARMENIAN DAILY NEWSPAPER

ԱՄԿԱՐԻԿ

Օրաթերթ

ԵՐԵՎԱՆԻ, ԳԵՆԵՏԵՄԲԵՐ 31, 2019, 111ԻՐԻ ՏԱՐԻ, ԹԻԻ 16,129

TUESDAY, DECEMBER 31, 2019, VOLUME 111, NO. 16,129

\$1





**Ամանորի, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան
տօներուն առիթով,
կը շնորհաւորենք հայ ժողովուրդի բոլոր զաւակները,
ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի**

**Կը մաղթենք, որ 2020ը ըլլայ խաղաղութեամբ
եւ համերաշխութեամբ լի տարի մը,
մեր հաւաքական եւ ընտանեկան յարկերը ջերմանան
Ս. Ծննդեան խորհուրդով,
մեր հայրենիքը ապրի նորանոր բարգաւաճում,
ու ազգային պահանջատիրական մեր երթը
արաձանագրէ նոր նուաճումներ**

**ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ
ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ**

**Մուշեղ Արք. Մարտիրոսեան
Առաջնորդ**

**Կրօնական Ժողով եւ Ազգային Վարչութիւն
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի
Դեկտեմբեր 2019**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

2020 ԵՆ ԱՆԿԷ ԱՆՈՒՄ

Տարի մը եւս հասցուցինք աւարտին եւ սովորոյթի կամ աւանդութեան կարգով՝ պէտք է ըսել, որ արդէն պահն է ընթացիկ տարուան մէջ մեր կատարած գործին, տարած աշխատանքին եւ արձանագրած ձեռքբերումներուն ընդհանուր գնահատումի լոյսին տակ՝ ուղեգծելու մեր ընկիւնը 2020ին, եւ, ինչու չէ, անկէ անդին:

Հայ ժողովուրդի եւ յատկապէս Ամերիկայի մեր համայնքի տարեգրութեան մէջ, 2019ը իր իւրայատուկ տեղը պիտի ունենայ անկասկած՝ իր բազմազան գործունէութեան նշանակալի իրագործումներու տարի՝ Հայոց Ցեղասպանութեան միջազգային ցանցի մասին եւ ընդհանրապէս Հայ Դատի պայքարի ուղիին վրայ արձանագրուած զոյգ յաղթանակներով: Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու տան կողմէ՝ ձայներու գերակշիռ մեծամասնութեամբ, ապա Մերակոյտին կողմէ՝ միաձայնութեամբ Հայոց Ցեղասպանութեան պատմական իրողութիւնը ամրագրող թիւ 296 եւ թիւ 150 բանաձեւերուն՝ յաջորդաբար ընդունուած քաղաքական մեծակշիռ յաղթանակներ են անտարակոյս: Այս յաղթանակները արգասիքն են «յարատեւ պայքար... ահա թէ ուր է մեր փրկութեան բանալին» Քրիստափորի պատգամով տոգորուած սերունդներու անդու աշխատանքին: Տարիներու, այլեւ տասնամեակներու բովով ձուլուած քաղաքական կամքի եւ կազմակերպական ամրութեան ու կորովի արդիւնքով ձեռք բերուած յաղթանակներ են ասոնք, որոնց արժանաւոր կերտիչի վարկանիշը ամէնէն առաջ կ'երթայ Ամերիկայի Հայ Դատի յանձնախումբներու համայն ընտանիքին:

Հայ Դատի հետապնդման նամակը վրայ քաղաքական ինքնուրոյն նուաճումի հպարտալի այս պահը հաւաքաբար կ'ապրինք այսօր, միաժամանակ սակայն, զգաստ ըլլալով այս յաղթանակի գինովութեամբ տարուելու փորձութեան: Բնաւ պէտք է տարակուսիլ, որ ուրացման վարձագիծը շարունակող թրքական իշխանութիւններուն հակազդեցութիւնը պիտի գայ ուշ կամ կանուխ: Պիտի գայ թափու կամ բացայայտ: Պիտի գայ Արցախի վրայ կամ Հայաստանի, պիտի գայ Եւրոպայի մէջ կամ այլուր, պիտի գայ քաղաքական տարբեր շրջաններու մէջ, պիտի գայ միջազգային զանազան հարթակներու վրայ: Բնաւ պէտք է ապրիլ խաբկանքը որ այսուհետեւ անլի դիւրին պիտի ըլլայ:

Քաղաքական այս իրատեսութեամբ պէտք է դիմաւորել մեր նոր տարին, ինչ որ անպայմանօրէն կ'ենթադրէ հաւաքական եւ կազմակերպական ուժերու յանդիման լարում, յանդիման լրջախոհութիւն ու զգաստութիւն՝ ոչ միայն դեմ դնելու համար թրքական իշխանութիւններէն

զայի՛ հակազդեցութեանց, այլեւ Հայ Դատի քաղաքական գործունէութեան ու պայքարի նոր ասպարէզներ ստեղծելու մտադրումով: Պահն է որ Հայոց Ցեղասպանութեան ցանցումն անդին, մեր ժողովուրդի ազգային իրաւունքներու արդարահատուցման տեսլականը քաղաքական-դիւանագիտական եւ իրաւական գործնական հաստատ փայլերով յառաջ տարուի: Ինչ խօսք, որ ինչպէս Հայոց Ցեղասպանութեան միջազգային ցանցի մասին պարագային, մեր ժողովուրդի իրաւունքներու արդարահատուցման տեսլականի իրագործումը նոյնպէս՝ համապարփակ ծրագրումի, ռազմավարութեան մշակումի եւ երկար շունչով աշխատանքի կը կարօտի:

Միւս կողմէ, մտացոլութեան պէտք է մատնել մեր համայնքին եւ այս շրջանի Հայ Դատի յանձնախումբներուն նիգերով իրագործուած Հայաստան-Քալիֆորնիա տնտեսական-մշակութային համագործակցութեան համաձայնագիրը: Մեր բոլորին յանձնառութիւնն է՝ այս համաձայնագիրը վերածել կենսագործ եւ մեր հայրենիքին համար արդիւնաւէտ փաստաթուղթի:

Անշուշտ, Արեւմտեան Ամերիկայի այս շրջանը շատ անլիւն ունի ընկիւն եւ ըսելիք Սփիւռք-Հայաստան յարաբերութիւններու անլիւն ընդարձակ շրջանի մէջ: Հայաստանի վերակախացումէն ետք, 2018ի մայիսեան ժողովրդային շարժումով հայրենի հայրենի ազատութեան կենսագործման ընթացքը իր հունին մէջ պահելու, յեղափոխութեան բարձրացումը արժէքները իրականացնելու յանձնառութիւնը նաեւ մեր բոլորին ուսերուն վրայ է: Մեզի՛ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի տեսլականով ապրող իւրաքանչիւրիս համար, հայրենի ժողովուրդի ազատութեան տնայնակը քաղաքական եւ գաղափարական բացարձակ արժէք է, իսկ զայն հայրենիքի մէջ կենսունակօրէն արմատաւորելու եւ դէպի անցնելու ետ նահանջի ուղիները վերջնականապէս փակելու մեր քաղաքականօրէն յանձնառու կեցումովը սկզբունքային առաջնահերթութիւն է եւ ենթակայ չէ որեւէ քաղաքական սակարկութիւններու:

Նոյն տրամաբանութեան հետեւողութեամբ ալ նախանձանիւնդիր ենք որ հայրենի ներկայ իշխանութիւնները չընկրկին եւ ժողովրդային շարժումով առաջադրուած համակարգային խորքային բարեկարգումները բոլոր ոլորտներուն մէջ իրականացուին առանց յապաղումի:

Ահա՛ այսպիսի յանձնառութիւններով պէտք է սկսիլ մեր նոր տարին՝ գործելով մի՛շտ մեր ձեռքը պահելով ժողովուրդի բազմաբարկին վրայ, թէ՛ Սփիւռքի եւ յատկապէս հայրենիքի մէջ:



ՀՅԴ

Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէն

Կը Շնորհաւորէ Համայն Հայութեան ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ

Նորանոր Յաղթանակներ Մաղթելով Հայ Դատի Հետապնդման Ճանապարհին

GROUP SERVICES

**BUSINESS & TAX MANAGEMENT
OVER FORTY YEARS OF EXPERIENCE**



Կարէն Բէնեասեան,

**եւ իր Հաշուապահական
գրասենեակի անձնակազմը՝
Անահիտ Չաքարեան,
եւ Գրեթա Քովաքեան**

***Կը շնորհաւորեն
համայն հայութեան
Նոր Տարին եւ Սուրբ Ծնունդը***

**805 E. BROADWAY SUITE #D
Tel: (818) 247-2400**

**GLENDALE, CA 91205
Fax: (818) 247-0216**

ՍԱՆ ՖԵՐՆԱՆՏՕ ՀՈՎԻՏ

ՀՅԴ «Ռուստոմ» Կոմիտեուրին

ՀԵԴ «Սարդարապատ» Ուխտ

ՀՅԴ «Սիմոն Վրացեան»

Պատանեկան Միութիւն

ՀՅԴ «Արաբօ» Պատանեկան Միութիւն

ՀՕՄԻ «Անահիտ» Մասնաճիւղ

ՀՄԸՄԻ «Մասիս» Մասնաճիւղ

Համազգայինի «Պարոյր Սեւակ» Մասնաճիւղ

Էնսիկլոյի Հայ-Ամերիկեան Տարեցներու Միութիւն

Լաւագոյն

Մաղթանքներով

Կը Շնորհաւորեն

Շրջանի Հայութեան

Նոր Տարին

Եւ Ս. Ծնունդը

Անաչառութեան եւ ներքին Դիւանագիտութեան Բացը

ՎԱՀԱՆ ԶԱՆՈՅԵԱՆ



պէտք է փնտռել:

Գաղտնիք չէ որ Հայ ժողովուրդը ընդհանրապէս չէ կարողացած քաղաքական միասնակամութիւն ցուցաբերել: Տխուր իրողութիւն է, որ անցած դարուն, իբրեւ ազգ, մեզ միաւորող գլխաւոր եւ մնացորդ ազգակր եղած է Յեղասպանութիւնը: Առկէ դուրս, հազուադէպ եւ կարճատեւ եղած են պատմական այն ժամանակամիջոցները, երբ Հայ ժողովուրդը կրցած է միանալ, եւ նոյնիսկ այդ բացառութիւնները պատահած են, երբ մենք մեզ գտած ենք ձգնաժամային ահաւոր սպառնալիքներու առջեւ:

Մեզ բաժնող տարբերութիւնները այլազան են - քաղաքական, գաղափարական, արժեհամակարգային, կուսակցական, յարանուանական, մտածելակերպի, աշխարհահայեացքի, նոյնիսկ լեզուական, մշակութային եւ կրօնական: Նկատի առնելով մեր պատմութիւնը՝ այս տարբերութիւնները բնական են. աւելին՝ իրենց ծնունդն ու ժամանակի ընթացքին ամրապնդումը անխուսափելի էր: Աշխարհափիւռ Հայ ժողովուրդը պարզապէս չէր կրնար հիմնական տարբերութիւններ չունենալ:

Բնական է նաեւ որ մեր տարբերութիւնները ստեղծէին նոյնքան այլազան տարակարծութիւններ եւ քաղաքական կողմնորոշումներ:

Սակայն իրենց առաջացուցած պառակտումները ո՛չ բնական են, ո՛չ ալ անխուսափելի: Մեր ներքին քաղաքական հարգապատկութիւններուն մէջ դիւանագիտական նրբութեան պակասը մեծ դեր խաղացած է այս պառակտումները խորացնելու մէջ: Սակ քաղաքական միտքը միայն կրնայ տարբերութիւնները անպայման տեսնել իբրեւ քաղաքական բաժանումներ: Եւ ծայրահեղ քաղաքական նեղմտութիւնն է, որ կարելի կը դարձնէ այդ բաժանումներուն հիման վրայ՝ երկարատեւ թշնամական դիրքեր որդեգրել նոյն ձևատարակներուն միջոցով: Երկրորդ տխուր իրողութիւնը այն է, որ շատ յաճախ այդպիսի նեղմտութիւն ցուցաբերած ենք:

Այս բոլորը նորութիւն չեն: Սակայն կարելոր է զանոնք վերյիշել պարզապէս անոր համար, որ տակաւին կան եւ կը գործեն: Ախտահանաչումը բազմիցս եղած է, բայց «Հիւանդ»ը մինչեւ հիմա ցանկութիւն չէ ունեցած ինքզինք բուժելու: Նորութիւնը Հայաստանի անկախ պետութիւնն է: Մեր պետականութիւնը կ'ենթադրէ նոր իրավիճակ եւ նոր խոստումներ, եւ բոլորիս կը պարտադրէ որդեգրել նոր մտածելակերպ: Ժամանակն է գիտակցինք, որ տարակարծութիւնները, ինքստինքեան, չեն առաջնորդեր պառակտումներու: Մենք թոյլատրած ենք, որ մեր տարբերութիւնները ստեղծեն պառակտումներ եւ թշնամութիւններ: Մեր ազգային դժբախտութիւնը մասամբ այդտե՛ղ

թացքին: Կը մոռնանք, որ թէեւ Հայաստանը ունի աշխարհագրական սահմաններ, որոնց պաշտպանութիւնը գերագոյն ազգային նպատակ է, Հայ ժողովուրդը եւ իր Հնարաւորութիւնները չունին աշխարհագրական սահմաններ: Կը մոռնանք, որ ապագայի պայծառ տեսիլքի մը շուրջ միաւորուիլը շատ աւելի արդիւնաւէտ է, քան հասարակաց ողբերգութեան մը շուրջ: Կը մոռնանք, որ Հին կարծրատիպերը ջարդուփչուր ընելու եւ նոր միասնակամութիւն մը կերտելու համար պէտք ունինք միայն ու միայն քաղաքական կամքի եւ տեսիլքի:

Կը մոռնանք, որ դարեր շարունակ Հայ ժողովուրդին թշնամիները մեր պառակտումներն ու ներքին թշնամութիւնները չարաշահած են, մինչ մենք բաւարար դասեր չենք քաղած այդ երեւոյթէն: Եւ կը մոռնանք, որ ռազմական մահացու սպառնալիքներու առջեւ ենք, ամէն օր, թէ՛ արեւելքէն եւ թէ՛ արեւմուտքէն: Այո՛, այս բոլորը մոռցած՝ նորէն կ'ընտրենք թշնամանալ, պարզապէս անոր համար, որ ունինք տարբեր մեկնաբանութիւններ անցած 18 ամիսներու անցուդարձերուն մասին: Իսկապէս հրաշք է, որ տակաւին կը գոյատեւենք իբրեւ ազգ... Ինքզինքս (եւ քանի մը ուրիշներ) կրկնելու գինով շեշտեմ, որ ունէ քաղաքական գործիչի գերագոյն առաքելութիւնը այսօր ազգը միաւորել է: Վերջերս, «Ապագային» բառը փոխադարձ ցեխարձակումներու նախասիրած փամփուշտը դարձաւ: Սակայն կ'արժէ հարց տալ, թէ ո՛րն է իսկական ապագային կեցուածքը: «Ապագային»ը կարելի է սահմանել բազմաթիւ ենթատեքստերով - ազգային շահերու մահացու դավաճանութիւնէն սկսեալ մինչեւ որոշ աւանդական արժէքներու խախտումը կարելի է ապագային նկատել: Սակայն, մեր այսօրուայ քաղաքական իրավիճակին պատշաճ «ապագայնութիւն»ը կարելի է այսպէս սահմանել - որեւէ յայտարարութիւն կամ արարք, ցանկացած քաղաքական խմբակցութեան կողմէ, ըլլայ իշխանութեան թէ ընդդիմութեան մէջ, որ կը ստեղծէ նոր պառակտումներ եւ չի սատարեր ազգային միաւորումին, Ապագային է: Ու վե՛րջ:

Եթէ բոլոր քաղաքական հրապարակախօսները կրնան ընդունիլ այս սահմանումը, թերեւս վերջապէս կրնանք ստեղծել քաղաքական քննարկումներու նոր հարթակ մը, որ համահայկական խոստովը կ'ունենայ յստակ նպատակային բնոյթ, փոխանակ ըլլալու լոկ փոխադարձ գրգարտութիւններու շարան: Այս իրագործելը կը պահանջէ - բացի քաղաքական կամքէն եւ տեսիլքէն - ներքին հարգադրականութիւններու դիւանագիտական նրբութիւն, ճկունութիւն եւ զգայնութիւն: Կը պահանջէ, որ ունէ խօսնակի յայտարարութիւններուն վախճանական նպատակը ըլլայ հակառակորդը համոզել ու ներգրաւել, ո՛չ թէ գայն մրտել ու մղել պաշտպանողական կամ հա-

կահարձակողական դիրքերու: Հասցէագրուած քննադատութիւնները արդիւնաւետ կրնան ըլլալ միայն, երբ լրացնեն այս պայմանը: Դժբախտաբար, այսօր, հրապարակին վրայ Հնչող ձայները, ըլլան Հայաստանի մէջ կամ Սփիւռքի, չեն գոհացներ այս պահանջը: Միայն այն ատեն, երբ այդ պահանջը բաւարարող ձայն մը ինքզինք բացայայտէ, Հայ ժողովուրդը վերջապէս կ'ունենայ իսկական քաղաքական առաջնորդ մը:

Կ'ըսուի թէ հրապարակախօսներու դիտողութիւնները եւ քննադատութիւնները անիմաստ են, եթէ հասցէագրուած չեն: Ընդհանրացումը ճիշդ չէ: Կարելի է իրավիճակ մը եւ նոյնիսկ քաղաքականութիւն մը քննադատել առանց ունէ անհատ կամ նոյնիսկ խմբակցութիւն մեղադրելու, մանաւանդ երբ խնդրոյ առարկայ իրավիճակը համակարգային է, եւ գայն հանրութեան ուշադրութեան յանձնելու կարիքը կայ:

Սակայն այսօրուայ Հայ հրապարակախօսութեան հիմնական խնդիրը այդ չէ: Մեր խնդիրը մեր ահեղ իշխանութեան, համատարած եւ, գոնէ ինձի համար անհասկանալի, միակողմանիութիւնն է: Բացառութիւններ կան, բայց քիչ են, եւ ընդհանրապէս կը մնան կրաւորական եւ համեմատաբար լուր: Անբացատրելի ձեւով՝ որեւէ հարցի, երեւոյթի կամ քաղաքական խմբակցութեան թէ՛ լաւ կողմը եւ թէ՛ վատ կողմը տեսնելու անկարողութիւն մը (կամ թերեւս դժկամութիւն մը) կը թուի տիրել: Միակողմանիութիւնը կարելի է թօթափել, եւ կարելի է ըլլալ խստապահանջ մեր անաչառութեան մէջ: Ահա փորձ մը, մի քանի դիտարկումներով:

Ճի՛շդ է, որ յեղափոխութեան դէմ աշխատող ուժերը տարբեր կան կառավարութեան համակարգին մէջ եւ համակարգէն դուրս, եւ մասնաւորաբար դատաիրաւական համակարգին մէջ, մղուած իրենց անձնական շահերը եւ կորսնցուցած իրաւասութիւնները վերաշահելու կիրքով: Ճի՛շդ է, նաեւ որ թաւշեայ յեղափոխութիւնը չարդարացուց իր «սիրոյ եւ համերաշխութեան» յեղափոխութիւն ըլլալու խոստումը, եւ դեռ շատ հեռու է այդ ըլլալէ:

Ճի՛շդ է, որ պետական մաշտաբով թալանը կը թուի վերջ գտած ըլլալ, որ անկախութենէն ի վեր առաջին լաւ լուրերէն մէկն է Հայաստանի համար:

Ճի՛շդ է նաեւ, որ իշխանութիւնը փորձի լուրջ պակաս ունի եւ, անհասկանալի պատճառներով, ինքնավստահութիւնը չունի ընդլայնելու փորձագէտներու իր շրջանակը:

Ճի՛շդ է, որ կարելոր բարելաւումներ տեղի ունեցան կարգ մը նախարարութիւններու մէջ - օրինակ առողջապահութեան եւ բնապահպանութեան նախարարութիւններուն մէջ - ինչպէս նաեւ իսկապէս տպաւորիչ եւ աննախադէպ ճանապարհներու նորագութիւններ, արագ, մաքուր, որակով:

Անաչառութեան եւ ներքին Դիւանագիտութեան Բացը

Ճի՛շդ է նաեւ, որ տակաւին լուրջ եւ արդունաւէտ տնտեսական զարգացման ծրագիր մէջտեղ չեկաւ, ո՛չ ալ մենաշնորհային համակարգը հակադրի տակ բերուեցաւ:

Ճի՛շդ է, որ այսօր, Հայաստանի մէջ, մեր հնագոյն կուսակցութիւններէն մէկը, Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, լայն ժողովրդականութիւն չի վայելեր, եւ, անցած քսան տարիներուն ընթացքին, կուսակցութեան ղեկաւար մարմինները կորսնցուցած են իրենց բարոյավարկը Հայաստանի հասարակութեան առջեւ:

Ճի՛շդ է նաեւ, որ Առաջին Հանրապետութեան հիմնադիրը Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնն է, որ 129 տարիներ եղած է Հայ ժողովուրդին շահերը հետապնդող եւ պաշտպանող գլխաւոր (եւ երբեմն միա՛կ) կուսակցութիւնը, եւ որ իր գաղափարաբանութեամբ եւ իր ընկերներուն արիւնով եղած է Հայ ժողովուրդին նուիրուած ամէնէն կարեւոր ուժերէն մէկը, եթէ ոչ ամէնէն կարեւորը:

Եւ ինչո՞ւ չէ, անցնինք քայլ մը առաջ - անտեղի եւ ցաւալի են ՀՅԴի ղեկավարին Փաշինեանը տուն ղրկելու յոխորտանքը, եւ ՀՀ վարչապետին ՀՅԴ-ն Հայաստանի մէջ «ապագայ չունի» յայտարարութիւնը, նոյնիսկ (եւ մանաւա՛հ) եթէ երկուքին ալ միտքին



մէջ արդարացուցիչ պատճառներ կային այդ արտայայտութիւնները ընալու:

Կրնանք շարունակել երկկողմանի այս դիտարկումները եւ յիշել տասնեակ ուրիշ օրինակներ: Կարելորդ չեչտելն է, որ այս երեւոյթներուն միայն մէկ կողմին վրայ կեդրոնանալը ոչ միայն

սխալ է, այլ՝ անարդիւնաւէտ: Միայն մէկ կողմը բարձրաձայնող հրապարակախօսը կը կորսնցնէ իր բարոյավարկը, եւ եթէ նոյնիսկ ունենայ արժանի գաղափարներ, անկարելի կը դառնայ զինք լուրջի առնել:

Միաւորման եւ ներքին դիւանագիտութեան եւ անաչառութեան մարտահրաւերները դիմագրաւելը բոլոր քաղաքական խմբակցութիւններուն պատասխանատուութիւնն է: Սակայն ՀՀ պետութիւնը յատուկ դեր ունի խաղալու այդ կապակցութեամբ: Կեդրոնական համախմբող եւ նախաձեռնող ուժի մը կենսական կարիքը կայ, եւ այդ կարիքը կրնայ գոհացնել միայն Հայաստանի կառավարութիւնը: Կառավարութիւնն է, որ պիտի առաջնորդէ այս յեղաշրջման գործընթացը, եւ այդ կրնայ ընել միայն իր իտէալական օրինակով:

Եթէ համաշխարհային հայութեան իրավիճակը մնայ այն, ինչ որ էր անկախ պետականութենէն առաջ - այսինքն, եթէ այն պառակտումները եւ թշնամութիւնները, որոնք դարեր շարունակ խեղդած են Հայ ժողովուրդը չթեթեւան անկախ պետականութեամբ - ալ ի՞նչն է իմաստը անկախութեան: Անկախ պետականութիւնը պէտք է ըլլայ կեդրոնական ձգողական ուժը, որուն շուրջ ի վերջոյ կը մեկտեղուի մեր բաժան-բաժան եղած ժողովուրդը: «Մէկ Ազգ» տեսլականը՝ մեր հզօրագոյն ազգային տեսլականներէն մէկը, միայն այդպիսով հնարաւարութիւն կ'ունենայ իրականանալու:

Տէր եւ Տիկ. Նշան եւ Ռուբինա Փիրումեան

Իրենց Սրբազին
Մաղթանքներով Կը Շնորհաւորեն
Չեր Նոր Տարին եւ Ս. Ծնունդը

Ինչո՞ւ Կանգուն Պահել Սփիւռքը, Կրնա՞նք Պահել Իրրել Հայկական, Ինչպէ՞ս եւ Մինչեւ Ե՞րբ

3. ՊԱՆԵԱՆ

«Երդուած եմ երբեք չլուել, երբ մարդկային արարածներ, ո՛ւր ալ ըլլան անոնք, կը կրեն տառապանք եւ ստորնացում: Պարտաւոր ենք միշտ դիրքորոշուիլ: Չէ-զոքութիւնը միշտ կը նպաստէ ճնշողին, երբե՛ք՝ զոհին: Լուս-թիւնը կը քաջալերէ հալածողը, երբե՛ք՝ հալածուողը»:

ԷԼԻ ՎԵՋԷԼ
«Նոպէլեան» մրցանակի ստաց-
ման խօսք, Օսլօ, 10/12/1986



ՍՓԻՒՌ-Ք(ՆԵՐ)Ը
ՅՈՒՇԱՊԱՏԿԵՐ Է
ՉՈՐ ՊԷՏՔ Է ՊԱՋԵԼ

Սփիւռք(ներ)ի հայկական կեն- սունակութիւնը հզօր յիշողու- թեան պահպանումն է, օտար ըլ- լալու գիտակցութիւնը: Յիշողու- թեան կորուստը ընդարմացում է, հալածուածին եւ անիրաւուա- ծին վերջնական պարտութիւնը, հալածողին եւ անիրաւուողին տրուած բարենիշ եւ յաղթանակ, երէկ, այսօր եւ վաղը:

Միշտ պէտք է յամառիլ Սփիւռք(ներ)ը իր հայկական ազ- գային հարազատ նկարագիրով պահելու համար: Այս խօսքը ինք- նագոհութեան անվաղորդայն ցանկութիւն կ'ըլլայ, եթէ առանց

ճապկումներու չխօսինք այդ պա- հելու հրամայականի բովանդա- կութեան, հեռանկարին եւ նպա- տակին մասին: Գուրսէն դիտողին համար այս ճիգը կրնայ համար- ուիլ անցեալը վերականգնելու ճիգ եւ թափահարում, ժամանակի սլաքները ետ տանելու երազանք, ֆրանսացին կ'ըսէ irredentisme, բառին թարգմանութիւնը գտայ Գուրստոն Լուսինեանի բառարա- նին մէջ՝ յետադարձութիւն:

Գասական կոչուած Սփիւռքը ակամայ ստեղծուած էր, մարդիկ պարտադրաբար հեռացած էին իրենց գիւղէն, քաղաքէն, ուր կա- յին արմատներ, պատմութիւն, կոթողներ, անմիջական շարու- նակութիւն եւ ներկայութիւն, որոնցմէ անջատուած էին: Հայ- բենալքումի հետեւանք նոր

Սփիւռքը կամաւոր հեռացում է, խզման ընտրութիւն: Հայաստա- նէն տեղի ունեցած աղէտ-արտա- գաղթին իրրել հետեւանք արտա- սահման հաստատուած Հայաս- տանի քաղաքացի հայերը կամա- ւոր գաղթականներ են եւ դասա- կան կոչուած Սփիւռքին հետ հո- գեբարոյական ու քաղաքական ո՛չ մէկ նոյնութիւն ունին, ուրեմն, բաղդատութեան եզրեր փնտոելը հայրենալքումի արդարացման ճապկում է:

Հայրենահանուած հայութիւնը արդէն հարիւր տարուան հնու- թիւն ունեցող Սփիւռք է: Ինքնա- խաբէութիւն է ըսել, որ ան ան- խառն հայ ազգային նկարագիրով պահուած է: Չի կրնար պահուիլ: Հետզհետէ փոքրացող հաւաքա- կանութիւնները այդպէս կը շա- րունակեն մտածել, նոյնիսկ երբ կը տեսնեն հեռացողները, զա- նոնք կոչեցէ՛ք ինչպէս որ կ'ու- գէք՝ ուժացողներ, այլասերողներ, օտարացողներ, միջավայրին ան- վերադարձ կերպով մերուողներ, բախտաւոր պարագային՝ ծագու- մով հայու ամպհովանիին տակ: Այնքան տարբերութիւններ կան, կամայ-ակամայ, առաւել կամ նուազ հեռացումով այն բոլոր ստորոգելիներէն, որոնք կը բնո- րոշեն իւրայատուկ ազգային նկարագիր ունեցող հաւաքակա- նութիւնները: Այս դասական Սփիւռքի մարդիկ նոյն եւ տար- բեր են, կը կարծեն նոյն ըլլալ, յաճախ զգացականութեամբ յիշե-

լով հասարակաց ծագումը որպէս ընտանեկան դեղնած լուսանկար: Իրատես պէտք է ըլլալ. բազմա- գոյն օտար երկինքներու տակ ապրող հայերը իրենց կամաւոր ընտրութեամբ կը հեռանան, կը հրաժարին իրենց արմատներէն, կամ բնական կերպով շրջապատը զիրենք կը տանի այդ ուղիով: Պարզ խօսքով, օտար աշխարհնե- րը այն ենթահողը չեն, ուր հայ ազգային կեանքը կրնայ շարու- նակուիլ: Այդ ճիգը կը նմանի զարդի համար մեր տուններուն մէջ պահուող տարաշխարհիկ (exotique) բոյսի: Կրօնական հա- մայնքները եւ կամաւոր գաղթա- կանները ենթակայ են օտարու- մի (alie'nation), այդ օտարման ընթացքի արագութիւնը եւ յան- գումը պարտադրաբար նոյնը պի- տի չըլլան, մէկ շրջանէ միւսը տեսնուող տարբերութիւնները կը բացատրուին ժամանակով:

Հայկական Սփիւռքը, տարած- ուած հինգ ցամաքամասերու վրայ, աշխարհներ՝ որոնց անուն- ները անգամ չէին լսած նախորդ սերունդները, ինչ ալ ըլլայ անոր ներազգային-ներհամայնքային մեզ յուզող-յուսադրող կազմա- կերպութիւնը, զոր կը բնորոշենք հայապահպանութեամբ, ցրուած զանգուած է, մաս կը կազմէ բնակած երկրի զանգուածներուն, նոյնիսկ երբ կը կարծէ, թէ պատ- նէներ ստեղծած է: Ժամանակա- կից ընկերութիւնը, իր ճարտա- րագիտական հաղորդակցական

Կը շնորհաւորենք
ձեր Նոր Տարին
եւ Սուրբ Ծնունդը,
մաղթելով, որ
իրականանան ձեր
բոլոր անչնական,
ընտանեկան
եւ ազգային իղձերը

Ս. Երրորդութիւն
Հայց.
Առաքելական
Եկեղեցի
Ֆրեզնօ

Ամանորի
Այս Օրերուն
Մեր Մաղթանքն է,
Որ Հայրենիքի
Մեր Ժողովուրդը
Ժպիտով Դիմաւորէ
Գալիք Օրերը


Ռիչըրտ
Թիւֆէնքեան
Ազգային
Մանկամասը

Ինչո՞ւ Կանգուն Պահել Սփիւոքը, Կրնա՞նք Պահել Իբրեւ Հայկական, Ինչպէ՞ս եւ Մինչեւ Ե՞րբ

միջոցներու զարգացումով, անկարելի կը դարձնէ անջատումը, տարբերութիւններու պահանջումը, մարդոց եւ հաւաքականութիւններու ինքնամեկուսացումը: Միշտ ստիպուած ենք մաս կազմելու տեղական կամ աւելի ընդարձակ ամբողջի մը, երկիր, ցամաքամաս, աշխարհ, քանի որ նոր հաղորդակցութիւնը սահման չունի:

Դեռ աւելի քան կէս դար առաջ, մասամբ լեզուական եւ կրօնական տարբերութեան պատճառով, ինքնամեկուսացման պատենչ կար նոր չըջապատին հետ, որ վերադարձի յոյսն էր: Դասական եւ չմաշած Սփիւոքը բազմերանգ չէր, ազգի հարազատ բեկոր էր, որուն ապացոյցը եղաւ զանգուածային հայրենադարձութիւն-ներգաղթը: Այսօր նման ազգային-քաղաքական երեւոյթ երեւակայել կարելի չէ:

Մեր բաղձանքները իրականութիւն պէտք չէ համարենք, անոնք ըլլան տեսական թէ ամբոխավարական: Ատիկա ազգային բնոյթով քաղաքականութեան համար յոռեզոյն ռազմավարութիւնն է: Փոխանակ մեր պորտին նայելու, եթէ դիտենք չըջապատը, որ մոլորակն է, զանգուածներու ակնկալութիւնները ուղենք տեսել եւ հասկնալ, պիտի հաստատենք շատ պարզ երեւոյթ մը, որուն այնքան դիպուկ սահմանումը ըրած է Հաննահ Արենտ: Ան կ'ըսէ. «Չանգուածի ընկերութիւնը



մշակոյթ չ'ուզեր, այլ՝ զբօս»: Մենք ընդգրկուած ենք, կամայականամայ, Հաննահ Արենտի սահմանումին մէջ: Մեր տուներուն մէջ գտնուող համակարգիչները, յոգնակի, միայն գրելու եւ թղթակցելու չեն ծառայեր, այլ սկսող, վերսկսող, չաւարտող անհամար եւ անհաշիւ խաղերու, որոնք տարբերութիւնները եւ հեռաւորութիւնները ջնջած են: Պայքարներ մղուեցան արձակուրդ-զբօսի օրերու համար, մարդիկ ամրան արձակուրդի կ'երթան՝ մտածելով ձմրան արձակուրդին մասին: Հայը, Հայաստան եւ Սփիւոք(ներ), այս հոսանքէն դուրս չէ: Խորագիրի առաջին հարցումին

տրուած պատասխանէն կախում ունին երկրորդ եւ երրորդ հարցումներուն պատասխանները: Առաջին հարցումը ռազմավարական նշանակութիւն ունի ազգին համար եւ անոր պատասխանը ամբոխ յուզող հնչեղ ճառ պէտք չէ ըլլայ: Հոգեպարար խօսք է յիշել եւ յիշեցնել, որ Սփիւոքը հզօր է, որ ան հինգ կամ տասը միլիոն է: Պէտք է առարկայական մօտեցում ցուցաբերել այդ հինգ-տասը միլիոնին նկատմամբ, եւ գնահատման չափանիշը սոսկ ծագումը պէտք չէ ըլլայ: Գնահատում մը պէտք է հիմնուի արժեքափերու վրայ: Սփիւոք(ներ)ը գնահատելու համար՝ որպէս ազգի բաղկացուցիչ, որպէս ազգային նե-

րուծ, որպէս իւրայատուկ ինքնութեամբ հաւաքականութիւններ, չափանիշներ պէտք են, որպէսզի գաղթականը, ծագումով հայը, ազգի անդամութիւն-պատկանելիութիւնը ճշդուն, թէ ի՞նչ են:

Պարզ խօսելով, Սփիւոք(ներ)ը ա՞զգ է: Զայն բաղկացնողները իրենց եւ իրենց յաջորդներուն կացութիւնը եթէ վերջական կը համարեն, կրնա՞ն յաւակնիլ ազգ ըլլալ: Միշտ կրնան մնալ որպէս կրօնական կամ լայն առումով մշակութային համայնք:

«Մեծ հայրս հայ էր» ըսողէն մինչեւ արցախեան պատերազմի համար կամաւոր մեկնած հայ մարդուն, իր կալուածները ծախած-լքած եւ Հայաստան դարձած հայուն միջեւ կը տարուբերին հինգ-տասը միլիոն հայաճնունդները:

Առաջին հարցումին պատասխանը պատմառազմավարական է, մարդու եւ տուեալ հաւաքականութեան, այս պարագային՝ հայերու, իր ինքնութեամբ, շարունակութիւն ըլլալու մարդկային եւ պատմական իՐԱՆՈՒՆՔԻՆ է: Սփիւոք(ներ)ը այդ իրաւունքին յանձնառութեամբ տէ՞ր է: Այդ իՐԱՆՈՒՆՔԻՐ վերականգնելու համար պէտք է պահել Սփիւոք(ներ)ը, ո՛չ միայն մեր ազգին համար, այլ որպէս համամարդկային պարտականութիւն, որպէսզի չարը չյաղթանակէ նաեւ վաղը, ինչպէս երէկ կամ այսօր: Այս

Չերմօրէն կը գնահատենք «Ասպարէզ»ի 111րդ երթը, յատկապէս հայապահպանման առաքելութիւնը՝ Հայոց Տեղասպանութեան ճանաչման եւ հայկական հողերու պահանջատիրութեան ուղղութեամբ:

Չորք Մարգարանի Հայրենակցական Միութիւն

Նաթալի Սավուլեան
Վահան եւ Անուշ Շամլեան Ազգային Վարժարանի Աշակերտուհի

Կը Շնորհաւորէ Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը Շամլեան Վարժարանի Տնօրէնութեան, Ուսուցչական Կազմին Եւ Ընդհանուր Աշակերտութեան

Լեզուն՝ Ազգակ Բաժանման, Թե՛ Միացման...

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ

Մէկ ազգ, մէկ պատմութիւն, մէկ մշակոյթ...

Բայց՝ երկու լեզու:

Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ երկու լեզուաճիւղ, երկու հնչելաձեւ, երկու գրելաձեւ, երկու գրակա-նութիւն: Տակաւին՝ երկու ապրե-լակերպ եւ այլ երկուութիւններ:

Ինչպէ՞ս ուրեմն՝ մէկ մշակոյթ, մէկ պատմութիւն, մէկ ազգ:

Սա՛ է սակայն մեր իրականու-թիւնը, որ իրաւամբ մեզ կը մղէ հարցականի տակ դնելու մեր այդ «մէկութիւն»ը: Ի վերջոյ, այսօր նոյն հողին վրայ ալ չենք ապրիր, նոյն պետութեան քաղաքացիներն ալ չենք, ապա ինչպէ՞ս կը յաւակ-նինք տակաւին «մէկ» ըլլալ:

Սոստովանիմ ի սկզբանէ, որ այս հարցին մէջ չէ՞զոք մը չեմ. «կողմ» եմ, ջատագովն եմ այդ տարօրինակ, անհաւանական, գուցէ նաեւ անկարելի թուող մէ-կութեան, ուստի անկողմնակալ չեմ կրնար ըլլալ, որքա՛ն ալ անաչառ փորձեմ մնալ:

Այս գրութեամբ կ'ուզեմ խօսիլ մեզ բաժնող (բայց թերեւս եւ աւելի հաւանաբար՝ միացնող) մէկ ազգակի մասին, որ ինչպէս բարձրաձայն կը ծանուցէ վերնա-գիրը՝ լեզու՛ն է: Ձկա՞ն այլ բա-ժանարար ազգակներ եւս: Ան-կասկած: Բայց այսօր կ'ուզեմ կեղրոնանալ լեզուի՛ն վրայ, որ կրնայ նաեւ, ի հարկէ, նկատուիլ միացման ազգակ:



Ճիշդ է, ունինք երկու լեզուա-ճիւղ՝ արեւմտահայերէնն ու արեւելահայերէնը, որոնցմէ առաջինը կը գործածուի առաւե-լաբար Սփիւռքի մէջ, յատկապէս Մեծ Եղեռնէն վերապրած հայու-թեան ժառանգորդներուն կողմէ, բայց նաեւ հետզհետէ հայրենա-դարձ սփիւռքահայութեան կողմէ՝ հայրենիքի մէջ. իսկ երկրորդը՝ առաւելաբար հայրենիքի մէջ (Հա-յաստանի եւ Արցախի Հանրապե-տութիւններ, Ջաւախք), բայց հետզհետէ աւելի ու աւելի նաեւ Սփիւռքի մէջ՝ պարսկահայերուն թէ՛ հին կամ նոր ժամանակներու արտագաղթած հայերուն կողմէ: Երկու լեզուաճիւղ, որոնք սակայն սերած են նոյն ակունքէն՝ գրա-բարէ՛ն:

Երկու լեզուաճիւղերն ալ զար-գացան ԺԹ. դարու կէսերէն սկսեալ, մշակուեցան ու դարձան մեր գրաւոր հաղորդակցութեան միջոցները՝ փոխարինելով Ե. դա-րէն մեզի ժառանգ հասած գրա-


բարը: Պոլիս ու Թիֆլիս, երկուքն ալ հայրենի հողէն հեռու, հան-դիսացան երկու լեզուաճիւղերու քուրանները, առաջինը՝ այն ատեն մեծամասնութիւն կազմող արեւմտահայութեան համար եւ երկրորդը՝ փոքրամասնութիւն կազմող արեւելահայութեան գրաւոր լեզուներուն՝ արեւմտա-հայերէնին ու արեւելահայերէ-նին:

Թէ ինչպէ՛ս եղաւ այդ երկուոր-եակ ծնունդը, ինչպէ՛ս նոյն գրուող լեզուն ծնունդ տուաւ եր-կու խօսուող լեզուներու (ո՛չ՝ լեզուաճիւղերո՛ւ) գրականացման, այսինքն՝ աշխարհաբարի երկու տարբերակներու ստեղծման, հե-տեւանք՝ պատմական իրադար-ձութիւններու, ատիկա արդէն դուրս կու գայ այս յօդուածի սահմաններէն: Կարելոր է նշել սակայն, որ իրենց բազմաթիւ տարբերութիւններով հանդերձ, անոնք չվերածուեցան երկու տարբեր լեզուներու, ինչպէս լա-տիներէնէն սերած ֆրանսերէնն ու իտալերէնը, որոնց բառերու արմատներէն շատերը նոյնպէս նոյն ակունքէն եկած են, սակայն բառերը ստացած են տարբեր տեսք ու հնչիւն: Արեւմտահայ մը եւ արեւելահայ մը դիւրաւ կրնան հաղորդակցիլ իրարու հետ, հասկնալ ու հասկցուիլ, նոյնիսկ եթէ որոշ բառերու հակադիր իմաստները ծիծաղելի կացու-թիւններ ստեղծեն, օրինակ՝ «ձգել»ը, որ մէկուն համար թող տալ կը նշանակէ, իսկ միւսին հա-

մար՝ քաշել, մինչ նոյնը չէ պա-րագան ֆրանսացիին ու իտա-լացիին, կամ սպանացիին եւ այ-լոց: Արդարեւ, իր ջախջախիչ մե-ծամասնութեամբ նոյնն է բառա-պաշարը մեր երկու լեզուաճիւղե-րուն, նաեւ փոքր տարբերու-թեամբ նոյնն են քերականու-թիւնն ու շարահիւսութիւնը, իսկ այդ տարբերութիւնները չեն խանգարեր փոխադարձ հասկա-ցումը:

Կան հիմնական տարբերութիւն-ներ, որոնց սակայն չենք կրնար չանդրադառնալ:


Առաջինը՝ Հնչումը: Փաստօրէն, արեւմտահայերէնը, բաղդատ-մամբ գրաբարին, նահանջած է հայերէնի Հնչման դաշտին մէջ: Կորսնցուցած ենք եռաստիճան Հնչում ունեցող ձայներու ճիշդ արտաբերումը (դոյզ ճիւղերուն մէջ շնչեղ խուլ՝ փ, ք, թ, ց, չ / արեւլ.՝ ձայնեղ խուլ, արեւմտ.՝ նոյնպէս շնչեղ խուլ՝ բ, գ, դ, ձ, ջ / արեւլ.՝ խուլ պայթական, արեւմտ.՝ ձայնեղ պայթական՝ պ, կ, տ, ծ, ճ), որուն պատճառով արեւմտահայերէն խօսողը զանա-զանութիւն չի դնել առաջին եր-կու խումբերու ձայներու արտա-սանութեան մէջ: Ատկէ ալ կը ծագի ուղղագրական դժուարու-թիւնը, իսկ արեւմտահայու մը եւ արեւելահայու մը խօսակցու-թեան ընթացքին երկրորդ ու եր-րորդ խումբի ձայներով բառերը կրնան սխալ հասկցուիլ (օրինակ՝ բաղ եւ պատ): Այս խնդիրը



Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան բարեբաատիկ գոյգ տօներուն առիթով, մեր սրտագին շնորհաւորութիւնները կը յայտնենք աշխարհացրիւ բոլոր Մելգոնեանցիներուն եւ անոնց ընտանեկան պարագաներուն, մաղթելով բոլորին երջանիկ ու բարեբեր տարի մը:

ՄԵԼԳՈՆԵԱՆ ՍԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԻՒՆ ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍ, ՔԱԼԻՖՈՐՆԻԱ

For your tax-deductible donations please mail to:
Melkonian Alumni & Friends
P.O. Box 223, La Verne, California 91750
Attn: Scholarship Committee



IN MEMORY OF ZOHRAB SHAMASIAN
Even though he has gone from us physically 3 years now, he is not gone from our hearts. His memories, his spirit and devotion are still alive to reopen the MELKONIAN EDUCATIONAL INSTITUE. COURAGE TO ALL HIS FRIENDS PURSUE THE DREAM AND NEVER GIVE UP

Shamasian Family

Լեզուն՝ Ազգակ Բաժանման, Թե՛ Միացման...

արեւմտահայերէնին մէջ նաեւ կը ստեղծէ տառադարձութեան դժուարութիւն:

Երկրորդը չեղտն է, որ կը տեղափոխուի վերջին վանկէն վերջնութեան վանկին վրայ, նոյնպէս դժուարացնելով փոխադարձ հասկացումը: Այս երեւոյթը, վստահաբար հետեւանք օտար լեզուներու ազդեցութեան, կը վերաբերի յատկապէս հայրենի պատկերասփիւռի լրատուական հաղորդումներուն, սակայն Սփիւռքն ալ գերծ չէ նման մեղանչումէ:

Երրորդ եւ ամէնէն մեծ տարբերութիւնը՝ ուղղագրութիւնը: Արեւմտահայերս կը շարունակենք գրել իբրեւ «դասական» կամ «Մեսրոպեան» ճանչցուած ուղղագրութեամբ, իսկ արեւելահայերը (նախկին խորհրդահայերը, բայց ոչ պարսկահայերը)՝ «Արեղեանական» կամ «արդ» ճանչցուած ուղղագրութեամբ:

Ինչպէ՞ս շրջանցել այս տարբերութիւնները...

Զիրար աւելի լաւ ճանչնալով, իրարու հետ խօսելով ու իրարու գրելով, լեզուական տարբերութիւններուն լաւապէս ծանօթանալով, կարողալով միմեանց մամուլն ու գրականութիւնը եւ ընտելանալով մէկը միւսին հնչելաձեւին, գրելաձեւին: Աստուք կրնա՞ն օր մը, տեղ մը միանալ՝ երկու լեզուաճիւղերու պարագային: Կը յուսամ անհնար չէ ասիկա, եւ ցանկութիւնս պիտի ըլլար, որ արեւմտահայերը վերատիրանային հայերէնի ճիշդ հնչումին, արեւելահայերը՝ ճիշդ ուղղագրութեան:

Թեան: Այո՛, ես ջատագովն եմ նաեւ վերադառնալու դասական ուղղագրութեան, սակայն գուցէ այդ ես բարեկարգման կը կարօտի, որպէսզի հնչելաձեւն ու գրելաձեւը համապատասխանեն իրարու. օրինակ՝ կը գրենք «հայ» ու «բայ» եւ կը հնչենք բառավերջին, իսկ «տայ» ու «կայ» եւ զայն չենք հնչեր...

Այստեղ վերջապէս կ'ուզեմ խօսիլ ծրագրի մը մասին, զոր տարիներէ ի վեր կը փայփայեմ, եւ յոյսս է, որ մօտ ատենէն իրականացման ճամբուն մէջ կը մտնէ: Այդ՝ հայերէնի արդի բացատրական առցանց բառարան մըն է, կենսակա՛ն բառարան մը, որ անվճար մատչելի ըլլայ բոլորին, որ երկու լեզուաճիւղերը պարփակէ եւ ունենայ մէկէն միւսին, ինչպէս նաեւ մէկ ուղղագրութեան միւսին անցնելու դիւրութիւնը, բովանդակէ բոլոր բայերու խոնարհումները եւ խնդրանքները, բոլոր անուններու եւ դերանուններու հոլովումները, գործածութեան օրինակները, հոմանիչներն ու հակահիչները, հնչիւններն ու ձայնական արտաբերումները եւ այլն, եւ այլն: Ասիկա պիտի հանդիսանայ Հայրենիք-Սփիւռք գործակցութեան տիպար օրինակ մը եւ պիտի նպաստէ մեր փոխադարձ ծանօթացման ու մերձեցման: Գործնական քայլ մը՝ խօսքէն գործի անցնելու համար: Եւ՛ պէտք պիտի ունենայ բոլորի՛դ աջակցութեան:



**Լաւագոյն
մաղթանքներով
կը շնորհաւորենք
Նոր Տարին
եւ Ս. Ծնունդը
մեր բոլոր
հայրենակիցներուն
եւ բարեկամներուն**

**Տարօն-Տուրութեանի
Հայրենակցական
Միութիւն**

**Սրբոց Նահատակաց
Եկեղեցւոյ Հովիւր,
Հոգաբարձութիւնը,
Ազգ. Երեսփոխանները,
Կիրակնօրեայ Վարժարանը,
Դպրաց Դասը Եւ Տիկնանց
Օժանդակ Մարմինը**

**Նոր Տարուան
Եւ Ս. Ծնունդի
Լաւագոյն Ողջոյններ
Կը Փոխանցեն
Հայրենաբնակ եւ Սփիւռքի
Հայ Ժողովուրդին**

Երբ Դաշնակցութիւնը Կը Հարուածուի, Հայ Ժողովուրդը Պէտք է Մտահոգուի

ՄԱԳՕ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Ազգային գաղափարախօսութիւն կրող, ուսուցանող եւ դայն սերունդէ սերունդ փոխանցելու առաքելութեան նուիրուած կուսակցութիւնը՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը երբ կը հարուածուի, ներքին թէ արտաքին ուժերու կողմէ, Հայ ազգը խորապէս պէտք է մտահոգուի, գիտակցելով թէ այդ հատուածը ուղղուած է ազգի ողնայարին, անոր ջրտուքին: Ուղղուած է ոչ թէ դաշնակցութեան լոկ քաղաքական կուսակցութիւն ըլլալու հանգամանքին, այլ անոր դաւանած ազգային գաղափարախօսութեան: Ազգի հոգեմտաւոր արժէքներուն, հազարամեայ մշակութային ժառանգութեան մշտարթուն պահակն ու պահպանը ըլլալու բնոյթին: Հետեւաբար ազգայինի պահպանման նախանձախնդիր իւրաքանչիւր Հայ մարդ բանի ու գործով հարկ է արձագանգէ, անտեղի հարուածներուն նաեւ գորակցի հայապաշտ ե՛լ հայրենապաշտ այս կուսակցութեան, ոչ թէ դայն պաշտպանելու միտումով՝ քանի որ ան պաշտպանուելու կարիքը չունի: 129 տարիներու իր ստացած հարուածները՝ Ցարական, Օսմանեան, Սովետական կայսերապաշտ տէրութիւններէն, նաեւ վերանկախացած Հայաստանի ապագային Ա. նախագահէն, զինք կո-



փած՝ անընկճելի եւ անկոտորելի դարձուցած են: Հետեւաբար ան միայն կարիքը ունի իր ժողովուրդին աջակցութեան եւ զօրակցութեան, դիմակայելու համար նորօրեայ հարուածները, որոնք կը սպառնան Արցախի ինքնորոշման, նաեւ Հայ ժողովուրդի ինքնուրոյնութեան եւ ինքնութեան՝ իր իսկ սեփական հազարամեայ հայրենիքէն ներս:

Այսօր, համաշխարհայնացման ռազմավարները, ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւանց ազնուագոյն գաղափարները շահագործելով, աշխարհի չորս ծագերը սփռած են իրենց «առաքելները» ժողովուրդներու ազ-

գային դիմագիծը փոխելու, անդիմագիծ հասարակութեան վերածելով, իրենց կամքը հեշտութեամբ պարտադրելու համար: Հայաստանը զերծ չէ այս իրողութենէն: Փաստը այն է, որ արտաքին այս ուժերը, տեղական թոյլ ու տկար, եսապաշտ ու շահամոլ Հայ մարդկանց օժանդակութեամբ առաջին առիթով փորձեցին վարկաբեկել Հայ ժողովուրդի սրբութիւն սրբոց էջմիածինը. այսինքն հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ արժեհամակարգը: Զարմանալիօրէն թաւշեայ յեղափոխութեան առաջնորդ Հայաստանի վարչապետը, ինչպէս «նախկիններու» պարագային, «ասֆալտին չկպցրեց» զանոնք: Սակայն երբ հերթը եկաւ Հայաստանի համալսարաններէ ներս հայոց լեզուի, պատմութեան եւ գրականութեան նիւթերը պարտադիր չընելու ծրագրին դէմ բողոքի ցոյցերուն, կրթութեան նախարարի կողմէ մեղադրուեցան ցուցարար երիտասարդները՝ քաղաքական նպատակ հետապնդելու յանցանքով. մեղադրուեցաւ նաեւ դաշնակցութիւնը՝ գաղափարական այդ սքանչելի տուրքը հովանաւորած ըլլալուն համար: Կրթութեան նախարարին անվայել վերաբերմունքը դրսեւորեց Արայիկ Յարութիւնեանը իր արհամարհական կեցուածքով, նաեւ «դրսի ու ներսի» դաշնակցականներ որոնելու իր բաժանարար դերով: Այս հարցը հոս վերջ

գտաւ, հասաւ վարչապետին. ան փոխանակ իր ուրախութիւնն ու հպարտութիւնը արտայայտելու հայ երիտասարդներու հայերէն նիւթերու հանդէպ ունեցած նախանձախնդրութեան եւ բժախնդրութեան, Ազգային ժողովէն ներս հպարտութեամբ հաստատեց, թէ ինք կը հովանաւորէ այդ ծրագիրը եւ պետական մարդու անյարիր՝ երեխայական զայրոյթով մեղադրեց երիտասարդները եւ զանոնք հովանաւորող կուսակցութիւնը ու աւետելու պէս յայտարարեց, թէ «դաշնակցութեան գնացքի վերջին տրոփիւնները կը լսուին»:

Հայաստանի վարչապետը չարաչար կը սխալի. դաշնակցութիւնը կայ ու կը մնայ յաւերժ: Ինչ կը վերաբերի գնացքին՝ դաշնակցութեան գնացքը իր Հայ Դատով, բարեսիրական, կրթական, մարդական, եկեղեցական, երիտասարդական բազմաչերտ թեւերով նաեւ աշխարհատարած համակիրներու հսկայ բանակով, (որուն մէկ անդամն եմ նաեւ ես) սրբութեամբ կը շարունակէ իր երթը, ծառայելով յաւերժի ճամբորդ, զինք ծնող ժողովուրդին: Երանի թէ վարչապետը միշտ յիշէ, ասացուածքի կարգ անցած, մեր ժողովուրդի հետեւեալ իմաստուն խօսքերը. «Տասը մտածէ, մէկ խօսէ», «Բարկութեամբ ելլողը, վնասով կը նստի»: Այսօր ամենազօրի դիրքերէն ան կը մեղադ-

Նոր Տարին
Յոյսերով Ու Բարիքներով
Լի Տարի Մը Ըլլայ

Սամուրգաշեան
Չարեհ եւ Յասմիկ
Արմէն եւ Բաֆֆի

Երբ Դաշնակցութիւնը Կը Հարուածուի, Հայ Ժողովուրդը Պէտք է Մտահոգուի

րէ, կը դատապարտէ, իր իսկ խօսքերով՝ «ասֆալտին ու պատին կը կպցնէ» նախկինները, կը նսեմացնէ, կը վարկաբեկէ մօտաւոր անցեալի մեր հերոսները, ուղղակի եւ անուղղակի պառակտում, անհանդուրժողութիւն եւ ատելութիւն սերմանելով համայն Հայութեան կեանքէն ներս, նաեւ լայն բանալով Լեւոն Տէր Պետրոսեանին կողմէ բացուած արտագաղթի դռները: Ի վերջոյ դեկավարի խօսքերը զէնքի ուժ ունին, վարակիչ են եւ անմիջական ազդեցութիւն ունին հասարակութեան ձեւաւորման վրայ: Զուր չէ ըսուած. «Ժողովուրդը ըսածդ մէկ անձ չէ, որ հայելիին նայի եւ ինքզինք սրբագրէ: Ժողովուրդը կը ծնի ղեկավարներ, որոնք կը վերածնին ժողովուրդէն»:

Իբրեւ հայ ժողովուրդի բազկերակին տեւաբար ականջալուր, նաեւ սփիւռքեան եւ հայրենական ազգօգուտ ծրագիրներու իրագործման ինձի բաժին ինկած կաթիլը ներդրած գաղափարական հայուհի, լուսապէս ծանօթ եմ դաշնակցութեան անցեալի հարուստ կենսագրութեան: Գիտակցական կեանքիս 68 տարիները անցուցած եմ ազգային կեանքէն ներս, այդ ընթացքին ականատես վկան եղած հայակերտման ու հայապահպանման, դպրոցաշինութեան-եկեղեցաշինութեան, գաղութներէ եւ համայնքներէ ներս հարկ եկած պարագային ինքնապաշտպանական յանդուգն

գործունէութեան, յատկապէս ակումբներէ ներս ազգային երգերու, հայոց պատմութեան միջոցաւ ազգասէր ու հայրենատենչ սերունդներ դաստիարակելու սրբազան աշխատանքին, այդ պատճառով ալ երբ զանգը հնչեց, անոնցմէ շատեր իրենց հոգու պարտքը տալու սուրացին դէպի Արցախ: Այս բոլորին ականատես գիտակ հայը չէր կրնար լուռ մնալ դաշնակցութեան «գնացքի տրոփիւնները» լսող վարչապետի անհաշուարկուած ու անհեթեթելոյթին հանդէպ:

Ամենայնդէպս, հաւատս եւ յոյսս ամբողջովին չկորսնցնելու ճիգով, Նոր Տարուան առթիւ մաղթանքս է, որ Հայաստանի ներկայ իշխանաւորները դադրին «նախկիններ, նախկիններ» հողովելէ, դաշնակցութիւնը հարուածելէ եւ իրենց ազգաչէն ու հայրենաչէն գործունէութեամբ, արդարադատութեամբ եւ անխտրականութեամբ, վերածնուելով, ապա վերածնելով ժողովուրդը, ստեղծեն համերաշխութեան եւ միասնականութեան ջերմ ու հաշտ մթնոլորտ, հեռու մնալով ազգակործան «բիւզանդական վէճերէ»՝ ի սէր եւ իր խնդիր Հայաստանի եւ Արցախի անվտանգութեան, նաեւ Սփիւռքի կայունութեան: Այլապէս վարչապետին գնացքը՝ իր նախարարներով բեռնաւորուած, յանկարծ կը գնայ... Ի վերջոյ, ժողովուրդը կը սթափի, կը գիտակցի, թէ «նախկինները» իրենց



թերութիւններով մէկտեղ, Լեւոն Տէր Պետրոսեանի քանդած ու աւերած երկիրը վերականգնեցին, վերաշինեցին եւ իրենց իշխանութեան օրով ապահովեցին Հայաստանի եւ Արցախի անվտանգութիւնը:

Գալով իմ սիրելի ու թանկագին ազգակիցներուս՝ ի Հայաստան, Արցախ եւ Սփիւռք, սրտագին մաղթանքս է՝ միասնականու-

թիւն, կրկին միասնականութիւն եւ ապագային առաջարկներու ո՛չ ըսելու քաջութիւն:

Իսկ Հայ Զեղափոխական Դաշնակցութեան՝ առաւել իմաստութիւն, նժդեհեհան անխորտակելի կամք, արիւթիւն եւ տոկունութիւն:

Հայ ազգը իր մշտարթուն եւ քաջարի պահակին կարիքը ունի՝ միշտ եւ յաւիտեան:

Կը շնորհաւորենք
ձեր Նոր Տարին
եւ

Սուրբ Ծնունդը

Յարութ, Լեւա
եւ Ալէք
Սողոմոնեան

Մարտիրոսեան
Ընտանիք

Լաւազոյն
Մաղթանքներով
Կը Շնորհաւորէ Իր
Հարազատներուն
Եւ Բարեկամներուն
Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը

Անցնող Տարուայ Մեր Բացթողումները

ԴՈԿՏ. ՄԱՐԻ ԹՈՋ ԱՔՈՒՍԷՖԵԱՆ



Այսօր, աւելի քան երբեւէ, հին տարին՝ 2019թ. աւարտում է աշխարհի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային, ազգային ինքնութեան պահպանման անհանգիստ, վտանգուած վիճակով:

Տարբեր երկրամասերում բռնկած ժողովրդային շարժումները, իրենց ազգային, մարդկային եւ քաղաքական իրաւունքների պահպանման համար, խօսուն վկայութիւնն են համատարած այն բոլոր դժգոհութիւնների, որոնք երկար տարիներ լուծեամբ դիմագրաւել են այդ ժողովուրդները:

Անցնող տարում, ահազանգող թուերով ժողովուրդներ տեղահան եղան, մատնուելով անյայտ ճակատագրի: Իշխող մեծ տէրութիւնները արդէն որբորդ անգամ, իրենց շահերին ի նպաստ, փոփոխում են երկրագնդի քաղաքական քարտէզը: Ժամանակակից գաղութատիրութիւնն ու դրամատիրութիւնը ստեղծել են այնպիսի մի քառս, ուր շարունակում է ոտնակոխ լինել ժողովրդային, մարդկային եւ տարածքային իրաւունքները:

Մեծ տէրութիւնները օգտագործում են իրենց տնտեսական հզօրութիւնը փոքր ժողովուրդներին ի սպառ ոչնչացնելու, նրանց տեղանքային հարստութիւններին տիրելու համար: Նախկին գաղու-

թատիրութիւնը շարունակում է հրամցուել նոր միջոցներով ու նոր անուանումով, որպէս աշխարհաքաղաքականացում:

Այդ նոյն տէրութիւնների կողմից պարտադրուած անհիմն պատերազմները, արտաքին ուժերի ազդեցութեան հետեւանքով ստեղծուած ներքին պառակտումները, տնտեսական պատժամիջոցները, հիմնովին քայքայում են տուեալ երկիրը:

Տեղահանութիւնները, արտագաղթողների օրէ օր աճը, փախստականների, ապաստան փնտոելու համար իրենց կեանքը վտանգողների անհաւատալի չափերի հասնող թիւը, այլեւս այնքան սովորական երեոյթ է դարձել, որ մինչեւ իսկ հաղորդագրութեան նիւթ չի դառնում: Աւելին, այդ վի-

ճակը ստեղծող քաղաքական գործիչները բացայայտօրէն այն դարձրել են իրենց ընտրութիւնների եւ վերընտրութիւնների հիմնական խայծը, իսկ Միջին Արեւելքում այդ իրավիճակը ստեղծողներից գլխաւորը՝ Թուրքիան, գաղթականների հոսքը օգտագործում է ՆԱՏՕ բիլոններ կորզելով:

Մոլեգին դրամատիրութիւնը, պարտադրուած լուծիւնը, յօրինուած մեղադրանքները, անհիմն պատերազմները, իրականութեան աղաւղումը, այսօրուայ տիրող քաղաքական ուժի շարժման լծակն է դարձել:

Քարիզի կողոպուտին աւելացել է արդիական զէնքերի խելայեղ առուծախը, անհաւատալի եկամուտ բերելով տուեալ երկրին, զնող երկրներին էլ հրահրելով հարեւան երկրները ոչնչացնելուն:

Ցեցի նման քայքայում են երկրները ներքին խլրտումներից: Անապահովութեան, վտանգուած կեանքի ալիքը մարդկանց դուրս է նետում իրենց երկրից, որի հետեւանքով ժողովուրդները կորցնում են իրենց երկիրը, լեզուն, մշակոյթը, ազգային աւանդոյթարժէքները եւ այս ամէնի հաւաքածուն՝ ազգային դիմագիծը:

Վառ օրինակը՝ քաղաքակիրթ հռչակուած մարդկութեան աչքի առջեւ անհիմն պատերազմով ոչնչացուող, 21րդ դարում սովամահութեան մատնուող, Եմէնի ժողովրդի կամ բաց երկնքի տակ

մագապուրծ ապաստանած հարիր հազարաւոր ռոհինգեանների վիճակն է:

Միայն Սուրիայից փախստական-գաղթականների թիւը մօտակայ երկրներ՝ Յորդանան, Լիբանան, Իրաք, Եգիպտոս, Թուրքիա, ըստ ՄԱԿի տուեալների, հասնում է միլիոնների:

23 միլիոնից աւելի արտագաղթած կայ Եւրոպայի տարածքում, որը նշանակում է այդքան ազգային դիմագծի, լեզուի, ինքնութեան կորուստ: Ժամանակի ընթացքին այս արտագաղթածները, յատկապէս նրանց յաջորդող սերունդը, աստիճանաբար ձուլուելով տեղական բարբերին, կորցնելու են իրենց ազգային ինքնութեան բոլոր յատկանիչները, մայրենի լեզուից սկսած:

Այս օրինագծում նոր տեխնոլոգիայի արագընթաց աճը՝ աշխարհի տարբեր անկիւններում կատարուող աննշան երեւոյթներն անգամ մարդկութեանը հաղորդակից դարձնող նորագոյն միջոցները, ազդում են յարակից երկրների քաղաքական իրավիճակի փոփոխմանը: Ազդում են յատկապէս նոր սերունդի մտածելակերպի, գործելակերպի վրայ: Աւելի ուսանած, տեղեկացուած եւ աւելի անհանդուրժող, աշխարհի տարբեր ծայրերում նրանք ոտքի են ելել իրենց երկրին ու ստեղծուած արժէքներին տէր կանգնելու, անընդունելի համարելով այլեւս ոչ միայն իրենց ծնողների, →

**ԱԼԻՍ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ
ԵՒ ԸՆՏԱՆԻՔԸ**

**Հաւագոյն Մաղթանքներով
Կը Շնորհաւորեն Բոլորի
Նոր Տարին Եւ Ա. Ծնունդը**

Անցնող Տարուայ Մեր Բացթողումները

այլ նաեւ իրենց շահագործուած վիճակը, պահանջելով արդարադատութիւն: Պահանջելով՝ ի օգուտ իրենց երկրի ու ժողովրդի շահերը պաշտպանող օրէնքներ, մինչեւ իսկ երկրագնդի բնութեան, մթնոլորտի մաքրութեան պահպանում: Այս բոլորի փայլուն օրինակը տեսնում ենք Հոնկ Կոնգում, Իրաքում, Չիլիում, Սոմալիայում, Լիբանանում, Հարաւային Ամերիկայում, աֆրիկեան եւ մի շարք այլ երկրներում:

Բնականաբար աշխարհում տիրող այս մթնոլորտում մեր բոլորի մտածումը կենտրոնացած է մեր երկրի ու մեր աշխարհասփիւռ ժողովրդի կեցութեան ու ապահով շարունակման վրայ:

Մեր երկիրը թէեւ մէկ տարի առաջ, այդ շարժման արդիւնքում իշխանափոխութիւն ձեռք բերեց ողջ Հայութեան զօրակցութեամբ եւ բարեբախտաբար աշխարհի այս խառնաշփոթութեանը մաս չի կազմում, սակայն դեռ բաւական հեռու է լիբիւրա անկախ, Համայն Հայութեան իրաւունքները պաշտպանող պետութիւն դառնալու տեսլականից:

Տարեվերջի վերլուծման ընձեռած Հնարաւորութիւնից օգտուելով, ուզում եմ անդրադառնալ այն բացթողումներին, որոնք ակնյայտ են այսօրուայ մեր կեանքում եւ որոնց շարունակման դէպքում մենք նոյնպէս կուլ կը գնանք աշխարհում ստեղծուած իրավիճակին:

Մեր երկրում տարիներով կու-

տակուած տնտեսական քայքայուածութիւնը, բոլոր բնագաւառներում տիրող փտախտը, իշխանութեան եւ ժողովրդի մէջ արմատացած նախկին մտածողութիւնը, ներքաղաքական ուժերի ճնշումը, տարածքային անապահովութիւնը եւ յատկապէս արտաքին քաղաքականութեան մէջ ազգային հեռանկարի բացակայութիւնը, ազդում են երկրի եւ ժողովրդի վերելքին:

Որպէս անկախ երկիր, դեռ լիովին ինքնբեր սեղ չհաստատած, մեր երկրի ամբողջական սահմանները չամրագրած, Արցախի ամբողջականութիւնը չապահոված, գործում եւ որդեգրում ենք հարիւրաւոր տարիներ իրենց հաստատած եւրոպական երկրներին համահաւասար օրէնքներ, աւելի ճիշդ՝ կապկելով նրանց: Թուում է օտար պետութիւններն են ղեկավարում երկիրը: Արդիւնքում տեսնում ենք մեր յեղեղուկ, անկայուն վիճակը: Դեռ հին սահմանադրութեամբ է մեր նոր իշխանութիւնը ղեկավարում, դեռ անկախ օրէնսդիր մարմին չունենք:

Առանց հզօր ռազմական ուժի եւ բանակի, պարտադիր զինծառայութիւնը առաջարկում է դարձնել ինքնակամ, կապկելով հզօր պետութիւններին, որոնք իրենց կողոպտած երկրների դրամով են բանակ ապահովում ցանկացած պահին:

Երկրաշարժային ակտիւ գօտի լինելով եւ 31 տարի առաջ անհա-

ւատալի կորուստներ տալուց յետոյ անգամ դեռ չինարարութեան ամբուլթեան եւ դրա հսկողութեան խստագոյն օրէնքներ չունենք: Դեռ այդ աղէտից անօթեւան մնացած ընտանիքներին հոգալու անմիջական ծրագրեր չունենք: Բացակայում են նաեւ ժողովրդին նախապատրաստելու, աղէտի դէպքում անմիջական օգնութիւն հասցնելու ծրագրերը:

Շարունակում է խօսքի, անձնական գաղափար ունենալու արգելք ոչ միայն վերնախաւի, այլ նաեւ կուրօրէն այդ նոյն վերնախաւին հետեւողների կողմից, մոռանալով, որ այդ բարձրաձայնողներն էլ նոյնքան իրաւունք ունեն, գուցէ եւ աւելի մտահոգ են իրենց երկրի ապագայով: Միատեսակ եւ միեւնոյն ուղղութեամբ նայելն ու մտածել-վերլուծելը դարձել է երկրի հիմնական դիմագիծը:

Ցաւով պիտի նշեմ, որ չի առաջադիմում մեր ժողովրդի մտածելակերպը: Մենք դեռ մեր երկրի արտաքին եւ ազգային հարցերին մօտենում ենք հարիւր տարի առաջուայ գաղափարներով եւ վերլուծում-մտածումներով: Ողջ աշխարհը ծայրայեղ քաղաքական ծրագրուած որոշումներով է պաշտպանում իր երկրի եւ տարածքները, եւ շահերը, իսկ մենք մեր խաղաղասիրութիւնն ենք հրամցնում մեր դէմ պատերազմի պատրաստուող թշնամուն, դեռ շարունակում ենք բանակցել տարածքային զիջումների համար: Բայց չէ՞ որ մեղադրանքի սիւնին


էինք գամում նախկին իշխանութիւններին իրենց վարած այդ նոյն քաղաքականութեան համար: Այսօր էլ, ինչպէս նախկինում, լուր ունկնդրում ենք վերջերս Բրատիսլաւայում ԵԱՀԿի նախարարների համաժողովին մեր արտգործ նախարարի ներկայացրած բանակցութիւնների արդիւնքին: Ո՛չ մէկ բաց ժողովրդային քննարկում, ո՛չ մէկ արձագանգ, միայն լուրիւնք, ինչպէս նախկին տարիներում էր: Բայց չէ՞ որ ժողովուրդն էր այլեւս իր երկրի համար որոշում կայացնողը:

Մեր կրած ամենածանր ժողովրդային, տարածքային, իրաւունքի կորուստները անխախտելի պահանջարկ դարձնելու փոխարէն, դեռ դռնէդուռ ընկած ուրիշների ամենակալ ողորմածութեանն ենք սպասում: Հայ Դատը իր ամբողջ կարողութիւնը ներդնում է ԱՄՆի կառավարութեանը համոզելու պաշտօնապէս ընդունելու Թուրքիոյ գործած Յեղասպանութիւնը: Իսկ ո՛վ է համոզելու մեր իսկ կառավարութեան գործնական նախագիծ ձեւաւորելու եւ հաստատելու Թուրքիոյ դէմ մեր պահանջները:

Քաղաքական մտածողութիւնը իր տեղը զիջել է ամէնօրեայ քաջբռնություններին, ներքին պառակտումներին: Տնտեսական բարւոք կեցութիւնը, որը իւրաքանչիւր անձի իրաւունքն է, դարձել է մեր երկրի ժողովրդի միակ գերխնդիրը, մոռանալով, որ դրան հասնելու համար ամէնից առաջ տա-

Տէր եւ Տիկ. Խաչիկ Թիթիզեան եւ ընտանիք

Կը շնորհաւորեն ձեր Նոր Տարին եւ Ա. Ծնունդը



Յանուն՝
**ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ
ԱԲԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ**

Կը շնորհաւորենք Հայագի մեր բոլոր զաւակները
մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի Ծննդեան Սուրբ
Տօնին առթիւ

Կ'աղօթենք, որ 2020 տարուան ընթացքին, Բարձրեալն
Աստուած իր
առատ օրհնութիւններով լեցնէ մեր սիրտերը
ու ազգապատկան մեր բոլոր կառոյցները:

**Տէր Յիսուս Քրոստոսի
Ծննդեան Պաշտամունք
Պատգամաբեր՝
Վեր. Սերոբ Մկրտիչեան**

Երկուշաբթի, Յունուար 6, 2020, Երեկոյեան ժամը 7ին
Քրիստոնէական Առաքելութիւն Հայոց Եկեղեցի
125 S. Louise St., Glendale, CA 91205

Անցնող Տարուայ Մեր Բացթողումները



րածքային ապահովություն, մարդկային թիւ, անձի իրաւունքները պաշտպանող ու ամրագրող օրէնքներ, արդարադատ համակարգ պիտի ունենայ:
Այսօր մենք ականատես ենք ազ-

գային դիմագծի եւ այն պահպանող կարեւորագոյն գործօնների՝ լեզուի, պատմութեան, մշակոյթի աստիճանական կորուստին: Թէ-եւ մեր ժողովուրդը միշտ էլ անտարբեր է եղել իր պատմութեան

ճշգրիտ իմացութեան հանդէպ, նոյնիսկ անկախութիւնից յետոյ չի էլ ձգտել ճշդելու աղաւղուած իր պատմութիւնը: Արդիւնքում իր պետականութեան, իր ժողովրդի միւս կէսի պատմութիւնն իսկ չի-

մացող ժողովուրդը հեշտօրէն տրամադրում է ատելութեան եւ թշնամանքի իրեն թելադրուող իրավիճակներում, տեղի տալով անիմաստ ներքին պառակտում-
→

Տէր եւ Տիկ. Վահան եւ Անուշ Շամլեան

Ֆրեզնո

*Չերմագին մաղթանքներով
կը շնորհաւորեն
համայն հայութեան
Նոր Տարին եւ Ա. Ծնունդը*

Անցնող Տարուայ Մեր Բացթողումները

ների:
 Եթէ մինչեւ օրս միայն մեր արեւմտահայերէնն էր վտանգուած, այսօր դրան աւելանում է նաեւ արեւելահայերէնը: Մեր լեզուն բեռ ենք դարձրել եւ ժամ առաջ օտար լեզուի փայլուն իմացութեամբ ենք ուզում ազատուել նրանից: Գրական կամ իմացական հայերէնը իր տեղը զիջել է բարբառային այնպիսի հաւաքածուի, որ թարգմանչի կարիք եւ զգում մինչեւ իսկ երկրի վարչապետին հասկանալու: «Պլատալն ու օպտիմալացումը» (սահիլը եւ լաւագոյնին հասնիլը-Ո՞մբ.), նոյնիսկ օտար երկրների բեմերից են հրամցում, որպէս երկրի հիմնական լեզու: Այս իրավիճակում համապատասխան մարմինները դեռ ուզում են միայն դպրոցական ուսուցմամբ սահմանափակել լեզուի լիիրաւ տիրապետումը: Մենք լեզուին տիրապետում ենք դպրոցում, բայց դարգացնում, հարստացնում ենք բարձրագոյն հաստատութիւններում: Մինչեւ իսկ մեծ տէրութիւնների համալսարանների առաջին տարիներում է պարտադիր իրենց մայրենի լեզուի ուսուցումը: Եթէ ընդօրինակում ենք նրանց, ապա պիտի ճիշդ ընդօրինակենք:

Թէեւ խոստովանեմ, որ մեր բարձրագոյն ուսումնական հաստատութիւններն ու գիտական կենտրոնները, մինչեւ իսկ ակադեմիան երկար տարիներ է հիմնական լուրջ փոփոխութեան կարիք ունեն:

Մենք մեր ունեցած հարստութիւնների յարգը այդպէս էլ երբեք չիմացանք եւ մեր անտարբերութեամբ քայքայում ենք եղածը: Նոյնիսկ մեր բնական հարստութիւնները չենք կարողանում պահպանել, վկան Ամուլսարի հանքի դեռ չվճռուած ճակատագիրը, այն դէպքում, երբ մեզ նման սահմանափակ ունեցուածքի եւ կարողութեան տէր երկիրը, ի սկզբանէ, որպէս երկրի կարելորագոյն օրէնք իր ընդերքի, այսինքն իր ժողովրդի հարստութիւնը առուծախի չի կարող եսթարկել: Նոյնը վերաբերում է մեր անտառների, մեր գետերի ու լճերի, մեր քաղաքների ու գիւղերի պահպանմանը:

Իրապէս դժուար, ամէնօրեայ միասնական, երկարատեւ աշխատանք է երկիր պահելն ու զարգացնելը: Միայն իշխող կառավարութեան չի պատկանում այն, եւ միայն իրենց չի վերաբերում այս խնդիրների լուծումը: Իւրաքանչիւրիս իրաւասութիւնն է խօսքով, գործով, ներդրումով, քննադատութեամբ, օրէնքների յարգմամբ ու պահպանմամբ, ազգայինի զարգացմամբ, ողջ հայութեան ներգրաւմամբ՝ ապահովել մեր երկրի բարգաւաճումը:

Վերը թուարկած բացթողումները, որը տարիների կուտակումներ են, բնականաբար գալիք տարում ամբողջովին լուծուող գործեր չեն, բայց եւ անմիջական մեր բոլորի միջամտութեան ու գործունէութեան առանցքում պիտի

լինեն, որպէսզի այն չդառնայ մի նոր բեռ գալիք տարուայ աւարտին:

Այսօր ամենահրատապ խնդիրը, մեր բարեկեցութիւնից էլ առաջ, մեր Արցախի անգիջում, ամբողջական պահպանումն է, որը իրականացնելու համար անհրաժեշտ է մեր ժողովրդի միասնականութիւնը, իրար հանդէպ հանդուրժողականութիւնը եւ ամենակարեւորը՝ ոչ թէ զիջումով խաղաղութիւն մուրանք, այլ ազգային հեռանկարով շահէնք այդ վերջնական խաղաղութիւնը:

Տարեսկզբի հնարաւորութիւնից օգտուելով, շնորհաւորում եմ մեր եւ Արցախի սահմանները պաշտպանող բոլոր զինուորների գալիք Նոր Տարին: Մաղթում եմ բոլորին, իրենց սխրագործութիւնների հետ համահաւասար, կեանքի ապահովութիւն եւ նոյնքան ապահով վերադարձ իրենց ընտանիքներին, իրենց սիրելիներին: Ողջ ազգով շնորհակալ ենք, որ իրենց կեանքի ներդրումով մեզ ապահով կեանք են պարգեւում:

Մեծ ակնածանքով ու խոնարհումով շնորհաւորում եմ իրենց երիտասարդ կեանքը մեր երկրի համար զօհաբերած բոլոր հերոսների ընտանիքների գալիք Նոր Տարին, հաւաստիացնելով, որ իրենց զաւակների, իրենց հայրերի, ամուսինների մեզ նուիրաբերած կեանքը ոչ թէ անցած, այլ մնայուն, թանկագին ներկայու-

թիւն են իւրաքանչիւրիս համար եւ ազգովին յաւէտ շնորհակալ ենք իրենց:

Միրելի ընթերցող, առիթից օգտուելով շնորհաւորում եմ նաեւ բոլորիդ գալիք տարին եւ մաղթում, որ աշխարհի այս դժուար, յեղեղեղուկ կացութեան մէջ չկորցնենք մեր ուղին, մեր երկիրը չդարձնենք օտար ազդեցութիւնների քառուղի, որ վերջապէս ձեռք բերենք այն յատկանիշները, որոնք մեծացնում ու հզօրացնում են ազգերին, որ գալիք տարուայ աւարտին խօսենք միայն ապագայի ծրագրերի մասին:

Շնորհաւորում եմ նաեւ աշխարհասփիւռ հայութեան Նոր Տարին եւ մաղթում ամրութիւն, օտար հոսանքներին կուլ չզգնալու կայունութիւն, որ պահենք ու զարգացնենք մեր լեզուն, մեր միութիւնները, դպրոցները, մշակութային հաստատութիւնները: Միրիայի, Լիբանանի, Միջին Արեւելքի շրջաններում ապրող մեր հայրենակիցներին մաղթում եմ ապահովութիւն, համբերութիւն եւ կորով՝ դիմագրաւելու քաղաքական, տնտեսական իրենց պարտադրուած այս կործանարար խառնաշփոթութիւնն ու պատերազմները: Ոչ մի հայրենակցի կորուստ չունենանք, տարին աւարտենք ողջ տարածաշրջանի վերջնական խաղաղութեամբ ու ապահովութեամբ:

Բարի, առողջ, ողջ աշխարհի եւ մեր երկրի խաղաղութեամբ եւ յաջողութեամբ լի Նոր՝ 2020 թուական:

Տէր Եւ Տիկ. Կայծակ եւ Ծովիկ Զէյթլեան
Եւ Զաւակները՝ Շանթ Եւ Գարին
Հրակ Եւ Լարա
Փեսան Եւ Դուստրը՝
Տէր Եւ Տիկ. Լիօ Եւ Սեւանա Օհանեան
Եւ Զաւակները՝ Լէոնա Եւ Նօէլ

Լաւագոյն Մաղթանքներով
Կը Շնորհաւորեն Իրենց Հարազատներուն
Ու Բարեկամներուն
Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը

Humankindness for the holidays.

May 2020 bring good health
and great joy.



Hello humankindness®



SIDON Travel



FROM ALL OF US AT SIDON TRAVEL, WE
 WOULD LIKE TO WISH EVERYONE A VERY
MERRY CHRISTMAS!

THANK YOU TO OUR CLIENTS & FRIENDS
 FOR YOUR CONTINUED SUPPORT FOR
OVER 50 YEARS.

WE TRULY APPRECIATE EACH AND EVERY
ONE OF YOU!

OUR HOLIDAY WISH IS FOR A HEALTHY
AND SUCCESSFUL YEAR AHEAD.

- Sidon Travel & Avakian Family

In loving memory of Garo & Alice Avakian

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ

ԵՒ

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

**428 S. Central Ave.
 Glendale, CA 91204
 818-553-0777
 info@sidontravel.com**

In support of fresh air ordinance, proud to be
Non-Smoking Establishments

CAROUSEL RESTAURANT

*Celebrating 35 years
of Excellence!*



HOLLYWOOD

(Est. 1984)

GLENDALE

(Est. 1998)

CATERING

www.carouselrestaurant.com

Հոլիվուս

ՀՅԳ «Գարեգին Նժդեհ» Կոմիտե
 ՀԵԳ «Մուսա Տաղ» Ուխտ
 ՀՅԳ «Թեհլիրեան» Պատանեկան Միութիւն
 ՀՕՄԻ Լոս Անճելըսի «Մայր» Մասնաճիւղ
 ՀՄԸՄԻ Լոս Անճելըսի Մասնաճիւղ
 Հոլիվուսի Հայ Գասի Յանձնախումբ

Ս. Կարապետ Հայց. Առաք. Եկեղեցւոյ
 Հովիւ, Հոգաբարձութիւն
 Եւ Յարակից Մարմիններ

Ռոզ Եւ Ալէք Փիլիպոս Ազգ. Վարժարան
 ՀՕՄԻ «Մարի Փոստոյեան» Մանկամսուր

*Ամանորի Եւ Ս. Ծնունդի
 Տօներուն Առիթով՝
 Շնորհաւորութիւններ
 Եւ Յաջողութեան Մաղթանքներ
 Հայաստանի, Արցախի, Արարեկրի,
 Ինչպէս նաեւ Հոլիվուսի Հայութեան*

Թոյլ Տանձ Զարգանա՛յ Երկիրը

ԶԱԽԷՆ ԽԱՆՃԵԱՆ

“When they go low, we go high”
MICHELE OBAMA

Դուք կարդացա՞՞ծ էք Բագրատ Այվազեանի «Անին Մախուեցալ»-ը:

Կամ՝ Ստեփան Զօրեանի «Պապ Թագաւոր»-ը:

Դուք կարդացա՞՞ծ էք Դերենիկ Տեմիրճեանի «Վարդանանք»-ը:

Կամ՝ Սերօ Սանգատեանի «Մխիթար Սպարապետ»-ը:

Հայոց պատմութեան հարգատ էջերէն հիւսուած վէպեր են վերոյիշեալները, որոնք կ'երկարին չորրորդ դարէն մինչեւ տասնութերորդ դար, ընդհանրապէս տարածուելով Հայ ժողովուրդի յետքրիստոնէութեան ընդունման պատմութեան ժամանակամիջոցին վրայ:

Թէեւ վէպ են վերոյիշեալ հատորները, սակայն այնտեղ մեր պատմագէտ հեղինակները կրցած են հայելին դառնալ օրուան պատմաքաղաքական իրադարձութիւններուն, օրուան ծանօթ աշխարհի գերիշխող ուժերուն, ներքին եւ արտաքին իշխանական հոսանքներուն, աշխարհաքաղաքական բարի կամ չար դրացնութիւններու, աշխարհին եւ եկեղեցական իշխանութիւններու յարափոփոխ յարաբերութեանց եւ այս բոլորին մէջ հանգոյցներ ստեղծող ու գոյացնող ճակատագրական սաղրանքներու, դա-



Լադրութիւններու եւ նենգամտութեան:

Չէ՞ք կարդացած վերոյիշեալ վէպերը: Ոչինչ:

Ինձի կը թուի, թէ մեր ժամանակակից պատմութիւնը, գուցէ քիչ մը մշուշապատ բայց արդիական տարազներով եւ բովանդակութեամբ ու անպայմանօրէն 21րդ դարու «թէքնոլոճի»ի ծնունդ հասարակական եւ ընկերային համացանցերու էջերով, մեզ կը յիշեցնէ վերոյիշեալ վէպերով ցոլացուած մեր պատմութեան ակսոսալի էջերը:

Անկախութեան առաջին քսանութ տարիներու փտածութեան, յուսախաբութեան, յուսալքութեան, արտագաղթի եւ լայնածա-

ւալ աղքատութեան խեղդիչ հանգրուանէ մը ետք հազիւ հեշտանքը տրուեցաւ մեր ժողովուրդին՝ ինքն ի՛ր ճակատագիրին տէրը եղած ըլլալուն, ահաւասիկ ծրագրուած ապատեղեկատուութեան խլացնող աղմկալի խոյանքներուն ականատեսներ ենք: Զիրար խաչաձեւող ամբաստանութիւններ, զրպարտութիւններ, հնարքներով ծածկուած դիմատետրեան տխրած ազգեր, բռնազբօսիկ գործողութիւններ, այս բոլորը հայրենական լրատուական հրապարակը խիտ կերպով յագեցուցած են:

Հայաստանի առաջին հանրապետութեան բախտորոշ հարիւրամեակին, Հայ ժողովուրդը՝ խաղաղ, անարիւն եւ մասսայական հրապարակային պոթկուծով մը տէրը դարձաւ իր ճակատագիրին եւ ժողովրդարար կարգերու հաստատումով արմատականօրէն փոխեց իր գոյատեւման ուղղութիւնը: Երկիրը ունի իր սահմանադրական կարգերը եւ այդ ամէնը, ինչ կատարուեցաւ, ուղղամտօրէն, գիտակցօրէն եւ ամենայնողջամտութեամբ ընթացաւ՝ սահմանադրական կարգերով հաստատուած օրէնքի լոյսին տակ:

Թէ քննանդատելիք բան կա՞յ, անպայման կայ: Բայց՝ քաղաքակիրթ ոճով քննադատենք: Թող մեր քննադատութիւնը ըլլայ կառուցողական, գործիչ, օգտակար եւ բարին ընդհանուրին կամեցող:

Հաճախ կը հպարտանանք քրիստոնէութիւնը ընդունող առաջին

ազգը ըլլալու իրականութեամբ: Հազար եօթը հարիւր տասնութ տարիէ ի վեր ի՞նչ կիրարկել սորվեցանք Քրիստոսի վարդապետութենէն: Հաւատք քարոզելու մէջ սխալ բան չկայ, բայց այդ չէ իմ պատգամը: Քրիստոնէական վարդապետութիւնը քաղաքակրթութեան պատուանդան է: Վարուելակե՛րպ: Անտառի օրէնքէն մարդ արարածը դուրս հանող վարուելակե՛րպ: Յարգանքի եւ խոնարհութեան վարուելակե՛րպ: Հոգածութեան եւ սիրոյ վարուելակե՛րպ: Լայնամտութեան եւ հանդուրժողութեան վարուելակե՛րպ: «Մանիր Զքեզ»եան վարուելակե՛րպ: Եւ վերջապէս՝ իմաստութեան արմատը հանդիսացող, մեծամտութենէ հեռու մնացող գիտակցութիւն՝ թէ մեզմէ ոեւէ մէկը ամէնագէտ չէ, անսխալ չէ, ամենակարող չէ եւ օրէնքէն վեր չէ:

Հայ ժողովուրդը այսօր վստահութեան քուէն տուած է: Այդ վստահութիւնը յաւիտենական չէ՛: Այդ վստահութիւնը անխախտելի ալ չէ, այլ ետ կոչուելու ատակ՝ օրէնքի սահմաններուն պարագիծով: Տասնամեակներու օրինազանցութիւններէ, հարստահարումէ եւ ինքնահարստացումներէ ետք, այսօր մաքուր, բարոյականի տէր եւ ժողովուրդին ծառայելու ոգին բարձր պահող իշխանութիւն մը ունի մեր Հայրենիքը:

Մխալակա՞ն են: Անշո՛ւշտ: →

ՊԸՐՊԵՆՔ

ՀՅԴ «ԱՂԲԱԼԵԱՆ»

ԿՈՄԻՏԵՈՒԹԻՒՆ

ՀՕՄ-Ի «ԱՐԱԶ» ՄԱՄՆԱՃԻՒՂ

ՀՄԸՄ-Ի «ՄԻՓԱՆ» ՄԱՄՆԱՃԻՒՂ

ՀԵԴ «ՎԱՐԱԳ» ՈՒԽՏ

«ԿԱՅԾԱԿ» ՊԱՏԱՆԵԿԱՆ

ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Շնորհաւոր Նոր Տարի Եւ Ս. Ծնունդ

Թող Խաղաղ Եւ Ապահով Լինի Մեր Հայրենիքին Եւ Մեր Երկիրը Զարգանայ Առանց Զիջումների

Թոյլ Տանք՝ Զարգանա՛յ Երկիրը



Անփոփոք էն: Յարաբերակա՛ն է, եւ օգնենք, որ շահին այդ փորձառութիւնը:

Թոյլ տանք, որ ծառայէն՝ առանց իշխանութեան գլուխ գալու այլոց փափաքը խանգարելու:

Թոյլ տանք, որ ծառայէն՝ սատարելով պետութեան եւ ժողովուրդին, որովհետեւ ներքի չէ մեզի, որեւէ պատճառով, ժողովուրդի

զարգացման եւ հայրենիքի հզօրացման նպաստող ամենափոքր առիթն իսկ կորսնցնել:

Իմաստութեան գազաթնակէտը մեծամիտ եւ յաւակնոտ դեկավարներու իմացականութեան մէջ չէ, այլ՝ ժողովուրդի հաւաքական կամքին մէջ:

Թոյլ տանք, որ ժողովուրդին կամքը իր ժողովրդավարական

ընթացքը շարունակէ:

Թոյլ տանք եւ օգնենք, որ երկիրը խաղաղօրէն զարգանայ, հզօրանա՛յ:

Մեր բոլորին հայրենասիրութեան եւ քաղաքացիութեան ճիտին պարտքն է այդ մէկը:

Այսօրուան Հոռմը, Բիւզանդիոնը, Շապուհն ու Թուրքը լորձնաշուրթն դրան են կանգնած:

Թոյլ տանք, որ զարգանա՛յ երկիրը:

Դեկտեմբեր 10, 2019

Յ.Գ.- Յօդուածին մէջ արտայայտուած միտքերը կը պատկանին լոկ յօդուածագիրին եւ որեւէ կերպով չեն ցոյցներ անոր ծառայած հաստատութեան կարծիքն ու տեսակէտը:

Կը Շնորհաւորենք Շրջանի Եւ Համայն Հայութեան Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը **ՅԱՐԱՏԵՒ ՊԱՅՔԱՐ ՄԻՆՉԵՒ ՅԱՂԹԱՆԱԿ**

ՀՅԴ «Սողոմոն Թեկիբեան» Կոմիտէութիւն
Ֆրեզնոյի ՀՅԴ-ՀԵԴ «Գէորգ Չաուլ» Ուխտ
ՀՅԴ «Քրիստափոր» Պատանեկան Միութիւն
Ֆրեզնոյի Հայ Դատի Յանձնախումբ - ANC Fresno
ՀՕՄի Ֆրեզնոյի «Մայր» Մասնաճիւղ
ՀՕՄի Ֆրեզնոյի «Սոֆիա» Մասնաճիւղ
Համազգայինի
Ֆրեզնոյի «Դանիէլ Վարուժան» Մասնաճիւղ
ՀՄԸՄի Ֆրեզնոյի «Սասուն» Մասնաճիւղ

ՖՐԵԶՆՕ

ՀՕՄԻ ԱՐԵՎԻՍՏԵԱՆ ՇՐՋԱՆԸ՝ ՀԻՄՆՈՒԱԾ 1984ԻՆ

«Ժողովուրդիս Հետ, Ժողովուրդիս Համար»

Հարիւր եւ 10ամեայ Հայ Օգնութեան Միութեան Համահայկական իրականութեան մէջ՝ իր շուրջ 1200 անդամուհիներով ու 24 մասնաճիւղերով, իւրայատուկ տեղ կը գրաւէ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Հայ Օգնութեան Միութիւնը, որուն շարունակական ներդրումը Միութեան Համահայկական ծրագիրներու իրականացման գործընթացին մէջ եղած է ու կը մնայ անփոխարինելի:

Մասնաճիւղեր գոյութիւն ունեցած են Միացեալ Նահանգներու Արեւմտեան ափին վրայ 1915 թուականէն սկսեալ: Անոնք նշանակալի դերակատարութիւն ունեցած են Հայ իրականութենէն ներս՝ նպաստելով ազգային կեանքի հունաւորման աշխատանքներուն:

1984 թուին Լոս Անճելըսի մէջ կը գումարուէր ՀՕՄԻ Հիւսիսային Ամերիկայի 64րդ Պատգամաւորական ժողովը, ուր եւ հիմը կը դրուէր Արեւմտեան Միացեալ Նահանգներու Հայ Օգնութեան Միութեան, որուն սահմաններուն մէջ կը մտնէին Միսիսիպի գետէն արեւմուտք գտնուող ՀՕՄԻ բոլոր մասնաճիւղերը: Այս նոր շրջանային միաւորին առաջնահերթ աշխատանքները կ'ընդգրկէին նիւթականի ապահովում, ընկերային հարցերու լուծում, կազմակերպչական եւ յատկապէս գաղութին կարիքները գոհացնելու նախաձեռնութիւններ:

Շրջանիս իրագործուած գլխաւոր

ծրագիրներն են.

Տեղական մակարդակի վրայ՝ 17 շաբաթօրեայ վարժարաններու եւ 3 մանկամստերներու հովանաւորութիւն,

Հայ լեզուի դաշնութեան պետական դպրոցներէ ներս,

Կրթաթոշակ արժանաւոր ուսանողներու,

Նիւթա-բարոյական աջակցութիւն Ազգային վարժարաններու, Հոգեբանական օգնութեան կեդրոն Կլենտէյլի մէջ,

Դաստիարակչական աշխատանիստներ,

Նիւթական միջոցներու ապահովում հանգանակութիւններու ճամբով,

Ընկերային ծառայութեան գրասենեակներ՝ հիմնուած 1979ին,

Կարիքաւոր ընտանիքներու օժանդակութիւն:

Հայաստան, Արցախ եւ Զաւախք՝ Օգնութիւն Հայաստանի երկրաշարժէն տուժածներուն,

Մտոգաղութի ուրբերու խնամակալութիւն,

Բնակարաններու կառուցում քանդուած շրջաններու մէջ,

Արցախի օժանդակութիւն,

Առողջապահական ու հոգեբանական կեդրոններու հաստատում,

Հայրենի որբանոցներու եւ մանկապարտէզներու օժանդակութիւն,

Ակնաբուժական կեդրոններ Թաւրիսի, Երեւանի եւ Վանաձորի մէջ,

Նիւթաբարոյական օգնութիւն՝ Զաւախքի Հայ բնակչութեան,



Մարալիկի Հիւանդանոցի նորոգութիւն,

Վանաձորի Համալսարանի մասնաշէնքի նորոգութիւն,

Ատամնաբուժարաններու կառուցում Գիւմրիի, Վանաձորի եւ Սպիտակի մէջ,


Բնակարաններու, դպրոցի մը եւ մանկապարտէզի մը կառուցում Նոյեմբերեանի, Կրաչէնի եւ Սարիարի մէջ,

Հայաստանէն բժիշկներու մասնագիտական վերապատրաստում Միացեալ Նահանգներու մէջ:

Այսպէս, 1988ի երկրաշարժէն եւ Արցախի ազատագրական կռիւներէն մինչեւ մեր պետականութեան անկախացման ուրախ թէ տխուր օրերը, Մայր կազմակերպութեան կողքին, ՀՕՄԻ ԱՄՆ

Արեւմտեան շրջանս տուած է իր կարելիէն աւելին՝ հասնելով տառապեալներուն եւ ընչազուրկ բազմութիւններու հիմնական կարիքներուն, այդ բոլորին կողքին, ինչպէս անոր Շրջանային վարչութեան ցուցմունքներով աշխատող ժրջան յանձնախումբերուն ու մասնաճիւղերուն յարատեւ գործունէութիւնը ցոյց կու տայ, երբէք չմոռնալով ՀՕՄԻ կանխ տեղական թէ համասփիւրքեան բազմազան պարտաւորութիւնները:

Շրջանային վարչութեան աշխատանքներուն յաջողութեան գլխաւոր ազդակը հանդիսացած են յանձնախումբերը, որոնք կը շարունակեն գործել հետեւեալ մարտիչներով:



Հայ Օգնութեան Միութեան Ամերիկայի Արեւմտեան Շրջանի Շրջանային Վարչութիւնը

Կը շնորհաւորէ համայն հայութեան Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը մաղթելով մեր Հայրենիքին Հզօրութիւն, Արցախին միջազգային ճանաչում, իսկ Զաւախքի եւ Սուրիոյ մեր հայրենակիցներուն համբերութիւն եւ յարատեւելու կամք:

Ամանորեայ գոյգ տօներուն առիթով, մեր անսահման շնորհակալութիւններն ու երախտագիտութիւնը կը յայտնենք ՀՕՄԻ բարերարներուն, հովանաւորներուն, նուիրատուներուն, ՀՕՄԻ հայրենի եւ տեղական ծրագիրներու գորակցողներուն եւ մեր 27 մասնաճիւղերու անդամներուն, Ընկերային Ծառայութեան եւ Հոգեբանական գոյգ կեդրոններու տնօրէնութեանց եւ պաշտօնէութեանց

Թող նոր տարին բարեբեր եւ նոր նուաճումներու տարի հանդիսանայ բոլորիս:

The ARS of Western USA, Regional Executive

extends its greetings

for a Happy New Year and Merry Christmas with wishes of strengthening our homeland, gaining international recognition for Artsakh, and further willpower to sustain Armenians in Javakhk and Syria.

We extend our sincere thanks and appreciation to ARS sponsors and donors, supporters of local and international ARS programs, the members of our region's 27 chapters, as well as the administration and staff of our Social Services and Child, Youth, and Guidance Center.

May the New Year be filled with great prosperity for all.



«Ժողովուրդիս Հետ, Ժողովուրդիս Համար»

զերէն ներս.

Շաբաթօրեայ վարժարաններու
Խնամակալ մարմին,

Գաստիարակչական յանձնա-
խումբ,

Հանգանակային յանձնախումբ,
Հայաստան-Արցախ յանձնա-
խումբ,

Ջալալաբ յանձնախումբ,
Հանրային յարաբերութիւններ եւ
քարոզչութիւն,

Հովիվուտի, Փաստփնայի, Նորթ
Հովիվուտի եւ Կլենտէյլի մէջ կա-
ռավարական յատկացումներով
ՀՕՄԻ Ընկերային ծառայութեան
գրասենեակները ներկայիս իրենց
պաշտօնեաներով մօտէն կը հե-
տեւին գաղութին այլազան կա-
րիքներուն եւ ըստ այնմ կը

ծրագրեն իրենց աշխատանքները՝
մատակարարելով իրենց օժան-
դակութիւնը հետեւեալ մարզերէն
ներս.

Գործի Հայթայթում,
Գաղթականներու ծառայութիւն-
ներ,

Այլազան ծառայութիւններ տա-
րեցներուն,

Անգլերէնի դասաւանդում,
Փոխադրամիջոցի կտրօններու
բաշխում,

Ուտեստեղէնի եւ Հագուստի
բաշխում տօնական օրերուն,
Սորհրդատուութիւն ընտանե-
կան եւ այլ Հարցերու շուրջ:

Կլենտէյլի ՀՕՄԻ Հոգեբանական
կեդրոնը կ'ընծայէ իր ծառայու-
թիւնները հետեւեալ բնագաւառ-



ներէն ներս.

Անհատական եւ խմբային դար-
մանում,

Ընտանիքներու դարմանում,
Ծնողներու դաստիարակչական
աջակցութիւն:

Քիչ են այն կազմակերպութիւն-
ները, որոնք երկար ու անընդմէջ
տարիներ կը ծառայեն մարդկու-
թեան: ՀՕՄը այդ քիչերուն լաւա-
գոյնն է, որովհետեւ ազգանուէր
նպատակներ կը հետապնդէ:
Մարդկութեան եւ իր ժողովուր-
դին զարգացման ուղղուած ծրա-
գիրներ կը մշակէ եւ կարեւորը
մեր մայրենի լեզուի, մշակոյթի եւ
աւանդութիւններուն արթուն
պահակը կը հանդիսանայ:

Մարդասիրութիւն, ծառայու-
թիւն, օգնութեան ձեռք, ազգասի-



րութիւն եւ Հայրենասիրութիւն՝
այս է Հայ Օգնութեան Միութեան
առաքելութեան գլխաւոր նպա-
տակը:

**ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱՄՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Թեքսաս

ՀՅԳ «Սերոբ Աղբիւր» Կոմիտէ ՀՕՄԻ «Շողեր» Մասնաճիւղ ՀԵԳ «Դրօ» Մասնաճիւղ

Հայաստանին Բարգաւաճում, Արցախին Կայունութիւն, Իսկ Սփիւռքին՝ Տուն Դառնալու Անյողողող Վճռակամութիւն

«Ակօս»ի Անդրադարձը «Հրանդ Տինգ» Հիմնադրամի՝ Կեսարիոյ Թեմայով Գիտաժողովին, Որը Արգելուեց Թուրքական Իշխանութիւնների Կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»

«Հրանդ Տինգ» Հիմնադրամի կողմից կազմակերպուած եւ Հոկտեմբերի 18-19 Հիմնադրամի սրահում տեղի ունենալիք «Կեսարիոյ եւ շրջակայ բնակավայրերի հասարակական, մշակութային եւ տնտեսական պատմութիւնը» խորագրով գիտաժողովը արգելուեց Շիշլիի թաղապետարանի կողմից: Մենք զրուցել ենք գիտաժողովի մասնակից գիտնականների հետ եւ կանգ ենք առել հետեւեալ հարցի վրայ՝ «Եթէ գիտաժողովը տեղի ունենար, ի՞նչ թեմաների մասին էլք ելոյթ ունենալու»: Ստորեւ ներկայացնում ենք գիտաժողովին չմասնակցած գիտնականների պատասխանները:

Պերեքեթլի Մատենը եւ Տեղական Ուժերը

Մարդաբանութեան ոլորտում իր աշխատանքներով յայտնի դուրս գրող Սուաւի Այտընը զեկուցում էր ունենալու Պերեքեթլի Մատենի հանքերի մասին: Այտընն ասաց. «Ներկայիս Չամարտը եւ Փողանթը շրջաններում առկայ կապարի հանքերն անփոխարինելի էին Օսմանեան կայսրութեան կենտրոնական իշխանութեան համար, յատկապէս՝ ռազմամթերքի արտադրութեան տեսանկիւնից: Մի դարաշրջանում, երբ օսմանեան կենտրոնական իշխանութիւնը հնարաւորութիւն չունէր դրանք

ուղղակիօրէն աշխատեցնելու, լուծումը տեսել էր դրանք գործարկելու լիազօրութիւնը տեղական ուժերին թողնելու մէջ: Երեւում է, որ այդ արտօնութիւնը տրուել է Տողկաթի կենտրոնում բնակուած Չափանօղլուներին, որոնք 19րդ դարի սկզբին մարտահրաւէր են նետել օսմանեան կենտրոնական իշխանութեանը: Երբ Չափանօղլու-կենտրոնական իշխանութիւն յարաբերութիւնները վերածուեցին հակամարտութեան, օսմանեան կառավարութիւնը սկսեց այլ ուժեր փնտռել այդ արտօնութիւնը տրամադրելու համար: Այս անգամ Չուկուրովայի կենտրոնից, ընդդէմ Չափանօղլուների, այդ արտօնութիւնը տրամադրուեց Մենեմենճիօղլու աշիրեթին: Երբ երեւան եկաւ Մենեմենճի-օսմանեան կայսրութիւն մրցակցութիւնը, երեւում է, որ Մենեմենճիների խորհուրդ տուած եւ Օսմանեան կայսրութեան կենտրոնական իշխանութեան հետ ֆինանսական յարաբերութեան մէջ մտած այլ հարկահաւաքներ են մէջտեղ եկել:

Այդ մրցակցութիւնը կարգաւորելու համար կողմերը ձգտել են իրենց օգտին վերահսկել բնակչութեան շարժը եւ շրջանում այդ ժամանակուայ համար օտար խմբեր բնակեցնել: Դրանց մէջ Կիւմուչհանէի յոյների ու պուլկարների նման՝ կային նաեւ



ՔՐԵՍԵՆԹԱ ՀՈՎԻՏ

- ՀՅԴ «Միմոն Չաւարեան» Կոմիտէութիւն
- ՀՕՄԻ «Թալին» Մասնաճիւղ
- ՀՄԸՄԻ «Շանթ» Մասնաճիւղ
- ՀՅԴ «Գարեգին Նժդեհ» Պատանեկան Միութիւն
- ՀԵԴ «Չարթօնք» Ուխտ
- Հայ-Ամերիկեան Տարեցներու Միութեան
- Քրեսենթա Հովիտի Մասնաճիւղ

**Կը Շնորհաւորենք
Շրջանի Ընկեր-Ընկերուիները եւ Համայն Հայութիւնը
Մաղթելով Նորանոր Նուաճումներ 2020ին**

«Ակօս»ի Անդրադարձը «Հրանդ Տինգ» Հիմնադրամի՝ Կեսարիոյ Թեմայով Գիտաժողովին, Որը Արգելուեց Թուրքական Իշխանութիւնների Կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»

քրիստոնեայ մետաղագործներ: Կան Հաւաստի տուեալներ այն մասին, որ բնակութեան այդ տեղաշարժի պայմաններում եկուորների Համար անփոխարինելի էին Պերեքեթլի Մատենի եայլաները, որոնք բախումների պատճառ էին դառնում, բացի այդ՝ կապարի տեղափոխութեամբ զբաղուող որոշ քոչուոր աշիրեթներ պաշտպանում էին օսմանեան կենտրոնական կառավարութեան կողմից:

Այդ տինամիջան միեւնոյն ժամանակ Կեսարիա-Չուքուրովա ֆինանսական յարաբերութիւնների ձեւաւորման վրայ է ազդեցութիւն ունեցել: Բամպակի արտադրութեան աճի հետ մէկտեղ՝ տեղական ուժերի կողմից վերահսկուող այդ տարածքը դառնում է Չուքուրովայի աշխատանքային հոսքի ամենակարեւոր ուղղութիւններից մէկը: Կարճ ասած, Պերեքեթլի Մատենը 19րդ դարում ձեւաւորուող Կեսարիոյ եւ Չուքուրովայի տնտեսութեան եւ բնակչութեան վրայ ակնյայտ ազդեցութիւն է ունեցել: Այս յօդուածում կենտրոնանում եմ 19րդ դարում ռազմավարական նշանակութիւն ունեցող Հանքավայրի շուրջ Հաւաքուած մարդկանց եւ իշխանութիւնների յարաբերութիւնների վրայ, որոնք ձեւաւորեցին այնտեղի ներկայիս ժողովրդագրութիւնը»:

Հողը Թուրքինն է, Բարը՝ Յոյնինը

Միացեալ Նահանգներում աշխատող պատմաբան Թոմ Փափատեմեթրիուն գիտաժողովում ելոյթ էր ունենալու «1850թ. Կեսարիայում գտնուող յոյն ուղղափառ Սուրբ Նիքոլաս եկեղեցու վերակառուցման ժամանակ յոյն-հայկական բախումները» թեմայով: Նա տուեց հետեւեալ գնահատականները. «Օսմանեան կայսրութեան վերջին ժամանակաշրջանում Կեսարիայում եւ շրջակայ գիւղերում բնակուող ոչ մուսուլման համայնքները նոր եկեղեցիներ կառուցելու, առկայ եկեղեցիները վերակառուցելու կամ էլ նորոգելու նախաձեռնութեամբ էին Հանդէս գալիս: Նախորդ դարերում պետութեան կողմից եկեղեցիների կառուցման հարցում արուած տարբեր սահմանափակումները թեթեւացուել են 18րդ դարի վերջում եւ 19րդ դարում կատարուած բարեփոխումներից յետոյ: Թէ՛ հոգեւորականները, թէ՛ հոգեւոր դասին չպատկանող մարդիկ այդ յաւակնոտ նախագծերը կեանքի կոչելիս հանդիպում էին հետեւեալ հիմնական դժուարութիւններն՝ ֆինանսական աղբիւր գտնելը, վարձակալութիւնը, ճարտարապետների եւ շինարարների հարցը, պետութեան թոյլտուութիւնը: Բացի այդ՝ մի խնդիր եւս կար՝ շինարարութեան Հա-



մար շինարարական նիւթեր եւ քարեր գտնելը: 1850ին Կեսարիոյ յունական համայնքը հանդէս է գալիս քաղաքի կենտրոնում գտնուող Սուրբ Նիքոլաս եկեղեցու վերակառուցման նախաձեռնութեամբ, որին ընդգիծանում է հայկական համայնքը: Յունական համայնքն ձգտում էր Հին գերեզմանոցի եւ Սուրբ Մերքուրիս անունը կրող եկեղեցու «հին քարերը» վերց-

նել եւ օգտագործել շինարարութեան մէջ: Հայկական համայնքը պնդել է, որ գերեզմանոցը եւ քարերը իրեն են պատկանում եւ դէմ է դուրս եկել դրան: Հայերն այդ ժամանակ Ս. Նիքոլաս եկեղեցու աշխատանքներին վերջ տալու համար հայերի կողմը բռնած օսմանեան պաշտօնեաներին բողոք ներկայացնելուց առաջ յոյներին սպառնում են: Յունական համայնքն իր հերթին Պոլ-

Harry & Alvar
Barseghian
& Family

Best Wishes
for Christmas
and
New Year

Տէր Եւ Տիկ.
Հրայր
Եւ Սոնա
Աւետեաններ

Թող 2020ը Բերէ
Խաղաղութիւն,
Առողջութիւն
եւ Ուրախ
Կեանք

«Ակօս»ի Անդրադարձը «Հրանդ Տինգ» Հիմնադրամի՝ Կեսարիոյ Թեմայով Գիտաժողովին, Որը Արգելուեց Թուրքական Իշխանութիւնների Կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»

սում գտնուող պաշտօնեաներին է դիմում: Նրանք որոշում են կայացնում յոյների օգտին: Կապաղովկիայում բազմաթիւ եկեղեցիներ կառուցած Կեսարիոյ մետրոպոլիտ Փախիոսը դրա համար անմիջապէս Պոլիս է գնում եւ գործը ներկայացնում վերաքննիչ դատարան: Նա Կեսարիա է վերադառնում դատարանի որոշմամբ առ այն, որ քարերը յոյներին են պատկանում: Յաղթանակից ոգեւորուած՝ յոյները եկեղեցին կառուցելիս «Հողը թուրքինն է, քարը՝ յոյնինը» խօսքերով երգ են երգում:

Այդ վէճը ներկայացւում է Աթէնքում գտնուող Փոքր Ասիայի Հետազօտութիւնների կենտրոնում Լօզանի պայմանագրով Կեսարիոյ բնակիչների հետ 1950ական թուականներին արուած բազմաթիւ բանաւոր պատմութիւններում: Այդ դէպքի մասին յիշողութիւնը համայնքի համար մեծ կարեւորութիւն է ունեցել, սակայն օսմանեան պաշտօնական փաստաթղթերում էլ խնդիրը ներկայացւում է գրեթէ նոյն շեշտադրումներով եւ դէպքերի նոյն յաջորդականութեամբ: Օսմանեան վարչապետական արխիւում կայ այդ գործով դատարանի որոշումը, առկայ են նաեւ 1850թ. պատկանող բազմաթիւ փաստաթղթեր: Եթէ միաժամանակ օգտագործենք այդ բանաւոր պատմութիւնները եւ օսմանեան

փաստաթղթերը, կը հասկանանք, թէ կարելո՞ր իրադարձութիւնները պետութեան կողմից ինչպէ՞ս են փաստաթղթաւորուել, եւ համայնքը ի՞նչ ձեւով է դա յիշել: Այդ աղբիւրները, բացի վէճը բացայտելը, պարզաբանում են նաեւ, թէ յունական համայնքն ինչպէ՞ս է այն մեկնաբանել»:

Կապաղովկիայի Բողոքական Յոյների Պատմութիւնը

Գոկտ. փրոֆ. Էլչին Մաճարը ելոյթ էր ունենալու Կապաղովկիայի բողոքական յոյների թեմայով: Մաճարն ասաց. «Հնարաւորութիւն ունենալու դէպքում պատմելու էի 19րդ դարում Կապաղովկիայի յոյների մէջ բողոքական միսիոնարների գործունէութեան եւ դրա արդիւնքում շրջանում երեւան եկած բողոքական յոյների մասին: Այդ հարցը յոյն եւ թուրք պատմաբանների կողմից անտեսուած թեմա է: Եթէ անգամ մինչ այդ սոյն շրջանում եղել են մի քանի յոյն բողոքականներ, ապա տեսնում ենք, որ հետագայում աւելի մեծ խմբեր են երեւան եկել Հետեւեալ չորս բնակավայրերում՝ Ջինճիտերէ, Թալաս, Ուրկիւփ եւ Կապաղովկիայի ծայրամասային գիւղ համարուող Ֆեքէի մօտ գտնուող Կիւրիւմզէ:

Միսիոնարները՝ յունատառ թուրքերէն կրօնական հրատարակութիւններով, դպրոցներով եւ



հիւանդանոցներով, փորձել են իրենց կողմը գրաւել Կապաղովկիայի յոյներին, յատկապէս երեւում է, որ 19րդ դարի վերջին քառորդին յունական պատրիարքութիւնը փորձել է ընդդիմանալ միսիոնարների գործունէութեանը՝ թիրախում յատկապէս ունենալով Ջինճիտերէն:

1924թ. բնակչութեան փոխանակման համար պատասխանատու Խառը յանձնաժողովը որոշում էր ընդունել, որ կաթոլիկ եւ

բողոքական յոյները ստիպուած չեն հեռանալ: Չնայած դրան՝ մօտ 25-30 տուն բողոքական յունական համայնքն էլ նախընտրեց գնալ Յունաստան: Մնացածները ապրում են ցրուած, սակայն կիրիմզեցիները Սելանիկին կից Կիւաննիցա (օսմանեան ժամանակաշրջանում՝ Ենիճէի վարտար) աւանի մօտակայքում Նէոս Միլոթոպոս գիւղն են հիմնել: Գիւղի մեծերը դեռեւս շրջանի լեզուով՝

Ակնաբոյժ Տոքթ. Նազարէթ Տարագճեան

Կը Շնորհաւորէ
Համայն Հայութեան
Նոր Տարին Եւ Սուրբ Ծնունդը

«Ակօս»ի Անդրադարձը «Հրանդ Տինգ» Հիմնադրամի՝ Կեսարիոյ Թեմայով Գիտաժողովին, Որը Արգելուեց Թուրքական Իշխանութիւնների Կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»

Թուրքերէնով են շարունակում խօսել»:

Սով Թալասում եւ Մի Ընտանիքի Օրագրերը

Գոկտ. Օզկէ էրթեմը «Սովը Թալասում եւ Պարթլեթթ ընտանիքի օրագրերը» վերնագրով զեկուցում էր ունենալու: Նա ասաց. «Հոկտեմբերի 18-19 2019ին Կեսարիայում իրականացուելիք, սակայն նախ՝ Կեսարիայում, ապա Պոլսում երկրորդ անգամ արգելուած գիտաժողովի ժամանակ խօսելու էի Կեսարիոյ բնակչութեան հետ պատահած ընդհանուր աղէտի՝ 1873-75թթ.սովի ժամանակ գրուած օրագրերի մասին՝ Թալասում գտնուած բողոքական միսոներներ Լիման Պարթլեթթի եւ նրա ամուսին Քոռնելյա Պարթլեթթի պահած օրագրերի:



Նրանք Անգարային կից Կեսարիոյ սանճաք են եկել 1867թ.՝ որպէս Արտաքին առաքելութիւնների յանձնակատարների ամերիկեան յանձնաժողովի միսիոնարներ եւ մինչեւ 1884թ.՝ Չմիւռնիա գնալը, ապրել են Կեսարիայում: Բնակութիւն են հաստատել Թալասում: 1873-75թթ. Կենտրոնական Անատոլիայում իշխում էր սովը: Պարթլեթթները Թալասում ականատես են եղել դրան, որը նրանց առօրեայի վրայ էլ է խորապէս ազդել: Ծրջանում հազարաւոր մարդիկ եւ անասուններ մահացան սովից ու սովի պատճառով առաջացած հիւանդութիւններից, գիւղերի եւ քաղաքների ժողովրդագրական պատկերը փոխուեց, աղքատութիւնը եւ անզօրութիւնը տարածուեցին բոլորի տներում:

Լիման Պարթլեթթի օրագրում կան մանրամասներ հայ, յոյն, մուսուլման, հրեայ եւ այլ կրօնական խմբերին պատկանող մարդկանց կեանքը թունաւորած աղէտի մասին, պատմագրութեան մէջ անտեսուած այս դէպքի վերաբերեալ կարեւոր տուեալներ եւս առկայ են:

Ինչպէս ընդունելի են համարում օսմանեան պետութեան նամակագրութիւնները կամ էլ այլ պատմական աղբիւրները, այնպէս էլ միսիոնարական աղբիւրներն են յայտնի տեսակէտներ, առաջնահերթութիւններ եւ գաղափարախօսութիւններ ներկայացնող փաստաթղթեր: Լիման եւ Քոռնելիա Պարթլեթթները, Ուիլսոն Ֆրանսուորթը, նրա կին Քարոլին Ֆրանսուորթը, էլիզապեթ Կիլսը, Սառա Քլասոնը, ձոն Օթիս Պերուսի եւ Մերգիֆոնում գտնուող Ռեւ. Շնէյտերի հետ միասին բողոքականութիւնը տարածելու առաքելութեամբ էին գտնուում շրջաններում: Նրանց առաջնահերթութիւնը դա էր, սակայն սովի ընթացքում շրջանում օգնութիւն տրամադրած ամենակարեւոր եւ ազդեցիկ մարդկանցից են դառնում: Նրանց թողած գրառումները օսմանեան պետական փաստաթղթերի, յատկապէս դեկավար-դիւանակալական շրջապատի բացթողումները լրացնում են:

ունենայի, քննարկելու էի հետեւեալ հարցերը. 1.- Թալասի տարբեր համայնքները ինչպէ՞ս են անցել այդ ընդհանուր աղէտի միջով, 2.- Պարթլեթթ ընտանիքը ինչպէ՞ս է ապրել սովը եւ պատմել այդ մասին: 3.- Օրագրերը աղէտի մասին յուշերից բացի՝ պատմական ինչպիսի՞ աղբիւրներ եւ արձանագրութիւններ են:

Ինչպէս ընդունելի են համարում օսմանեան պետութեան նամակագրութիւնները կամ էլ այլ պատմական աղբիւրները, այնպէս էլ միսիոնարական աղբիւրներն են յայտնի տեսակէտներ, առաջնահերթութիւններ եւ գաղափարախօսութիւններ ներկայացնող փաստաթղթեր: Լիման եւ Քոռնելիա Պարթլեթթները, Ուիլսոն Ֆրանսուորթը, նրա կին Քարոլին Ֆրանսուորթը, էլիզապեթ Կիլսը, Սառա Քլասոնը, ձոն Օթիս Պերուսի եւ Մերգիֆոնում գտնուող Ռեւ. Շնէյտերի հետ միասին բողոքականութիւնը տարածելու առաքելութեամբ էին գտնուում շրջաններում: Նրանց առաջնահերթութիւնը դա էր, սակայն սովի ընթացքում շրջանում օգնութիւն տրամադրած ամենակարեւոր եւ ազդեցիկ մարդկանցից են դառնում: Նրանց թողած գրառումները օսմանեան պետական փաստաթղթերի, յատկապէս դեկավար-դիւանակալական շրջապատի բացթողումները լրացնում են:

Լիման Պարթլեթթը 1874թ. Գեկտեմբերի 2ին իր օրագրում գրում է. «Այդ աղքատութիւնը եւ անձարութիւնը առաւօտից երեկոյ մտքիցս դուրս չեն գալիս, երգումս եմ տեսնում դրանք»:

Սովի ազդեցութիւնը շատ աւելի երկար է տեւել, քան արտացոլուած է պաշտօնական փաստաթղթերում: Իսկ օրագիրն այն աղբիւրներից մէկն է, որը մեզ ամենաշատն է մօտեցնում այդ ժամանակահատուածին եւ չըջանում այդ տարիներին հայերի, թուրքերի, քրտերի, յոյների եւ բազմաթիւ այլ խմբերի մարդկանց վրայ մեծ ազդեցութիւն թողած աղէտի պատմութեանը»:

Ինչպէ՞ս է Կանխուել Ատանայի Կոտորածի Տարածումը Կեսարիայում

Գոկտ. Իհսան Սետտար Քայնարը ելոյթ էր ունենալու այն մասին, թէ 1909թ. Ատանայի կոտորածը ինչպիսի արտացոլում է գտել Կեսարիայում: Նա ասաց. «Ես կարծում եմ, որ գիտաժողովի արգելումը նախ Կեսարիոյ կառավարչի կողմից, ապա Պոլսում՝ Շիշլիի թաղապետի կողմից, աւելի շատ ազմուկ հանեց, քան բուն գիտաժողովը, եթէ տեղի ունենար: Գիտաժողովի ժամանակ իմ զեկուցումն էլ նման մի իրավիճակի մասին էր: Պատմելու էի այն մասին, թէ Մարտի 31ին սկսուած Պոլսի իրադարձութիւնների, միաժամանակ 1909թ. Ատանայի դէպքեր անունով յայտնի կոտորածների՝ Անատոլիայի միւս բնակավայրերում տարածման մէջ վար-

Vartan & Sona Fundukian & Family

May You All Have a Happy and Blessed Holidays

«Ակոս»ի Անդրադարձը «Հրանդ Տինգ» Հիմնադրամի՝ Կեսարիոյ Թեմայով Գիտաժողովին, Որը Արգելուեց Թուրքական Իշխանութիւնների Կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»

չական ղեկավարութիւնը ինչպիսի՞նք էր և ունեցել: Անգարայի վիճակն էր կից Կեսարիոյ սանձաքում նահանգապետ Թուֆիք պէյի եւ կառավարիչ ձեռնալէզի նամակագրութեան արդիւնքում համայնքների միջեւ բռնութիւն չի սկսուել անհիմն խօսակցութիւնների պատճառով, դրանք խոչընդոտել են «Հայերի կողմից մուսուլմանների վրայ յարձակման մասին կեղծ նախազգուշացումները», ինչն էլ իր հերթին խոչընդոտ է հանդիսացել, որ բախումները այնտեղ կոտորածի չվերածուէին:

Անգարայի քաղաքապետը Կեսարիայում գտնուող վարչական կառավարիչներին ինչ-որ կերպ ուղղորդել է եւ Անգարայի նահանգի սահմանների մէջ բռնութեան միջոցառումներ թողնել չի տուել: Աչք չի փակել բնակչութեան զինման վրայ եւ խոչընդոտել է դա: Ես գիտաժողովի ժամանակ պատմելու էի նահանգապետ Թուֆիք պէյի տեսանկիւնից իրադարձութիւնների զարգացման մասին, ինչպէս նաեւ այն մասին, թէ նա ինչպէ՞ս է պետական պաշտօնեային հաստիքի մէջ գուցաբերել նահանգի ղեկավարելու ժամանակ եւ թող չի տուել, որ վարչական ղեկավարութիւնը համայնքների միջեւ խնդիրներ յարուցի»:

Կիրիկիոյ Կոտորածները եւ Կառավարիչ ձեռնալէզը

Գասախօս Օնտեր Ուշարը ելոյթ էր ունենալու «Կիրիկիայի կոտորածների ժամանակ Կեսարիայում ցեղային յարաբերութիւնները» թեմայով: Ուշարն ասաց. «Մրագրում էի հակիրճ ներկայացնել մուսուլմաններ-հայեր յարաբերութիւնների մասին՝ նախազգական օսմանեան արխիւում եղած նամակագրութիւնները: Այդ նամակագրութիւնների մէջ կ'առանձնացնէի այդ ժամանակուայ Կեսարիոյ կառավարիչ ձեռնալէզը (Քեչմիր) պէյի վերաբերեալ որոշ փաստաթղթեր:

Տուեալ ժամանակահատուածում Կեսարիայում երեք շարժում է եղել: Երեքի ժամանակ էլ Կեսարիոյ կառավարիչները զանգուածային յարձակումների են ենթարկուել: Առաջին շարժումը յայտնի է դարձրել Անատոլիայի տարբեր վայրերում տեղի ունեցած եւ Ապտիլ Համիտ երկրորդի բռնապետութեան խորհրդանիշների վրայ յարձակումներով: Այդ շարժման վերջում կառավարիչ Արիֆի պէյը սրտի կաթնուծ ստացաւ եւ մահացաւ: Երկրորդ զանգուածային շարժումը 1909թ. Յունուարին նոր կառավարիչ ձեռնալէզ մուսուլման զանգուածների կողմից իրականացուած յարձակում էր: Այդ յարձակման պատճառաբանութիւնն այն էր, որ ձեռնալէջը Հայերի նկատմամբ «չատ ներողամիտ» էր եւ ազատ ժամանակը նրանց հետ էր անցկացնում «անյարմար» ձևով: Այդ յարձակման ժամանակ Հայերը կոտորածի վախից իրենց թաղամասերում փակուեցին: ձեռնալէջը յարձակման ժամանակ չի վնասուել, սակայն յարձակումն իրականացրած



ոճրագործների նկատմամբ նախազգուշական միջոցառումներ չի կարողացել ձեռնարկել: Երրորդ շարժումը 1909թ. տեղի է ունեցել ապրիլին՝ Կիրիկիոյ կամ Ատանայի կոտորածից անմիջապէս յետոյ: Մուսուլման զանգուածները պնդել են, թէ Հայերն իրենց վրայ յարձակում են իրականացնելու եւ ձեռնալէզ էլ նրանց հետ համագործակցութեան մէջ է, ապա փորձել են յարձակուել զօրանոցի եւ ձեռնալէջի վրայ: Այդ շարժման ընթացքում էլ կոտորածի վախից Հայերը կրկին փակուեցին հայկական թաղամասերում:

ձեռնալէջը դիւանակալութեան այնպիսի ներկայացուցիչ էր, որն այդ շարժումների ժամանակ հայկական համայնքի կոտորածը խոչընդոտելու համար անհրաժեշտ միջոցառումներ է ձեռնարկել: Այդ վերաբերմունքը հետագայ տարիներին էլ էր շարունակուելու. նա 1915թ. Հայերի ոչնչացման քաղաքականութեան դէմ դուրս գալու համար ազատուեւ թարբերդի նահանգապետի պաշտօնից:

Քեմալական շարժմանը դէմ դուրս եկած ձեռնալէջը մի հարցազրոյցի ժամանակ ութ հարիւր հազար օսմանեան Հայի սպանութեան մասին է խօսել, ինչի պատճառով հակառակորդները նրան կոչել են «Արթին ձեռնալէզ»:

Չնայած այդ ամէնին՝ ներկայացնելու էի նաեւ Կեսարիայում ձեռնալէջի պաշտօնավարման սկզբնական շրջանում Հայերի մասին ասեկոսէ տարածելու, զինուելու, չափից դուրս ազգայնական խորհրդանիշեր ցուցադրելու վերաբերեալ լուրջ մեղադրանքներ ներառող նամակագրութիւններ: Օրինակ էի բերելու թարբերում, Այնթապում եւ Ատանայում գտնուող ամերիկեան միսիոնարների մեղադրական նամակագրութիւններից եւ պնդելու էի, որ 1908թ. յեղաշրջման սկզբում առօրեայ կեանքում երեւան եկած որոշ Հայկական ենթակայական երեւոյթներ նշան էին, որ կարող էին խորապէս ցնցել անգամ Հայերի հիմնական իրաւունքներին եւ նոր վարչակարգի բերած արժէքներին ազնուօրէն կապուած անհատներին: Բացի այդ՝ Կիրիկիոյ կոտորածներից յետոյ առաջացած հակազգեցութիւնը կարող եմ ասել, որ երբեք չէր հիմնաւորուելու, ընդհակառակը, կոտորածն իրականացրած ոճրագործներն այդ գոր-

ծողութիւններն օգտագործուելին սեփական սարսափելի արարքներն օրինականացնելու համար:

Սոճա Երկարի Տանտինին եւ Քարամանների Կարծրատիպը

Գասախօս Շահնազ Շիջմանօղլու Շիմչեքը ելոյթ էր ունենալու «Օսմանեան հեռուստապատմութիւն Կեսարիոյ մի բնակիչ. Սերսեմ Սոճա Երկարի Տանտինի» վերնագրի ներքոյ: Շիմչեքն ասաց. «1923թ. յունի-թուրքական բնակչութեան փոխանակումից առաջ քարամանլըներ անունով յայտ-

նի թուրքախօս անատոլիացի ուղղափառ քրիստոնեաների համար Կեսարիան էլ կարելի էր կենտրոն է եղել: Թուրքերէն եւ յունարէն որոշ գրական գործերում կարող ենք հանդիպել, որ կեսարացու նկարագրում են անկիրթ, անքաղաքավարի, կոպիտ եւ այլ յատկութիւններով, որոնք անհիմն կերպով վերագրուել են Անատոլիայում ապրած քրիստոնեաներին, պատմական եւ ընկերային որոշ պատճառներով: Եսարի «Պատմութիւնը» վէպում առկայ են գրեթէ բնաւորութեան այդ բոլոր գծերը, այն հետաքրքիր նիւթ է →

JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES

Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու Դենի Աբրահամեանը շարունակում է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեռնարկման անհրաժեշտ ծառայութիւններով:

Քաղաքացիութեան Կեդրոն

1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

-Բոլոր ճանապարհներով Green Card եւ այլ գաղթականական ծառայութիւններ -Եթէ երբէւէ ունեցել էք խնդիրներ, որը կարող է ձեզ խանգարել քաղաքացիութեան հարցով, մի մտաւհոգուէք, մենք ձեզ կ'օգնենք ...

Ծառայութիւններ -Հէշտ եւ կարճ ճանապարհով հիւանդութեան թոշակ SSI-SSA -Medi-Cal -CAPI, Sponsor-ով կամ առանց Sponsor-ի



Jenny Abrahamian
-Թարգմանութիւններ
-Լիւազօրագրեր/ Appostille
Նոտար/Notary

Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին

Կը շնորհատրեւնք համայն հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը





«Ակօս»ի Անդրադարձը «Հրանդ Տինգ» Հիմնադրամի՝ Կեսարիոյ Թեմայով Գիտաժողովին, Որը Արգելուեց Թուրքական Իշխանութիւնների Կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»

«ժլատ» «շահամոլ», սակայն մի-եւնոյն ժամանակ յաջողակ քրիստոնեայ կեսարացի արհեստաւորների եւ առեւտրականների մասին: Ենթադրուում է, որ հետագայ տարիներին, յայտնի պատճառներով, քարամանցու կերպարը թուրքացուել է: Թուրքացուած

բախումը համապատասխանեցրել է օսմանցի յոյն համայնքին եւ «անկիրթ» քարամանների եւ ֆեներցի յոյների հետ մի համեմատութեան է վերածել այն: Միւս կողմից՝ Հայտուն Թաների Թատերական ներկայացման մէջ պատմական կերպարների խօսքերով

նիքի պատմութիւն. Կիւլպէնկեանները» թեմայով: Նա ասաց. «Իմ ելոյթի ժամանակ պատմելու էի, թէ երբ եմ հանդիպել Կիւլպէնկեաններին, եւ թէ ինչո՞ւ է այս ընտանիքն ինձ հետաքրքրել»: «Պարոն Հինգ տոկոս» մականունով յայտնի՝ միջազգային

ների, ապա նրա որդու՝ Նուպարի վերստին Թուրքիայի քաղաքացի դառնալու ցանկութեան մասին: Ներկայացնելու էի Եւրոպայում գտնուող թուրք դիւանագէտների հետ նրա մօտ յարաբերութիւնների մասին վկաների պատմածները, թէ եւ նրա ընտանիքը



կերպարի ամենայայտնի օրինակը Թուրքիայի հեռուստատեսութեան պատմութեան մէջ ամենակարճ՝ «Սկեսուրները» (Kaynanalar) (1974) ֆիլմաշարում է, որտեղ Կեսարիոյ բնակիչներ են գործարար Նեորի Քանթարը եւ վերջինիս կինը՝ Նէորիյէ Քանթարը: Այդ ֆիլմաշարի դիպալարի հիմքում ընկած են Հայտուն Թաների «Թեթեւամիտ Ամուսինը եւ Խորամանկ Կինը» (1969) թատերական ներկայացումը եւ Մոլիերի «Ճորճ Տանտինը» (1668) երգիծական ներկայացման 3 տարբեր (նախանձ Հերիֆը, Երկարի Տանտինի կերպարը ֆիլմաշարում՝ Ահմետ Վեֆիք փաշա) բեմադրութիւնները: Ներկայացման գեղարուեստական կերպարներն են՝ Ահմետ Վեֆիք փաշան, Թոմաս Ֆասուլիեճիյանը, Ահմետ Ֆեհմը, Հրանուշը, Հոլասը, Սաթենիկը, Քիւչիք Իսմայիլը, Վիր-ժինեա Չակաքեանը եւ օսմանեան Թատրոնի մէջ մեծ ներդրում ունեցած պատմական այլ անձինք: Մոլիերի ներկայացման նման՝ ֆիլմաշարում էլ հիմնական բախումը տեղի է ունենում բարձր դասի աղջկայ հետ ամուսնացած գիւղացի Ճորճ Տանտինի կնոջ ընտանիքի միջեւ, որը մշտապէս ստորացնում է Տանտինին, եւ չնայած կնոջ դաւաճանութեանը՝ մշտապէս Տանտինն է սխալ դուրս գալիս: Ահմետ Վեֆիք փաշան ֆրանսացի ազնուականութեան եւ գիւղացիների միջեւ

կազմած դատողութիւնն այն էր, որ ֆեներցի յոյները եւ Անատոլիայի քրիստոնեայ գիւղերի բնակիչները բաւականաչափ «մեզնից» եւ «տեղացի» չէին: Թատերական ներկայացման Յրդ մասին ժամանակ, չնայած հայ դերասանների երեւելիութեանը, Ճորճ Տանտինի խաղը «իտէալական բեմադրութեան» օրինակ է համարուել եւ ամբողջովին «մուսուլմաններից» եւ «տեղացիներից» կազմուած յանկարծաբանութեան վերածուել: Նման մի քննարկում օրակարգ է եկել դեռեւս ֆիլմաշարից 5 տարի առաջ՝ «Ակօս»ի անդրադարձը «Հրանդ Տինգ» հիմնադրամի՝ Կեսարիոյ թեմայով գիտաժողովին, որը արգելուեց թուրքական իշխանութիւնների կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»՝ 1964թ. բեմադրուած «Քեչանլը Ալիի տեսլանը» ներկայացման մէջ: Անգարայի Ալթընտաղցի քերտ ձեւալին թուրքացնելիս նրան դարձնում են Քեչանցի Ալի: Ի վերջոյ ֆիլմաշարը կարող ենք մեթաֆոր համարել, որտեղ Կեսարիոյ բնակիչները՝ Երկարի Տանտինիները, վերածուում են Հիմմեթ աղաների»:

Կիւլպէնկեանների Պատմութիւնը

Գիտնական ճափեր Սարքայան ելոյթ էր ունենալու «Կեսարիոյ բնակիչ հայ առեւտրական ընտա-

նաթարդիւնաբերութեան առաջացման եւ զարգացման մէջ կարեւոր դեր խաղացած Գալուստ Սարգիս Կիւլպէնկեանը ծնուել է 1869 թ. Պոլսում, իսկ 1955 Յուլիսին մահացել Լիզպոնում: Լա՛ւ, իսկ ինչո՞ւ «Կիւլպէնկեան» հիմնադրամը ստեղծուեց Լիզպոնում: Իմ ելոյթի ժամանակ, որը պատրաստելիս օգտագործել եմ Կիւլպէնկեանների հարուստ լուսանկարչական ալպոմները, տեղեկութիւններ էի տրամադրելու «Գալուստ Կիւլպէնկեան» հիմնադրամի, թանգարանի եւ Երուսաղէմի հայկական պատրիարքարանում գտնուող «Գալուստ Կիւլպէնկեան» գրադարանի մասին: Պարզաբանելու էի, թէ Կիւլպէնկեանների հետ կապուած յուշերում, յիշողութիւններում, կենսագրութեան, ինքնակենսագրութեան մէջ եւ այլ աղբիւրներում ինչո՞ւ գրեթէ տեղեկութիւններ չկան այն մասին, որ Կիւլպէնկեանները արմատներով Կեսարիոյ կեդրոնից՝ Թալասից են եղել, մանրամասն տեղեկութիւններ էի տալու 1915թ. առաջ եւ յետոյ Թալասում հայերի կեանքի վերաբերեալ, որից յետոյ պատմելու էի Կեսարիոյ եւ Խարբերդի շրջակայքում Կիւլպէնկեանների ունեցած համայնքային, մշակութային եւ տնտեսական կարեւոր դերի մասին: Խօսելու էի 1935թ. նրա, առանց Թուրքիայի Հանրապետութեան թոյլտուութեան, Անգլիոյ քաղաքացի դառնալու պատճառ-

խաղ էր Թուրքիոյ հետ յարաբերութիւնները: Տեսնելու էինք, թէ ինչերի կը հանդիպենք, եթէ Գալուստ Կիւլպէնկեանի ինքնութեան, այսինքն՝ Կեսարիայից լինելու մասին հետքերը որոնենք թուրքական մամուլում»:

1915ից Յետոյ Յորդանանում Մնացած Չոմքքի Հայերը եւ Նրանց Պատմութիւնը

Գիտաժողովի համար ելոյթ պատրաստած, սակայն արգելքի պատճառով զեկուցմամբ հանդէս չեկած Աննա Օհանեսեան Չարփիներ ներկայացնելու էր Կեսարիայից հարկադրաբար Յորդանան գնացած կանանց պատմութիւնը: Նա ասաց. «Աշխատում եմ որպէս մարդաբան: Տարիներ առաջ սկսեցի ուսումնասիրութիւն կատարել Յորդանանի շուրջ: Մասնաւորապէս իմ թեման Յորդանանի հարաւում գտնուող պետեւի աշիրեթների մասին է: Թեման ուսումնասիրելիս հանդիպեցի մի մարդու, որն ինձ յայտնեց. «Մայրս հայ է»: Դա ինձ համար մի փոքր զարմանալի էր: «Հայերէն մի բառ արտասանիր», ասացի ես, նա էլ «Ջուր» ասաց եւ սկսեց պատմել իր մայրիկի պատմութիւնը: Այդպիսով, ես էլ սկսեցի այս թեման աւելի մանրամասն ուսումնասիրել: Այո՛, Ամմանում Յեղասպանութիւնից յետոյ եկած հայկական համայնք կայ: Յայտնի համայնք է: Սակայն

«Ակոս»ի Անդրադարձը «Հրանդ Տինգ» Հիմնադրամի՝ Կեսարիոյ Թեմայով Գիտաժողովին, Որը Արգելուեց Թուրքական Իշխանութիւնների Կողմից. «Եթէ Խօսէինք, Ի՞նչ էինք Պատմելու»

Յորդանանի Հարաւից ենք խօսում. այս թեման էի ցանկացել ներկայացնել, քանի որ դէպի Յորդանանի Հարաւ աքսորը շատ յայտնի թեմա չէ: Իմ թեման Հետեւեալն է. «Ի՞նչ պատահեց 1918 թ. յետ չվերադարձած եւ այնտեղ մնացած մարդկանց հետ»: Ինչպիսի՞ն է եղել նրանց կեանքը: Այդ մարդկանց մեծ մասը կանայք են եղել: Նրանց մեծ մասը 15-16 տարեկան երիտասարդ աղջիկներ էին, որոնք պետեւինների հետ են ամուսնացել: Դա ի հարկէ մեծ հաշուով ողջ մնալու համար էր, սակայն երբ նրանք երեխայ են ունեցել, նախընտրել են մնալ այնտեղ: 13 կամ 15 կին նախընտրել է

թիւն ունէր»: Նրանք ասում էին. «Մայրս հայ էր», սակայն դա ի՞նչ էր նշանակում: Հայերի պատմութեան մասին գաղափար գրեթէ չունէին: Լա՛ւ, իսկ այդ կանայք մշակութային տեսանկիւնից ինչպիսի՞ ժառանգութիւն կարող էին թողած լինել: Հասկացայ, որ «Հայր մեր» աղօթքը կամ էլ որոշ մանկական երգեր կամ էլ Սուրբ Զատիկին ձու ներկելու սովորոյթը հաղորդել էին իրենց երեխաներին: Այդ կանանց մեծ մասը Կեսարիոյ Չոմաքը բնակավայրից են եղել: Նրանք պատմել են թէ՛ Չոմաքը, թէ՛ իրենց աքսորի պատմութիւնը: Այդ պատմութեան մէջ



մնալ: Յորդանանի պետեւի համայնքը նրանց լաւ է ընդունել: Իմ հետաքրքրութեամբները այդտեղից է գալիս: Ի՞նչ եղաւ: Մէկ հարց եւս կայ. նրանց՝ այսինքն երեխաների համար հայ լինելը ի՞նչ նշանակու-

շատ հետաքրքիր պատմութիւններ եւս կան: 1950ական թթ. բժիշկ Ներսիսեան անունով մէկը աքսորից յետոյ Մասնում է ապրել, ապա վերադարձել է Յունաստան, տարիներ անց գնա-

ցել է Երուսաղէմ՝ ուխտի: Այնտեղ իր մանկութեան օրերն է յիշում, ցանկանում է աղօթք անել, սակայն չի կասկածում իր հայկական ինքնութեան մասին: Երբ կանայք լսել են հայի գալու մասին, եկել են հանդիպման, որը հետաքրքիր է անցել: Լուսանկարուել են: 1950ական թթ. Նիւ Եորքում մի ամսագիր էր հրատարակում: Այդ ամսագիրը չոմաքի հայերի է երեւան հանում: Ներսիսեանը այնտեղ տպագրում է Մասն գնալու պատմութիւնը, այնտեղ ապրող հայ կանանց անուանացանկն է հրատարակում: Ամէն անգամ, երբ չոմաք-

ցի հայերն այդ անունները կարդում են, գտնում են իրենց բարեկամներին: 1950ից 1967թ., այսինքն՝ մինչեւ արաբա-իսրայէլական պատերազմ, աշխարհի բազմաթիւ վայրերից հայեր են եկել Մասն եւ ծանօթացել իրենց բարեկամների հետ: Այդ ողջ ընթացքում Մասնը վերածուել է միջազգային շրջանի: Ահա այս ամէնն էի ներկայացնելու իմ զեկուցման ընթացքում»:

Թարգմանեց՝ ԱՆԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ «Ակունք»

*Merry
Christmas
& Happy
New Year*

**Superior Electric
Motor Service, Inc.**

4622 Alcoa Ave.
Vernon, CA 90058
Tel. 323.583.1040
Fax 323.583.9266

**Միքայէլ
Հացպանեան**

Կը Շնորհաւորէ
Իր Ազգակիսաներուն,
Բարեկիսաներուն
եւ Ընկերներուն
Նոր Տարին եւ Ս. Ծնունդը
Թող Այս Նոր Տարին
Բերէ Շատ Բարիք՝
Համայն Աշխարհի
Մարդոց Անխորի

Նոր Տարին Եւ Մեզ

ԳԼՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

365 օրեր «վայելել» ետք, մարդիկ հին տարին նետեցին պատմության գիրկը, որովհետեւ «նորը» եկած եւ հասած էր ու կը թակէր բոլորին դռները ու բոլորի միտքերուն ու հոգիներուն մէջ կը փորձէր դրական երազներ հիւսել:

Նոր Տարի է: Հակառակ անոր որ աշխարհը տակն ու վրայ է, բայց կաղանդի խորհուրդը ներկայ է տուններէն ներս: Միջազգային կեանքն ալ խառնակ է: Մեծ ու փոքր պետութիւններու զինարշար կը շարունակուի: Ազգեր կը զինուին գալիք օրերու անստգութեան դէմ: Գրեթէ ամէն ցամաքամասի վրայ ժողովուրդներ իրենց խաղաղութիւնը զենքով կը շարունակեն փնտռել եւ դիմագրաւելու համար գալիք օրերու անստուգութիւնը, մահացու զենքերով սկսած են զինուիլ: Վաղը ինչեր կը նստան պատահիլ, ոչ ոք տեղեակ է: Ու քաղաքական, տնտեսական եւ ընկերային ներկայ այս անապահով վիճակին մէջ, մարդիկ կրկին անգամ իրենց աչքերը կը յառնեն դէպի նոր եկող այս անծանօթին եւ կը փորձեն դրական մտածել, նոր լոյսի եւ յոյսի նշաններ որոնել, աւելի ամուր սիւններ «հաստատել», կառուցել, որպէսզի իրենց կեանքի տանիքի ծանրութիւնը քիչ մը երկար դիմանայ ու չկրկնուի:

Այլ խօսքով, դարձեալ նոր յոյսեր շարուած են մարդկային կեանքի հորիզոններուն վրայ:

Ու բոլորին նման ես ալ այս «նորը» կ'ուզեմ լաւատեսութեամբ դիմաւորել, յուսալով, որ ան իր բոլոր դրական երեսներով ուրիշ պիտի ըլլայ, որպէսզի դառնայ օրինակելի եւ նոյնքան ալ՝ յիշատակելի իր նախկինէն պիտի տարբերի:

Այս մտածումներէն մեկնած, ինքնածին, արդէն սկսած եմ ես զիս փնտռել: Ու ինչ մեղքս պահած, ի տես նման «բանասեր», ամէն տարի այս օրերուն նոյն իրավիճակը կ'ապրիմ, նոյն աղօթքի եւ նոյն բարի մաղթանքներու մրմունջներով, անոր համար է, որ հիմա կը փորձեմ հոգիս գրիչովս քակել:

Այո՛, կ'ըսեմ տարի մըն ալ անցաւ իմ եւ անշուշտ աշխարհի կեանքէն: Բայց խոստովանիմ, որ անցեալ տարի տարիքս զգացնել տուաւ ինծի: Առողջական խնդիրներ: Այս՝ ուրիշ հարց է:

Համեստօրէն նաեւ կ'ուզեմ աւելցնել, որ ընդհանրապէս ցարդ տարիքս չեմ զգացած, որովհետեւ կը գիտակցիմ, որ ես տակաւին շատ գործ ունիմ ընելիք, որոնք զիս հանգիստ չեն ձգեր: Գոհ եմ իմ կատարածներէն: Սակայն մեծամտութեան ըսեմ, որ ցարդ ստեղծած եմ «ուժեղութեամբ» ներած չափով, նոյնիսկ յաճախ զարմանալով, թէ ինչպէս այս բոլորը հոս հասցուցած եմ: Այո՛, կը կրկնեմ, մէջս տակաւին կայ սորվեցնելու մարմաձը, բայց եւ այնպէս կայ նաեւ սորվելու՝ ցանկութիւնը: Այս մէկն ալ ուրիշ հարց է:

Իսկ էականը՝ ըսեմ, որ բոլոր տարեկիցներուս նման, ընտանիքէս ետք գաղութովս, հայրենիքովս ու ծննդավայրովս կը խան-



դավառուիմ ու կ'աշխատիմ պահել այն ճամբան, ուրկէ մեր նախնիները անցած են:

Արդ յստակ է, թէ անցնող տարուան ընթացքին ձակատագրական պահեր, դէպքեր եւ պատահարներ կանգնեցան ազգովին մեր դիմաց ու տակաւին կը յամենան մնալ: Բոլորս ալ յաճախ ցնցուեցանք, եւ երբեմն ալ յուզուեցանք, տխրեցանք եւ երբեմն ալ՝ ուրախացանք: Բնական է:

Անոր համար միշտ բարին մաղթեցինք, աղօթքներով ու բանաստեղծութիւններով մեր ժամերը օծեցինք:

Միւս կողմէ սակայն նաեւ ականատես եղանք, որ աշխարհ ըստուած այս գեղեցիկ մոլորակը, արդէն դարերէ ի վեր տակն ու վրայ վիճակ մը կ'ապրի:

Նաեւ ականատես եղանք, որ հայաստան մեր շատ մը գաղութներէ ներս կարծես ապագայի «նպատակը» հետզհետէ սկսած է մաշիլ կամ արդէն իսկ մաշած է: Այս ընթացքով պիտի մաշի նաեւ ժողովուրդի յոյսն ու ոգին, եւ մենք կամաց-կամաց պիտի փոքրանանք ու եւ պապ՝ սերունդներ պիտի կորսուին: Որովհետեւ... որովհետեւ, չար սատանայ, հայ կեանքի բազկերակը անկանոն գործած է:

Դժուարին ու ծանր պայմաններու մէջ կ'ապրին հայ սփիւռքները: Նորութիւններ չեն: Ժամանակներն ու յոյսերը գրեթէ ամէն տեղ ալ փոխուած են: Նաեւ կը նշմարենք, որ ֆիզիքական կորուստին կողքին, կայ բարոյական կորուստն ալ: Եւ կը տուժենք: Շատ բան կը տուժենք: Այսօր ամէն բանէ աւելի հիմնականը ոգին է: Հայկականութիւն ստեղծող: Այս մէկը չենք հասկցած կարծես:

Բայց անկախ այս բոլորէն, անկախ մեր երազներէն եւ յոյսերէն, մեր ցաւերէն եւ մեր հարցերէն կայ իրականութիւն կոչուած այս հաստատումը, թէ շուրջ երեք տասնամեակներէ ի վեր ունինք ազատ եւ անկախ հայրենիք մը: Անկախ երկիր եւ հող՝ Հայաստան անունով, որ աշխարհի հայութեան համար ամէնօրեայ անհրաժեշտութիւն է: Ահա թէ ինչո՞ւ հայրենիքի գաղափարը արժէք ըլլալէ աւելի հեռաւոր կախարդանք պէտք է որ ըլլայ: Միւս կողմէ, սակայն Սփիւռքի համար

էական է, որ հայրենիքը չկորսուի նէ իր նկարագիրը եւ անոր հետ իր հաւատքն ու մշակոյթը, որովհետեւ համոզուած ենք, որ մեր պետականութիւնը մեր նկարագիրն ալ է: Սփիւռքը ուժեղ է, եթէ հայրենիքը զօրաւոր է՝ չեղած ենք միշտ: Ազատ հայրենիքը մեզի, բոլորիս համար լոյս է, լինելութեան նշան եւ եթէ կ'ուզէ՞ք, կեանքի հզօրութեան կանչ ու յատկապէս մեզ միացնող առաջը: Մենք տարօրինակ ժողովուրդ մըն ենք: Մեր ձակատագիրը մեր պատմութեան մէջ է: Շատերը՝ նոյնիսկ տեղեակ ալ չեն: Ըսինք, հայրենիք մը ունինք, որ մեր բոլորին կը պատկանի եւ հոն կայ ամէն տեսակի դժուարութիւն՝ հարց, տագնապ: Բնական է: Բայց տեսանելի է, թէ տակաւին վարանում կայ միտքերուն մէջ: Տակաւին պատրաստ չենք իրա-

դափոխութիւնը ժամանակի պահանջին ալ էր:

Կարծիքներ եւ տեսակետներ չատեն. ինչպէս նաեւ հարցումներ՝ պատասխաններէն աւելի երկար:

Շեշտուած իրականութիւն է, որ ներկայիս մեր հայրենիքը ներքին եւ արտաքին բազմազան հարցեր ունի: Հարցեր կան, անսասան պատերու նման, որոնցմէ մաս մը մենք սկսած ենք ստեղծել: Այս բոլոր հարցերու լուծման համար կը կարծեմ, որ ոչ միայն առողջ միտքերու հոսքի կարիքը ունինք, այլ նաեւ՝ իմաստուն եւ հեռատես դեկավարներու, ազգանուէր եւ հոգիի մեծութեամբ արդարամիտներու, արթուն զանգուածներու եւ գիտակից պատասխանատուներու, հզօր բանակի կողքին: Ինչո՞ւ չենք փորձեր դառնալ ներչնդդ եւ միակամ ապրող հաւաքականութիւն եւ առանց ինքնախաբէտ-



կանութիւնը յանձն առնելու: Սեփական ուժերու նկատմամբ վստահութեան պակասը զգալի է: Այս ձեւով, մնայուն արժէքները պիտի նուազին: Արժէքներու այս փոփոխութիւնները յուսահատութեան պիտի տանին մեզ:

Ահա իրականութիւն մը: Վերջ ի վերջոյ պէտք է գիտնալ, որ իրականութիւնը իբրեւ յանձնառութիւն ընդունիլը քաջութեան համազօր է:

Կրկնելու գինով կ'ըսեմ, որ կեանքին եւ նպատակին հանդէպ լաւատեսութիւն ունենալը մեծ բարենիշ մըն է: Ուստի, մենք զմեզ հպարտ պէտք է զգանք, որ ներկայիս ականատեսներ ենք մեր անկախ հայրենիքին ու ամէն ձեւով ու առիթով անոր ներկայութիւնը կը վայելենք հաստատօրէն: Ուստի, հարկ է զայն ամէն գնով ամուր եւ զօրեղ պահել:

Ուրախացանք, որ թաւալ յեղափոխութիւնը եկաւ ու նոր ոգի, ուղի ու շունչ բերաւ երկրին ու նաեւ տարբեր ու որոշ վստահութիւն եւ ակնածանք՝ աշխարհի աչքին: Բայց չմոռնանք, որ միայն ազգային գիտակցութեան շնորհիւ է, որ կարելի պիտի ըլլայ որոնել մեր «նոր» ուղին ու ճամբան:

Արդ, անգամի մը համար մենք մեզի հարց տանք, թէ արդեօք այսօր իսկապէ՞ս մեր ազատ ու անկախ երկրին մէջ մենք միացած ազգ ենք: Շատեր հաւանաբար ինծի պէս կը կարծէին, որ այս նոր յեղափոխութիւնը պիտի միացնէր բոլորս: Շատեր նաեւ համաձայն էին, որ որ այս նոր յե-

թեան կառուած մնալ հայրենիքի սիրտին ու անոր հողէն մեզի հասնող լուռ ու խորունկ ձայներուն, որովհետեւ հայրենիքի հողին վրայ ապրելու հպարտութիւնը ներչնդդ պէտք է դառնայ բոլորիս:

Մէկ ժողովուրդ, մէկ հայրենիք, մէկ մշակոյթ, մէկ եկեղեցի, մէկ լեզու: Ո՛ւր է... Ո՛ւր ենք...

Եթէ այդ... այս ուղղութեամբ ի՞նչ կ'ընենք: Ժամանակն է, որ մեր միտքերը ազգային գիտակցութեամբ վերանորոգենք, որպէսզի վաղը չափսոսանք:

Որովհետեւ պէտք է, լաւ գիտնանք, թէ մեր այս արարքներով, մեր նոր պատմութիւնն է որ կը գրենք:

Արդ, այս բոլորէն ետք, ամառորեան մաղթանքս է, որ մենք բոլորս ալ, մեր հայրենիքի նկատմամբ, լաւատես ըլլանք ու այդպէս ալ մնանք, եւ մանաւանդ անոր ապագան սիրենք ու միասին զայն կերտենք, որպէսզի մեր երկիրը մեր բոլորին ջանքերով դառնայ արտաքին տեսքով եւ ներքին բովանդակութեամբ պայծառ ու հզօր երկիր մը, իր օրէնքներով, մանաւանդ իր արդարամիտ իշխանութեամբ ու դեկավարներով: Կիսամիջոցներու ժամանակը շատոնց անցած է: Կարգը եկած է ազգային ոգիով շաղախուած արմատական կարգադրութիւններու, յանուն գալիք լուսաւոր ուղիներու:

Մինչ այդ... ինչ որ ալ ըլլայ ձեր որոշումը, բոլորիդ՝ Շնորհակալոր Նոր Տարի եւ բարի կաղանդ:

Հարիւր Տարիներու Պատերազմը

ԳՈԿՏ. ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ



Նախակրթարանի եւ երկրորդականի դպրոցական տարիներուն՝ Պէյրութ, մեր կրթական ծրագիրին մէջ նաեւ ներմուծուած էին պատմութեան դասապահները՝ թէ՛ հայոց պատմութիւն, թէ՛ արաբերէնով «Թարիխ», որ մէկ մասն էր պետական քննութիւններու ծրագիրին: Իսկ պետական քննութիւնները մեր ժամանակ պիտի սկսէին նախակրթարանի հինգերորդ դասարանի «սերթֆեքա»ի քննութիւններէն հասնելու համար իններորդ դասարանի «պըրըվէ»ի քննութիւններուն, ապա պաքալորէայի քննութիւններուն՝ առաջին եւ երկրորդ մասերով: Բայց պատմութեան դասապահներուն մէջ հետաքրքրական կերպով կային կրկնուող իրականութիւնները: Վերջապէս, չէ՞ որ «պատմութիւնը ինքզինք կը կրկնէ»... Մեր կրթական ծրագիրին մէջ, գէթ՝ երեք պետական քննութիւններու պարագային, կար կրկնուող պատմութիւնը: Հոն էին Լեոնալիքանանի կառավարիչները եւ մեզի հպարտութիւն ներշնչող Տաուտ փաշան, որ հայ էր, պիտի հասնէինք նաեւ մինչեւ վերջին կառավարիչը՝ Յովհաննէս Գուլումճեան փաշան, որ նոյնպէս... Հայ էր: Մենք այլ երկրներու չէինք կրնար տեսնել՝ բացի հայուն անունները գոց սորվելէ: Եւ պիտի չուզանար Մալիս վեցը՝ Լիբանանի Նահատա-

կաց տօնը եւ անոր պատմութիւնը: Նախակրթարանի տարիներէն սկսեալ եւ հետեւողականօրէն միջնակարգ եւ բարձրագոյն՝ կային քսանեւմէկ քաղաքական ու մտաւորական գործիչներու կախաղանները եւ անոց նահատակութիւնը, որոնք բոլորը պիտի մարմնաւորուէին Պուրճի կեդրոնական հրապարակի Նահատակաց յուշարձանին մէջ: Իրարու ետեւէ գալարուող այս նոյն պատմութիւններուն մէջ կար նաեւ միջազգային պատմութեան բաժինը եւ անոր մեծագոյնը՝ Հարիւր տարիներու պատերազմը միջին դարուն, Արեւմտեան Եւրոպայի մէջ Անգլիոյ թագաւորութեան եւ Ֆրանսական արքունիքին միջեւ, երբ հինգ թագաւորական սերունդներ անհատնում պայքարներ մղած են: Այդ տարիներուն մեր պատանեկան մտածողութեամբ եւ երեւի անմեղ հայեացքով մը կեանքին

ընդհանրական վիճակներուն ու անցուղարձեռուն՝ հարց պիտի տայինք: Բայց ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ պատերազմ մը հարիւր տարի երկարի: Ինչպէ՞ս կարելի է, որ մարդիկ ու հաւաքականութիւններ կրնային տոկալ ու ապրիլ, հապա կեանքեր՝ ի՞նչ տեսակի բովանդակութիւն եւ ընթացք պիտի ունենային պատերազմական վիճակի մէջ: Ու հապա հաշուա՞րկը... Հարիւր երկար տարիներ...
 Կեանքի փորձն ու փորձառութիւնը պիտի սորվեցնէին, որ մարդուն, հաւաքականութեան եւ երկիրներու պատմութիւնը, եւ՛ անոր հոլովոյթները կրնային երկար եւ երկարաշունչ ըլլալ: Ասիկա աւելիով սկսանք սորվիլ եւ անդրադառնալ՝ որպէս լիբանանցիներ, երբ սկսան 1975 Ապրիլի քաղաքացիական կռիւները: Երեւի ոչ կռիւ... այլ՝ պատերազմ... «Թարիխ»ի դասերը ամբողջացուցած էինք: Սորված էինք այդ բոլոր կրկնուող պատմութիւնները՝ նախակրթարանէն սկսեալ: Հասած էինք աւարտական տարին՝ երկրորդական բաժինին մէջ, երբ սկսաւ մեր... երկար տարիներու պատերազմը: Մեր սորվածին նմանութեամբ... Հարիւր տարիներու պատերազմը եղաւ հանգրուանային, այսպէս ըսած՝ կռիւ-խաղաղութիւն «փուլային» թէ՛ «փաթեթային» տարբերակներով, բայց ընդհանուր մթնոլորտը միշտ ալ անորոշ էր: Պատերազմ-կռիւ

ընթացաւ տարբեր բովանդակութիւններով եւ պարունակներով՝ մէկ կողմէ զինուորական առճակատումներու նաեւ՝ քաղաքական-համայնքային: Մթնոլորտներ, որոնք մէկ-մէկ ապրեցանք իւրաքանչիւրս իր «համոյթով»: Այդ օրերուն՝ 1975ի տարիներուն, չեմ գիտեր, եթէ կրնայի պատկերացնել, թէ պիտի հասնէինք այսօրուան՝ 2019 տարուան վերջաւորութեան, երբ պատմութիւնը ինքզինք պիտի կրկնէր... 1975ի երկրորդական վարժարանի մեր աւարտական դասարանէն երեւի մնացինք միայն երկու դասընկերներ՝ ամբողջ Լիբանանի մէջ: Իմ բարեկամները մէկ-մէկ սկսան լքելու երկիրը՝ չուզելով ապրիլ այս անապահով վիճակներուն մէջ: Կային տակաւին «մարգարէական» տեսութիւնները այդ օրերէն սկսեալ. «Այս խնդիրները երկար են: Աւելի լաւ է՝ ձգել ու երթալ»: Ճիշդ էին... երեւի... չեմ գիտեր... Հապա ես ու իմ նմանները... Սխալեցա՞մք... Առիթը չունեցա՞մք... Այսպէս պիտի քակէինք մեր ապրած օրերուն իւրաքանչիւր օղակը, որուն հետ ու անոր մէջէն՝ մեր ապրած իւրաքանչիւր փորձառութիւնը: Վախը, սարսափը, ճնշումը, ընկճուածութիւնը, առեւանգումները եւ հասնելով... մահուան՝ մօտիկ եւ հեռուոր անձինք: Այդ իւրաքանչիւր օղակին մէջ կար կեանք մը, որ ապրեցանք՝ թէկուզ, անորոշ: Կեանքը չէր կեցած... Կը շարունակուէր... →

**Ընկ. Կարալիս
 եւ Ընկհ. Մայտա
 Պէզճեան
 եւ զաւակները
 Իրենց
 Ընտանիքներով**

*Կը շնորհաւորեն իրենց
 ընկեր-ընկերուիներուն,
 բարեկամներուն,
 Հայութեան
 եւ մանաւանդ
 Սուրիահայութեան
 Նոր Տարին
 եւ Ս. Ծնունդը*

**Ալիք եւ Լուի
 Պէրպէրեաններ**

**Նոր Տարին
 Յոյսերով
 ու Բարիքներով
 Լի Տարի մը
 Թող Ըլլայ**

Հարիւր Տարիներու Պատերազմը

նակուէր... Այդ շարունակուող եւ իրար կապուած սարսափազդու օղակներուն մէջէն սկսայ տեսնել, որ իմ սորված «Թարխիս»ի դասերս որքան իրական են եղեր, թէ նոյնքան իրական է Հարիւր տարիներու պատերազմը...

Մեր կեանքերուն մէջ սկսան նաեւ կազմաւորուիլ լիբանանեան, բայց նաեւ լիբանանահայու ապրելու վճռակամութիւնը եւ կեցուածքը: Այդ կեցուածքին հետ՝ նաեւ նկարագիրը: Սկսանք սորվիլ, թէ ի՞նչ կրնայ նշանակել լիբանանցի ըլլալ, բայց նաեւ՝ Հայ... եւ վերջապէս՝ լիբանանահայ: Լիբանանահայ գաղութի ու անոր դեկավարութեան միասնական ու հաւաքական «դրական չէզոքութիւնը» ցոյց տուաւ, որ տազնապին ու պատերազմին հոլովոյթներուն մէջ գաղութին որդեգրած կեցուածքը եղաւ հեռատես եւ գաղութը խնայեց աւելի ծանր վնասներէ ու կորուստներէ, քան այն, ինչ որ պատերազմը պատճառեց: Վերջապէս, պատերազմական կեանք ապրեցանք, եւ կարելի չէ ըսել, որ վնաս երբեք չունեցանք, անպայմանօրէն ունեցանք, բայց անիկա նուազ էր: Ասիկա արդիւնք էր գաղութի խոհեմ կեցուածքին եւ միասնական դիրքորոշումին: Եթէ 1990ին զինուորական առճակատումները, այսպէս ըսած, դադրեցան, բայց ոչ երբևի՜ համայնքային-քաղաքական, քաղաքացիական ու, տակաւին, տնտեսական եւ ընկերային: Մենք սորվեցանք, որ լիբա-



նանեան քաղաքական կեանքի թնճուկը որքան ներքին է ու տակաւին, արտաքին: Մեր այս գեղեցիկ երկիրը միշտ ալ «քաշքշուքի» ենթարկուած է իր համայնքային-քաղաքական կառոյցներուն միջեւ: 1975ին թուականին մեր որդեգրած միասնական կեցուածքն ալ փոխուեցաւ եւ ստացաւ տարբեր պիտակ: Մեր երկրին տարիներու վրայ երկարած ընդհատում-բախում եւ պայքարով լեցուն կեանքերուն մէջ կեցուածքներն ալ կրնան փոխուիլ...

Բայց այդ փոխուած կեանքերով նաեւ սորվեցանք, որ մեր երկրին քաղաքական-ընկերային թէ համայնքային «վերիվայրումներուն» մէջէն, եթէ ոչ միշտ, յաջողութիւններ արձանագրեցինք՝ որպէս լիբանանահայ գաղութ, հոն էր, ուր առանձին գործեցինք: Այսօր Լիբանան դարձեալ ճգնաժամի մէջ է: Այս ալ Հարիւր տարիներու մէջ շողկապն է: Ներկայ ճգնաժամը որակուած է որպէս ըմբոստութիւն՝ տիրող փտածութեան եւ կաշառակերութեան ընդհանուր իրավիճակին դէմ՝ պայքար: Յստակ է, որ դարձեալ անորոշ վիճակի մէջ մտած ենք որպէս երկիր, ի տարբերութիւն նախկին վիճակներուն՝ մինչեւ այսօր տակաւին չկան զինեալ առճակատումներ, աղօթենք ու մաղթենք, որ այդ մէկը չըլլայ. այսուհանդերձ, տազնապն ու անորոշութիւնը իրենց ծանրագոյն վիճակին մէջ առկայ են: Նկատի ունենալով, որ գործիս բերումով անընդհատ ճամբորդութիւններ կը կատարեն, հետեւեալ ստիպուեցայ վերջին այս իրադարձութիւններուն քանիցս գիշերել Պէյրութի օդակայանին մէջ՝ խուսափելու համար ճամբաներու փակումէն եւ թռիչքին չհասնելու կացութենէն: Եւ հոն՝ օդակայանի ոչ հանգստաւէտ պայմաններուն մէջ, սկսայ մտածել այն երկար ճամբուն մասին, որ քալեցինք Լիբանանի մէջ: Այդ երկար ճամբուն թիւերու եւ տարիներու հաշուարկը եղաւ արդէն քառասունեւհինգ... Տակաւին չենք հասած Հարիւր տարիներու «տեսլականին»... Բայց արդէն բաւարար է հասկնալու, թէ ի՞նչ կրնայ ըլլալ կեանքը այն պատմութեան դասերուն մէջ, որ սորվեցանք: Ընդհանրապէս փորձած եմ այդ «ինչու» հարցումներուն մէջ ինքզինքս չչարչրկել: Ինչո՞ւ իմ բարեկամներն ու ընտանիքի հարազատները պիտի մեկնէին այլ տեղ, եւ ես կեանքս պէտք է շարունակէի Միջին Արեւելքին մէջ: «Ինչու» երեւի պատասխան չունի: Չեմ ալ գիտեր, թէ Հարիւր տարիներու պատերազմի ժամանակ երբեիցէ ունէ՞ր: Բայց կայ միս հարցումը՝ «Ի՞նչ ըրինք» եւ «Ի՞նչ պիտի ընենք»: Չեմ գիտեր, թէ հորիզոնին վրայ կ'երեւի՞ շուտա-

փոյթ լուծում: Պիտի տեսնել, թէ ինչպէս երկիրը, նոյնպէս ալ մենք՝ որպէս լիբանանահայ գաղութ, կ'անցնինք ապահովական եւ յատկապէս տնտեսական-ընկերային ճգնաժամէ ու մասնաւանդ՝ անորոշութենէ: Տակաւին չենք խօսիր ընկճուածութեան, հոգեբանական ու հոգեկան տազնապներու մասին... Պէտք է նաեւ յստակացնել եւ ընդունիլ, որ լիբանանահայ գաղութի կարողականութիւնը՝ մարդուօր, դեկավարութեան ու այլ, այն չէ, ինչ որ էր 1975 տարիներուն: Եթէ այս օրերու ճգնաժամի ու տազնապի պարունակը տարբեր է, քան այն, ինչ որ էր քառասուն եւ աւելի երկար տարիներ առաջ, տակաւին կը մնայ տազնապը իր բոլոր բովանդակութիւններով: Այս տազնապը ստեղծած է տնտեսական հաւուր ճգնաժամ, ընկերային բարդութիւններ, անորոշութիւններ: Ընդունինք նաեւ, թէ շատ պիտի ըլլայ լիբանանահայերու թիւը, որոնք պիտի ուզեն գաղթել: Ահա հոս կը սկսի մեր պարտականութիւնը եւ անհրաժեշտութիւնը, որ այս բոլոր իրավիճակները դիմագրաւենք դարձեալ հաւաքական միտքով եւ կեցուածքով՝ հաւաքականը իր ներքին ու արտաքին ծաւալներով: Ներքինը՝ ներլիբանանեան մեր կեանքերուն տալ միասնական կազմակերպչական ընթացք եւ կառոյց, բայց նաեւ՝ արտաքինը: Արտաքինը՝ գաղթող ուզողները նաեւ համադրուած ու կազմակերպուած ձեւով առաջնորդել մայր հայրենիք: Ուշադիր ըլլանք, որ այս ճգնաժամին ու քառասային իրավիճակներուն մէջէն լիբանանահայը իր փրկութեան լաստը «հոս» թէ «հոն» չնետէ... Հարիւր տարիներու պատերազմը: Մեր պատմութեան իւրաքանչիւր դասը դարձաւ ու կը դառնայ ապրող իրականութիւն: Այդ օրերուն՝ միջին դարաշրջանին իր ապրող կեանքով, մեր օրերուն՝ իմ եւ իւրաքանչիւրիս եւ մեր բոլորին ապրող փորձառութեամբ: Այս փորձառութիւնը պէտք է վերածել ապրելու եւ գոյատեւելու հրամայականի: Հրամայական՝ ապրելու եւ գոյատեւելու հաւաքական ջանքով: Հաւաքական ջանքը՝ «Հարիւր տարիներու պատերազմ»ի մէջէն ու տակաւին...

Նոր Տարուան Եւ Ս. Ծնունդին Առիթով Լաւագոյնը Կը Մաղթենք Հայ Ժողովուրդին
Season's Greetings And Best Wishes
Tchakerian Families of Yozgat


Կալիֆորնիայի Հայ Դատապարտեալները Ստանում են Հոգևոր Աջակցութիւն Ու Առիթ՝ Ստեղծագործելու Եւ Տպագրուելու

ՆԱՆԷ ԱՒԱԳԵԱՆ

Կալիֆորնիայի եւ Լոս Անջելեսի գաւառի կալանավայրերում գտնուող Հայ բանտարկեալներին Հայ առաքելական եկեղեցու սպասաւորները տարիներ շարունակ Հոգևոր ծառայութիւններ են մատուցում, ինչի արդիւնքում, շատերը վերափոխում են եւ նոր կեանք սկսում: Ամերիկայի Արեւմտեան թեմի Հովանաւորութեամբ են Հայ Հոգևոր գործիչներն իրականացնում Լոս Անջելեսի գաւառի ոստիկանապետի գրասենեակի ներքոյ գործող ծրագիրը, որի շրջանակներում այցելում են բանտեր (prison) ու ժամանակաւոր պահան մեկուսարաններ (jail) եւ Հոգևոր աջակցութիւն տրամադրում: Լոս Անջելեսի գաւառի կալանա-

նախկին դատապարտեալների երախտիքի խօսքերն առ աջակիցներ, նաեւ նրանց ստեղծագործական ձիրքի արգասիքները, որ բացայայտուել ու արտայայտուել են շփումների արդիւնքում:

«1994 թուականն էր, երբ թեմի Առաջնորդ Մուշեղ արք. Մարտիրոսեանի Համաձայնութեամբ եւ նշանակմամբ որպէս կամաւոր ներգրաւուեցի այս աշխատանքում: Մինչ այդ, գործել էր նման ծրագիր, սակայն ոչ Հայկական անուանումով, եւ մենք սկսեցինք այցելել Լոս Անջելեսի գաւառում գտնուող շուրջ ութ կալանավայր՝ Հոգևոր մխիթարութիւն եւ ծառայութիւններ տրամադրելով մեր Հայրենակիցներին: Երեք Հիմնական կարեւոր ուղղութիւն կայ մեր ծառայութեան մէջ՝ փորձում ենք դատապարտեալների Հատուկ զօրացնել, ինչի արդիւն-



վայրերում ներկայումս շուրջ 700 Հայ կայ, ովքեր Հիմնականում դատապարտուել են թմրամոլութեան, գողութեան, ապահովագրական եւ անձնական տեղեկատուութեան Հարցում խարդախութիւնների Համար, տուեալներ է ներկայացնում Ազգային առաջնորդարանի բանտային ծառայութեան պատասխանատու Ռաֆֆի սրկ. Կարապետեանը: Ծուրջ 25 տարի, կամաւոր Հիմունքներով իր աշխատանքն անխոջ իրականացնող Կարապետեանի եւ եկեղեցու միւս Հոգևորականների ջանքերով, տասնամեակների ընթացքում, բազմաթիւ դատապարտեալներ, Աստուծոյ դառնալով, փոխել են կենսակերպն ու մեծ յաջողութիւնների Հասել ընտանիքում եւ աշխատանքում: Այս մասին վկայում են ոչ միայն

քում նրանց մօտ յոյս է արթնանում, եւ երբ Հաւատ եւ յոյս ունեն, մեր ներկայութեամբ էլ սիրով ենք ապահովում: Նրանց Հետ գրոցներումս, միշտ ասում եմ, որ բոլորիս ճակատին նոյն միւտոնն է քսուած՝ անկախ նրանից, թէ աշխարհի որ մասում են ծնուել, որովհետեւ մեր Հոգևոր Հայրերը օրհնուած միւտոնը բաժանում են բոլոր Հայկական եկեղեցիներին, ինչն իմ կարծիքով ամենամեծ Հրաշքն է: Նման թեմաներով երբ խօսում եմ, Հայ դատապարտուածների շրջանում, թէ՛ Հատուքն է արթնանում եւ թէ՛ Հայկական ոգին», պատմում է Ռաֆֆի սրկ. Կարապետեանը: Այցելութիւններ, Հոգևոր գործիչներն իրենց նախաձեռնութեամբ, կատարում են ամիսը մի




**Համազգային
Հայ Կրթական
եւ Մշակութային
Միութիւնը**

**Իր բոլոր վարչութիւններով
եւ անդամներով
Կը շնորհաւորէ բոլորին
Նոր Տարին
եւ Սուրբ Ծնունդը
Մաղթելով Ամենայն Բարիք**

Կալիֆորնիայի Հայ Դատապարտեալները Ստանում են Հոգեւոր Աջակցութիւն Ու Առիթ՝ Ստեղծագործելու Եւ Տպագրուելու

քանի անգամ, միաժամանակ՝ շատ են դէպքերը, երբ իրենց կարիքն ունենում եւ կանչում է որեւէ դատապարտեալ: Կարապետեանը նշում է, որ ծրագիրը մեծ ճանաչում է ստացել, եւ այցեր սկսել են կատարել ոչ միայն Լոս Անջելեսի գաւառի, նաեւ նահանգի տարբեր բանտեր՝ ելնելով Հանրային պահանջից: «Բազմաթիւ են նաեւ այն դէպքերը, երբ փորձաշրջանում գտնուող դատապարտեալները կապնում են մեր հետ, եւ Հանդիպումները, վերականգնման գործընթացի շրջանակներում շարունակում են: Օրինակ, իւրաքանչիւր երկուշաբթի, Բրեքենքի Հայ կենտրոնում,

միայն, մինչդեռ, Հոգեւոր աջակցութիւն ստացած Հայերի դէպքում՝ այդ թիւը, աւելի քան 40 տոկոս է կազմում: Հայ դատապարտեալների ազգային եւ Հոգեւոր կեանքն առաւել աշխուժացնելու նպատակին է ծառայում Ռաֆֆի սրկ. Կարապետեանի եւս մէկ նախաձեռնութիւնը, ինչը, դատապարտեալների համար իրենց ձիրքերը բացայայտելու առիթ է դարձել, ոմանց համար էլ՝ թողութեան եւ հարազատների հետ յարաբերութիւնները վերականգնելու լաւագոյն ուղի: «Տարիներ առաջ էր, երբ տեղեկացայ, որ կալանաւորների համար անգլերէնով, իսպաներէ-



ընկերային հաւաք ենք ունենում, Սուրբ գրքի սերտողութիւն ենք իրականացնում»: Ռաֆֆի սրկ. Կարապետեանը մեծ ուրախութեամբ եւ ոգեւորութեամբ է պատմում նախկին դատապարտեալների յաջողութիւնների մասին. «Շատերը, Աստուծոն գտնելով եւ փրկուելով, նոր՝ մաքուր կեանք են սկսում: Նրանք ընտանիք են կազմում, եւ ինքս ներկայ եմ եղել բազմաթիւ հարսանիքների եւ սարկաւազութիւն եմ արել, մասնակցել եմ նրանց երեխաների կնունքների, եւ ականատես եղել, թէ ինչպէս են յաջողում իրենց աշխատանքում»: Կարապետեանը նշում է, որ ամերիկեան դատական համակարգը բաւական հանդուրժող է, եւ դատապարտուածներին հնարաւորութիւն է տալիս վերականգնման կենտրոնների միջոցով ուղղուելու: Ըստ նրա, սակայն, նման ճանապարհով, ամերիկեան կենտրոններում վերափոխուածների թիւը շուրջ երեք տոկոս է

նով ընթերցանութեան նիւթեր են ստեղծուում, որոշեցի, որ մեր Հայ ազգի զաւակներն էլ պէտք է օգտուեն այդ հնարաւորութիւնից: 2000 թվականից սկսեցի հրատարակել «Ուաքար-Փարոս» անուանումով երկթերթ պարբերականը, որտեղ ներառեցի աղօթքներ Սուրբ Գրքից, խորհուրդներ: Ընթացքում, ստանում էինք նամակներ, որտեղ Հայ կալանաւորները երախտագիտութեան խօսքերի հետ մէկտեղ գրում էին, թէ ինչպէս է Հոգեւոր ծառայութիւնը փոխել իրենց կեանքը, ուղարկում էին իրենց գրած բանաստեղծութիւնները, տարբեր թեմաներով նկարներ: Որոշեցի, որ պարբերութիւնում կը տպագրուեն նաեւ գրանք, ինչը կը քաջալերի միւսներին եւս ստեղծագործելու, արտայայտուելու, եւ միմեանց ծանօթանալու: Մենք ունենք վերափոխման իրական պատմութիւններ, որ ինքնին հրաշք են», նշում է Կարապետեանը: «Դուք բացեցիք ազատութեան դռներն իմ համար՝ Քրիստոսի մի-



ջոցով՝ պատասխանեցիք բոլոր հարցերիս եւ ցրեցիք բոլոր կասկածները, որ ունէինք կեանքի նկատմամբ: Աղօթքների եւ Աստուածաշնչի միջոցով ես վերագտայ ընտանիքս, յոյսս, հաւատս, եւ ուժերս», գրում է Հոգեկան ծանր վիճակից, Ռաֆֆի սարկաւազին եւ նրա օգնութեամբ «առողջացած» Հայուհի դատապարտեալը: Պարբերութիւնի միջոցով նա առիթ էր ունեցել վերականգնելու կապը մանկահասակ որդու հետ՝ դարձեալի խոստովանութիւնը փոխանցելով նրան եւ որպէս պատասխան ստանալով որդու ձեռքով նկարուած պատկեր, որ նոյնպէս տեղ էր գտել պարբերականում: «Շատ մեղաւոր երեխաների կեանք է փոխել պարոն Ռաֆֆին, այնպէս արել, որ մեղաւոր կեանքը մոռանան եւ քեզ սրտանց մօտենան, Աստուած: Շատ եղբայրներ ամուսնացել ու երջանիկ քրիստոնեայ են դարձել: Ու ես հիմա շատ ուրախ եմ, որ սրտանց քեզ սիրեցի, դրա համար չնորհակալութիւն պիտի յայտնեմ պարոն Ռաֆֆիին: Հիմա նստած այս տողերը գրում եմ, եւ սրտով արտասուում եմ, որ գրիչը դու ինձ նորից պարգեւեցիր եւ միտքս բացեցիր: Խոնարհուում եմ քո առաջ՝ Տէր իմ Յիսուս Քրիստոս», գրում է դատապարտեալ Արարատը: Մէջբերումները միայն երկուսն են՝ հազարաւոր այլ նամակներից, որոնք Ռաֆֆի սրկ. Կարապետեանը մեծ հոգատարութեամբ ու սիրով պահում է, եւ հերթականութեամբ տպագրում

պարբերութիւն էջերում, որի առաքելութիւնը ներկայացուած է հետեւեալ կերպ. «Ինչպէ՛ս խաչքարը, մենք ամուր կանգնած կը լինենք եւ շարունակաբար ուղերձ կը յղենք առ այն, որ Յիսուս Քրիստոսը սիրում է իր զաւակներին: Ինչպէս փարոս, օգտագործէք մեզ, որպէս ուղեցոյց՝ դէպի ապահով նաւահանգիստ՝ հետո ծովի քարքարոտ եւ վտանգաւոր ջրերից»: Պարբերականը, որ Կարապետեանը սկսել էր տպագրել իր ուժերով, մեծ պահանջարկ ունի, եւ բաժանում է բոլոր կալանավարներում: «25 տարի չես կարող շարունակել աշխատանքդ, եթէ արդիւնք չտեսնես: Սրբազան առաջնորդն էլ տեսնելով, այս նախաձեռնութեան արդիւնքը՝ սկսել է աջակցել, եւ նախատեսում է մեծացնել տպագրութեան ծաւալները», նշում է Կարապետեանը, եւ ներկայացնում եւս մէկ նախաձեռնութիւն՝ հեռախօսային համարներ եւ տեղեկութիւններ արձանագրելու համար փոքրիկ թերթիկ, որ շատ անհրաժեշտ է դատապարտեալների համար, քանի որ նրանց արգելուած է նշումների համար իրեր ունենալ: «Փոքրիկ կարող է թուալ մեր համար, բայց իրենց համար՝ թանկագին, եւ յորդորում է՝ «մի՛շտ աղօթէ՛ք, առանց ձանձրանալու», նշում է Ռաֆֆի սարկաւազ Կարապետեանը՝ խոնարհ ու համեստ մի անձնաւորութիւն, ով Աստուծոյ սէրն ու ողորմածութիւնը ուսուցանելով՝ փրկում է բազմաթիւ հոգիներ:

Ազգ եւ Ազգային Նկարագիր

ԱՆԻ ԱՍՏՈՒՐԵԱՆ

«Ազգ», «ազգային նկարագիր» բառերը վերջերս կը մրճահարեն հայ մամուլին էջերը եւ հայ հասարակութեան միտքերը: Մէկ ազգ ենք, գիտենք, բայց աշխարհագրական եւ պատմական տուեալներու բերումով, յաճախ մէկ ազգի պէս չենք մտածեր եւ գործեր: Հայրենի հողէն կտրուած սփռուած համար մէկ ազգի պատկանելու գաղափարը իրեն հասած է յատկապէս գիրքերէն, թերթերէն եւ հանդէսներու ժամանակ տրուած բանախօսութիւններէն: Զարդուած ազգի մը մնացորդներն էինք, եւ մեզի կատարուած ահաւոր անարդարութիւնը մեզ կը միացնէր եւ աւելի՛ «կ'ազգացնէր» կարծես: Յարակարծիք է, բայց՝ իրա՛ւ... օսմանեան կայսրութեան տակ դարերով ապրած փոքրամասնութիւն մը կը նայէր դէպի ետեւ եւ կ'ըսէր՝ «կորսնցուցինք Վանը, Մուշը, Այնթապը», եւ որպէսզի երեւակայութեամբ կազմուած հող ունենար «ոտքին տակ», ազգը ստեղծեց «Նոր Մարաշ», «Նոր Հաճըն» եւ «Նոր Այնթապ»: Ուրֆայի քեպապը իրարու միացուց ուրֆացիները, Մշմուշը՝ վանեցիները, Տապական՝ տիգրանակերտցիները եւ այսպէս՝ վերակազմուեցաւ «ազգը», համախմբուելով հին համերու եւ նիստուկացի կարօտով: Հայաստանի մէջ տարբեր էր պարագան. ազգի գա-

ղափարը փոխարինուած էր բոլոր ազգերու եղբայրութեան գաղափարով, եւ սովետական վարչակարգը ահ ու սարսափ տարածած էր առանձին ազգի մասին մտածողներուն վրայ, զանոնք որակելով «Ֆաշիստ ազգայնականներ»: մասնատուած էր փոքրիկ Հայաստանը, եւ Արցախը եւ Նախիջեւանը տրուած էր Ատրպէյճանին, Զաւախքը՝ Վրաստանին: Ազդատուած էր լեզուն. կամայական ձեւով «գիրացուած էր»: մեսրոպեան ուղղագրութիւնը փոխարինուած էր արեղեանականով, որպէսզի կատարելանար ազգ գաղափարի անէացումը: Աստուած ա՛լ չկար եւ ո՛վ որ կը հաւատար անոր... «գիծ» կը համարուէր: Աղասի Այվազեան, իր «Մանչերը» գործին մէջ ակնարկած է այդ երեւոյթին. իր բեմական վէպին հերոսներէն մէկը՝ պիթլիսցի Կիւրեղը կը յիշէ, թէ ինչպէս մայրն ու քոյրերը Պիթլիսի եկեղեցւոյ մէջ մնացած են (պէտք է հասկնալ՝ սպանուած կամ հրկիզուած): Ինք երեւան հասնելէն ի վեր տեղւոյն եկեղեցւոյ զանգակները կը զարնէ, նոյնիսկ երբ համայնավարները գմբէթին խաչը հանած են ու կը սպառնան զինք խենթանոց տանիլ: Կ'ըսէ. «Մնացին... ժամին մէջ քնած մնացին: Ես զանգեր կու տայի, որ զարթնին... յետոյ բերեցին հոս... հոսէն Պիթլիս զանգը կը հասնի»:

Բայց ինչպէս ամէն բռնատիրութեան տակ՝ Ոտրհրդային Հայաս-



տանի ժողովուրդն ու իր մտաւորականները գաղտնի ու ոլորապտոյտ ձեւերով կը սնուցանէին առանձին նկարագիր եւ կրօնք ունեցող ազգի գաղափարը: Սերօ Սանգաղեանի «Միթար Սպարապետ»ը կամ Պերճ Զէյթունցեանի «Արչակ Բ.»ը պատմական վէպեր էին, եւ մենք Պէյրութի մէջ կը կարդայինք զանոնք արեւելա-

հայերէնով եւ արեղեանական ուղղագրութեամբ... (այս հարցին մասին՝ քիչ ետք): Այդ վէպերը՝ երեւութապէս «անմեղ», կը խօսէին ոտքին տակ եղող հողէն եւ անոր իւրաքանչիւր թիզը պաշտպանելու համար մաքառող սպարապետէն կամ թագաւորէն: Հողի եւ ազգի գաղափարը, ուրեմն՝

**Շնորհաւոր
Նոր Տարի
եւ Ս. Ծնունդ**

**Քրտենթա Հովիտի
Հայց. Առաք. եկեղեցւոյ
հոգեւոր հովիւն ու
հոգաբարձութիւնը,
խոնարհելով մեր անմեղ
նահատակներու խնկելի
յիշատակին դիմաց՝ կու գան
շնորհաւորելու համայնքիս
հաւատացեալները
Նոր Տարուան
եւ Ծննդեան Ս. Տօներուն
առիթներով, ցանկալով բոլորին
քաջառողջութիւն
եւ ամենայն բարիք**

Orange County

**Կը Շնորհաւորենք
Հայ Համայնքի
Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը
Եւ Հայ Ժողովուրդին
Կը Մաղթենք Բարգաւաւ
Եւ Խաղաղ Տարի**


**ARF Armen Karo
ARS Sevan Chapter
ARS Garni Chapter
ARF Serop Aghpure
Badanegan
Homenemtmen
Sardarabad Chapter
Hamazkayin
Siamanto Chapter
AYF Ashod Yergat**

Ազգ եւ Ազգային Նկարագիր

սփիւռքահայուն կու գար նաեւ Հայրենիքի մէջ տպուող գիրքերէն եւ կը կերտէր ազգային ջիղ ու ոգի. մինչ Հայաստանի բնակիչները ձեռքէ ձեռք կ'անցնէին այս գործերը եւ ձմրան ցուրտ օրերուն, իրենց վառարաններուն շուրջ հաւաքուած՝ մէյ-մէկ գաղտնի սպարապետ ու թագաւոր կը պահէին իրենց Հոգիներուն խորքը: Գալչոյեանը՝ իր «Ձորի Միրո»ով, Գալտեանը՝ իր «Ռանչպարներու Կանչով», Արալեանը իր «Կապոյտ Երգն-կա»ով ու դեռ շատ ուրիշներ, իրենց գրիչով թօթափեցին ապագային ձորները եւ փոխարինեցին զանոնք Հայրենիքի մը շողողուն հանգերձներով:

Անոնց գործերէն կ'արտացոլար ազգային նկարագիրը. գոնէ ան, որուն կը ձգտէին հեղինակները:

Բայց ի՞նչ է ան: Ազգի մը նկարագիրը ինչպէ՞ս կը հաստատուի եւ կը բնորոշուի: Երկար ուսումնասիրութիւններ կարելի է կատարել այս նիւթին շուրջ: Ոմանք համոզուած են, թէ ազգը շինծու յղացք է, ու կը հաւատան, թէ պէտք է ապակառուցել զայն. նոյն տրամաբանութեամբ՝ ազգային նկարագիրն ալ շինծու բան մըն է: Այս կարծ գրութիւնը կը յղուի մինչեւ հիմա գոյութիւն ունեցող հաւատամքին, ըստ որուն ազգերը կազմուած են ժամանակի ընթացքին նոյն վայրին մէջ միասին ապրելով ու դիմակալելով կրիմայական թէ դրացիական գրոհները եւ այլ ազգերէ կրնան տար-



բերիլ իրենց նկարագիրով: Հայ ազգի անդամները իրենք զիրենք կը ներկայացնեն որպէս խելացի, աշխատասէր, հիւրասէր, արհեստավարժ եւ արուեստագէտ: Ըստ իրենց՝ Հայը մշակոյթի ժողովուրդ է. ըստ ուրիշներու՝ ճարպիկ վաճառականներու եւ ձեռներեց մարդոց հաւաքականութիւն մը: Հարցը այն է, որ աշխարհով մէկ սփռուած Հայութիւնը ունեցած է Հայաստանաբնակ Հայութենէն տարբեր փորձառութիւններ: Ապրած է ազատութեան մէջ եւ չփուած է Արեւելքի եւ Արեւմուտքի մշակոյթներուն հետ: Եկեղեցին եղած է մշակոյթի կա-

րելոր ցուցիչներէն մէկը, բայց ո՛չ՝ ամէնէն կարելորը: Լեւոն Շանթ չէր հաւատար Աստուծոյ գոյութեան, եւ իր հիմնած դպրոցին մէջ եկեղեցւոյ դասապահ գոյութիւն չունէր. փոխարէնը՝ «Իլ-խական» եւ «Ողիսական» գիրքերով կը զարգացնէինք մեր գիտութիւնը: Նուա՞զ ազգային նկարագիր ունինք այսօր, քան այն բոլոր սակաւապետները, որոնք գլուխները կախ, լուրջ դէմքերով, ամէն շաբաթ եկեղեցի կ'երթան ու կ'աղօթեն սեփական ազգը թալանած ըլլալու մեղքը քաւելու համար: Եթէ այսօր տարի կրօնքի դաս տրուել է Հայաստանի կրթական հաստատութիւններէն ներս եւ արդիւնքը ա՛յս եղեր է՝ «ո՛չ. շնորհակալ ենք», կ'ըսենք: Փաստօրէն, ազգային նկարագիրը չի բնորոշուիր եկեղեցւոյ պատմութեան յատկացուած դասերով:

Իսկ ընտանի՞քը: Այո՛. ընտանիքը մեծ դեր կը խաղայ Հայ ժողովուրդի ազգային նկարագրի կերտման մէջ: Ընտանիքի անդամները կը սիրեն զիրար. փոքրերը կը յարգեն մեծերը եւ կ'օգնեն անոնց: Ընտանեկան հաւաքոյթները մեծ տեղ կը գրաւեն թէ՛ Հայաշխարհի մէջ, թէ՛ Սփիւռքի մէջ. հիւրասիրութիւնը մաս կը կազմէ մեր նկարագրին, այո՛, բայց... կին ծեծե՞լը, մայրը սպաննե՞լը, ծնողը կողոպտե՞լը: Ասոնք երբուրէն ի վեր ազգային նկարագրի մաս կը կազմեն: Սաթարուած բան մը կայ ճի՛շդ հոն. ատիկա՛ պէտք է մտահոգէ մեզ եւ ո՛չ միասեռականներու կամ սեռագանցներու գոյութիւնը: Անոնք Աստուծոյ կամքով այդպէս ծնած են եւ զանոնք ազգէն դուրս չպարտել ուզողները, իրենք Աստուծոյ կամքին դէմ կ'երթան. այդքան՝ պարզ...

Վերոյիշեալ Ա. Այվազեանի «Մանչերը» գործը կը զբաղի նաեւ ա՛յս հարցով: Կարապետ հօր երեք տղոցմէ մէկը՝ Սուրէնը միասեռական է եւ բեմավէպի վերջաւորութեան կը սպաննուի նոյն ինքն Կարապետին կողմէ: Որքան խիզախ եղած է Ա. Այվազեան նրբօրէն արծարծելով այլամերժութեան հարցը եւ պահպանողական հասարակութիւնը զգաստութեան ճամբով: Ինչպէս կ'երեւի, դեռ բազմաթիւ Այվազեաններու պէտք ունի Հայաստանի հասարակութիւնը: Սփիւռքի մէջ ալ

բիչ չեն պահպանողական տարրերը. ժամանակին մարդիկ կ'ընդվզէին ի տես Վահէ Պէրպէրեանի ականջօղերուն. այսօր, զայն իրենց ուսերուն վրայ բարձած կը պտըտին... յուսատու այս նշանը ենթադրել կու տայ, որ ժամանակի անցումով հասարակութեան մը բոլոր՝ անդամները կարելի է ընդգրկել եւ յարգել, առանց զանոնք ապագային նկատելու: Ամէն պարագայի, սփիւռքահայերը պիտի չուզէին, որ խաւարամտութեան ալիքները հասնէին մինչեւ այս ափերը եւ իրենց պարտադրուէր միասեռականութիւն-ապագայնութիւն կամ՝ պահպանողական-ազգային հաւասարումներ:

Յստակ է ուրեմն, որ հակառակ ազգի այս կամ այն հատուածներու միջեւ կարգ մը նմանութիւններու գոյութեան՝ ան իրականութեան մէջ... մէ՛կ չէ: Տակաւի՛ն՝ Հայու ազգային նկարագիրը բնորոշող լա՛ւ յատկանիշները սկսած ենք կորսնցնել: Մշակոյթի ազգ ըլլալէ դադարած ենք այն օրէն ի վեր, երբ ձգած ենք գիրքերն ու Հայ գրողները իրենց ճակատագրիին: Չենք կարդար. հետեւաբար՝ չենք մտածեր: Հայաստանի մէջ թէ Սփիւռքի, յարգելի բացառութիւնները՝ մէկ կողմ, համատարած հաճոյասիրութիւնը, ցուցամոլութիւնը եւ նիւթապաշտութիւնը կ'աղաւաղեն ազգային նկարագիրը: Համաշխարհայնացման արդիւնք՝ մակերեսայնութիւնը, «սելֆի»ներով ինքնացուցադրութիւնը եւ տհասութիւնը արագօրէն կը տարածուին ամէն կողմ: Անոնցմէ չեն խուսափիր նոյնիսկ պետական այրերը եւ իրենց տիկիները:

Ի՞նչ ընել կարելի եղածին չափ մեղմացնելու դարուս հասցուցած վնասը եւ ուղղելու մե՛ր ազգին սրբագրելի թերութիւնները: Ստորեւ ներկայացուած գաղափարները անշո՛ւշտ որ ամբողջական լուծումի մը չեն կրնար յանգեցնել. անոնք կրնան նաեւ միամիտ եւ անտրամաբանական թուիլ ոմանց, բայց թերեւս ճամբայ բանան մտածումի եւ օգտակար ըլլան լուծումներ գտնելու աշխատանքի ծիրէն ներս:

ա.- Թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի դպրոցներուն մէջ փոքր տարիքէն դաստիարակել պզտիկը, անկէ լա՛ւ մարդ եւ պարկե՛շտ քաղաքացի պատրաստելու համար: Ճի՛գ թափել վերացնելու

**Ճորճ
եւ Արաքսի
Թիթիզեան**

**Կը մաղթենք,
որ այս Նոր Տարին
իր հետ բերէ
խաղաղութիւն
եւ երջանկութիւն**

Ազգ Եւ Ազգային Նկարագիր

կոուսակցութիւնը եւ աղջիկներու հանդէպ գոյուցիւն ունեցող կարծրատիպ մտածողութիւնը, ինչպէս նաեւ այլ՝ «տղամարդու» վայել կարծրատիպեր: Այս գիծով գնահատելի է Հայաստանի կրթութեան նախարարութեան ծրագիրը:

բ.- Փոխանակ ուղեղալուացքի կշռոյթով ըսելու՝ «մենք բարձր մշակոյթի տէր ազգ ենք. մենք փայլուն ենք եւ խելացի» կամ՝ «մենք ունեցած ենք Յովհանէս Թումանեան ու Կոմիտաս», առիթ ստեղծենք թէ՛ սփիւռքահայ, թէ՛ հայաստանահայ պատիկներուն, անձա՛մբ պրպտելու արժէքաւոր գրագէտներու կամ երաժիշտներու գործերը եւ իրապէ՛ս ծանօթանալու ոչ միայն քանի մը շատ նշանաւոր անձերու, այլ՝ ուրիշներու ալ: Այսօր, թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի մէջ արժէքաւոր գրողներ կան. դժբախտաբար ծանօթ չենք իրենց գործերուն եւ կը յամենանք տասնիններորդ եւ քսաներորդ դարերու ասիւններուն: Իսկ երբ ծանօթ չենք, բնականաբար չենք կրնար նորոգել մեր աշակերտներուն գիտելիքները եւ իրենց սիրտերը հպարտութեամբ բարախիլ տալ մե՛ր օրերու կշռոյթով:

գ.- Ժամ առաջ վերահաստատել մեսրոպեան ուղղագրութիւնը թէ՛ հայաստանի, թէ՛ Սփիւռքի մէջ: Մէ՛կ եւ ճի՛շդ ուղղագրութեան կիրարկումը հիմնական գրաւականն է մէ՛կ ազգի ստեղծման եւ ամրապնդման:

դ.- Նոյնիսկ եթէ մեսրոպեան

ուղղագրութեան ամբողջական հաստատումը ժամանակ պիտի առնէ, արեւելահայերէնի կողքին կարելի է հաստատել արեւմտահայերէնի դասեր Հայաստանի դպրոցներուն մէջ, հինգերորդ դասարանէն սկսեալ: Այդ ձեւով, հայաստանցի աշակերտը առիթը կ'ունենայ տեսնելու մեսրոպեան ուղղագրութեամբ գրութիւններ եւ կարդալու արեւմտահայերէնով գրուած պատմուածքներ եւ վէպեր: Ինչպէս վերը կ'ըսէի, մենք որ արեւմտահայերէն կը սորվէինք եւ մեսրոպեան ուղղագրութեան վարժուած էինք, շատ դիւրութեամբ կը կարդայինք աբեղեանական ուղղագրութեամբ գրուած արեւելահայ վէպերը: Եթէ համոզուած ենք, որ հայը խելացի եւ փայլուն ժողովուրդ է, ապա՝ վստահ կրնանք ըլլալ, որ հայ աշակերտը կարողութիւնը ունի թէ՛ արեւելահայերէն, թէ՛ արեւմտահայերէն կարդալու: Աբեղեանական ուղղագրութեան վարժուած երեխան կամ չափահասը կրնա՛յ սորվիլ մեսրոպեան ուղղագրութիւնը, ինչպէս սորված է բարդ ուսերէնը, Փրանսերէնը կամ չինարէնը:

Հայաստանի մէջ արեւմտահայերէն սորվող աշակերտները, թե-րեւս ուսումնական իրենց վերջին տարուան ընթացքին որոշեն խորացնել իրենց գիտութիւնը, մասնագիտանալով արեւմտահայ գրականութեան մէջ:

ե.- Նկատելի է, որ մանաւանդ այս ժամանակաշրջանին, մարդիկ

կ'երկրպագեն գիտական ճիւղերուն: Թուաբանութիւն, երկրաչափութիւն, բնագիտութիւն, համակարգիչներու գիտութիւն... առաջին գիծին վրայ են: Քանի մը շաբաթ առաջ Հայաստանէն խումբ մը մանկավարժներ կը հպարտանային գիտական մարզին մէջ յաջողութիւն արձանագրած իրենց աշակերտներով եւ կ'առաջադրէին աշխատանքային ճամբորդութիւններ կազմակերպել դէպի արտասահման, այդ աշակերտներուն իսկապէ՛ս փայլուն ապագայ մը ապահովելու հեռանկարով: Իսկ BBC-ի կայքէջին վրայ ուսումնասիրական յօդուած մը կը հաստատէր, թէ շատ գիրք կարդացող աղջիկները, որոնք թուաբանութեան մէջ շատ փայլուն արդիւնքներ կը ձգեն, հետագային... այդ ճիւղը չեն ուսանիր սողոց պէս, որոնք նուազ գիրք կը կարդան. հետեւաբար, կ'առաջարկուէր փորձել նուազ գիրք կարդալ տալ աղջիկներուն, յուսալով, որ անոնք օր մը գիտական ճիւղերու կը հետեւին...

Բայց ինչո՞ւ միայն կեդրոնանալ գիտականին վրայ: Ինչո՞ւ նոյնքան դարկ չտալ բանասիրական ճիւղերուն՝ մարդաբանութեան, պատմութեան, գրականութեան, հոգեբանութեան... այդ ճիւղերը կրնան մարդ արարածը օժտել շրջահայեաց մտածումի կարողութեամբ, մանաւանդ եթէ հիմնուած ըլլան քննական մտածելակերպի եւ ո՛չ՝ վարդապետական, կեղծ ազգայնականութեան մը

վրայ: Անոնց շնորհիւ է, որ մարդիկ կը դառնան աւելի զգայուն իրենց շրջապատին նկատմամբ եւ աւելի խորունկ: Առանց թերազնահատելու գիտական ճիւղերու արժէքը, պէ՛տք է մտածել գիտական եւ բանասիրական ճիւղերու միջեւ հաւասարակշռութիւն մը պահելու մասին: Հայաստանի եւ Սփիւռքի ապագան փայլուն չ'ըլլար, եթէ միայն համակարգիչի մասնագէտներ եւ գիտնականներ ըլլան ամէնուրեք: Առանց քննական պատմութեան, ազնուացնող եւ մարդկայնացնող գրականութեան, առանց մարդկային հակազդեցութիւնները պրպտող մարդաբանութեան մենք կը զրկուինք ազգային նկարագիր կերտող սնունդէ...

զ.- Մնունդը կու գայ մանաւանդ ընթերցումէն: Թէ՛ Հայաստանի, թէ՛ Սփիւռքի տարածքին ամէ՛ն ձեւով պէտք է զարկ տալ ընթերցանութեան, որովհետեւ խաւարամտութիւնը, կոուազանութիւնը, խաբբեայութիւնը, եսակեդրոնութիւնը կը չբանան մանաւանդ գիրքերէն բխող լոյսով: Իսկ մեր ազգը, Սփիւռքէն մինչեւ Հայաստան, Հայաստանէն մինչեւ Արցախ՝ պէտք ունի մաքոր ու պայծառ, իր ժողովուրդի պատմութեան եւ լեզուին լաւատեղեակ, իրենինները սիրող, բայց միեւնոյն ատեն ուրիշը կամ տարբերը ընդունող ու յարգող, հայաբոյր եւ որակաւոր՝ մշակոյթ կերտող, իրա՛ւ ազգային նկարագիրի տէր նոր սերունդի մը:



The Great Carpet Company

Լաւագոյն Մաղբանքներով

Կը Շնորհաւորենք Բոլորին

Նոր Տարին Եւ Ա. Ծնունդը

4524 Brazil St #A
Los Angeles, CA 90039
818-247-2990
www.greatcarpetcompany.com

ՕՐԵՆՃ ՔԱՌԻՆԹԻ

Արի-Կիրակոս Մինասեան

Ազգային վարժարանի տնօրէնութիւնը, պաշտօնէութիւնը

Եւ

Յարակից Մարմինները

Կը Շնորհաւորեն Համայն Հայութեան

Նոր Տարին Եւ Ա. Ծնունդը, Յոյս Յայտնելով, Որ Հայ Ժողովուրդի

Յաղբարշաւը Շարունակուի

Նաեւ 2020ին

Հալէպ – Փորձե՞նք Ուրախանալ, Թէ՞...

ՄԱՆՈՒԷԼ ՔԷՇԻՇԵԱՆ

Որոշեր եմ այսօր ուրախ բաներու մասին գրել:

Որոշելը դիւրին է, սակայն իրականութեան հետ դէմ յանդիման կանգնելը՝ ուրիշ բան:

Հիմա, տանս մէջ, մութին նստած, ինչի՞ կամ որո՞ւ մասին գրեմ որ ուրախացնեմ շուրջիններս:

Թերեւս նկարագրեմ, թէ նորվեկիացիները ինչպէ՞ս կը դիմաւորեն Ամանորը, կամ հաւատացեալ քրիստոնեաները ինչպիսի՞ ինքնամոտաց երջանկութեամբ կը հաւաքուին Վատիկանի հրապարակը՝ խորին ակնածանքով ունկնդրելու Փրանսիս պապին Սուրբ Մենդեան պատգամը, որուն մէջ անպայման կը յիշուին նաև աղետեալ Սուրիան եւ տառապեալ սուրիացիները, որոնց շարքին Սուրիոյ քրիստոնեաներն ու անոնց մասնիկ Հայերը:

Պապին պատգամը եթէ երկրի ղեկավարները գործադրէին, անոր աղօթքները եթէ երկնաւորը լսէր, հիմա սուրիացիները երկրագունդի երջանկներու շարքին գտնուած կ'ըլլային, մինչ հիմա, երեկոյեան այս պահուն, ամբողջ Սուրիան կը մսի, կը մսի ո՛չ միայն քաղաքներէն դուրս՝ վրաններու տակ, այլ նաև քաղաքներուն մէջ, որովհետեւ եթէ փողոցը ցուրտ է, նոյնքան եւ աւելի պաղ է տան մէջ, որովհետեւ ելեկտրականութիւն չկայ՝ օրական տասը ժամ հազիւ կ'ունենանք այդ երանելի հոսանքը, մնացած ժամանակ, դարձեալ պիտի դիմենք ելեկտրածին շարժիչներուն, մէկ ամփէրի դիմաց շաբաթական վճարելով 1500 սուրիական լիրա, իսկ մէկ ամփէ-


րը միայն քանի մը ժամ աղօտ լոյս կրնայ տալ քեզի, երկու ամփէրն ալ չի կրնար տաքցնել ընտանիքիդ անդամները, երեք ամփէրը տանդ քանի մը մեթրը կը ջերմացնէ միայն, քեզմէ խելով ամսական աշխատավարձիդ կէսէն աւելին: Եթէ մազօթի վառարան ունիս, օրուայ ընթացքին մէկ-երկու ժամ տաքութեան վայելքը ըմբռնելով մէկ ամիս ջերմութեան պարզեւած երջանկութեամբ կը լիանաս, չէ՞ որ պետութիւնը իւրաքանչիւր ընտանիքի հարիւր լիթր մազօթ ծախած է իր սակագինով, հետն ալ հարիւր լիթրի շուշլ խոստում մը տուած է, որուն իրագործումը այնքան ալ երաշխաւորուած չէ, եթէ նկատի ունենանք, որ շատ մը թաղամասեր տակաւին առաջին քանակը գնելու բախտին չեն արժանացած:

Համաձայնեցէ՛ք հետս, որ ցուրտն ու մթութիւնը կրկնակի անտանելի կը դառնան երբ մտաբերենք, որ շուտով Նոր Տարին մեր դռները պիտի բախէ...

Կինդ արդէն քանի մը անգամ քրոջ հետ, դրացուհիին հետ, ընկերուհիներուն հետ շուկան չափչփեր է, շատ լաւ գիտէ, թէ ո՞ր, ի՞նչ կը ծախուի, աչքը արդէն վարժուած է գիներու մեծ թիւերուն, միտքն ալ մոռնալով բոլորը իրար վրայ գումարել, կամ ալ գումարումի արդիւնքի ահռելիութենէն խուսափելով եւ մոռնալով, որ թէեւ դեռ ամիսը կէսը հազիւ բոլորած, քո՛ւ ալ, ի՛ր ալ աշխատավարձերէն բան չէ մնացած, ամէն օր կ'ակնկալէ, որ ըսես.

- Կնի՛կ, վաղը ազատ եմ, երթանք նոր տարուան գնումները ընենք...

Նոր տարուան գնումներ... Կը յի-



Լուսանկարում Հայ Կաթողիկէ Մայր Ամենայն Օգնութեանց (Գթութեանց) Աթոռանիսի եկեղեցին

չե՞ս... ո՞վ չի յիշեր, ինչեր կը գնէիք, ինչ նուէրներ՝ եղբորորդիներուդ, քենիներուդ, քոյրերուդ, եղբայրներուդ, հօրդ, մօրդ, բոլորին, առանձին-առանձին, կնոջդ քիչէն շատէն ոսկեղէն մը... մօտիկ հարազատներդ ալ նոյն ձեւով կը վերաբերէին քեզի, ու այս բոլորը Կաղանդ պապան ուսը առնելով, նոր տարուան գիշերը կը բերէր ձեր կամ ձեզմէ մէկուն տունը, ուր բոլորը հաւաքուած կ'ըլլայիք...

Հիմա... հարազատներէդ ո՞վ մնացեր է. աւելի լաւ է չհարցնես, մէկը Աւստրալիա գաղթեր է, միւսը՝ Գանատա, Հոլանտա, Գերմանիա, լաւ որ մէկն ալ՝ Հայաստան... Հիմա որո՞ւ նուէր պիտի առնես, միմիայն կնոջդ եւ զաւակիդ. գոնէ Հայաստան գացող մը ըլլար, մէկ քիւօ Հայկապի փախուալ տղակէիք քրոջդ, ինք ալ թող ուրախանար, դուն ալ... ճիշդ է, կ'ըսեն Հայաստանի ամանօրեայ սեղանները շատ ճոխ կ'ըլլան, բայց Հայկապի փախուալու ուրիշ է...

Է՞, որո՞ւն հետ Կաղանդ պիտի տօնես, միայն փոքր աղջիկդ քովդ է, սղաքդ դրկած ես երկրէն, որպէսզի դրացիիդ տղուն պէս ութը տարի գինուորութիւն չընէ՝ առանց գիտնալու, թէ երբ պիտի արձակուի...

Հին, լաւ օրերը անցան, գացին, եւ եթէ այդ օրերը որպէս ուրախ ժամանակներ ուզեմ ներկայացնել, միմիայն յիշողութեան մէջ պիտի գտնեմ, եւ գանոնք վերագտնելու յոյսերս պիտի չարդարանան:

Ամէնէն լաւը Կաղանդի գիշերը տունը կ'անցընես, քանի մը տեսակ համով ճաշ կը պատրաստէ կինդ, ուզածին չափ քաղցրեղէն, չէ՞ որ Քրասնոտարի Հայերու սուրիացիներուն նուիրած 80 թոն ալիւրէն քեզի ալ բաժին ինկած է:

Ուրախանալու փոխարէն, տխրելու պատճառները շատ-շատ են. փողոց կ'ելլեմ, որպէսզի տուններու եւ խանութներու դարդարանքները դիտելով ուրախանամ, այդ ալ չեմ գտներ, այնքան քիչ են, որ այս տարի, «Նոր Սերունդ»ի Կաղանդի ծառն ալ տակաւին չեն դրած Ազիզի հրապարակին վրայ, որպէսզի գոնէ անոր առջև լայն ժպիտը դէմքիս նկարուիմ եւ հոս-հոն դրկեմ՝ ինչան անհոգ ուրախութեան... Սանութիւններուն մէջ ալ յաճախորդները չեն վխտար, միմիայն անոնց ապակեայ փեղկերուն առջև մարդիկ կան, անոնք ալ հաւանաբար այս տարի դիտելով պիտի բաւարարուին:

- Բացարձակապէս ուրախութեան որեւէ պատճառ չկա՞յ Հայկապիներուն համար, պիտի հարցնեն ոմանք:

Կա՛յ: Եթէ Ամերիկեան սենատի ընդունած որոշումով ուրախանալու ըլլանք՝ կա՛յ: Եթէ Երեւանի Կաղանդի ծառով ուրախանալու ըլլանք՝ կա՛յ, Պոլսոյ պատրիարքի ընտրութեամբ ցնծութիւն ապրի՛նք՝ կայ, բայց...

Բայցերը այնքան շատ են որ... կը կարծէք որ Գամիշլիով չե՞նք մտահոգուիր, Լիբանանի անկայուն վիճակը մեզ չի՞ յուզեր... Այս շրջանները անմիջական կապ ունին մեզի հետ, մանաւանդ տնտեսական առումով, եւ եթէ ամերիկեան մէկ տոլարի փոխարժէքը այսօր 850 սուրիական լիրա է, ուստի եւ մեր ամսականները 30-40-50 տոլարի սահմաններուն մէջ կը տարուբերին, ապա նաև ասիկա տարածաշրջանին մէջ տիրող անորոշ վիճակին հետ ալ կապ ունի:

Ուրեմն ուրախութեան որեւէ նշոյլ չկա՞յ:

Կա՛յ. մեր դպրոցներուն կազմակերպած Կաղանդի հաւաքոյթները, որոնք սրահներուն մէջ իրպէս ուրախ քանի մը ժամ կը պարգեւեն մեր փոքրիկներուն, մեր միութիւններն ալ կը կազմակերպեն նման հաւաքոյթներ, փոքրիկներունը դարձեալ ուրախ կ'անցնի, իսկ մեծերու համար կազմակերպուած պարահանդէսները, շատ ալ վստահ չեմ, որ այդ երեկոյթներուն բոլոր ներկայ գտնուողները ուրախ պիտի ըլլան, որովհետեւ ներկաներուն մէջ պիտի գտնուին մարդիկ, որոնք այդ սուղ հաճոյքը վայելելու համար պարտքի դրամ պիտի գտնեն, ոմանք CARITAS-էն ստանալիք նպաստին վրայ քիչ մը պիտի աւելցնեն, որպէսզի կարենան 10-15 հազարնոց երկու երեք տոմս գնել, եւ ով գիտէ, թէ ինչ պիտի ընեն նոր յոյսերով սպասուած 2020ի առաջին ամսուան ընթացքին:

Ուրի՞շ, ուրիշ բան չկա՞յ ուրախանալու. Հայ Կաթողիկէ Ամենայն Օգնութեանց 170ամեայ Աթոռանիստ եկեղեցւոյ վերականգնումն ու վերածումը ուրախալի չե՞ն:

Ուրախալի են, բայց եթէ Կաթողիկէ եկեղեցւոյ պապին աղօթքները չեն օգներ մեզի, Աստուծոյ ուղղուած մեր կղերին խնդրանքները պիտի օգնեն:

Այնպէս որ, կը ներէք, բայց, արժանապատիւ Հայրեր եւ սրբազնագոյն պապ Փրանսիս, ի զուր մի՛ աղօթէք մեզի համար:



Հայ Կաթողիկէ Աթոռանիսի եկեղեցւոյ քանդուած գմբէթը



**Շնորհալուր Նոր Տարի
և Ա. Ծնունդ**

**Merry Christmas
and Happy New Year**

With the Compliments of
Kolanjian Brothers
SARKIS PASTRY

Three Locations to serve you

**1111 S. Glendale Ave.
Glendale, CA
818-956-6636**

**1776 E. Washington Blvd.
Pasadena, CA
626-398-3999**

**2424 Ball Road, Anaheim, CA
714-995-6663**

ՄՈՆԹԵՊԵԼԼՕ

**ՀՅԳ «Դրօ» Կոմիտեություն,
 Ս. Խաչ Մայր Տաճարի
 Հոգևոր Հովիւ ու Հոգաբարձություն,
 Մեսրոպեան Ազգ. Վարժարան,
 ՀՕՄԻ «Նայիրի» Մասնաճիւղ,
 ՀՄԸՄԻ Մոնթեպելլոյի Մասնաճիւղ,
 ՀԵԳ «Վահան Գարտաշեան» Ուխտ,
 ՀՅԳ «Վահան Գարտաշեան»
 Պատանեկան Միություն**

***Թեւակոխենք 2020 Նոր Տարին
 Անխոնջ Աշխատելով
 Իրագործելու՝
 Պահանջատեր Հայության
 Անկասար Տենչերը***

Ասպարեզ



Հայրենիքիս Համար
Ժողովուրդիս Հետ

ՀՀԴ

18902020





Հայ Օգնության Միության 110-ամեակի սեմին մեր մաղթանքն է,
Խաղաղ, բարգաւաճ տարի՝ ողջ Աշխարհին,
Պայծառ երկնակամար՝ Հայրենիքին,
Արեւշատ օրեր՝ մեր ժողովուրդին,
Լուսաճաճանց Ճանապարհ՝ ՀՕՄին:

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ
Հայ Օգնության Միության
Կեդրոնական Վարչութիւն



On the threshold of the 110th Anniversary, our ardent wishes are:
Peace and Prosperity to the World;
Radiant Skies for Our Homeland;
A Myriad Days of Sunshine for Our People;
A Resplendant Road for the ARS to Follow.

Merry Christmas and Happy New Year
Armenian Relief Society
Central Executive Board

Հպանցիկ Նշումներ Հայ Մամուլին Մասին(1)

ՎԱՐԳԱՆ ՄԱՏԹԵՍԵԱՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի «Հայ մամուլի տարի»ի հոշակումը, ինչպէս եւ առաջին Հայ թերթի՝ Յարութիւն քհնյ. Շմաւոնեանի «Ազգարար»ի հրատարակութեան 225ամեակը, որուն կը միանան «Հայրենիք»ի 120ամեակն ու The Armenian Weekly-ի 85ամեակը, առիթ պէտք է հանդիսանան մամուլի դերն ու դիրքը վերագնահատելու՝ անցեալի ու ապագայի հաշուառումով:



2000ական թուականներուն՝ ելեկտրոնային մամուլի ծագումին ու զարգացումին:

«Մամուլ» եզրը կ'ընդգրկէ սփիւռքահայ մամուլը, որուն անցեալին ու ներկային աւելի մօտէն ու անմիջականօրէն ծանօթ ենք, իսկ անոր մէջ՝ Հայպլեզու (արեւմտահայերէն) ընթացիկ մամուլը: Այս հպանցիկ նշումները պիտի անդրադառնան ներկայ գրութեան երեք ենթախորագիրներուն:

Սկսելու համար, կ'արժէ հին էջեր բանալ ու կարդալ Hairenik Weekly-ի («Հայրենիք»ի մերօրեայ անգլերէն պաշտօնակիցին՝ The Armenian Weekly-ի նախնական անունը մինչեւ 1969) մօտալուտ հրատարակութեան լուրը «Հայրենիք»ի 11 Փետրուար 1934ի թիւին մէջ: Հոն գրուած է. ««Հայրենիք» ընկերակցութիւնը ուրախութեամբ կը յայտնէ, որ քաջալերուելով «Հայրենիք»ի անգլերէն բաժնի հանդէպ մեր նոր սերունդին ցոյց տուած հետաքրքրութենէն, եւ աւելի լայն կերպով ընդառաջ երթալու համար անոր ազգային դաստիարակութեան պահանջներուն, յատկապէս Մարտ 1էն սկսած, պիտի հրատարակէ (...) անգլերէն շաբաթթերթ մը՝ Hairenik Weekly անունով» (2):

Վերի ընդգծուած տողը կը դառնայ հետեւեալ հարցադրումին առանցքը. այսօր կարելի՞ է ըսել, թէ թերթ մը կը հրատարակուի կամ պիտի հրատարակուի դաստիարակչական (ազգային թէ՛ այլ) նպատակներով: Ասիկա կ'ենթադրէ փակ հանրութիւն մը փակ բաժանմունքներով, ինչպէս որ էր 1930ական թուականներուն, երբ Հայութեան մէկ հատուածը միւսին հետ պաշտօնական կապ չունէր կամ շատ քիչ ունէր, ներառեալ՝ մամուլը, թէ՛ Ամերիկայի մէջ եւ թէ՛ այլուր: Վերջին 35 տարիներուն տեղի ունեցած արհեստագիտական յեղափոխութիւնը եւ քաղաքական վերափոխումը թէ՛ այդ փակ հանրութիւնը եւ թէ՛ այդ փակ բաժանմունքները սրբած-տարած են:

ԴԱՍԱԿԱՆ ԵՒ ԵԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՄԱՄՈՒԼԸ

Թերթերու հրատարակութեան ասպարէզին մէջ, վկայ եղած ենք (երբեմն՝ անմիջական մասնակից)՝ 1970-80ական թուականներու անկիւնադարձին՝ կապարով տողաշարի հոգեվարքին, 1980ական թուականներուն՝ լուսատիպ տողաշարի (Compugraphic մակնիշի մեքենաներ) ծաղկումին ու մահուան, 1990ական թուականներու սկիզբը՝ առաջին անձնական համակարգիչներու օգտագործումին, 1990ական թուականներու կէսերէն՝ ելեկտրոնային նամակին ու համացանցին,

Յիշեցնենք, որ կապարով տողաշարը գոյութիւն ունեցած է 19րդ դարու վերջաւորութենէն մինչեւ 1980ական թուականները (3): Կը նշանակէ, որ 90 տարի անոր տպագրութեան վկանք ըլլալէ ետք, վերջին 30-40 տարիներուն տեղի ունեցած է հետզհետէ աւելի արագընթաց վերափոխում մը, որ անցած է առնուազն երեք տեսակ հրատարակչական ձևերի՝ հասնելով այսօրուան իրավիճակին: Ինչպէս կը պատահի Հայ իրականութեան բոլոր բնագավառներուն մէջ, մամուլը գլխապատոյտ պատճառով այս վերափոխման անմիջականօրէն արձագանգած չէ, այլ՝ միշտ մնացած է ուշացած հրաւիրեալի դերին մէջ:

Եթէ հաշուի չառնենք հինէն եկած աւանդական գանգատները՝ ընթերցողներու սակաւութեան, Հայաստան ընթերցողներու նուազումը, անձնակազմի չզուլութեան, դրամական միջոցներու պակասի, եւ այլ նման երեւոյթներու մասին, կարելի է ըսել, թէ 2000ական թուականներուն արդէն նախատեսելի ելեկտրոնային մամուլի եւ ընկերային ցանցերու (social network) ծաղկումը ա՛լ աւելիով բարդացուցուց տպագիր մամուլին ինքնին դժուար վիճակը:

1990ական թուականներէն ելեկտրոնային լուրերու տարածումը՝ առանց գաղափարական որեւէ խտրի, կը ծառայէր մեր հանրութեան բացման: Այլեւս լուրերը գտուած չէին ըստ գաղափարական որոշ մէկ արժեքափի: Ընթերցողը կրնար աւելի լայն ընտրանք մը ունենալ՝ իր լրատուական կարիքներուն գոհացում տալու համար: Այլեւս որեւէ լրատուամիջոց՝ հին թէ նոր, «ազգային դաստիարակութեան» աղբիւր ըլլալու յաւակնութիւններ չէր կրնար ունենալ: Ընթերցողը կը ստանձնէր իր դաստիարակութեան գործը, եթէ կ'ուզէր՝ ինքնուսուցումը: Առաջ, պարզ լուրերու տարածում էր, իսկ հիմա, աշխարհի Հայ մամուլը մեր տրամադրութեան տակ կ'անցնէր ո՛չ թէ գրողարաններու, այլ մեր տան, ապա՝ մեր գրպանին մէջ:

2000ական թուականներէն, նախ կայքէջերու եւ ապա ընկերային ցանցերու զարգացումը ա՛լ աւելի խորացուցած է գաղափարական ճգնաժամը: Ամէն ոք այսօր կրնայ իր անձնական լրատուական-հրատարակազրական կայքէջը ունենալ՝ առանց մասնաւոր ներդրում կատարելու (բացի ժամանակի յատկացումէն), եւ ամէն

ոք այսօր կրնայ մշտական ներկայութիւն ըլլալ ընկերային ցանցերու մէջ՝ իր սեփական էջին թէ այլոց էջերու մէջ կարծիքներ յայտնելով: Մէկ խօսքով՝ անհատը անսահման ազատութեան տիրացած է իր գաղափարները ուզած ձեւով տարածելու: Եթէ ժամանակին յօդուած կամ նամակ կ'ուղղուէր խմբագրութեան մը եւ այդ յօդուածը կամ նամակը հրատարակութեան չէին արժանանար՝ յարգելի կամ ոչ յարգելի պատճառներով, այսօր դասական մամուլի բովէն երբեք չանցած յօդուածներու եւ նամակներու հեղեղ մը կ'ողողէ համացանցն ու ընկերային ցանցերը՝ status-ներու եւ comments-ներու անունին տակ (4): Անունները փոխուած են, բովանդակութիւնը՝ ոչ:

Ելեկտրոնային մամուլին մրցակցութիւնը, ի հարկէ, կարելոր դեր կը խաղայ տպագիր մամուլի բովանդակութեան մէջ: Օրաթերթը եւ ա՛լ աւելիով շաբաթթերթը կը դժուարանան իրենց զուտ լրատուական առաքելութեան մէջ, մանաւանդ երբ գայն վստահած են արդէն այլեւայլ ձևերով ժամեր կամ օրեր առաջ այդ լուրը սփած կայքէջերու արտատպումին: Եթէ օրաթերթերը կամ երկօրեայ թերթերը տակաւին կրնան մասնակիօրէն տոկալ այդ մրցակցութեան, նոյնը չէ պարագան շաբաթթերթերուն, որոնք արդէն ցոյց կու տան մասնակի շեղում մը դէպի հրատարակազրական ու հետազոտական դաշտ՝ թերթերը դարձնելով աւելի կարծիքի, մեկնաբանական օրկաններ, քան զուտ լրատուական:

Այս մրցակցութեան բնական լուծումը պիտի գար, եթէ տպագիր միջոցները ունենային այն անձնակազմը (կամ իրենց ունեցած անձնակազմը այդ ուղղութեամբ աշխատէր), որ այս կամ այն լուրը ենթարկէր մանրակրկիտ մշակման՝ խորագրի մինչեւ եզրափակիչ վերջակէտը, որպէսզի ընթերցողը այդ թերթի բովէն անցած ու խմբագրուած լուր մը կարդար, փոխանակ՝ մամուլի հաղորդագրութեան մը լուսանկարչական պատճէնը տալու, ուրիշ թերթէ մը արտատպում ընելու կամ հայաստանեան լրատուական գործակալութեան մը, կայքէջի մը կամ թերթի մը լուրը ուղղագրութիւնը փոխելու կամ արեւմտահայերէնի վերածելու: Այսօր կարելի է այս երեք միջոցներուն խմբագրական մը կցել եւ պատրաստ թերթ մը ունենալ՝ առանց թարգմանութիւն մը իսկ կատարելու, առանց մտահոգուելու

լու հնարաւոր աշխատակիցներու գոյութեամբ, եւ բազմաթիւ այլ «առանց»ներով... Բայց ի՞նչ է այդ երեւակայական, թէեւ նմոյները արդէն կը գտնուին շրջագայութեան մէջ, թերթին դիմագիծը՝ բազմատարակապարճ զաւաճողներուն, որոնք այժմ ձրիաբար հասանելի են՝ քանի մը կոճակներու սեղմումով, եթէ «դիմագիծ» անունը կարելի է գործածել:

Վերի նկատողութիւններու շարքը, ի դէպ, նոյնութեամբ կարելի է հասցեագրել ելեկտրոնային մամուլին:

ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԼԵԶՈՒՆ

Այս բոլորին մէջ, մամուլը՝ տպագիր թէ՛ ելեկտրոնային, իր անցեալի լեզուական դերակատարութիւնը կը շարունակէ պահել: Սակայն, գաղտնիք մը չէ, որ վերջին տասնամեակներուն, բազմաթիւ պատճառներով, որոնք քննարկումը բաւական հեռու պիտի երթար, արեւմտահայերէնով գրուած մամուլը ցոյց կու տայ մաշումի հետեւանքները:

Ժամանակին, աշխարհի չորս կողմը սերունդ ունեցանք, որ Հայերէն սորված է՝ թերթ կարդալով: Արդեօք այսօր կրնա՞նք Հայ մամուլը յանձնարարել որպէս լեզուական ուսուցման աղբիւր: Դժբախտաբար, առարկայական իրողութիւն է, որ այսօր կարելի չէ թերթ բանալ անվախօրէն: Անչուշտ, խօսքը խմբագրական վրիպումներու կամ սրբագրական թերացումներու մասին չէ: Ոչ ալ կը խօսինք վիճարկելի կամ սխալ քերականական-ուղղագրական կէտերու մասին, որոնք ժամանակին չ. Արսէն Ղազիկեանի, Բենիամին Թաշեանի կամ այլոց հետազոտութեան եւ պարզաբանման կայլուածը դարձած են ու մինչեւ այսօր կը դառնան: Մեր խօսքը կը վերաբերի քանի մը հիմնական կէտերու, որոնք սփիւռքահայ մամուլի ներկային ու անմիջական ապագային հետ առնչուած են՝ լեզուական իմաստով.

- ա) Մամուլի լեզուի ընդհանուր աղճատում ու համահարթեցում,
- բ) Արեւմտահայերէն ու արեւելահայերէն անհարկի խառնելու իրողութիւններ,
- գ) Օտար լեզուներու (ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն, արաբերէն եւ այլք՝ ըստ շրջանի) ճնշումի բազմացում,
- դ) Հայերէնի քերականութեան տարրական կանոններու իմացու-

ASBAREZ

Address: 1203 N. Vermont Ave.,
Los Angeles, CA 90029
ASBAREZ (ISSN 0004-4229)
Armenian Daily Newspaper published daily except Sundays, Mondays and the days following Federal Holidays and Armenian Holidays.

Published by: Armenian Media Network,
1203 N. Vermont Ave., Los Angeles, CA 90029.

Periodicals postage paid at Los Angeles, CA. POSTMASTER: Send address changes to: ASBAREZ, 1203 N. Vermont Ave., Los Angeles, CA 90029.

Address Changes should be sent to the Circulation Desk five days in advance.
ANNUAL SUBSCRIPTION RATES:
PLEASE CALL (323) 284-9222
United States: \$150 for Daily, \$80 for Weekend Edition.
Canada and Mexico: Air mail \$250, Weekend/English Edition \$150.
Other countries: Air mail \$500, Weekend/English Edition \$250.

ADVERTISING RATES:
Display Ads: (323) 284-9222
Display: Rates will be given upon request
Classified Ads: (323) 284-9222
Classified: \$60 for 6 consecutive days

Հպանցիկ Նշումներ Հայ Մամուլին Մասին(1)

Թեան պակաս,

ե) Ուղղագրական սխալներու աճը, ինչպէս եւ խորհրդային ուղղագրութեամբ գրուած յօդուածներու հիւրընկալումը:

Եթէ կը շեշտենք այս երեւոյթները, պատճառը այն է, որ Հայ մամուլը (տպագիր թէ էլ ելեկտրոնային) տակաւին աշխարհի չորս ծագերուն ցրուած Հայութեան հաւաքական հանդիպումի գլխատու վայրերէն մէկն է: Այս իմաստով, ընկերային ցանցերը չեն փոխարինած զայն, որովհետեւ անոնց տարածքին տեղի ունեցողը անհատական, թէկուզ եւ հրապարակային, հանդիպում մըն է (անձ մը կը հետեւի կամ կը կարդայ ուրիշ անձի մը գրածը կամ տեղադրածը), որ իր ներկայ բնոյթով հաւաքական հանդիպումի տեղը չի կրնար գրաւել: Երբ մարդիկ կ'ըսեն, թէ իրենց լուրերը «Դիմագիրք»էն կ'առնեն, պէտք է նկատի ունենալ, որ անոնց աղբիւրը ընդամենը լուրի մը կ'ամալքն է, օրինակ՝ տուեալ անձի մը մահուան լուրը կամ նոյնիսկ (բացառիկ պարագաներու) քանի մը տուեալներէ բաղկացած կենսագրական մը, կամ փոքրաչափ լրատուութիւն մը: Եթէ ոչ՝ լուսագոյն պարագային, դէպի օրաթերթի մը ելեկտրոնային տարբերակը կամ լրատուական կայքէջ մը առաջնորդող կայք: Ասիկա կրնա՞յ փոխարինել թերթէ մը ակնկալելի լրատուութիւնը, տեղեկութեան (informa-



տիւն, որ երբ գրական Հայատառ մամուլը շեշտակի վայրէջք մը կ'ապրի այս օրերուն՝ յատկապէս հրատարակութիւններու քանակով (նաեւ՝ հայագիտական մամուլը), այդ բեռը կ'իյնայ ընթացիկ մամուլի ուսերուն վրայ: Թէ ինչպէ՞ս պէտք է կազմակերպուի կամ ընթանայ այդ աշխատանքը, կը մնայ տարբեր խօսակցութեան նիւթ: Կը հաւատանք, ամէն պարագայի, որ այդ աշխատանքը չի կրնար պարզապէս անցեալի

անկիւնը, կարելոր նշանակութիւն ունին մեզի համար՝ թէ՛ իբրեւ անհատ եւ թէ՛ իբրեւ հաւաքականութիւն: Բայց արդեօք ժամանակը հասած չէ՞ վերահաստատելու շատոնց գրուած պահանջն ու ակնկալութիւնը, եւ մամուլէն ակնկալելու եւ պահանջելու, որ մե՛ր կեանքին, մե՛ր ինքնութեան կեդրոնը թուրքիան եւ օսմանեան-թրքական պետութեան անցեալ ու ներկայ արարքները չըլլան: Մէկ խօսքով՝ չապրինք միայն ու միայն որպէս թուրքիոյ յաւելուած: Թերեւս պէտք է տեսակ մը «գործօն մոռացում»ի դիմել (active forgetting), հետեւելով գերման փիլիսոփայ Ֆրիտրիխ Նիցչէի գաղափարին: Ո՛չ թէ մոռնալ, այլ ամէն վայրկեան չիչել: Տուեալ վայրկեանի մը մեր յիշածը ընտրել:

ապրող մշակոյթի մը լուրերով, տեղեկատուութեամբ, վերլուծումներով, որպէսզի ո՛չ թէ հետզհետէ դառնայ լուսանցքի վրայ ապրող, միայն անցեալի «Հին պատմութիւնները» արծարծող, այլ՝ ընդհակառակը՝ փնտռուած լրատուամիջոցը եւ մեր հանրութիւնը առաջնորդող դրօշակիրը, չորրորդ իշխանութիւնը 21րդ դարուն: Որպէսզի ողջերուն ներշնչէ, նորահաս սերունդները լիցքաւորէ Հայ ըլլալու դրական ու ողջմիտ, լուսաւոր ուղիներով դէպի ապագայ ընթանալու գաղափարով:



tion) եւ ո՛չ թէ տուեալներու (data) հաղորդումը, երեւոյթին արժեւորումը:

Երկրորդ պատճառը այն է, որ Հայ մամուլը արեւմտահայերէնի անմիջական զարգացման առաջին աստիճանը կամ փորձաքարը կը հանդիսանայ՝ գրականութեան հասնելէ առաջ: Ի վերջոյ, լեզուական բնաշրջման երեւոյթները առաջին հերթին տեղի ունեցած են եւ տեղի կ'ունենան մամուլին մէջ, որմէ յետոյ թափանցած են ու կը թափանցեն գրական-գեղարուեստական թէ ուսումնասիրական երկերու մէջ:

կրկնութիւն մը ըլլալ, այսինքն՝ սովորական կարծրատիպերու կրկնութիւնը, այլ պարտի դուռ բանալ արդիական, հոգ չէ թէ վիճաբարոյց, սակայն ազատ քննարկման մթնոլորտի մը:

ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՊԱՆՔԱՆՁԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ

Արդիական ըլլալը օդի ու ջուրի պէս կենսական է մամուլին համար: Արդիականը, անշուշտ, կապ չունի այդ մամուլի կերպարանքին, այլ՝ բովանդակութեան հետ: Օրինակ՝ տպագրական ամենավերջին նորութիւններով օժտուած, գունագեղ ու պատկերազարդ թերթ կարելի է հրատարակել այսօր՝ Պաղ պատերազմի մտածողութեամբ:

Արդիականութեան պահանջը նաեւ կը տարածուի... Հայութեան պահանջատիրական ճիգերուն վրայ: Անկասկած, Յեղասպանութեան ճանաչումը եւ անոր հետ կապուած բոլոր պատմական ու այժմէական հարցերը՝ Թուրքիայէն մինչեւ աշխարհի ամենայնտին

Թերեւս ժամանակն է, որ Հայ մամուլը վերաքննութեան ենթարկէ իր խօսոյթը (discourse) եւ 1970-80ական թուականներէն, երբ Յեղասպանութեան ճանաչումը եւ բոլոր յարակից հարցերը խանձարուրի մէջ էին (5), երբ Սփիւռքը առանձինն կը կրէր այդ պայքարին բեռը իր վտիտ ուսերուն վրայ, ցատկ մը կատարէ 40-50 տարի դէպի յառաջ եւ հասնի 2020ի սեմին: Այդ ցատկին արդիւնքը պէտք է ըլլայ այն անդրադարձը, որ սփիւռքահայ մամուլը լոյս կը տեսնէ Սփիւռքին մէջ եւ նախ եւ առաջ պարտաւոր է Սփիւռքը եւ իր հրատարակութեան վայրի համայնքը դարձնել իր կիզակէտը: Ուշագրութեան երկրորդ առանցքը Հայաստանը (Արցախով մէկտեղ) պէտք է ըլլայ, իսկ երրորդը՝ հայկական պահանջատիրութիւնը: Ասիկա չի նշանակեր, կը շեշտենք, որեւէ ձեւով հրաժարիլ որեւէ բանէ: Կը նշանակէ, սակայն, առաջնահերթութիւնը սալ մեր յիշածին: Գիտակցիլ, որ գրեթէ 30ամեայ անկախ պետականութեան մը իրողութիւնը կը պարտադրէ առաջին հերթին ողջերով զբաղիլ՝ անոր սահմաններէն ներս թէ դուրս: Մեռելները արթուն են մեր հոգիներուն մէջ, իսկ Հայ մամուլը պարտի առաջին հերթին ողջերը սնուցանել ապրող երկրի մը, ապրող հաւաքականութեան մը,

1.- Այս յօդուածին նախնական տարբերակը իբրեւ բանախօսութիւն կարդացուած է Հայ մամուլին նուիրուած միօրեայ գիտաժողովին, որ «Հայրենիք» Հաստատութեան եւ ԱՄՆ Արեւելեան թեմի Ազգային առաջնորդարանի կազմակերպութեամբ տեղի ունեցած է 26 Հոկտեմբեր 2019ին, Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցու մէջ:

2.- Hairenik Weekly, «Հայրենիք», 11 Փետրուար 1934 (ընդգծումը մերն է): Այդ թիւը կարգացած ենք արհեստագիտութեան շնորհիւ, քանի որ Հայաստանի Ազգային գրադարանի ձեռնարկած թուայնացման ծրագրի ծիրին մէջ, կարգը հասած է «Հայրենիք»ի (թող որ անկատար) հաւաքածոյին: Այս ալ կը հանդիսանայ 21րդ դարու Հայ մամուլ-արհեստագիտութիւն փոխյարաբերութեան դրական երեսներէն մէկը:

3.- Անոր շիջումի տասնամեակին, պէտք է յիշել, օրինակ, Փարիզի «Յառաջ» օրաթերթի բացառիկ պարագան, որ մինչեւ 2009ի վերջին թիւը ստիպուեցաւ շարունակել կապարով հրատարակութիւնը՝ արդէն նախնականի հասնող պայմաններու մէջ:

4.- Այլ հարց, թէ այդ հեղեղը որքանո՞վ արժանի պիտի ըլլար օր-ով էջերու կամ ընթերցողներու նամականիի մաս կազմելու:

5.- Մինչեւ 1975ը միայն Ուրուկուայը օրէնքով պաշտօնապէս ճանչցած էր Յեղասպանութիւնը, այդ ալ՝ «ցեղասպանութիւն» բառը չգործածելով:

ԿԼԵՆՏԷՅԼ

ՀՅԳ «Ահարոնեան» Կոմիտե

ՀՕՄԻ «Սիփան» Մասնաճիւղ

**Համազգայինի
«Յովհաննէս Թումանեան»
Մասնաճիւղ**

ՀԵԳ «Ռուբէն» Ուխտ

**Կլենտէյլի Հայ Դատի
Յանձնախումբ**

***Մաղթում եմ,
որ 2020 ը համայն Հայ ժողովրդի
եւ մեր համայնքի համար լինի
յաջողութիւններով, ձեռքբերումներով
ու յաղթանակներով լի փարի:
Շնորհաւոր Նոր Տարի
եւ Սուրբ Ծնունդ***

Հայաստանի Հրեշտակ Ներդրողների Ակումբը՝ ԲՏ Ոլորտում Հայաստան-Սփիւոֆ Համագործակցութեան Լաւագոյն Օրինակ

ՆԱՆԷ ԱԻԱԳԵԱՆ

Հայաստանի տեխնոլոգիական ոլորտում ձեռնարկատիրական միջավայրի կայացման ու զարգացման գործում առանձնաշատուկ ներդրում ունի Հայաստանի «Հրեշտակ» ներդրողների ակումբը (Angel Investor Club of Armenia-AICA): Այն ստեղծուել է աջակցելու Հայաստանում ստեղ-

կ'օգնեն Հայ արտադրողներին զարգանալու եւ դուրս գալու համաշխարհային շուկաներ: Առաքելութիւնն իրականացնելու նպատակով, ակումբի հիմնադիրները համախմբել են տարբեր երկրներից արդիւնաբերութեան բազմապիսի ճիւղերի ներկայացուցիչների՝ բիոտեխնոլոգիայի, թուային առողջապահութեան, տեղեկատուական տեխնոլոգիաների, բլոկչէյնի, արհեստական



թուում են համաշխարհային ճանաչման ընկերութիւնների ղեկավարներ, ձեռներէցներ, ֆինանսական, ԲՏ ոլորտում գործող փորձագէտներ: Ակումբի ներկայի անդամներ հանդիսացող, երկու տասնեակից աւելի հիմնական ներդրողները, տարուայ ընթացքում մի քանի անգամ հանդիպում են կազմակերպութեան գրասենեակում՝ ծանօթանալու եւ ընտրելու զարգացման մեծ ներուժ եւ հեռանկարային ծրագրեր առաջարկող ընկերութիւնների՝ ուղղորդելու, փոխանցելու իրենց փորձը, տրամադրելու խորհրդատուութիւն եւ նոր կապեր, օգնելով նրանց գտնելու յաճախորդներ եւ դուրս գալ նոր շուկաներ:

Է լինել մի քանի հազարից մինչեւ մի քանի միլիոն, պայմանաւորուած նախագծի նկատմամբ ներդրողների հետաքրքրութեամբ: Կազմակերպութեան աշխատանքները համակարգող, համահիմնադիր Աննա Գէորգեանն էլ, անդրադառնալով ընթացակարգին, պատմեց, որ ներկայացման աւարտից յետոյ ձեւաւորում են աշխատանքային խմբեր, եւ այնուհետեւ ստեղծում է ուղիղ կապ ներդրողների եւ «սթարթափ» ընկերութիւնների միջեւ՝ ֆինանսաւորման եւ այլ հարցերի նպատակով:



ծուող նորարար գաղափարներ առաջարկող «սթարթափ»ներին ու ձեռնարկատէրերին՝ ներգրուելով միջազգային ճանաչում ունեցող հիմնականում Հայ մասնագէտ-գործարարների, ովքեր ներդրումներ կը կատարեն եւ

բանականութեան, շինարարութեան, անշարժ գոյքի զարգացման, վերականգնուող էներգետիկայի, բանկային, ֆինտեխնոլոգիական, սննդի եւ խմիչքների, արդիւնաբերութեան առաւել աւանդական ոլորտներից, որոնց

Ակումբի համահիմնադիրներ Արթուր Միքայէլեանին, Սամսոն Աւետեանին ու Աննա Գէորգեանին գործունէութեան կարճ ժամանակահատուածում յաջողուել է կայացնել եւ ճանաչելի դարձնել կազմակերպութիւնը՝ միաւորելով համահայկական ներուժը, եւ միաժամանակ դառնալ Հայաստան-Սփիւոֆ Համագործակցութեան լաւագոյն օրինակ: Հայաստանի «Հրեշտակ» ներդրողների ակումբի «սթարթափ» նախագծերի ներկայացման հերթական 4րդ ձեռնարկին, «Հրեշտակ» ներդրողներին ներկայացուցեց վեց նախագիծ, որոնցից ոմանք արդէն իսկ մեծ գնահատանքի են արժանացել ոլորտի համաշխարհային համայնքի կողմից: Հոկտեմբերի 12ին, Երեւանում անցկացուած միջոցառումը, ինչպէս սփիւոֆահայ յայտնի գործարարները նաեւ վկայեցին, անցաւ բարձր մակարդակով, միջազգային չափանիշներին համապատասխան:

Հայաստանի «Հրեշտակ» ներդրողների ակումբի ձեռնարկին ներկայացուած նախագծերից ոմանք արդէն իսկ մեծ հնչեղութիւն են ստացել աշխարհում եւ յաջողութեամբ գործում են: Ներկայում նրանք ակնկալում են ֆինանսաւորում՝ զարգացման նոր փուլի անցնելու նպատակով: Virtlo յաւելուածն ամենաարագ ծրագիրն է, որի օգնութեամբ օգտատէրը հեռախօսի տեսախցիկի միջոցով կարող է իւրաքանչիւր երկրում գտնել մօտակայքում իրեն հետաքրքրող վայրերը պատկերներով՝ թանգարան, ճաշարան, բանկ եւ այլն: Այն գործում է ամբողջ աշխարհում, եւ արդէն համագործակցում է «Թրիփլընդուայզեր» ցանցի հետ: Յաւելուածը մրցանակի է արժանացել եւ ֆինանսաւորուել նաեւ WCIT-ի համաշխարհային համաժողովում: Soraytec նախագծի հեղինակներն առաջարկում են էներգիայի օպտիմալացման (բարելաւումի-ՆՍՄ) խոստումնալից լուծում: Հայ-Եւրոպական թիմն արդէն փորձարկել է ծրագիրը Նորվեգիայում: GeBeCert մրցանակակիր «սթարթափ»ը ներկայանում է յեղափոխական լուծումներով՝ խոշոր ընկերութիւններին առաջարկելով կասեցնել կեղծ ապրանքների ու հաւաստագրերի ստեղծումն ու տարածումը: Մարզական եւ ֆինանսական ոլորտների միաւորման հետաքրքիր մօտեցում է նախատեսուած Beticle ծրագիրը: Team uniQ կոչուող նախագիծը նորարարական, բացառիկ լուծումներ է առաջարկում սոցիալական հարթակում: Ձեռնարկին հնարաւորութիւն էր ընձեռնուել մասնակցելու նաեւ տեխնոլոգիական ոլորտում չգործող «ԱՅԼԿԵՐՊ» ընկերութեանը, որ յայտնի է տարբեր տարիքային խմբերի համար ինտելեկտուալ (մտային-ՆՍՄ) խաղերի արտադ-

Կարալիս եւ Ծովակ
Գարամարտեաններ
Եւ Չաւակները՝
Արմէն, Միքէլ, Թալին
Եւ Թոռները

Թող Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը
Երջանկութիւն
Եւ խաղաղութիւն
պարգևեն մեր ժողովուրդին

Zov's Bistro
17440 E. 17th Street,
Tustin, CA 92780
714.838.8855



Ֆերահեան Ազգային երկրորդական վարժարանի, Մարի Գապայեան Նախակրթարանի եւ ՀՕՄԻ «Աշխէն Փիլաւճեան» Մանկամտօրի տնօրէնութիւնը, պատասխանատու մարմիններն ու անձնակազմը, սրտանց կը շնորհաւորեն վարժարանի ծնողները, համակիրները, ազնուասէր բարերարները, ինչպէս նաեւ Հայաստանի, Արցախի եւ աշխարհատարած ողջ հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով բոլորին հայօրէն ապրելու աննկուն կամք, Հայ Դատի յարատեւ յաղթական երթ, հայութեան անկատար տենչերու իրականացում, ինչպէս նաեւ բարեբեր եւ օրհնեալ տարի մը:

Հայաստանի Հրեշտակ Ներդրողների Ակումբը՝ ԲՏ Ոլորտում Հայաստան-Սփիւոֆ Համագործակցութեան Լաւագոյն Օրինակ

րութեամբ:
Ներդրողները մեծապէս տպաւորուած էին թէ՛ «սթարթափ»երով եւ թէ՛ ներկայացման ձեւով: Բարձր տեխնոլոգիաների համաշխարհային ոլորտում ճանաչուած ձեռնարկատէր, ամերիկահայ էլ նսայեանը, ով երկար

Սփիւոֆի հայերի միջեւ նոյնպէս որակական նոր մակարդակի է հասել, ինչը շատ ոգեւորիչ է», նշեց ակումբի անդամ Եսայեանը՝ կարեւորելով կառուցի գոյութիւնն ու գործունէութիւնը, որի շնորհիւ սփիւոքահայ մասնագէտներն ու գործարարները կարողանում




տարիներ է, որ ներգրուուած Հայաստանում ԲՏ ասպարէզում, հաւաստիացրեց, որ որակական առումով ոլորտում հսկայական առաջընթաց կայ, ինչի վկայութիւնն էին նաեւ ներկայացուած նախագծերը. «Ամէն տարի որակն աւելի է բարձրանում, գաղափարներն առաւել հետաքրքրիւ են դառնում, «սթարթափ»ներ ստեղծողներն էլ աւելի վստահ են նաեւ ներկայացնելիս, ինչը վստահութիւն է ներշնչում նաեւ ներդրողներին: Հաղորդակցութիւնը Հայաստանի եւ

են ճանաչել եւ օգտակար լինել իրենց հայրենակիցներին՝ միաժամանակ փոխշահաւէտ ներդրում կատարելով: Ակումբի անդամներից է նաեւ «Նարեկացի» արուեստի միութեան հիմնադիր Նարեկ Յարութիւնեանը, որ «չատ գնահատելի» որակեց կազմակերպութեան աշխատանքը՝ նշելով, որ ստեղծուել է հարթակ, որտեղ երիտասարդները կարող են արտայայտել իրենց գաղափարներն ու դուրս գալ համաշխարհային շուկայ: Հայաստանի «Հրեշտակ» ներդրողների

ակումբի կարեւորութեան մասին արտայայտուեցին նաեւ մասնակից նախագծերի ներկայացուցիչները. «Նման հանդիպումներն անչափ կարեւոր են, քանի որ ստանում ենք բազմաթիւ կարծիքներ, խորհուրդներ մեր գաղափարի վերաբերեալ, ինչպէս նաեւ՝ հասկանում ենք, թէ որքանով է հետաքրքրիւ մեր գաղափարը նաեւ միջազգային ներդրողների շրջանում, ինչ ակնկալիքներ կարող ենք ունենալ: Միաժամանակ, ձեռք ենք բերում այնպիսի կապեր ու ծանօթութիւններ, որոնք շրջադարձային կարող են դառնալ մեր գործի համար», նշեց Virtlo յաւելուածի համահիմնադիր Սաչատուր Բա-

դալեանը:
Հայաստանի «Հրեշտակ» ներդրողների ակումբը գործունէութեան կարճ ընթացքում հովանաւորել է հինգ նախագիծ, այդ թւում՝ «էմբրի Թեք», «Իլուրիա Սեբրիթի», «Գեֆեթ», որոնք բացառիկ են բնոյթով:
Հիմնադիրները նշում են, որ ֆինանսաւորումը, անկախ նախագծի տուեալ պահի յաջողութիւնից, բարձրացնում է տուեալ ընկերութիւնը նոր որակի: Ըստ այդմ, կազմակերպութիւնը ջանքեր չի խնայելու հայկական ընկերութիւններին աջակցելու հարցում: Ակումբի անդամ-ներդրող կարող է դառնալ իւրաքանչիւրը, ով համախոհ է ակումբի նպատակներին:

Merry Christmas and Happy New Year!



Roslin Art Gallery
415 E. Broadway, Suite 100, Glendale, CA 91205
818.241.0611 ROSLIN.COM

ABRIL BOOKSTORE
ԱՊՐԻԼ ԳՐԱՏՈՒՆ
415 E. Broadway, Suite 102, Glendale, CA 91205
(818) 243-4112 ABRILBOOKS.COM

Where Armenian culture is preserved, fostered and promoted!

Կը պահպանէ հայկական
 ժառանգութիւնն ու
 ինքնութիւնը՝ կրթական,
 մշակութային եւ համայնֆային
 ծրագիրներու միջոցաւ:

Preserving the
 Armenian heritage and
 identity through educational,
 cultural and community
 programs.



give
 A gift that lives beyond a lifetime...



Հայկական Մշակութային Հիմնարկութեան
 Հիմնադրամի (ACF) մասին յաւելեալ
 տեղեկութիւններու համար հեռաձայնեցէ՛ք այսօր:

To learn more about the ACF
 Trust Fund call today

(818) 243-1890 | www.acftrustfund.org

ՀՐԵՏԱՆԱԻՈՐՆԵՐԸ

Նուրիում

ԱԼԻՍ ԱԼԱՎԵՐԳԵԱՆ

Փոխգնդապետ Սէյրան Յակոբեանը գրեթէ քառորդ դար բանակում է:

«Զինուորական գործի հանդէպ սէրս գալիս է մանկութիւնից: Պապս զինուորական էր: Ես թէ-եւ նրան չեմ տեսել, բայց երբ նայում էի նրա լուսանկարներին, լսում էի նրա մասին պատմութիւնները, մէջս խմորում էր զինուորական դատնալու որոշումը: Բացի այդ էլ, մեր շէնքը խորհր-

սակի հրամանատար, յետոյ առաջխաղացումներ, նոր նշանակումներ:

Ներկայումս գնդապետ Կարէն Ջալալեանի հրամանատարութեամբ գործող պաշտպանական շրջանի հրետանու պետն է:

Փոխգնդապետը ապրիլեան մարտական գործողութիւնների մասնակից է:

Ապրիլեան օրերին հրետանին իր վճռորոշ դերակատարումն ունեցաւ: Հէնց միայն հակառակորդի վիճակագրութիւնում նշուած է, որ իրենց զոհերի մօտ 80 տոկո-



դային բանակի սպաներին էր պատկանում, ու աչքս անընդմէջ զինուորականներ էր տեսնում: Ինձ գրաւում էին համազգեստը, զինուորականների ձիգ կեցուածքը, ուսադիրների աստղերի փայլը: Դեռ չէի պատկերացնում, թէ այդ փայլուն ուսադիրների հետեւում որքան դժուարութիւններ

սը հրետանու կրակից է: Սա ինքնին խօսուն փաստ է, որ վկայում է խոցման աստիճանի ճշգրտութեան եւ մեր հրետանաւորների արհեստավարժութեան մասին: Ապրիլեան պատերազմը մի իւրօրինակ քննութիւն էր, որը եւս մէկ անգամ ապացուցեց, որ մեր զինուորները ե՛լ հոգեբանօրէն են պատրաստ, ե՛լ մասնագիտօրէն:

Հրետանին կոլեկտիւ գինատեսակ է, եւ ցանկացած հրետանաւորի վրիպումը ուղղակիօրէն ազդում է վերջնարդիւնքի վրայ: Մեր հրետանաւորները փոխհամագործակցելով, փոխլրացնելով, փոխհամալրելով լուրջ արդիւնք ունեցան: Պատերազմում, սակայն, ոչ միայն հրետանաւորների համախմբուածութիւնը երեւաց: Ամբողջ ազգն էր համախմբուել՝ ազգը զինուոր էր դարձել...

«Այսօր մենք խնդիր չունենք ե՛լ հեռահարութեան, ե՛լ ճշգրտութեան, ե՛լ ամբողջ խորութեամբ մեր հասանելիութեան առումով: Իւրաքանչիւր զինուոր եւ սպայ թէ՛ խաղաղ, թէ՛ մարտական պայմաններում իր պարտականութիւնները, իր գործառոյթները յստակ գիտի եւ ցանկացած խնդիր պատրաստ է կատարելու: Անձնակազմն էլ անցած ամփոփիչ քննութիւնների ժամանակ արժանացել է «4» գնահատականի», շարունակում է փոխգնդապետը: ***

Փոխգնդապետ Սէյրան Յակոբեանը չորս որդի ունի՝ վաղուայ չորս զինուոր:

«Հիմնականում կնոջս ուսերին է որդիներին դաստիարակութիւնը:



կան, տքնանք, պատասխանատուութիւն:

1996թ. գորակոչուեցի բանակ, ու հէնց այդ ժամանակ էլ բախտն ինձ ժպտաց՝ մեզ մօտ հրետանային սպաների դասընթացներ բացուեցին, եւ ես էլ ընդգրկուեցի՝ մարմին տալով իմ երազանքին», պատմում է նա:

Սպայական դասընթացներն աւարտելուց յետոյ Սէյրան Յակոբեանը նշանակուեց խառը հրետանային գնդում՝ որպէս դա-



Շաբաթ-կիրակի օրերին եմ միայն զօրամասից գնում տուն, ու թէ տանն էլ երեխաներս յանկարծ մի բան այն չեն անում, ու կինս էլ ասում է՝ վրաները խօսիր, արդարանում եմ՝ ո՞նց խօսեմ, մի շաբաթ չեմ տեսել, հազիւ կարօտս առնեմ...

Հազար պլան եմ մտքումս գծում-ծրագրում ընտանիքիս հետ անցկացնելու, բայց յաճախ մտադրութիւններս չեմ հասցնում իրագործել:»:

ԱՄՈՒՐ ՊԱՀԵԼՈՎ ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔԸ

Առաջնագծում ենք: Արցախի հիւսիսային այս հատուածն առանձնանում է բնակիւմայական բարդ պայմաններով, բարդ, կտրտուած տեղանքով ու անպատմելի շքեղ բնութեամբ: Զինուորական «Վիլիս»ը, յաղթահարելով ճանապարհի բազում խոչընդոտներ, մեզ տանում է հրետանաւորների մօտ: Հրետանաւորները տեսական,



ԱԼԻՍ ԱԼԱՎԵՐԳԵԱՆ.- 23 տարի քանակում էք, պարո՛ն փոխգնդապետ, իրապէս՝ սպայական փայլուն ուսադիրների յետեւում քազում դժուարութիւններ կան, տհմանք, պատասխանատուութիւն... Ամէնօրեայ ծառայութիւնը իլում է ժամանակի մեծ մասը, անվերջանալի այս ինդիւստրիալ միջից, երբ մի պահ քարճրացնում էք գլուխն ու հասկանում էք...

ՍէՅՐԱՆ ՅԱԿՈԲԵԱՆ.- Ու հասկանում ես, որ չես կարող ապրել առանց այս ամէնի: Որ հազար տեսանելի ու անտեսանելի թելերով կապուած ես ծառայութեանդ, զինուորներիդ, որ զինուորական համազգեստը վաղուց արդէն դարձել է քո երկրորդ մաշկը, կենսակերպը, ապրելու բանաձեւը, իսկ անցնող տարիները բազմապատկել են սէրդ մասնագիտութեան հանդէպ:



գործնական պարապմունքների միջոցով կատարելագործում են մասնագիտական գիտելիքները: Հրանօթի հրամանատար, կրտ-

Նուրիում

սեր սերժանտ Արսէն Գրիգորեանը Ասկերանի շրջանի Այգեստան գիւղից է.

«Հայրս 17 տարեկանում մասնակցել է Շուշիի ազատագրմանը: Ինքն ու հօրեղբայրս մասնակցել են ե՛ւ արցախեան պատերազմին, ե՛ւ ապրիլեանին: Հիմա իրենց գործն են շարունակում՝ ամուր պահելով հայրենի



եզերըը:

Ծառայութեանս ութ ամիս է մնացել: Զորացրուելուց յետոյ ուսումն կը շարունակեմ Շուշիի տեխնոլոգիական համալսարանում, ուրիշ վայրում չեմ պատկերացնում ապագաս, կ'ապրեմ, կ'աշխատեմ ծննդավայրում:

Հաշուարկի վարորդ, շարքային Ռոստիկ Օզմանեանը Կոտայքի մարզից է.

«Թէեւ ազգութեամբ եզդի եմ, բայց հայոց հողը ինձ համար

հայրենիքի պէս հարազատ է, այստեղ եմ ծնուել, մեծացել: Ապրիլեանի ժամանակ զոհուեց նաեւ իմ ազգականներից՝ Բորիս Օզմանեանը: Այն վայրագութիւնները, որ մենք տեսանք թշնամուց, ստիպում է մեզ զէնքը ձեռքներիցս վայր չդնել»:

Հրանօթի հրամանատար, սերժանտ Արտուշ Ենոքեանն էլ յաւելում է.

«Զգտում ենք զինուորական գիտելիքներն էլ՝ աւելի կատարելագործել՝ մեր դիմաց նենգ թշնամին է... Ես ուսումնական զորամասում եմ վեց ամիս ծառայել, այնտեղի սովորածս հիմա կիրառում եմ գործնականում»:

Հրանօթի նշանառու, շարքային Վահէ Գալիթեան. «Նոր եկողներին կը յորդորեմ՝ իրենց գործում վարպետանան, տիրապետեն անհրաժեշտ գիտելիքներին: Զինուորական գործում մանրուքներ չկան՝ մի աննշան թուացող սխալը կարող է վճռորոշ լինել»:

Մարտկոցի աւագ վարորդ, շարքային Վուստ Եսայեան. «Երկու եղբայրներս ծառայել են, արդէն մէկ տարի 4 ամիս էլ ես եմ ծառայում: Բացի աւագ վարորդից, նաեւ հաշուարկի համար եմ: Մեզնից ամէն մէկը յստակ գիտի հրետանու կարելորդ եւ վճռորոշ դերը պատերազմի ժամանակ հրետանին հակառակորդին զսպող-սաստող ուժն է, բանակի յուսալի վահանը»:

«Անձնակազմը իրեն տրուած հրահանգներն ու առաջադրուած



խնդիրները ճիշդ, ժամանակին ու վստահ կատարում է: Հարկ եղած դէպքում, առկայ ուժերով եւ միջոցներով ունակ ենք խոցելու հակառակորդի ցանկացած նշանակէտ», ասում է խառը հրետանային դիվիզիոնի 2րդ մարտկոցի հրամանատար, կապիտան Մեխակ Եղիկեանը:

Երիտասարդ զինուորականն աւարտել է Վ. Սարգսեանի անուան ռազմական համալսարանը, արմատներով Տաուշից է:

«Մի սահմանից միւս սահմանն եմ եկել, տարբերութիւն չկայ՝ հայրենիքի որ հատուածում եմ ծառայում»:

Մեխակի հայրը, հինգ հօրեղբայրները արցախեան ազատամարտի տարիներին ինքնապաշտպանական ջոկատում են կռուել՝ պաշտպանել հայրենի բնօրրանը: Մեխակն էլ ապրիլեան մարտե-

րի ժամանակ Թալիշ-Մատաղիս հատուածում էր:

«Ապրիլեան այդ օրը զօրամասի պատասխանատուն էի: 18-20 տարեկան տղերքը մեր սպասուածից էլ լաւ կատարեցին իրենց գործը, այնպէս անվրէպ, այնպէս վարժ էին խոցում, ասես բազմաթիւ մարտերում էին թրծուել: Հրետանին ահռելի մեծ գործ կատարեց այդ ժամանակ եւ իր հատու, վճռորոշ խօսքն ասաց:

«Հրետանաւորների օրուայ առթիւ էլ մաղթանքս, ցանկութիւնս, երազանքս մէկն է՝ թող բոլոր զօրատեսակներն էլ իրենց զէնքը գործածեն միայն ու միայն զօրավարժարաններում:

Բայց, հարկ եղած դէպքում, պատրաստ ենք յուժկու հարուած, վերջնահարուած տալով ընդմիշտ լուեցնել թշնամուն»:

Մութն արդէն ընկել էր, երբ հրաժեշտ տուեցինք մեր հրետանաւորներին: Վառվռուն, գունագեղ աշնան հմայքը ձուլուել էր կապտաթոյր մութին: Հրետանաւորները մնացին իրենց տեղակայման վայրում, իսկ նրանց խրոխտ երգը դեռ երկար հնչում էր ունկերումս.

«Մեր հրետանին է ահեղ որոտում,

Թշնամու դիրքերին սարսափ տարածում,

Զարկի՛ր, հպա՛րտ հրետանաւոր...»:

«ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ»

In Memory of Prof. Harut Barsamian

Փրոֆ. Յարութ Պարսամեանի Յիշատակին

Թամարա Պարսամեան

Անխախտ Հաւատքով Ու Խաչի Ուժով

ՆԵՐՍԷՍ ԻԻԱՆԵԱՆ

Հայոց եկեղեցին ու բանակը բոլոր ժամանակներում մէկ միասնականութիւն են եղել, կան ու կը լինեն: Անխախտ Հաւատքով, մարտական ոգով՝ զէնքով ու խաչով, Հայ Հոգեւորականը մի՛շտ եղել է մարտադաշտում, կանգնել զինուորի կողքին ու պաշտպանել մեր խաղաղ արարման իրաւունքը, մեր ինքնութիւնն ու Հայրենի եզերքը: Ոչ միայն պատերազմի ժամանակ, այլև խաղաղ պայմաններում, Հոգեւորականները մշտապէս զօրամասերում են, մարտական դիրքերում: Նրանք խաչի զօրութեամբ ու Հաւատքի ուժով ոգևորում ու ամրացնում են տղաներին:

Իւրաքանչիւր օր ու դասաժամ, գնդերէց Մանուէլ սարկաւազ Սարգսեանը սկսում է Տէրունական աղօթքով եւ Հոգեւոր ծառայութեան հանդէպ պարտքի մեծ զգացումով: Ինչպէս մեր միւս գնդերէցների, այդպէս եւ նրա ջանքերով, օրէցօր ամրապնդում է զօրքի ու Հոգեւորականի միջեւ փոխվաստահութիւնը ու եկեղեցի-բանակ կենսական կապը:

- Երբ զօրամաս եկայ,- վերյիշում է գնդերէցը,- առաջին քայլը, որ անհրաժեշտ էր անել՝ վստահութեան մթնոլորտի հաստատումն էր, որպէսզի զինուորներն ազատ կարողանային կիսուել իրենց թէ՛ ընտանեկան, թէ՛ անձնական եւ թէ՛ ծառայողական խնդիրներով,



դժուարութիւններով, հոգսերով:

Այժմ, արդէն, շուրջ երկու տարի սահմանապահ այս զօրամասում Հոգեւոր ծառայութիւն իրականացնող գնդերէցն ամէն օր շփուում եւ հաղորդակցւում է սպաների ու ժամկէտային զինծառայողների հետ, առանձնազրոյցներ է ունենում, տալիս է հարցատներից ու սիրած աղջիկներից կտրուած զինուորներին յուզող հարցերի պատասխանները:

- Մանուէլ սարկաւազի հետ շփուելով՝ թեթեւութիւն եմ զգում, կտրուում հոգսերից ու աւելի մեծ ուժ ստանում,- ասում է ժամկէտային զինծառայող Նորիկ Սիմոնեանը:

Գնդերէցն իր հերթին մեծ գոհունակութեամբ փաստում է. «Հովուական ծառայութիւնն այ-

Լուսանկարը՝ ՄԱՅՑԱԿԱՆ ԵՓՐԻԿԵԱՆԻ սօր արդէն բանակային կեանքի անբաժան մասն է, եւ լինի դա զօրամասում թէ՛ մարտական յենակէտերում, ո՛չ ոք այլեւս չի զարմանում՝ զինուորի կողքին կանգնած Հոգեւորականին տեսնելով: Եթէ Հոգեւորականն ինքը «Մի՛ սպանիր» պատուիրանի քարոզիչն է, ապա ինչպէ՞ս կարող է նա նաեւ զէնք կրել: Զինծառայողներին կարող է թուալ, թէ հակասութիւն կայ Աստուածաշնչի եւ զինծառայութեան միջեւ: Սակայն սա խնդրի ընդամէնը մակերեսային ընկալումն է: Մենք այստեղ ենք, որ նման հարցերի պատասխանը տանք, պարզաբանենք, բացատրենք: Օրինակներով ներկայացնում ենք, թէ մեր Հոգեւորականներն ի՛նչ նշանակալի դերակա-

տարում են ունեցել մեր պատմութեան շրջադարձային ժամանակներում»:

Ի դէպ, զօրամասում Հոգեւոր ծառայութեան ընթացքում, Մանուէլ սարկաւազը վճռեց եւ ամենայն պատասխանատուութեամբ ստանձնեց մէկ այլ գործառոյթ՝ դարձաւ Սփիւռքից Հայրենիք վերադարձած եւ յաճախ Հայերէն գրել-կարդալ չիմացող զինուորների Հայոց լեզուի եւ Հայրենագիտութեան ուսուցիչը:

- Անցեալ տարի ունեցանք զինուորների առաջին խումբը, որ Հայերէն արդէն վարժ գրում, կարդում, խօսում էր: Այդուհետեւ, աւանդույթ դարձաւ ուսումնական գումարտակներում արտերկրից վերադարձած մեր զինուորների հետ մայրենիի դասընթացներ անցկացնելը,- ասում է նա:

Շաբաթը մի քանի անգամ Մանուէլ սարկաւազը, Աշոտ Երկաթ արքայի խաչի կրկնօրինակը ձեռքին, շտապում է առաջնագիծ՝ նորից ու նորից կանգնելու բարձրադիր յենակէտերում, մարտական ծառայութիւն իրականացնող զինուորների կողքին:

- Այն գիտակցութիւնը, թէ այս հողը, սահմանի այս հատուածն ի՛նչ մեծ զոհողութիւնների գնով է ազատագրուել, ուժ է տալիս, որ այս հողի վրայ՝ սահմանին, դու էլ առաւել կարեւորես ու արժեւորես քո գործունէութիւնը՝ քո առաքելութիւնը,- աւելացնում է նա:

**Տէր եւ Տիկ.
Վարանդ
Եւ Քրիսթին
Յովնանեան**

**Ձերմագին
Մաղթանքներով
Կը Շնորհաւորեն
Համայն Հայութեան
Նոր Տարին
Եւ
Ս. Ծնունդը**

**Խաժակ
Սարգիսեանի
Յիշատակին**

**Հիլտի
Սարգիսեան
Սան Ֆրանսիսքո**

Անխախտ Հաւատքով Ու Խաչի Ուժով

Հասնում ենք ամենաբարձրագիր՝ ծովի մակերեսից 3000 մետր բարձրութեան վրայ գտնուող մարտական յենակէտերից մէկը: Մանուէլ սարկաւազի հետ հագնում ենք զրահաբանկոններն ու դիրքի աւագի օգնական Մոնթէի ուղեկցութեամբ՝ քարքարոտ խրամուղիով բարձրանում սահմանի այս հատուածը պաշտպանող տղաների մօտ: Լեռնային այս տեղանքում գրեթէ զրոյական ջերմաստիճան է. սարերի լանջերը ծածկուել են առաջին ձեան շերտով:



մեծ հաւատքով եւ լցւում: Իւրաքանչիւրս վստահ է՝ Աստուած միշտ մեզ հետ է, միշտ մեր կողքին ու մեր մէջ: Ժամկէտային զինծառայող Դաւիթ Ստամբոյցեանը հաստատում է ընկերների խօսքը.

- Մենք այստեղ միայն ֆիզիկապէս ենք մենակ, ո՛չ հոգեպէս: Ու ոչ մի վախ կամ անհանգստութիւն չունենք:

- Էստե՞ղ է ցուրտ, թէ Աշոցքում,- Աշոցքի ծնունդ Մոնթէին է դիմում Մանուէլ սարկաւազը:

- Էստեղ աւելի՞ ցուրտ է,- պատասխանում է Մոնթէն:

Բուպէներ անց հասնում ենք առաջին դիտախորշին, որտեղ մեզ դիմաւորում է զօրամասի հոգեւոր ակտիւի անդամ Յովհաննէսը: Մարտական ծառայութեան շուրջ մտերմիկ ու անկաշկանդ զրոյցի ընթացքում, Մանուէլ սարկաւազը հետաքրքրում է առաջնագծի իրադրութեամբ, յորդորում լինել աչալուրջ, հարկ եղած դէպքում էլ՝ անվարան:

- Ով հաւատում է խաչի զօրութեանը, կեանքում որեւէ խնդրի, որեւէ դժուարութեան, որեւէ վտանգի առաջ չի նահանջի,- խաչով դիրքապահ զինուորներին

օրհնելուց յետոյ ասում է Մանուէլ սարկաւազը:

Գիրքերից մէկում անակնկալ հանդիպեցինք Վաղարշակին՝ այն տասնեակ տղաներից մէկին, որին Մանուէլ սարկաւազը մայրենիով գրել եւ կարգալ էր սովորեցրել: Երկու տարեկանից ծնողների հետ արտերկրում բնակուած զինուորը 21 տարեկան էր, երբ վերադարձաւ հայրենիք՝ զինուորական ծառայութիւնը բնօրրանում իրականացնելու համար:

Մանուէլ սարկաւազը անթաքոյց հպարտութեամբ է խօսում երիտասարդի յաջողութիւնների մասին.

- Երբ եկաւ, գրեթէ հայերէն չէր խօսում: Յատուկէնտ բառեր գիտէր միայն: Իբր դա քիչ է, դեռ մկրտուած էլ չէր,- ժպիտով պատմում է գնդերէցը,- կարճ ժամանակում մեր Վաղարշակը

հայերէն գրել-կարգալ սովորեց: Դրան յաջորդեց նաեւ մկրտութիւնը, եւ նա դարձաւ ճշմարիտ հայ քրիստոնէայ, մարտի՛կ:

Սարերի ծերպերին կանգնած, գէնքը ձեռքին հայրենիքը պաշտպանող զինուորները խոստովանում են, որ լուսնի աղօտ լոյսի, քամու սվափոցի եւ այն մերթ ընդ մերթ ընդմիջող հակառակորդի կրակոցների ներքոյ առաւել է արժեւորում հոգեւորին հաղորդակից լինելու դերն ու նշանակութիւնը:

- Ամէն անգամ խրամատ մտնելիս ասում եմ. «Աստուած պահապան»: Եւ դա ինձ մեծ ուժ է տալիս,- ասում է ժամկէտային զինծառայող Մոնթէ Մուրադեանը:

Զինուորներից միւսը՝ Նորիկ Սիմոնեանը, յաւելում է.

- Այստեղ՝ դիրքերում, է՛լ աւելի

իմանայ, որ դիտակէտից մէկ քայլ այն կողմ իր եկեղեցու դուռն է: Եթէ հակառակորդը հատի սահմանը, մեր եկեղեցին ու մեր տունն է մտնելու: Դրա համար լիովին գիտակցում է, որ այստեղ ինքը պաշտպանում է իր թիկունքը, իր եկեղեցին ու իր երկիրը:

Մահմանը հսկող զինուորականների հետ համակարծիք է նաեւ գնդերէցը. «Այստեղ՝ սահմանին, իւրովի վերաարժեւորուել եւ իմաստաւորուել է նաեւ իմ առաքելութիւնը. այն է՝ մեր յարատեւութեան նախապայման ազգ-բանակ-եկեղեցի կապի ամրապնդումն ու դրա խորհրդի փոխանցումը հայրենիքի պաշտպաններին»:

«ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ»

And God said, "This is the sign of the covenant I am making between Me and you and every living creature with you, a covenant for all future generations." **Genesis 9:12**

AMAA thanks all our friends for helping the youth have a brighter future. May your Christmas sparkle with moments of love, peace, laughter, and good will and may the year ahead be full of contentment and joy.

Շնորհակալ ենք մեր բոլոր բարեկամներէն, որոնք կ'օգնեն մեզի՝ Նոր սերունդին աւելի փայլուն ապագայ մը ապահովելու առաքելութեան մեջ: Թող Սուրբ Ծնունդը ճառագայթէ սիրոյ, խաղաղութեան, ծիծաղի եւ բարի կամեցողութեան պահեր, եւ թող գալիք տարին ըլլայ լի գոհունակութեամբ եւ երջանկութեամբ:



ARMENIAN MISSIONARY ASSOCIATION OF AMERICA
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԱԼԵՏԱՐԱՆՆՅԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԳՈՒԹԻՒՆ

31 West Century Road, Paramus, NJ 07652 ☎ 201.265.2607 ✉ info@amaa.org 🌐 www.amaa.org

Վնոորոշը Մարդկային Գործունե Է

ԱԼԻՍ ԱԼԱԽԵՐԳԵԱՆ

Արցախ աշխարհի պաշտպանական շրջաններից մեկում ենք՝ «Եղնիկներում»: Զորամասի հրամանատարի բարոյաճող երանական ապահովման գծով տեղակալ, փոխգնդապետ Արմէն Մարկոսեանի ուղեկցութեամբ գնում ենք մարտական յենակէտ:

Փոխգնդապետ Մարկոսեանն արդէն քսան տարի զինուած ուժերում է: Զինուորական ուղին սկսել է Մոնթէ Մելքոնեանի անունն ուղեկցողական վարժարանից, ապա աւարտել Վազգէն Սարգսեանի անունն ուղեկցողական համալսարանը՝ հրետանաւորի մասնագիտութեամբ:

- Հայրս 1988թ. շարժման առաջին իսկ օրից անդամագրուել էր Երկրապահ կամաւորականների ջոկատներին, մասնակցել Արցախեան ազատամարտին: 1992թ. Մատաղիսի հատուածում տեղի ունեցած մարտերից մէկի ժամանակ նա վիրաւորուել է, բուժուել, նորից միացել զինընկերներին: Մէկ տարի չանցած՝ երասխաւանում դարձեալ վիրաւորուել է, առաջին կարգի զինհաշմանդամ է: Երբ պատերազմի թոհուրոհն անցած չօրս տեղեկացրի, որ որոշել եմ զինուորական դառնալ, բա-



Լուսանկար՝ ԱՐԵՎ ՎԱՐՈՒՄԵՆԻ

սակներով զինուած լինեն, միենայն է՝ իւրաքանչիւր տեխնիկա մա'րդն է ղեկավարում, եւ նրա մասնագիտական պատրաստուածութիւնից, ինքնավստահ գործե-

լածից, նրա վճռականութիւնից եւ ի վերջոյ՝ նուիրումից, շա'տ բան է կախուած: Մարդկային գործունեամենակարելորն է, վճռորոշը, իսկ Ապրիլեան պատերազմի ժամանակ, Հայ զինուորի ու սպայի բազում ա ն օ Ր Ի ն ա կ սխրանքների



ներով անզօր եմ նկարագրելու նրան համակած ուրախութիւնն ու հպարտութիւնը: «Իմ չկատարած գործերը, իմ չիրագործած նպատակները դու կ'իրագործես, տղա'ս», ասեց:

Ռազմական ԲՈւՀն աւարտելուց յետոյ, Արմէն Մարկոսեանը զինուորական տարբեր պաշտօններ է զբաղեցրել. եղել է զիվիզիոնի շտաբի պետ, ապա, որպէս առաջխաղացում՝ նշանակուել է զիվիզիոնի հրամանատար:

Փոխգնդապետն Ապրիլեան մարտական գործողութիւններին մասնակից է: Փորձառու սպան Ապրիլեան օրերից պատմել չի սիրում. ցաւով, դառնութիւնով շաղախուած օրեր էին, մարտական ընկերների կորուստը երբե'ք չի ամոքուի, բայց հպարտութեամբ շեշտում է՝ մեր զինուորներն աւելի հզօր են, քան հակառակորդի յատուկ պատրաստուած հետախույզները:

- Կոռուի յաղթական ելքը որոշող գործօնները մարդն ու սպառազինութիւնն են, սակայն որքան էլ Ազրբեյջանը ուղեկցող յայտարարութիւններ անի, իր սպառազինութեամբ պարծենայ, միայն զէնքով յաղթանակ չի լինում, նշում է փոխգնդապետը, որքան էլ գերժամանակակից զինատե-

ականտեսը ե-ղանք: Մեր ժամկէտային զինուորներից մէկը՝ Մարատ Պետրոսեանը (տղերքը յետոյ կատակով «Ուստա» էին կանչում նրան), կարողացաւ «Ֆագոտ»ով հակառակորդի հինգ տանկ եւ մէկ հետեւակի մարտական մեքենայ (ՀՄՄ) շարքից հանել:

Փոխգնդապետը ժամկէտային զինուորների հերոսական արարքներից դրուագներ է յիշատակում, իսկ ես որտեղից որտեղ յիշել եմ զօրացրուած զինուորներից մէկի՝ Դաւիթի, հետեւեալ խօսքերը. «Մենք մեր ծառայութեան ընթացքում տեսել ենք բազում փորձութիւններ, ընկերութեան ու քաջութեան հարիւրաւոր օրինակներ: Ափսոսում եմ, որ դրանք այդպէս էլ բերանացի փոխանցուելով՝ մի օր, միենայն է, կը մոռացուեն, իսկ եթէ «Հոլիվուդ»ը դրանց գոնէ հինգ տոկոսն ունենար որպէս սցենար, միլիոնաւոր դոլարների ֆիլմեր կը նկարէր»:

Զինուորական «Վիլիս»ը կտրուկ արգելակում է, հասել ենք մարտական յենակէտ: Հանգստի ժամ է, զինուորներից ոմանք շախմատ, շաշկի են խաղում, միւս-

ներն էլ կողքից հետեւում են, քայլեր յուշում:

Անձնակազմի ալտիւ ժամանցի եւ հանգստի արդիւնաւէտ կազմակերպման գործը մշտապէս զօրամասի հրամանատարութեան ուշադրութեան կենտրոնում է. առաջնագծում շուրջօրեայ մարտական հերթապահութիւն իրականացնող զինուորների լարուածութիւնը թօթափելու նպատակով, տարաբնոյթ միջոցառումներ են յաճախակի կազմակերպուած՝ վիկտորիաններ, համերգներ, մարզական միջոցառումներ:

Դիրքապահների տրամադրու-

- Զօրամասի հրամանատարից մինչեւ կրտսեր հրամանատար ընկերական, փոխվստահութեան մթնոլորտ է, եղած խստութիւնն էլ սրտացաւ ծնողի, աւագ ընկերոջ խստութիւն է, նշում փոխգնդապետ Մարկոսեանը, թէ որոշակի տարաձայնութիւններ, խնդիրներ են նկատուած՝ փորձում ենք հարթել, բացատրելով, պարզաբանելով հասկացնել, ճիշդ ուղու վրայ դնել, հաշուի առնելով իւրաքանչիւր զինծառայողի հոգեբանական առանձնայատկութիւնները: Յաճախ ենք զրուցում տարբեր թեմաների շուրջ, հե-



թիւնը բարձր է, սրամտում են, զուարճալի պատմութիւններ վերջիւում-պատմում զինուորական կեանքից:

- Մեր թէ' գօրամասը, թէ' մարտական դիրքերը աշխարհի ծայրին են, քարտէզից դուրս, բարդ ու դժուարին այս տեղանքում ծառայութեանը ամէն օրը քեզ աւելի է ամրացնում, կոփում, իսկ զօրամասի անցած հերոսական ուղին, իր հերթին, է'լ աւելի պարտաւորեցնում, - ասում են տղերքն ու աւելացնում, - միասնական, մէկս միւսին աջակցելով, մէկս միւսին թելութիւնը ծառայում ենք՝ յստակ գիտակցելով մեր դերն ու պատասխանատուութիւնը Հայրենիքի սահմաններն անառիկ պահելու գործում:

տաքրքրում թէ' ընտանեկան, թէ' ծառայողական խնդիրներով՝ փորձելով ի յայտ բերել նրանց յուզող, մտահոգող խնդիրները, ու գտնել անհրաժեշտ լուծումը:

Անձնակազմի բարոյաճող երանական վիճակը բանակի մարտունակութեան ամենակարեւոր բաղկացուցիչն է: Կարող եմ վստահեցնել, թէ հոգեպէս եւ ֆիզիկապէս ամո'ւր են մեր զինուորները, եւ այսօր իրենք էլ նոյն անկոտրում ոգով, նոյն արժանապատուութեամբ, նոյն պարտքի ու պատասխանատուութեան գիտակցումով ծառայում են՝ շարունակելով Հայրերի, եղբայրների հերոսական գործը:

«ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ»

Երկիրը Հզոր է Նաեւ Իր Մեծ Ու Ամուր Ընտանիքներով

ՔՆԱՐ ԹԱԳԵՒՈՍԵԱՆ

...15 զաւակ՝ 10 դուստր եւ 5 որդի ունեն մեր հանրապետութեան ամենաերիտասարդ բազմազաւակ ծնողները՝ Մարտիկն ու Անժելան: Մեր այցելութեան օրը տասնհինգ զաւակներից միայն մէկը տանը չէր՝ շատ յարգելի պատճառով: Դանիէլը զինուոր է այս պահին ծառայում է առաջնագծում: Նրան հանդիպել ու գրուցել էինք ծառայավայրում, իսկ այժմ էլ հիւրընկալուել եմ նրա մեծ ու ջերմ ընտանիքում: Այս տարի՝ Սեպտեմբերի 21ին, ՀՀ անկախութեան տօնի կապակցութեամբ, ընտանիքի կայացման եւ ամրապնդման գործում ունե-

- Մեծ ուրախութիւն է, որ մեր պետութիւնը նման ուշադրութեան է արժանացնում բազմազաւակ ընտանիքներին: Վերջերս էլ մարզպետն էր մեզ այցելել... Ես մեծ յոյս ունեմ, որ մեր ընտանիքի օրինակը վարակիչ կը լինի, երկրում ծնելիութեան մակարդակը բարձրացնելու խթան կը դառնայ: Չէ՞ որ երկիրը Հզոր է, երբ Հզոր է ընտանիքը,- ասում է ընտանիքի հայրը՝ Մարտիկը:

- Մարդիկ այժմ մտածում են՝ երկրորդ երեխան ունենա՞ն, թէ ոչ: Պայմանները, ուժերը կը ներե՞ն, գումարը կը բաւականացնի՞: Ինչպէ՞ս եղաւ, որ այսպիսի մեծ ընտանիք ունենալու որոշում կայացրիք,- հարցնում եմ:

- Մեր այս որոշումը փոքրիկ նա-



Լուսանկարը՝ ԱՐՇԱԿ ՍԱՍՆՆԻՔԻ ՏՊՐԱՆ



ցած աւանդի, 15 զաւակ խնամելու եւ դաստիարակելու, նրանց ֆիզիկական եւ բարոյական զարգացումն ապահովելու համար Մելքոնեանները նախագահական նստավայրում անձամբ նախագահի կողմից ստացան ՀՀ բարձրագոյն պարգևներից մէկը՝ «Ծնողական փառքի» մեդալը: Նոյն օրը ընտանիքին յանձնուեց նաեւ ՀՀ վարչապետի պարգևը՝ 1 մլն. դրամ:

խապատմութիւն ունի: Ծնողներս երկար տարիներ երեխայ չեն ունեցել: Ես եօթ տարեկան եմ եղել, երբ հայրս դժբախտ պատահարից մահացել է, ու մայրս ինձ մենակ է մեծացրել: Այնուհետեւ մի ծանր կորուստ էլ ունեցաւ ընտանիքս. մեծ եղբայրս՝ Արթուրը զոհուեց Արցախեան ազատարամտում:

1994թ. Յունուարի 13ին՝ Հորդանի դի մատոյցներում եօթ հոգանոց ջոկատով Արթուրը մարտ էր մղել հակառակորդի դէմ, տանկեր էին խոցել, բայց ուժերը շատ անհաւասար էին եղել... Մեծ եղբայրն էլ էր կուռն: Փոխարինում էին միմեանց՝ մէկը գալիս էր, միւրը՝ մեկնում ճակատ:

- Մեծ եղբայրս արդէն երեք երեխայ ունէր: Յունուարի 9ն էր. այդ օրը նրա հերթն էր կռուի մեկնելու: Բայց Արթուրը, որ դեռ նոր էր պատրաստում ամուսնանայ, ասել էր. «Այս անգամ դու մի՛ գնա, ե՛ս կը գնամ»: Նրա պաշտպանիչ թախամանը՝ խաչը, այդպէս էլ կախուած մնաց մահճակալից...

Երբ ես էի պատրաստում ամուսնանալու, մայրս ինձ ու կնոջս խրատեց. «Ձլինեմ-չիմանամ, որ պտուղի «խաթրին դիպչէք»: Որքան Աստուած կը տայ, այնքան երեխայ էլ ունեցէք, ես էլ, քանի դեռ կամ՝ սիրով կը պահեմ»:

Բազմազաւակ ծնողներն, իհարկէ, շատ դժուարութիւններ են ունեցել: Մարտիկը պատմում է, որ երեխաներից 11ը յատկապէս բնակարանային սուղ պայմաններում են մեծացել, բայց իրենք երբեք չեն ընկճուել ու տրտնջացել, միշտ լաւատեսութեամբ են նայել ապագային: Ընտանիքի դուռը միշտ բաց է եղել ու հիմա էլ բաց է, եւ հիւրերին այստեղ դիմաւորում են ուրախ ու աշխոյժ, առողջ, մարդամօտ, ժպտերես

երեխաներ: Այս լաւատեսութիւնն ու քչով բաւարարուելու սովորութիւնը, իհարկէ, նոյնպէս դեր են խաղացել, որ ընտանիքին այցելած մարդկանցից շատերը ցանկանան իրենց լուծման ներդնել նրանց երջանկութիւնն ամրապնդելու գործում: Կառավարութիւնը, մարզպետարանը, զիւղապետարանը նոյնպէս օգնութեան ձեռք են մեկնել: Այսպէս՝ յարմարութիւններից զուրկ կացարանը փոխարինուել է ընդարձակ տնով: Վերջերս էլ մի բարերար արեւաշին վաճանակներ է տեղադրել տանիքին:

- Ուզում եմ օգտուել առիթից եւ շնորհակալութիւն յայտնել բոլոր նրանց, ովքեր դժուար պահներին կանգնել են մեր ընտանիքի կող-

քին, թեթեւացրել են մեր հոգսը: Լաւատեսութիւնն է, որ մեզ առանց հիասթափութիւնների ու մեծ հաւատով առաջ շարժուելու հնարաւորութիւն է տալիս: Չենք դժգոհում ու չենք էլ զղջում: Մենք՝ ընտանիքով, միաբան ենք. ինչ խնդիր լինի, իրար հետ քննարկում ենք, խելք-խելքի տալիս, ու յանկարծ տեսնում ենք, որ այդ դժուարութիւնն այլեւս չկայ: Փոխադարձ վստահութիւն, սէր, հաւատ, աւանդապաշտութիւն, ներողամտութիւն, այս արժէքներն են, որ մեր ընտանիքը կուռ ու համերաշխ են պահում,-ասում է Մարտիկը:

Մարտիկի մեծ որդին՝ Բաղդասարը, կրտսեր եղբորից՝ Դանիէլը →

**Արամ
եւ Նայիրի
Մատենեան**

*Թո՛ղ Նոր Տարին
Մեզի Բերէ
Նոր
Յաջողութիւններ
Շնորհաւոր
որ Տարի
Եւ Ս. Ծնունդ*

հետ:

Երկիրը Հգոր է Նաեւ Իր Մեծ Ու Ամուր Ընտանիքներով

էլից առաջ պատուով աւարտել է զինծառայութիւնը: Լաւ զինուոր է եղել. բազում շնորհակալագրերով ու պատուոգրերով է տուն վերադարձել: Մեծ հօրեղբօր օրինակը միշտ աչքի առջեւ՝ ծառայել է սիրով ու նուիրումով: «Միշտ մտածում էի, որ իմ մեծ ընտանիքը՝ քոյրերս, եղբայրներս, ծնողներս հիմա իմ յոյսին են: Մեզ շատ են առաջարկել երկրից գնալ, բայց միշտ հրաժարուել ենք: Այս հողն ու ջուրն են մեզ կերակրել, այստեղ են մեր արմատները: Պէտք է ատամներով պահենք...»:

- Ի՞նչն է ամենակարեւորը այսօր շատ երեխաներ դաստիարակելու ընթացքում: Գժուար չէ՞, հարցնում են Անժելային՝ տանտիրակնոջը:
- Չէ՛, բոլորովին դժուար չէ: Յատկապէս որ՝ արդէն մէկը միւսին օգնում են: Ամենակարեւորը, որ լսող լինեն, հասկացող, նուիրուած լինեն միմեանց, ընկերներին: Լաւ մարդ լինեն: Շատ կ'ուզենամ, որ մեր հայ մայրիկները չխուսափեն շատ երեխաներ ունենալուց եւ զգան ամէն երեխայի հետ եկող իւրայատուկ երջանկութիւնը: Ի դէպ, ամէն երեխայից յետոյ ես ինձ աւելի առողջ ու առողջ եմ զգացել:
- Կարո՞ղ ես առանց կանգ առնելու իրար հետեւից երեխաների անունները թուարկել՝ մեծից փոքր, հարցնում են կատակով:
- Դանիէլ, Բաղդասար, Բաւական, Շուշանիկ, Սաթենիկ, Մարիամ, Նազելի, Սառա, Արմինէ, Ես-

թեր, Սամուէլ, Մելինէ, Աննա, Դաւիթ, Յակոբ: Սա էլ Դանիէլս է,- Անժելան գորովանքով ինձ է մեկնում զինուոր որդու լուսանկարը ու թաքուն սրբում է աչքերը: - Շատ եմ կարօտել: Բոլոր երեխաներս էլ իւրայատուկ են, բայց Դանիէլիս առանձնատուկ եմ կապուած: Շատ լաւ մարդ է, լաւ ընկեր: Փոքր ժամանակուանից ե՛ւ սովորել, ե՛ւ աշխատել է. ձեռքից ինչ ասես գալիս է. այս տունն ինքն է վերանորոգել, բակի աւազանն էլ իր ձեռքի գործն է: Հիմա էլ զօրամասում, ինչի կարիքը լինի, հասնում, օգնում է:
Ընտանիքի երեք տղայ էլ դեռ պիտի զինուորանան:
- Ես՝ ինքս, առողջական խնդիր եմ ունեցել եւ չեմ ծառայել բանակում: Բայց երեխաներիս այնպէս եմ սովորեցնում, որ եթէ հայրենիքին պէտք է, ուրեմն ոչինչ, ոչինչ պէտք չէ խնայել: Հայրենասիրութիւնը դատարկ խօսք չէ: Այն գործ է: Ես էլ իմ ընտանիքի բարօրութիւնն եմ իմ գործը համարում: Որդիներս հասկանում են, որ այս մեծ ընտանիքը պաշտպանելու համար պէտք է բազմապատկեն իրենց եռանդը,- ասում է Մարտիկը:
- Դանիէլին ի՞նչ ունէք հաղորդելու,- հարցնում են երեխաներին ու հաւաքում շուրջս:
Ութամեայ Սամուէլը՝ այս տան երրորդ՝ ապագայ զինուորը, շատ լուրջ է մօտենում ասելիքին. ունէք բերը մօտեցել են իրար, հայեացքը՝ ցած. «Ուզում եմ, որ շուտ գայ... շատ եմ կարօտել: Ես էլ իրենից յետոյ՝ ութ տարի անց եմ ծառայելու, որ մեր ընտանիքը միշտ խաղաղ, լաւ ապրի»:
Փոքր քոյրերից Մելինէն էլ ասելիք ունի. «Ուզում եմ Դանիէլին ասել՝ շնորհակալութիւն... Թող լաւ ծառայի ու շուտ ետ գայ»:
Սաթենիկն ու Մարիամն արդէն օրիորդներ են. «Դանիէլին ուզում ենք ասել, թող իմանայ՝ իրեն այստեղ շատ սպասողներ կան...»: Այդ «չա՛տ»ը իւրայատուկ հնչերանգով են արտաբերում: Աղջիկների խորամանկ ժպիտի ու բազմանշանակ հնչերանգի մէջ գաղտնիք է ենթադրուում: Սկզբում չեմուչում են անում, իրար նայում, յետոյ հայեացքով ցոյց են տալիս. «Ա՛յ, էստեղ նայէք՝ կը հասկանաք...»: շրջանակի մէջ երիտասարդի լուսանկարն է՝ մի գեղեցիկ աղջկայ հետ:



Պարզ է: Մի խօսքով, Դանիէլ ջան, նա էլ է քեզ կարօտում ու սպասում...
Ընտանեկան լուսանկարի համար բոլորին խնդրում ենք մի տեղ հաւաքուել, ինչը հեշտ գործ չէ. երեխաները վազվզում են բակում: Բայց որոշ ժամանակ անց յաջողում է բոլորին մի տեղ ժողովել: Պատիկները արագ-արագ հաշուում են միմեանց ու ասում՝ «16 չէ՛, 17 հոգի ենք»: Ու փոքրիկ թաթիկներով ցոյց են տալիս. «Դանիէլն էլ այն էստեղ կը կանգնէր՝ իմ կողքին», Մելինէն է: «Չէ՛, իմ կողքին՝ այն էստե՛ղ», սա էլ Աննան է:
Եւս մէկ ակնթարթ, եւ լուսանկարչական ապարատի կադրում է յայտնուում այս մեծ ընտանիքը... «Առայժմ 17 հոգանոց»՝ յիշում են Մարտիկի խօսքը:
«ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐ»

**Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ
Ամենալաւ Մաղթանքներով
Մեր Սիրելի Հայ Ազգին եւ Հայրենիքին
Յարատեւ Յաջողութիւն, Փայլուն Ապագայ
Եւ Կանաչ Ճանապարհ**

**Տիկ. Մարալ Տապաղեան-Անճարկօլեան,
Նախագահ**

**Իրաքահայերու Ընդհանրեկան Միութիւն
Շաբաթօրեայ Վարժարան
Եւ Յարակից Մարմիններ**

«Հայաստանն Ունի Այնպիսի Հզոր Գործի՞՞ Ռադիո-Օպտիկական Աստղադիտակ, Որը Միակն է Աշխարհում»

Վարեց՝ ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ

Մեր գրուցակիցն է տեխնիկական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Արեւիկ Սարգսեանը: Երկար տարիներ Արեւիկ Սարգսեանը պայքարում է Պարիս Հերոնու աստղադիտակի արդիականացման համար, որը, սակայն, հանդիպում է մեծ դիմադրություն: Նա Պարիս Հերոնու զարմուհին է:

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ. Ի՞նչ է սպասում Պարիս Հերոնու ստեղծած ռադիո-օպտիկական աստղադիտակին այսօր: Ինչու է 7 տարուայ պայքարի արդիւնքում ձեռք չի յաջողում սայլը տեղից շարժել:

ԱՐԵՒԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ. Նախ նշեմ, որ ցանկացած հայ հպարտանում է, որ Հայաստանը փոքրիկ երկիր է, բայց ունի այդպիսի հզոր գործիք՝ ռադիո-օպտիկական աստղադիտակ, որը միակն է իր բնույթով աշխարհում եւ ի վիճակի է գննելու տիեզերքը երկու տիրոջներում՝ օպտիկայի եւ ռադիոալիքների: Ակադեմիկոս Պարիս Հերոնին իր ողջ կեանքի ընթացքում է երազել, նախագծել եւ կառուցել ՀՀում նման գործիք: Երկար տարիների ղեկավարումների արդիւնքում նրան յաջողուել է խորհրդային Միության գիտու-



նախագծերի ֆինանսավորումները: Փաստորէն, աստղադիտակը կառուցուեց, բայց չհասցրեց պլանային եւ սխտեմատիկ գործելու: Անկախութեան տարիներին, սուր էներգետիկ ճգնաժամի պայմաններում, աշխատակիցնե-

ծարուեց, միաւորուեց Պետստանդարտի հետ, եւ ձեւաւորուեց Չափագիտութեան ազգային ինստիտուտը, եւ այդ գործիքն ու Հերոնու հարուստ հիմնարկից մնացած ակտիւներն (ունեցուածքը-Նմբ.) անցան նոր ինստիտուտի տիրապետութեան տակ: Բոլորիս յայտնի է, թէ ինչպէս էր այդ տարիներին, ինչպիսի վերաբերմունք էր կառավարման օղակներում, միջին օղակներում: Եւ այդպիսի մի ալան-թալան էլ այստեղ սկսուեց, եւ Արագածի գիտական կենտրոնում ինչ հնարաւոր էր վերացնել, վերացրին, այդ թուում շատ էտալոններ (չափանմուշներ-Նմբ.): Այսօր 11 ազգային էտալոններից գոյութիւն ունի 4ը, գործում է՝ 2ը: Երբ 2015 թուականին վտանգ զգացուեց, որ Հերթը հասել է մեծ անտեսան քանդելուն, ձուլելուն, ձեռնարկեցի այդ պահի համար շատ կարելու մի քայլ: Այդ ժամանակ երիտասարդ գիտնականների հանդիպում եղաւ Սերժ Սարգսեանի հետ, իմ աշակերտը հարց բարձրացրեց, որ ինովացիոն (արդիականացման-Նմբ.) աշխատանքների սով կայ: Երիտասարդ գիտնականներին բոլորը դրողւմ են անել նորարարութիւն, բայց ինժեներական տեխնիկական գիտություններում նորարարութիւն չի լինում առանց բազայի, իսկ Հերոնու ստեղծած աստղադիտակը գտնուում է Չափագիտութեան ազգային ինստիտուտի կազմում, որի հետ որեւէ առնչութիւն չունի եւ կոնսերվացուած (գործունէութիւնը դադարեցուած-Նմբ.) է: Անմիջապէս յանձնարարուեց ԿԳ նախարարին, որ ձեւաւորուի աշխատանքային խումբ, որը ձեւաւորուեց եւ որի եզրակացութիւնը մինչեւ օրս համարուում է առաջնային բոլոր քննարկումներում: Այդ եզրակացութիւնը շատ կարելու էր, որ ոչ ոքի մտքով չանցնի, որ Հերոնու ռադիոդիտակը կարելի է քանդել: Եզրակացութիւնը հետեւեալն էր, որ անտեսան օրպէս գործող գործիքը դիտարկուել չի կարող, որովհետեւ թալանուած բաներ կան, հնացած բաներ կան եւ հսկայա-

կան գումար է անհրաժեշտ դրա համար: Նշուում է նաեւ, որ մեր բիւջէն հնարաւորութիւն չունի այդ միջոցները յատկացնելու, առաջարկում է որոնել արտաքին միջոցներ, որպէսզի այդ անտեսանայի բազայով գիտակրթական նշանակութեան եւ գիտական տուրիզմի կենտրոն ստեղծուի: Յաւօք, այդ եզրակացութիւնը չի պարունակում որեւէ քանակական ցուցիչ, օրինակ, թէ ի՞նչ է նշանակում հսկայական գումար: Այդուհանդերձ, այդ պահին շատ էական էր այդ փաստաթղթի արձանագրումը: Դրա արդիւնքում քանդարարների կեղտոտ ձեռքերը դիտակին չկայան: Այսօր անցել են տարիներ, եւ դա արդէն բաւարար չէ: Արդէն երեք տարի է, ինչ մենք ծրագիր ունենք ռադիոդիտակի եւ Արագածի այդ գիտական կենտրոնի բազայի վրայ ստեղծել Հերոնու տիեզերական ազգային կենտրոն, որի նպատակն է լինելու բարձր տեխնոլոգիաների բնագաւառում կատարել գիտահետազոտական, կոնստրուկտորական աշխատանքներ, ծաւալել լրացուցիչ եւ շարունակական կրթական գործունէութիւն:



թեան զարգացման պլանային կազմակերպութիւններից թոյլտուութիւն ստանալ եւ սկսել շինարարութիւնը, կառուցել ռադիոդիտակը Հայաստանում: Արդէն 1985-87թթ. տեղի ունեցան կառուցուած աստղադիտակի տեխնիկական համալրման աշխատանքները, եւ այն յանձնուեց չահագործման օրպէս ռադիո-օպտիկական աստղադիտակ: Դրանից անմիջապէս յետոյ երկրաշարժը տեղի ունեցաւ: Երկրաշարժը, փառք Աստծոյ, չփոխեց անտեսանի պարամետրերը, աստղադիտակը դիմակայեց:

րի էնտուզիզմով (խանդավառութեան-Նմբ.) շնորհիւ, բիւջէից տրամադրուող չնչին միջոցներով, որ յատկացուում էին աստղադիտակին օրպէս ազգային արժէք, այն պահպանուեց: Այնքան չնչին էին պետութեան տրամադրած միջոցները, որ բաւարարում էր միայն պրոֆիլակտիկ (պահպանելու համար-Նմբ.) իւղման, ներկման, վերանորոգման փոքր աշխատանքների համար: Այդուհանդերձ, գերէնտուզիզմի շնորհիւ Պարիս Հերոնու հանճարեղ մտքի արդիւնք հանդիսացող գործիքը հնարաւոր եղաւ պահպանել, եւ այն քիչ թէ շատ գործեց: Նրա օգնութեամբ տարբեր գիտական հետազոտութիւններ, չափումներ, Պոլիտեխնիկական համալսարանի ուսանողների եւ ասպիրանտների դիպլոմային եւ թեկնածուական աշխատանքներ կատարուեցին: Պարիս Հերոնու մահուանից 2-3 տարի յետոյ իր հիմնարկութիւնը՝ Ռադիոֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտը, լու-

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ. Քանի որ խօսքը Արագածոտնի մարզի մասին է, այդպիսի ծրագիրը յարակից Օրգով, Տեղեր, Անտառուտ եւ Բիւրական գիւղերի բնակիչների համար հնարաւորութիւն է նոր որակեալ աշխատանք գտնելու, գոյատեւելու, բացելու յարակից քիզնեսներ:

ԱՐԵՒԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ. Այսինքն՝ սա նաեւ սոցիալական խնդիր կարող է լուծել: Ժիշտ այդպէս էր 1970ականներին՝ Արագածի գիտական կենտրոնի ստեղծումը Հերոնու կողմից ունէր սոցիալական էֆեկտ (ընկերային ազդեցութիւն-Նմբ.): Այդ ժամանակ Օրգով եւ Տեղեր գիւղերը որոշուած էր վերացնել, քանի որ նրանք ո՛չ ճանապարհ ունէին, ո՛չ ենթակառուցուածքներ, հեռանկարային չէին: Այդ գիւղերի արտաքսումը դադարեցուեց շնորհիւ



«Հայաստանն Ունի Այնպիսի Հզոր Գործի՜՞ Ռադիո-Օպտիկական Աստղադիտակ, Որը Միակն է Աշխարհում»



Հերոնու նախագծի, անտենայի եւ հտալոնային կենտրոնի կառուցման:

ՍԻՐԱՆՈՅՇ ՊԱՊԵԱՆ.- Հիմա եիմնական խոչընդոտը ո՞վ է հանդիսանում, որ այդ սարքի հնարաւորութիւններից չեմք օգտուում:

ԱՐԵՒԻԿ ՍԱՐԳՍԵԱՆ.- Սարքը, փաստորէն, գերժամանակակից անտենա է եւ որպէս ռադիոդիտակ մօտ ժամանակներին պէտք է ծառայի ե՛ւ Հայաստանի գիտութեանը, ե՛ւ ողջ աշխարհի ռադիօաստղագէտներին:

Հայաստանի իրաւագործութիւն հիմնադրամը մշակել է ծրագիր եւ ներկայացրել էկոնոմիկայի (տնտեսութեան-ՈՍԲ.) նախարարութիւն, որի ենթակայութեան տակ գործում է Չափագիտութեան ազգային ինստիտուտը (ՉԱԻ), որը վերջերս վերանունուեց Ստանդարտացման եւ չափագիտութեան ազգային մարմին: Այդ հիմնարկը տարեկան մօտ 50 մլն. դրամի գումար է ստանում բիջէից եւ Ֆինանսաւորումը կոչում է անտենային հտալոնների պահպանում եւ զարգացում: Արդէն 7 տարի է, որ ՉԱԻ-ի որոշմամբ ռադիոդիտակը կոնսերվացուած է, բայց Չափագիտութեան ազգային ինստիտուտը պարտաւորուած է անտենային հտալոնները պահպանել եւ զարգացնել: Վերջերս այդ հիմնարկութեան տնօրէնը յայտարարեց, որ այդ գումարի չրջանակներում այդ փոքրիկ բաժնի աշխատակիցները, իսկ այնտեղ մնացել են 6-7 հոգի, որոնց միջին տարիքը 70ից բարձր է, հետազօտութիւններ են կատարում եւ սպազրում որոշակի յօդուածներ: Պէտք է ասեմ, որ այդ յօդուածներից եւ ոչ մէկը կապ չունի անտենային հտալոնների, չափումների հետ: Ըստ այդմ, բոլորովին անհասկանալի է, թէ մեր բիջէի սուղ միջոցները ինչպէ՛ս են ծախսուում: Այստեղ ուզում եմ յիշատակել վարչապե-

տի խօսքը, որ շատ «գիտնականներ» գալիս են սուրճ խմելու համար, կամ լաւագոյն դէպքում մի յօդուած են գրում, եւ դա է գիտական արդիւնք կոչեցեալը: Իսկ այդ գիտական արդիւնքը որեւէ աղերս չունի այն նիւթի հետ, որի համար Ֆինանսաւորում են ստանում: Այնպէս որ, շատ կարեւոր է կազմակերպել մի գիտաքննութիւն կամ յանձնաժողով կազմել, որն այդ հիմնարկի վերջին 3 տարիների գործունէութիւնը կ'ուսումնասիրի: Արդիւնքում կը պարզուի, որ բազմաթիւ գողութիւններ են տեղի ունեցել՝ սկսած մետաղական իրերից, աստիճանների սինափայտիկներից, որոնք իրենցից այլամինէ, լատունէ, պղնձէ ջարդոն են ներկայացնում, վերջացրած ազգային արժէք ներկայացնող հտալոններից: Ըստ էութեան, պետքի միջոցները չեն ծառայում անտենային հտալոնների պահպանմանը:

Դրա հետ մէկտեղ այդ մարդիկ իրենց իրաւունք են վերապահում կասկածի ենթարկել ակադեմիկոս Պարիս Հերոնու կատարած աշխատանքը, շատ հանգիստ հրապարակով հնչեցնում են կարծիքներ այն բանի մասին, որ Պարիս Հերոնին սխալուել է, լաւ էի մտածել անտենայի կոնստրուկցիան (կառուցը-ՈՍԲ.), այն բոլորովին աշխատունակ չէ, հնարաւոր չէ այն վերականգնել: Այն մարդիկ, որոնք ասում են, որ կը կարողանան վերականգնել անտենան, աշխատեցնել, զարգացնել, դարձնել այն միջազգային մակարդակի գործիք, դեռ պէտք է ստու-



գել, թէ ինչպէ՛ս են պաշտպանել իրենց թեկնածուական թեզերը, ի՛նչ որակի են իրենց աշխատութիւնները, մեթոդիկա կարող են գրել թէ ոչ: Ա՛յ այսպիսի յայտարարութիւններ են անում՝ իրենք լինելով սուրճ խմող գիտնականներ: Հակադարձել կարելի է ամէն ինչին, ի վերջոյ, կարելի է դիմել Բարձրագոյն որակաւորման կոմիտէ, որտեղ մեր թեկնածուական աշխատանքները կան, կարելի է դրանք հետազօտել: Օրինակ, իմ աշխատանքը, որ 2001ին եմ պաշտպանել, մօտ 4-5 տարի առաջ մի առիթով ուղարկեցի Ռուսաստանի բարձրագոյն որակաւորման յանձնաժողով, որտեղ այն հաստատում ստացաւ: Այնպէս որ, ես կարող եմ հպարտութեամբ ասել, որ իմ գիտական աշխատանքը փորձաքննութիւն է անցել: Բայց երբ գտնուում են մարդիկ, որոնք բացէ՛րբայ իրենց ուսուցչին, իրենց նախկին ղեկա-

վար Պարիս Հերոնուն կարող են փնտել, զրպարտել, շատ դժուար եւ կարողանում որեւէ բան ասել ընդհանրապէս: ՉԱԻ-ի նշուած գիտական բաժնի փոքր աշխատակազմը չի պատկերացնում, որ դարը փոխուել է, որ թուայնացուած ռադիօտեխնիկայի միջոցներ կան, որ կառավարման համակարգերը բոլորովին այլ են, եւ ամէն ինչ պէտք է մոդեռնիզացնել (արդիականացնել-ՈՍԲ.) եւ հնարաւոր է դա անել: Մենք մեր ծրագրի շրջանակներում ունենք միջազգային կազմակերպութիւններ, նուիրատուներ, որոնք այս պահին պատրաստ են մեր կողքին լինել, այս ամէն իրականացնել, որպէսզի Հայաստանը ունենայ ժամանակակից Հզոր գործիք, որպէսզի Հայաստանում ուսումնասիրութիւններ կատարուեն, տիեզերքը ուսումնասիրուի: Իսկ նրանք վախենում են աշխատավարձից զրկուել, նրանք ՉԱԻ-ում աշխատավարձ կամ աւելի ճիշտ թոշակ են ստանում ոչինչ չանելու դիմաց: Ես նորից պէտք է վկայակոչեմ վարչապետին՝ այո, սուրճ խմելու դիմաց են ստանում, եւ դրա հետ մէկտեղ դժգոհ են: Նրանք փնտվում են մեծագոյն գիտնականին, որն իրենց ղեկավարն է եղել, որի գիտական ժառանգութեան շնորհիւ այսօր նրանք շարունակում են ստանալ այդ աշխատավարձը:

Սա մեր պետութիւնն է, մեր տունն է, եւ մենք Հերոնու ազգային տիեզերական կենտրոն ծրագրի շրջանակներում բոլորովին չահագրգոտուած չենք մասնաւորացնել աստղադիտակը կամ այլ ակտիւները, մենք պետական սեփականութիւնը արդիւնաւէտ կառավարելու ծրագիր ունենք, որը կոչուած է հետեւողական քայլեր անել, որ Հերոնու կենտրոնը ծաղկի, այսօրուայ դամբարանային վիճակից դուրս գայ եւ սկսի աշխատել:

«ԼՐԱԳԻՐ»

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանավայանը

Հայաստանի ամենաբարձր օդանավայանը գտնուում է Ջերմուկում՝ 2070 մ. բարձրության վրայ (աշխարհի ամենաբարձր քաղաքացիական անընդունի բարձրությունը 4411 մ. է): Սակայն Ջերմուկի կառույցը միայն իր բարձրությամբ չէ իւրօրինակ: Պատկերացրէք, որ դրա թռիչքուղու հիւսիսային ծայրը 45 մետրով բարձր է հարավային ծայրից: Այլ կերպ ասած՝ Ջերմուկի վազքուղին բաւականին թեք է, ինչը կարելի է նկատել նաեւ անդէն աչքով:

Օդանավայանի Ջարգացումն Ու Անկումը

Օդանավայանի վերջին պետ, 70ամեայ Մելիկ Առաքելեանը պատմում է, որ, իր յիշելով, այն գործարկուել է 1956ից: Սկզբնական հատուածում վազքուղին գրունտից (բնահող-Նմբ.) էր, այստեղ ժամանում էին 12 հոգու համար նախատեսուած «Ան-2» ինքնաթիռներ, որոնք ժողովրդի շրջանում առաւել յայտնի են իբրեւ «Կուկուռուզնիկ»: Երբեմն նաեւ ուղղաթիռներ էին թռչում Ջերմուկ:

Մ. Առաքելեանը, ով ծնունդով վեղու նախկին շրջանի Լուսաշող գիւղից է, 6 տարեկանից ապրում է Ջերմուկում, դպրոցն աւարտելուց յետոյ սովորել է Կիրովոգրադի թռիչքային պատրաստութեան բարձրագոյն դպրոցում՝ ստանալով թռիչքների ղեկավարի որա-



Մելիկ Առաքելեան



Օդանավայանի շէնքը՝ Երեւան-Ջերմուկ մայրուղու կողմից

կաւորում: Այնուհետեւ իր մասնագիտութեամբ 1.5 տարի աշխատել է Եղեգնաձորի օդանավայանում, իսկ 1971ի Յունիսից գործի անցել Ջերմուկում, կրկին որպէս թռիչքների ղեկավար:

1966ին Ջերմուկում կառուցուել է օդանավայանի շէնք, որը կանգուն է մինչ օրս: Սակայն դրանից յետոյ էլ դեռ 10 տարի վազքուղին գրունտից էր, ինչը նշանակում էր, որ այն կարող էր օգտագործուել հիմնականում «Ան-2»ների կողմից:

1971-1987 թթ. քաղաքացիայի հայկական վարչութեան պետ Դմիտրի Աթբաշեանը պատմում է, որ Ջերմուկում հանգստացողների շրջանում յայտնի խօսք կար. «Ով կեանքում տանջանք չի տեսել, թող այցելի Ջերմուկ»: Մարդիկ նկատի ունէին կուրորտային (բուժուելու վայր-Նմբ.) քաղաք հասնելու դժուարութիւնները, ինչը պայմանաւորուած էր ճանապարհներով: Ըստ Աթբաշեանի՝ այս միտքը պոպուլյար (հանրամատչելի-Նմբ.) էր մինչեւ նոր անընդունի շահագործումը, ինչը տեղի ունեցաւ 1976ին:

Ասֆալտապատ (կուպրապատ-Նմբ.) նոր թռիչքուղու երկարութիւնն, ըստ Աթբաշեանի, 1500 մ. էր (փաստացի 1640 մ. է), լայնութիւնը՝ 28 մ.: Սակայն աւիատորն (օդաչուն-Նմբ.) ասում է, որ վազքուղին շուրջ 700 մ. կարճ էր պահանջուածից: Հենց այդ բացը լրացնելուն էլ օգնել է երկու ծայ-



ԼՈՍ ԱՆՃԵԼԵՍԻ ՔԵՍԱՎՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ

Լաւագոյն մաղթանքներով
կը շնորհաւորենք մեր հայրենակիցներուն
Նոր Տարին եւ Ս. Ծնունդը
2020 Թուականին Հայութիւնը Թող Դառնայ
Սիրոյ եւ Հաւատքի Տիպար՝
Երկրագունդի Բոլոր Ազգերուն Համար

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանավայանը

րերի միջև 45 մետրի տարբերությունը: Բանն այն է, որ հարաւային կողմից վայրէջք կատարող ինքնաթիռը թեք վազքով չի նստելուց յետոյ դէպի վեր ընթանալու հաշուին նախատեսուածից աւելի շուտ էր կորցնում արագությունն ու կանգ առնում, իսկ թռիչքի ժամանակ, քանի որ թափավազքը սկսում էր բարձրից, աւելի շուտ էր պոկւում գետնից, քան կ'անէր հարթ թռիչքով: Այսպիսով՝ թեքությունը լրացնում էր ասֆալտէ թռիչքուղու կարճությունը:

Միւս կողմից՝ քանի որ Ջերմուկի օդանավայանը բաւականին բարդ տեղանքում է՝ գտնւում է բլուրների մէջ, անհրաժեշտ էր թռիչքների կատարման համապատասխան հրահանգ մշակել, ինչն

էլ արուել էր ու ստացել ԽՍՀՄ քաղաւիացիայի նախարարությունն եւ Քաղաւիացիայի պետական գիտահետազոտական ինստիտուտի հաւանությունը:

Քանի դեռ թռիչքուղու վերանորոգումն ընթացքի մէջ էր, Մելսիկ Առաքելեանի պատմելով, Ջերմուկ էին ժամանում «Մի-8» ուղղաթիռները, որոնց թռիչք-վայրէջքի համար բաւարար էր փոքր հրապարակը: 1976ի դեկտեմբերին կատարուեց Երեւան-Ջերմուկ առաջին թռիչքը «Եակ-40» ինքնաթիռով: Այդ ժամանակ Մ. Առաքելեանը դեռեւս թռիչքների ղեկավար էր, բայց շուտով նշանակուել էր օդանավայանի պետի ժամանակաւոր պաշտօնակատար, իսկ ամիսներ անց՝ 1977ին, դարձել պետ՝ այդ պաշ-



1976 թ. Յուլիս, «Եակ-40»ի առաջին փորձարկական թռիչքը Ջերմուկ. աջից՝ Դմիտրի Աթաբաբեանը, ձախից՝ լրագրող Ռոբերտ Մելիքսեթեանը



տօնում մնալով մինչեւ օդանավայանի փակուելը:

Օդանավայանի երկարամեայ պետն ասում է, որ եթէ «Ան-2»-ով եւ ուղղաթիռով Ջերմուկից Երեւան կարելի էր հասնել 40-45 րոպէում, ապա «Եակ-40» ով՝ 18-20 րոպէում: Ընդ որում, ըստ Առաքելեանի, դէպի Ջերմուկ թռիչքներն իրականացւում էին նախիջեւանի տարածքով՝ Սաղարակի վրայով (խորհրդային տարիներին նախիջեւանի երկիրքը սպասարկում էր Երեւանի կարգավարական կենտրոնը), իսկ Ջերմուկից վերադառնում էին Ուրցաձորի վրայով: Թռիչքներն իրականացւում էին պարզ եղանակին, վիզուալ (տեսողական-Նմբ.) թռիչքների կանոններով: Դա էր պատճառը, որ երբ ձմռանը Երեւանում մառախուղ էր լինում, թռիչքներ չէին կատարուում, այսինքն՝ չնայած Ջերմուկի օդանավայանն աշխատում էր ամբողջ տարին, ձմռանը օդանաւեր յատուկեւտ էր ընդունում:


Երեւանի «էրեբուն»ի օդանավայանը, որն սպասարկում էր Հայաստանի ներքին օդային գծե-

Օրինակ՝ պատահում էր, որ կապանից, Միսիանից կամ Գորիսից Երեւան թռչելիս մառախուղի պատճառով փակ էր լինում ներկայիս վայոց ձորի եւ Արարատի մարզերի սահմանագլխին գտնուող Թուխմանուկի լեռնանցքը, կամ հակառակը՝ Երեւանից դէպի հարաւ թռչելիս փակ էր լինում Որոտանի լեռնանցքը (վայոց ձորի ու Միսիքի սահմանին, ժողովրդի շրջանում յայտնի է որպէս «Ջանգեր»): Այդ դէպքում, ըստ Մելսիկ Առաքելեանի, ինքնաթիռները կանգ էին առնում Ջերմուկում, որը, փաստօրէն, պահեստային օդանավայանի դեր էր կատարում նաեւ: Մեր գրուցակիցը յիշում է, որ պատահում էր, օրինակ, «Ան-2»ը թերբեռնուած Երեւան էր թռչում Միսիքից, կարգավարի միջոցով տեղեկանում էր, որ Ջերմուկում ուղեւորներ կան, վայրէջք էր կատարում այստեղ, մարդկանց վերցնում եւ շարունակում դէպի Երեւան:

Բացի մարդատար թռիչքներից՝ վնասատուների դէմ պայքարի շրջանակներում գարնանը Ջեր-

Հրայր Եւ Աստղիկ Թէճիրեան

**Կը մաղթենք, որ
այս Նոր Տարուան
ընթացքին
մարդկութեան
հորիզոնին վրայ
խաղաղութեան
ծիածանը երեւելի
դառնայ**



Տեղական օդային գծերը՝ Երեւանի ՕԵԿ շրջանային կենտրոնի կառավարման գոտում

րը, միակ կէտն էր, որի հետ Ջերմուկն օդային կանոնաւոր կապ ունէր: Առաքելեանի պատմելով՝ իրենք օրական մինչեւ 4 չուերթ էին ընդունում «Եակ-40»-ով, «Ան-2» ով՝ աւելի շատ, լաւ ժամանակներում եղել է մինչեւ 10-15 թռիչք: Սակայն հպիզոզիկ (պարբերական-Նմբ.) թռիչքներ Հայաստանի այլ քաղաքներից եւս եղել են, ինչը պայմանաւորուած էր եղանակով կամ օդանաւերի թերբեռնուածութեամբ:

մուկում անտառների սրսկման աշխատանքներ էին կատարուում «Ան-2» ինքնաթիռներով, մի քանի անգամ էլ ուղղաթիռներով սրսկել են դաշտերը՝ մորեխների ոչնչացնելու համար:

1980ականներին՝ Դմիտրի Աթաբաբեանի օրօք, Մ. Առաքելեանի պատմելով, ծրագիր կար Ջերմուկն ուղիղ գծով կապել նոյնպէս առողջարանային Մինեբալնիէ Վոզիի հետ, որի օդանավայանը խոչորագոյնն է ո՛չ

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանավայանը



«Եակ-40»ի թռիչքը Ջերմուկից (արխիվային կադր Հայկական աւիացիայի պատմութեան թանգարանից)

սակայն 1980ականների վերջին, երբ սկսուեց Ղարաբաղեան շարժումը, պատերազմը, Նորհրդային Միութիւնը դէպի անկում էր գնում, սոցիալական վիճակի պատճառով ուղեւորների թիւը նուազեց, ինչը յանգեցրեց նաեւ թռիչքների թուի պակասեցման: «Եակ-40» ով արդէն օրական ընդամենը 1 չուերթ էր կատարում, յետոյ դա էլ հանուեց, մնացին միայն «Ան-2»ները, որոնց թռիչքները նոյնպէս նուազել էին, ու, ըստ Մ. Առաքելեանի, վերջինը եղաւ 1989ին:

Ազրբեջանցու Պատճառով Օդանավայանի Պետը կարող էր Ազատուել Գործից

Երբ Ջերմուկն սկսել էր «Եակ-40»ներ ընդունել, օդանավայանը

նի աշխատակազմը մեծացել էր: Լաւ տարիներին աշխատողների թիւը հասել է 26-28ի: Նախկին պետն ասում է, որ 4 թռիչքային կարգավար (դիսպետչեր) ունէին, գումարած՝ ինքը, որ որակաւորմամբ թռիչքների ղեկավար էր ու կարող էր աշխատել որպէս կարգավար: Մի որոշ ժամանակ Ջերմուկում նաեւ ռադիօտեղորոշիչ (ռադիօլոկատոր) կար, որի օգնութեամբ ռադարի էկրանի վրայ կարգավարները տեսնում էին մօտեցող օդանաւն ու ռադիօկապով օգնում օդաչուներին դուրս գալու դէպի թռիչքուղի եւ վայրէջք կատարել: Մ. Առաքելեանը յիշում է, սակայն, որ բարդ ռելիեֆի (շարժակ-Նմբ.) պատճառով ռադարի վրայ ինքնաթիռն սկսում էր երեւալ այն նոյն պահին, երբ իրենք եւս կարող էին վիզուալ դիտարկում կատարել:

Ջերմուկում աշխատող կարգավարներից մէկն ազրբեջանցի էր: Մեխիկ Առաքելեանն ասում է, որ լաւ կարգավար էր, գիտեր իր գործը, սակայն քանի որ միւսներից աւելի ուշ էր գործի ընդունուել, 1980ականների վերջին, երբ պայմանները սուղ էին, թռիչքներն էլ քիչ, հարկադրուած կրճատումների ժամանակ ինքը գրել էր նաեւ ազրբեջանցու անունը: Վերջինս բողոքել էր «վերեւներին»: Տարիների հետուից նախկին պետը ժպիտով է յիշում, որ իրեն զանգ էր եկել Երեւանից, փոխանցել էին, որ



Այս պարի յետեւում տեղեկատու բիւրոն եւ տոմարկղն էր, իսկ բարկեղը վառուող լոյսերի միջոցով ցոյց էր տալիս, թէ ո՞ր օդանավայաններն են բաց տուեալ պահին

միայն Ստաւրոպոլի երկրամասում, այլեւ Ռուսաստանի ներկայիս Հիւսիսկովկասեան ֆեդերալ օկրուգում (դաշնակցային ստորաբաժանում-Նմբ.): Մեխիկ Առաքելեանն ասում է, որ խորհրդային տարիներին Մին. Վոդին օդային կամուրջ էր ծառայում «Աէրօֆլոտ»ի երթուղիների համար: Այդուհանդերձ, ծրագիրն իրականութիւն չդարձաւ, եւ Ջերմուկն այլ հանրապետութիւնների հետ կապող օդակը մնաց երեւանը:

Օդանավայանի նախկին պետը յիշում է, որ ուղեւորահոսքը շատ էր, «Եակ-40» ով միակողմանի թռիչքի տոմսն արժէր 6.5 ուրբլի,

Sinanian

Development, Inc.

Հայաստան Աշխարհի, Սփիւռքի, Արցախի եւ Չաւախքի Հայութեան Կը Մաղթենք Ազգային Երազներու Իրականացում եւ Երջանիկ Ու Բարգաւաճ Ապագայ

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանավայանը



Թռիչքները կառավարում էին այսպիսից՝ հրամանատարակարգավարական կետից

զանգի «առաջինին», այսինքն՝ քաղաքացիայի հայկական վարչութեան այն ժամանակուայ (1987-1990 թթ.) պետ էղուարդ Պապիկեանին: Վերջինս էլ Առաքելեանին յայտնել էր, որ եթէ ադրբեջանցուն չվերականգնի աշխատանքի, ապա ինքն է ազատման դիմում գրելու: Ժամանակներն էին այդպիսին, ինտերնացիոնալիզմ (միջազգայնացում-Նմբ.) էր, ու ցանկացած անմեղ քայլ կարող էր դիտուել որպէս ազգային խտրականութեան դրսեւորում: Ադրբեջանցին վերականգնուել էր, բայց երբ սկսուել էր Հայերի ու ադրբեջանցիների երկկողմանի գաղթը հակամարտու-

թեան մէջ մտած հարեան երկրներից, Ջերմուկի ադրբեջանցիները, այդ թւում՝ կարգավարը, իրենց բնակարանները փոխանակելով այստեղ եկող Հայերի տներին հետ, հեռացել էին: 1990ականներից այս կողմ Ջերմուկի անբողբոմը միայն ուղղաթիւներ է տեսել, որոնք ժամանակ առ ժամանակ այստեղ են տեղափոխել երկրի բարձրաստիճան պաշտօնեաների: 70ամեայ Մելսիկ Առաքելեանն ու կինը՝ 68ամեայ Անահիտ Սիմոնեանը, 1996ից ապրում են օդանավայանի շէնքում: Վերջինիս փակուելուց յետոյ նախկին պետին 2000 դրամ աշխատավարձով ձեւակեր-

պել էին իբրեւ պահակ: 1999ի Օգոստոսին, Վազգէն Սարգսեանի կառավարութիւնը որոշել էր Ջերմուկի օդանավայանի գոյքն առանձնացնել ««էրբեբունի» տարածքային օդանավայաններ» պետական ՓԲԸից ու սեփականութեան իրաւունքով անհատոյց յանձնել Ջերմուկ համայնքին: Վերջինս իր հերթին 2002 թ. օդանավայանի շէնքը չինութիւնները վաճառել է Մ. Առաքելեանին: Օդանավայանի երկյարկանի շէնքը, որի կազմում են նախկին սպասարահը, կարգավարական կէտը, տոմսարկղը, աշխատակիցների սենեակները, այժմ համարում է առանձնատուն: Նախկին պետը գնել է նաեւ շէնքին կից 1.5 հա.

հողամաս: 2006թ. կառավարութիւնը Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնուող պետական հողերն անհատոյց սեփականութեան իրաւունքով փոխանցել է համայնքին, սակայն փոխանցումը հողամասերի մէջ մնացել են այնպիսիք, որոնք մինչ օրս պետական սեփականութիւն են: Այդ հողերի մէջ նշուած է նաեւ օդանավայանի 51.6 հա. տարածքը (Մ. Առաքելեանի հողը սրանից դուրս է): Այժմ նախկին աւիատորը գիւղատնտեսութեամբ է զբաղուում, անասուն ու մեղու է պահում, կարտոֆիլ (գետնախնձոր-Նմբ.) աճեցնում, սեզոնի (եղանակ- →



Խորհրդային փարիներին փնկուած եղեւինները վաղուց ծածկել են կարգավարական կէտի տեսարանը

NOVITA

Հերի Նազարեան եւ Բնտանիք

Տօնական Այս Օրերուն

Մեր Լաւագոյն Մաղթանքները

Կը Փոխանցենք Հայ Ժողովուրդին

*Wishing You
and Your Loved Ones
A Merry Christmas
And A Happy
New Year*



3124 E Colorado Blvd.,
Pasadena, CA 91107



Importers And Wholesale Distributors Of
European And Mediterranean Foods
Glendale CA 961204
www.krainpco.com

*Merry
Christmas*

AND HAPPY NEW YEAR

Հիւսիսային Սան Ֆերնանդո Հովիտ

ՀՅԳ

«Արշալիր Շիրակեան» Կոմիտե

ՀՕՄԻ

«Լոռի» Մասնաճիւղ

Համազգայինի

«Լեւոն Շանթ» Մասնաճիւղ

ՀԵԳ

«Արցախ» Ուխտ

ՀՅԳ

«Հրայր Մարուխեան»

Պատանեկան Ուխտ

Հայ Դատի Յանձնախումբ

Տարեցներու Խմբակցութիւն

Թող

Մեր Հայրենի Երկիրը

Բարգաւաճի Ու Ծաղկի

Գալիք Օրերուն

HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE

PITA PIT BAKERY  **PITA PIT BAKERY**

HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE · HEALTHY CHOICE



PITA PIT BAKERY **FAMILY OWNED & OPERATED**

TEL 1.800.447.9145

pitapitbakery@gmail.com

641 E. MONTEREY AVE. | POMONA, CA 91767 | LOS ANGELES | USA

Նոր Տարուան
Եւ Ս. Ծննդեան Տօներուն Առիթով
Սեպուհ Եւ Անի Քէմանճեանները
Կը Շնորհաւորեն Իրենց Յարգոյ
Յաճախորդները Եւ Հայ Գաղութը

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանակայանը

Նմբ.) Ժամանակ ջերմոց է դնում, մի քանի հարիւր քմ.ի վրայ տանձենիներ է տնկել, որոնք եկող տարի բերք են տալու: Երկյարկանի շէնքի սեփականատէրը մտածում է այն հիւրատուն

կիցը պատմում է, որ անբողբոմի գործելու տարիներին քիչ չէին լինում դէպքերը, երբ մարդիկ անատունների հետ կամ մեքենայով կտրումանցնում էին թռիչքուղին նոյնիսկ այն ժամանակ, երբ օդանաւը




Անահիտ Սիմոնեան

դարձնելու մասին, սակայն ֆինանսական հնարաւորութիւնները չեն ներում:

Առաքելեանի հողամասի հարեւանութեամբ շարունակում է աշխատել օդերեւութաբանական կայանը, որն այլեւ չի ծառայում աւիացիային, բայց եղանակային տուեալներ է փոխանցում Երեւան: Թռիչքուղու հարեւանութեամբ տեղացիները հող են մշակում, եգիպտացորեն, գարի աճեցնում: Մեր գրուցա-

պատրաստում էր վայրէջքի կամ թռիչքի: Դրա համար ստիպուած էին անվտանգութեան նկատառումներով ցանկապատել ամբողջ տարածքը, սակայն հետագայում, երբ օդանաւակայանն այլեւս չէր գործում, ցանկապատը քանդուել է, ու հիմա անբողբոմի շուրջը լորը նորից գիւղատնտեսական գոտու է վերածուել:

Մեր այցի ժամանակ ասֆալտի →



Կարոֆիլի ցանքս՝ նախկին ասֆիճանների տեղում



Օդերեւութաբանական սարքաւորումները՝ ցանկապարի մէջ

Հնորիաւոր Նոր Տարի
եւ Սուրբ Ծնունդ
Merry Christmas
and Happy New Year

From all of us at
Custom Probiotics

Glendale, CA • (800) 219-8405

www.customprobiotic.com

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանավայանը

չերտի կողքին նախիր ու ձիեր էին արածում: Այսօր քիչ բան է յիշեցնում, որ Ջերմուկում ժամանակին օդանավեր են վայրէջք կատարել: Թերեւս, միայն ասֆալտէ վազքուղին, որ տեղ-տեղ քայքայուել է, իսկ եզրերից ծածկուել է խոտերով:

Գմիրտի Աթբաշեանը յիշում է, որ Ջերմուկի՝ իբրեւ միութենական առողջավայր զարգացման հետ կապուած քաղաքացիայի հայկական վարչութիւնը որոշել

Ըստ Աթբաշեանի՝ 1986ի ամրանն ինքը, երկաթգծի վարչութեան պետ Համբարձում Ղանդիլեանը, ինչպէս նաեւ ՍՍՀՄ եւ Հայաստանի պետապլանի աշխատակիցներն ուղղաթիռով թռել էին դէպի Վարդենիս-Ջերմուկ: Նոր օդանավայան կառուցելուց բացի՝ նպատակ կար Ջերմուկ հասցնել Երեւան-Սեւան-Շորժա-Վարդենիս-Սոթք երկաթգիծը, ինչը հաստատում է նաեւ Մելիկ Առաքելեանը: Օդանավայանը



Նոր օդանավայանը պիտի կառուցուէր դիմացի սարահարթի վրայ

էր նոր տեղանքում նոր անբողբոմ կառուցել, որը կը կարողանար ընդունել «Եակ-40»ից աւելի մեծ ինքնաթիռներ եւ Ջերմուկն ուղիղ կապել Մոսկուայի հետ: 1980ականների սկզբին այս նպատակով սկսուել էին համապատասխան աշխատանքները:

պիտի տեղակայուէր քաղաքից հիւսիս-արեւմուտք՝ Արփա գետի կիրճից եւ գործող օդանավայանից աւելի բարձր գտնուող սարահարթի վրայ, որտեղ կանգնեցուած է Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձանը (տարածքի բարձրութիւնը մօտ 2200 մ. է):



Դիսպետչերականում. «Կարգավար, համուլուիր, որ թռիչքուղին պլան է»

Աթբաշեանը նշում է, որ համապատասխան ատենաների նախնական համաձայնութիւնն արդէն ստացուել էր, սակայն ծրագիրը զարգացում չունեցաւ. 1987ի ամրանն Աթբաշեանն ազատուեց քաղաքացիայի հայկական վարչութեան պետի պաշտօնից, ինչից յետոյ նրա օրօք մեկնարկած բազմաթիւ նախագծեր մնացին թղթի վրայ:

Տարիների հետուից անդրադառնալով օդանավայանի հնարաւոր վերագործարկմանը կամ նորը կառուցելուն՝ Մ. Առաքելեանն ասում է, որ եթէ Կապանի հետ համեմատենք, որի օդանավայանն առաջիկայում վերաբացուելու է, ապա Ջերմուկում գլխաւոր խնդիրը քամիներն են, սակայն այստեղ եւս հնարաւոր է կրկին օդանավեր նստեցնել ու թռցնել: Նշում է, որ եթէ խորհրդային տարիներին իրենց մօտ թռիչքները սեզոնային էին՝ գարնանից մինչեւ ձմեռ, ապա այժմ ամբողջ տարուայ ընթացքում տուրիստներ են լինում, եւ յատկապէս ձմեռներ՝ Յունուար ամսին, հիւրանոցներում ազատ տեղ գտնել հնարաւոր չէ, այսինքն՝ թռիչքների պահանջարկ կը լինի:

2007ին Ջերմուկի թռիչքուղու հարաւային ծայրից ընդամէնը 350 մ. հեռաւորութեան վրայ կառուցուել է եկեղեցի, որը փաստացի արհեստական խոչընդոտ է դարձել յատկապէս վայրէջքների համար: Եկեղեցու տարածքը ճակատագրի հեգնանքով գտնուում է վայրէջքի գլխաւորայի տակ, ու չնայած փոքր աւիացիայի օդանավերն իրենց տեխնիկական պարամետրերի (յարաչափ-մմբ.) հաշուին հիմա էլ, թերեւս, կը կարողանան այստեղ վայրէջք կատարել, այդուհանդերձ, եթէ մի օր որոշուի վերագործարկել անբողբոմը, եկեղեցին խնդրահարուց է լինելու անվտանգութեան տեսանկիւնից: Նշենք, որ Ս. Գայիանէ եկեղեցին կառուցել է Ջերմուկի 1996-2003թթ. քաղաքապետ, ԱԺ հանրապետական պատգամաւոր (2003-2019 թթ.), «Ջերմուկ Գրուպ»ի սեփականատէր Աշոտ Արսէնեանը:

2008ի Սեպտեմբերին Տիգրան Սարգսեանի կառավարութիւնը Ջերմուկը յայտարարեց զբօսաշրջային կենտրոն: Գործադիրի որոշման մէջ նշում էր, որ մինչեւ 2012թ. Ջերմուկը պէտք է դառնայ տարուայ չորս եղանակի զբօսաշրջային կենտրոն, քաղաքը պէտք է զարգանայ որպէս առողջարանային եւ ձմեռային տուրիզմի կենտրոն, շախմատի միջազգային կազմակերպման կենտրոն, համահայկական մանկապատանեկան ու երիտասարդական ճամբարատեղի, մշակութային տուրիզմի կենտրոն: Կառավարութիւնը նախատեսում էր, որ տարեկան Ջերմուկ է այցելելու 100 հազ. զբօսաշրջիկ, իսկ տուրիզմից ստրեկկան ստացուելու է 100 մլն. դոլարի եկամուտ ու ստեղծուելու է 4000 լրացուցիչ աշխատատեղ: Ջերմուկի զարգացման յաւակնոտ ծրագրի գերակայ խնդիրները իրականութիւն դարձնելու համար նախանշուել էին մի շարք միջոցառումներ, որոնցից մէկն էլ այստեղ ուղղաթիռների եւ թեթեւ ինքնաթիռների համար նախատեսուած օդանավայան ունենալն ու համապատասխան երթուղիների կազմակերպումն էր:

Դեռ 2008ի Յուլիսին կառավարութիւնը սահմանել էր այդ տարուայ գերակայ խնդիրների ցանկը, որոնց թւում նաեւ փոքր աւիացիայի զարգացման հայեցակարգի ընդունումն էր: Հայեցակարգի նախագծում, որը մշակել էր քաղաքացիայի գլխաւոր վարչութիւնը (ՔԱԳՎ - ներկայումս՝ քաղաքացիայի կոմիտէ), ասում էր. «Աւիացիոն աշխատանքների վերականգնման նպատակայարմարութիւնը գնահատելու նպատակով ուսումնասիրուել են «Վարդենիս», «Գաւառ», «Մեղրի», «Կապան», «Գորիս», «Սիսիան» եւ «Ջերմուկ» օդանավայանների վերագործարկման հնարաւորութիւնները»:

ՔԱԳՎ-ն Ջերմուկում փոքր աւիացիայի զարգացումը դիտարկել էր տուրիզմի տեսանկիւնից, ինչը տրամաբանական էր եւ թիւում էր գործադիրի վերոնշեալ որոշումից. «Նկատի ունենալով ՀՀ կառավարութեան ծրագիրը՝ ուղղուած Ջերմուկ քաղաքի զարգացմանը, ակնյայտ է, որ հանգստի եւ առողջապահութեան ժամանակակից կենտրոնը պէտք է ապահովուած լինի համապատասխան ենթակառուցուածքներով: Հաշուի առնելով շրջանի ռելիեֆային պայմանները, ինչպէս նաեւ նախկին «Ջերմուկ» օդանավայանի շահագործման փորձը (թռիչքների իրականացման տեսանկիւնից օդանավայանը համարուում էր բարդ օդանավայան) Ջերմուկ քաղաքի օդային հաղորդակցութեան զարգացման նպատակով՝ առանձնացուած տարածքներում

**Nova
Automotive**

Glendale, California

**Mr. & Mrs.
Jirair & Rita
Keuroghlian**

**Merry Christmas
& Happy New Year**

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանավայանը

կարելի է կառուցել ե՛լ նոր օդանավայան, ե՛լ նոր ուղղաթիռահրապարակ»:

Այսպիսով՝ 2008ին կառավարութեան մակարդակով քննարկում էր Ջերմուկում նոր օդանավայան ունենալու հարցը: Իսկ ի՞նչ եղաւ յետոյ: Ոչինչ: Քաղաքաշինութեան փոխնախարար, Հանրապետութեան գլխաւոր ճարտարապետ, ծնունդով Ջերմուկցի Նարեկ Սարգսեանը, ով այդ պաշտօններում նշանակուել էր 2008ի Յունիսին, այսինքն՝ Ջերմուկն իբրև զբօսաշրջային կենտրոն զարգացնելու պատասխանատուներից մէկն էր, 2009ի Ապրիլին յայտնել էր, որ նախարարութիւնը կառավարութեան պատուէրով մշակում է վայոց ձորի մարզի տարածքային յատակագիծը: Յատակագծման ժամանակ, ըստ Ն. Սարգսեանի, խնդիր էր դրուել նախ ուսումնասիրել Ջերմուկ քաղաքը՝ այն դիտարկելով նաև այլընտրանքային օդանավայան կառուցելու հնարաւոր վայր: Այդուհանդերձ, փոխնախարարի տեղեկացմամբ, նախնական ուսումնասիրութիւնները ցոյց էին տուել, որ Ջերմուկի այդ օդանավայանը չի կարող ըստ արժանւոյն ծառայել, քանի որ Ջերմուկը «փակուղի» է՝ գտնւում է հիմնական մայրուղուց դուրս: «Կապուած Հայաստանը որպէս տարանցիկ երկիր զարգացնելու հեռանկարային ծրագրերի հետ, որով Հայաստանը պէտք է հիւսիս-հարաւ կապ հանդիսանայ,



Թռիչքուղին, ձիերը, եկեղեցին ու Ամուլսարը

եզրակացուել է, որի Գորիսի օդանավայանը կարող է հանրապետութիւնում դառնալ այլընտրանք «Ձուարթնոց» եւ «Շիրակ» օդանավայանների համար՝ հաշուի առնելով դրա հեռւորութիւնը եւ կապերը թէ՛ Լեռնային Ղարաբաղի, թէ՛ Հայաստանի հարաւային շրջանների հետ», նշել էր պաշտօնեան ու յաւելել, որ վարչապետի յանձնարարականով ՔԱԳՎԻ ու նախարար-

րութեան մասնագէտները պիտի ուսումնասիրութիւններ կատարեն Գորիսում: Այսինքն՝ Երեւանի ու Գիւմրու օդանավայաններին որպէս այլընտրանքային նշանակութեան օդանավայան ունենալու վայր էր ընտրուել ո՛չ թէ Ջերմուկը, այլ Գորիսը, սակայն այդ ծրագիրն իրականութիւն չգարձաւ: Ինչ վերաբերում է Ջերմուկին,

ապա 2010ի Փետրուարին կառավարութիւնը հաստատեց վայոց ձորի մարզի տարածքային յատակագծման նախագիծը (Ջերմուկի նոր օդանավայանի տարածքի ներառմամբ), որի մասին խօսել էր Նարեկ Սարգսեանը: Նախագիծի քարտէզներում իբրև նոր օդանավայանի տարածք նշոււմ է այն նոյն վայրը, որը դեռ 1980ականներին ընտրել էին

Waste & Recycling Services
323-838-9375
www.patriotservinc.com

Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան Տօնական օրերու ջերմ մաղթանքներ մեր յարգոյ յաճախորդներուն եւ հայրենակիցներուն

Ժան եւ Վարդան Քէօրողլեաններ

Հայաստանի Ամենաբարձր Ու Ոչ Սովորական Օդանավայանը

Գմիտրի Աթբաշեանն ու գործընկերները: Բայց Ջերմուկը նոր օդանավայան չունեցաւ ո՛չ Տիգրան Սարգսեանի օրօք (2008-2014 թթ.), ո՛չ էլ հետագայում:

Ջերմուկում փոքր աւիացիան գարգացնելու թեման վերաբացել էր Կարէն Կարապետեանի կառավարութիւնը (2016-2018թթ.): Վերջինս 2017ի Հոկտեմբերին ներկայացրել էր իր գործունէութեան անցած մէկ տարուայ (2016-2017թթ.) հաշուետուութիւնը, որտեղ քաղաւիացիայի ոլորտի մասին, մասնաւորապէս, նշել էր. «Հայաստանում փոքր աւիացիայի ոլորտի զարգացման պոտենցիալը գնահատելու նպատակով 2017ին ՔԱԳՎն Հայաստանի մի շարք գերատեսչութիւնների հետ համատեղ ուսումնասիրել է տարբեր ուղղութիւններով տրանսպորտային հոսքերը, ինչպէս նաեւ գլխաւոր վարչութեան կողմից ուսումնասիրուել են Ստեփանաւան, Ջերմուկ, Միսիան, Գորիս, Կապան եւ Մեղրի (Ագարակ) քաղաքների օդանավայանների վերագործարկման հնարաւորութիւնները եւ գնահատումները»: «Հետքը» ՔԱԳՎին հարցրել էր, թէ նշուած օդանավայանների վերագործարկման վերաբերեալ ինչպիսի եզրայանգումների է եկել գործադիրը (Կապանի վերաբերեալ արդէն պարզ էր, որ այն չահագործուելու է): ՔԱԳՎն տուել էր շատ ընդհանրական պատասխան. «Հայաստանի կառավարութեան 2017 թուականի գերակայ խնդիր հանդիսացող «Հայաստանում փոքր աւիացիայի զարգացման համալիր ծրագրի» շրջանակներում Հայաստանի Հանրապետութեան կառավարութեանն առնթեր քաղաւիացիայի գլխաւոր վարչութեան կողմից ուսումնասիրուել են



Ձախակողմեան շինութեան մէջ նախկինում պահուում էր գեներատորը (մակերեւոյթի-Նմբ.), իսկ միւսը նախաբետուած էր կարգավարների համար, սակայն վերջիններս այդտեղ գրեթէ չեն աշխարել

Ստեփանաւանի, Ջերմուկի, Միսիանի, Գորիսի, Մեղրու եւ Կապանի օդանավայանների շահագործողական վիճակը եւ վերագործարկման հնարաւորութիւնները, հաշուարկուել են օդանավայանների վերագործարկման մօտաւոր ծաւալները, կատարուել է շուկայի վերլուծութիւն, ինքնաթիռի տիպի նախնական ընտրութիւն: Կատարուած վերոնշեալ ուսումնասիրութիւններն ամփոփուել են համապատասխան գրութեամբ, որը ներկայացուել է ՀՀ կառավարութեան եւ շահագրգիռ գերատեսչութիւններին»: Ինչպէս վերը նշեցինք, Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնուող պետական հողերից 51.6 հա.ն օդանավայանի տարածքն է: Համաձայն Հողային օրէնսգրքի 60րդ յօդուածի՝

պետական եւ համայնքային սեփականութիւն հանդիսացող մի շարք հողամասեր չի թոյլատրուում մասնաւորեցնել: Գրանց թուում ընդհանուր օգտագործման ատոմոբիլային (ինքնաշարժի յատուկ-Նմբ.), երկաթուղային ճանապարհների, խողովակաշարային եւ այլ տրանսպորտի (երթեկեկի-Նմբ.) համար առանձնացուած շերտերի հողերն են: Այլ տրանսպորտ ասելով՝ պէտք է հասկանալ նաեւ օդային տրանսպորտը, այսինքն՝ օդանավայանների տարածքները Հողային օրէնսգրքով արգելուում է մասնաւորեցնել: Վերջերս՝ Հոկտեմբերի 1ին, ոստիկանութիւնը յայտնեց, որ Ջերմուկ համայնքի ղեկավարը, չարաշահելով պաշտօնէական լիազօրութիւնները եւ դրանք օգտագործելով համայնքի եւ պետու-

թեան օրինական շահերին հակառակ, 2006 թ. կազմել է պաշտօնական փաստաթուղթ հանդիսացող կեղծ տեղեկանք՝ իբր Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում գտնուող նախկին օդանավայանի տարածքը ընդգրկուած չէ Հայաստանի Հողային օրէնսգրքի 60րդ յօդուածով նախատեսուած հողամասերի կազմում: Դրա հիման վրայ ստանալով համայնքի աւագանու համաձայնութիւնը՝ 60 հա. մակերեսով նշուած հողատարածքը ներկայացրել է աճուրդի, ինչից յետոյ, չարամտօրէն խախտելով հրապարակային սակարկութիւնների կարգը եւ ձեւական աճուրդ կազմակերպելով, Հայաստանի Ազգային ժողովի նախկին պատգամաւորի որդուն օտարել է 486,000,000 դրամ կադաստրային (տոմարային-Նմբ.) արժէքի 30 տոկոսով՝ 153,300,000 դրամով: Յարուցուել է քրէական գործ: Ոստիկանութիւնը հաղորդագրութեան մէջ նկատի է ունեցել Ջերմուկի ներկայիս համայնքապետ Վարդան Յովհաննիսեանին, ով այդ պաշտօնում է 2006ից: Իսկ Ազգային ժողովի նախկին պատգամաւորը Աշոտ Արսէնեանն է, ով երկար տարիներ Ջերմուկի տարածաշրջանի քաղաքական ու տնտեսական գլխաւոր ֆիգուրն (կերպար-Նմբ.) էր: Ստացուում է, որ 2006ից Ջերմուկի օդանավայանը եղել է մասնաւոր տարածք, եւ այդ փաստի անօրինականութեան մասին յայտնի է դառնում միայն 13 տարի անց: Յ.Գ. Հայաստանի օդանավայանների մասին մեր յօդուածաշարը ներկայացնում ենք նաեւ այս քարտեզի միջոցով: «ՀԵՏԲ»



FOREST LAWN-ի ընտանիքը
 շնորհաւորում է իր հայ
 աշխատակիցների եւ շրջանի
 հայութեան Նոր Տարին եւ
 Սուրբ Ծնունդը, մաղթելով
 յաջողութիւններով լի տարի:

818-988-2222 • FORESTLAWN.COM

FOREST LAWN®
 FUNERALS • CREMATIONS • CEMETERIES

HOLLYWOOD HILLS • 6300 FOREST LAWN DRIVE, LOS ANGELES, CA 90068
 FOREST LAWN MEMORIAL PARKS & MORTUARIES • FD 904

Վանայ Լճի Երկու Կարելուր Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Աւերակները Սպասում Են Վերանորոգման

ՀԱՄԻԹ ՔԱՐԱՔՈՒՇ
Թարգմանեց՝ ԱՆԻ ՄԵԼՔՈՆԵԱՆ

Վանայ լիճը, որը համարում է թուրքիայի ամենամեծ լիճը, աշխարհի ամենամեծ աղի լիճն է: Այն իր կղզիներում առկայ պատմական վայրերով զբոսաշրջութեան համար մեծ կարելուրութիւն է ներկայացնում: Վանայ լճում գտնուող չորս կղզիները՝ Աղթամար, Կտուց, Լիմ եւ Առտեր, ունեն պատմական եւ զբոսաշրջական կարելուր նշանակութիւն, բացի այդ՝ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի ստորագրութեամբ «Ռեսմի Կազեթէ»ում հրապարակուած հրամանով Վանայ լճի՝ բնական արգելավայր



դարձած մեծ կղզիներից 3ը հռչակուեցին «Ռիստ պահպանութեան տակ առնուած տարածքներ»:

1951թ. կառավարութեան հրամանով Աղթամարի եկեղեցին քանդուած էր, ինչի մասին պատահաբար տեղեկանում է այդ ժամանակ լրագրող Եաշար Քեմալը: Վերջինիս միջնորդութեամբ եկեղեցին չի քանդուում: 1990թ. հնագիտական վայր յայտարարուած կղզում 2007թ. կատարուած վերանորոգման աշխատանքներից յետոյ եկեղեցին զբոսաշրջութեան զարգացման համար կարելուր կենտրոն է դարձել: Աղթամար կղզին եւ եկեղեցին տեղ են գրաւել արեւելեան Անատոլիայում

(Արեւմտեան Հայաստանի «Ակունք») ամենաշատ այցելուած վայրերի շարքում: Աւերման վտանգի տակ յայտնուած եկեղեցին վերանորոգուեց եւ դարձաւ զբոսաշրջութեան նշանաւոր կենտրոն, որից յետոյ իրենց հերթին են սպասում նաեւ Կտուց կղզում գտնուող Ս. Յովհաննիս նուիրուած Կտուց վանքը, Լիմ կղզում գտնուող Ս. Գէորգ եկեղեցին եւ Ս. Սիոնի մատուռը: Վանում զբոսաշրջութեամբ զբաղուող անհատները շեշտում են, որ ամէն տարի պատմական կառույցների մնացորդները աւելի մեծ զբոսաշրջական ներուժ են ստանում, ապա՝ յաւելում, որ սպա



Allergy • Immunology • Respiratory • Eczema

Krikor Manoukian MD
Raffi Tachdjian MD, MPH

Board Certified in Adult and Pediatric Allergy & Immunology
www.AIREmedical.com
 191 S Buena Vista St Ste 330, Burbank, CA 91505
 (818) 561-4533

**Կը Շնորհաւորեն Համայն Հայութեան
 ՆՈՐ ՏԱՐԻՆ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ**

Վանայ Լճի Երկու Կարելուր Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Աւերակները Սպասում են Վերանորոգման

սում են այդ կառույցների վերանորոգմանը:

Կտուց կղզում (Թուրքերէն անունանումը՝ Չարփանակ-«Ակունք») Ս. Յովհաննիս նուիրուած Կտուցի վանքը եւ Լիւմ կղզում (Թուրքերէն անունանումը՝ Ատըր-«Ակունք») գտնուող Ս. Գէորգ եկեղեցին եւ Ս. Սիոն մատուոր սպասում են զբօսաշրջական կենտրոններ դառնալուն: Քաղաքում զբօսաշրջութեամբ զբաղուող մարդիկ անդրադարձան Կտուց եւ Լիւմ կղզիներ հասնելու տարբերակների բարելաւման հարցին, ինչը, ըստ նրանց, Աղթամար կղզու վերանորոգման նման՝ կը յանգեցնի զբօսաշրջութեան զարգացմանը: Մուրադ Պէ-

յազն առաջարկեց Պոլսում դէպի կղզիներ կատարուող նաւարկութիւնների օրինակով շրջայցեր կազմակերպել նաեւ Կտուց, Լիւմ եւ Աղթամար կղզիներ, իսկ Թանգարանի պաշտօնեան շեշտեց, որ կղզիների համար ֆինանսական միջոցներ պէտք է յատկացնի մշակոյթի եւ զբօսաշրջութեան նախարարութիւնը եւ յաւելեց, որ իրենք՝ որպէս հիմնարկ, սոյն նախագծի շրջանակներում պատրաստ են կատարելու իրենց վրայ ընկած պարտականութիւնները: Նա նշեց, որ նման կառույցների վերանորոգումը միակողմանի չի լինում, այլ գործին պիտի աջակցութիւն ցուցաբերեն նաեւ քաղաքի տեղական ինքնակառավար-



ման մարմինները, ՀԿները եւ զբօսաշրջական գործակալութիւնները:

Թանգարանի պաշտօնեան շեշտեց, որ հիմա անհրաժեշտ է Կտուց եւ Լիւմ կղզիները դարձնել զբօսաշրջութեան կարելուր կենտրոն: Նա նշեց, որ այդ երկու կղզիները Աղթամար կղզուն հաւասար նշանակութիւն ունեն եւ յաւելեց, որ հանդէս է եկել կղզիները զբօսաշրջութեան նշանաւոր կենտրոն դարձնելու նախաձեռնութիւններով. «Աղթամար կղզու չափ նշանակութիւն ունեցող այս պատմական կառույցները վերանորոգելու նախաձեռնութիւններով եւ պահանջներով ենք հանդէս եկել: 2013թ. խորհրդի որոշմամբ, Լիւմ կղզու հետ կապուած

աշխատանքներ արեցինք, սակայն այդ վայրերը զբօսաշրջութեան կենտրոն դարձնելու գործը միայն մէկը չի կարող անել: Մեր երկու կղզիների վերականգման եւ զբօսաշրջութեան կենտրոն դարձնելու գործին պէտք է միանան նաեւ մեր շրջանի տեղական կառավարման մարմինները, ՀԿները եւ զբօսաշրջական գործակալութիւնները, որոնք լուրջ աջակցութիւն կարող են ցուցաբերել:

Մենք Պատրաստ ենք Կատարելու Մեր Պարտականութիւնը

Թանգարանի պաշտօնեան նշեց, որ երկու կղզիներում գտնուող պատմական կառույցների վերանորոգման գործը կախուած է պե-

**Merry
Christmas and
Happy
New Year**

**In Memory of
Jacob
Orphali, MD**

**ՍԱՐԳԻՍ
ԵՒ
ԷԼԻԶԱՊԵԹ
ԹԱԹԻԿԵԱՆՆԵՐ**

*Թող իրականացան
պահանջատէր հայի
անկախարար տենչերը
այս Նոր Տարուան
ընթացքին*

Վանայ Լճի Երկու Կարելուր Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Աւերակները Սպասում Են Վերանորոգման

տական գանձարանից. դրանք վերանորոգելու համար մշակույթի եւ զբոսաշրջութեան նախարարութիւնը պէտք է ֆինանսական միջոցներ յատկացնի. «Այս պահին այդ երկու կղզիների համար ֆինանսական որեւէ աջակցութեան մասին խօսք չկայ: Եթէ մշակույթի եւ զբոսաշրջութեան նախարարութիւնն այդպիսի նախաձեռնութեամբ հանդէս չգայ եւ սեփականութեան իրաւունքը չվերցնի, որեւէ լուրջ քայլ անել հնարաւոր չէ: 2011-12թթ. աւարտին հասցուեցին Կտուց կղզու ուսումնասիրութիւնն ու վերականգնման նախագիծը, սակայն դրանից մէկ տարի չանցած՝ այդ ուղղութեամբ որեւէ քայլ չարուեց: Անցած տարի, որպէս թանգարան, այդ տարածքներում վերականգնման աշխատանքներ անելու պահանջ ներկայացրինք: Մենք՝ որպէս հիմնարկ, պատրաստ ենք երկու կղզիներում եւ այլ պատմական վայրերում արուելիք քայլերի դէպքում մեր ստանձնած՝ փորելու ու մաքրելու աշխատանքներն անել եւ աջակցել գործին»:



Վանայ լճի աւազանի զբոսաշրջական միութեան VAHATUDER-ի ղեկավար Ապտուլլահ Թունչտեմիրը նշեց, որ եթէ Կտուց եւ Լիմ կղզիները վերածուեն զբոսաշրջական վայրերի, իրենց ներդրումը կ'ունենան զբոսաշրջութեան զարգացման գործում, եւ անդրադարձաւ նաեւ այդ երկու կղզիների պատմական կա-

ռույցների աւերակների վերականգնման անհրաժեշտութեանը: Թունչտեմիրն ասաց. «Սպասում ենք, որ Աղթամար կղզու նման կարելուր այդ երկու կղզիներում գտնուող պատմական կառույցները կը վերանորոգուեն ու դառնան զբոսաշրջական վայրեր: Վերանորոգումից յետոյ կղզիներ գնալ-գալը կը հեշտանայ, եւ Աղթամար կղզի այցելող մարդիկ կը

ցանկանան տեսնել նաեւ այդ երկու կղզիները: Կղզիներում գտնուող կառույցների վերանորոգումն ու կղզիներ հասնելու գործը դիւրացնելը զբոսաշրջութեան զարգացման գործում մեծ ներդրում կ'ունենան», ապա յաւելեց. «Տեղացի եւ արտասահմանցի զբոսաշրջիկները, եթէ գնան նաեւ այդ երկու կղզիներ, մեր երկրում կը մնան եւս երկու օր, ինչն

էլ նշանակում է՝ լուրջ ներդրում տնտեսութեան մէջ»:

«Երկու կղզիները Աղթամար կղզու Չափ Կարելուր Են». Թունչտեմիր

Թունչտեմիրի խօսքով, զբոսաշրջութեամբ զբաղուողների նպատակն է զբոսաշրջութեան կենտրոնացումը

**Թող Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը
Երջանկութիւն
Ու Արդար Խաղաղութիւն Պարգեւեն
Մեր Ժողովուրդին**

**Albert & Sona
Shahinian**

Utah

Վանայ Լճի Երկու Կարելու Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Աւերակները Սպասում են Վերանորոգման

րոններ դարձնել այն վայրերը, որոնք զբոսաշրջութեան համար փակ են եւ վերանորոգման կարիք ունեն, նա մասնաւորապէս նշեց. «Մեր շրջանում կան բազմաթիւ պատմական կառույցներ, որոնք վերանորոգման կարիք ունեն: Մեր ամենամեծ ակնկալիքը պատմական կառույցների վերանորոգումը եւ դրանք զբոսաշրջական վայրերի վերածելն է: Ներկայում երկու կղզիներում գտնուող պատմական կառույցներն աւերակ են: Ինչպէս Աղթամար կղզում գտնուող եկեղեցու վերանորոգումը խթանեց զբոսաշրջութեան զարգացումը, այնպէս էլ միւս երկու կղզիներում գտնուող պատմական կառույցները դա կարող են անել: Ակնկալում ենք, որ դրանք հնարաւորինս շուտ վերանորոգուեն եւ դառնան զբոսաշրջական կենտրոններ»:



են որպէս արտավայրեր: Սակայն ժամանակի ընթացքում զբոսաշրջութեան զարգացման հետ մէկտեղ Աղթամար կղզում գտնուող Ս. Ոսկ եկեղեցին եւ հայկական վանքերը առաջին գիծ մղուեցին: Հայազգի զբոսաշրջիկների այցելից յետոյ հետաքրքրութիւնն աւելի մեծացաւ, եւ տեղացի զբոսաշրջիկները եւս սկսեցին հետաքրքրութիւն ցուցաբերել: Աղթամար կղզում վերանորոգման աշխատանքներից եւ եկեղեցում արուած պատարագից յետոյ այն աւելի պահանջուած զբոսաշրջական վայր դարձաւ: Արեւելեան Անատոլիայում (Արեւմտեան Հայաստան-«Ակունք») այն դասուեց ամենաշատ այցելուող պատմական վայրերի շարքին: Նման բազմաթիւ կառույցներ ունենք, որոնցով կարող ենք մեծացնել գործը՝ Կտուց կղզում գտնուող

Կտուց վանքը, Լիմ կղզում գտնուող Ս. Գէորգ եկեղեցին եւ Ս. Սիրոն մատուռը»:

Կտուց կղզին Հայերի Համար Կարելու է

Պէյազը նշեց, որ Կտուց կղզին Աղթամար կղզու չափ կարելու է եւ, անդրադառնալով կղզի հասնելու դժուարութեան եւ նաւով շրջայցերի պակասութեան պատճառով տեղանքի ամայութեանը՝ յաւելեց. «Կտուց կղզում կայ ոչ այնքան բարւոք վիճակում գտնուող նաւամատոյց, կանոնաւոր նաւարկութիւն չկայ, սակայն պատմական նշանակութեան վանական համալիր կայ: Այն հայերի համար շատ կարելու վայր է: Վերջին շրջանում մարդկանց նուազ քանակի պատճառով կղզին դարձել է բազմաթիւ

թռչնատեսակների օրրան: Հիմա կղզին մի վայր է, որտեղ կարելի է հետեւել թռչուններին: Կտուց կղզու տեղանքն այնպիսին է, որ Սիրոն սարը շատ մօտիկից է երեւում: Հետեւաբար կարող ենք ասել, որ թռչունների տեսակները, Սիրոն սարն ու կղզու ներսում գտնուող պատմական կառույցներն այն շատ կարելու վայր են դարձնում»:

«Գէպի երեք կղզիներ նաւարկութիւնը կը նպաստի Ջբոսաշրջութեան Ջարգացմանը». Պէյազ

Պէյազը նշեց, որ Լիմ կղզին միւս կղզիների նման կարելու է, ապա յաւելեց. «Կղզում գտնուող Ս. Գէորգ եկեղեցին եւ Ս. Սիրոն մատուռը նշանաւոր պատմական կառույցներ են, որոնք ժամանակի ընթացքում քանդուել են, եւ այժմ միայն մնացորդներն են պահպանուել: Երկու կղզում գտնուող պատմական կառույցները հնարաւորինս շուտ պէտք է վերանորոգուեն, որոնք շրջակայքի հետ կը դառնան զբոսաշրջական կարելու կենտրոն: Յատկապէս պէտք է զարգանան նաւով շրջայցերը: Պոլսի օրինակով այստեղ էլ նաւով շրջայցերը կարելի է կազմակերպել, որը կը սկսուի Աղթամար կղզուց մինչեւ Լիմ եւ կը տեւի մէկ օր: Կամ էլ հակառակը՝ կը սկսուի Լիմ կղզուց եւ նաւով կը հասնեն Աղթամար. այս կերպ զբոսաշրջութիւնը կարելի է զարգացնել: Մեր շրջան այցելող

Շնորհաւոր Նոր Տարի Եւ Ս. Ծնունդ Առողջութիւն Եւ Յաջողութիւն Մեր Բոլոր Ազգականներուն, Բարեկամներուն Եւ Յաճախորդներուն

Տոբթ. Սարգիս Եւ Տիկ. Ալիս Քեահքէճեան Մարի, Արսէն Եւ Վարդան

DR. SARKIS KAAKIJIAN
 1500 S. Central Ave., #318
 Glendale, CA 91204
 (818) 548-5437


Թող Գալիք Տարին Համայն Հայ Ժողովրդի Համար Լինի Նորանոր Զեռքերումների, Յաջողութիւնների Եւ Յաղթանակների Տարի

Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւն

Վանայ Լճի Երկու Կարելուր Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Աւերակները Սպասում Են Վերանորոգման

տեղացի եւ արտասահմանցի զբօսաշրջիկներին էլ ամենաքիչը 1-2 գիշեր աւել կը հիւնկալենք: Այսպիսով, մեր շրջանի զարգացման համար մեծ տնտեսական ներդրումներ կ'ապահովենք»:

«Երկու Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Վերանորոգումը Պարտադիր է». Օգգբլըչ



Կտուց եւ Լիմ Կղզիների Շնորհիւ Ջբօսաշրջութիւնը Կարող Ենք Ջարգացնել

Ջբօսաշրջութեամբ զբաղուող Մոհամետ Էնես Օգգբլըչը շեշտեց, որ Աղթամար կղզու չափ կարելուր են Կտուց եւ Լիմ կղզիները, որոնք պէտք է դարձնել զբօսշրջական կարելուր կենտրոն, ապա յաւելեց. «Աղթամար կղզու վերանորոգումն իր ներդրումը ունեցաւ զբօսաշրջութեան զարգացման գործում, նոյն կերպ էլ այս երկու կղզիներում գտնուող պատմական կառույցները վերանորոգելը եւ նաւով զբօսանք կազմակերպելը իրենց ներդրումը կ'ունենան այդ գործում: Կղզիներում ամենակարելուր հարցը այնտեղ գտնուող կառույցների վերանորոգումն է, որ մարդիկ կարողանան այցելել: Այսինքն առանց վերանորոգման՝ կղզիներ զբօսաշրջիկ տանել հնարաւոր չէ, նոյնիսկ մենք չենք կարողանում գնալ: Մեր շրջանում պատմական նշանակութեան շատ կառույցներ կան, սակայն չվերականգնելու եւ ֆինանսական միջոցներ չյատկացնելու պատճառով դրանք գնահատելու հնարաւորութիւն չի լինում»:

Օգգբլըչը նշեց, որ Կտուց եւ Լիմ կղզիներում կատարուելիք վերանորոգման աշխատանքների ժամանակ պէտք է հաշուի առնուեն նաեւ զբօսաշրջութեամբ զբաղուողների գաղափարները, ապա յաւելեց. «Երկու կղզիներում արուելիք վերանորոգման աշխատանքներից յետոյ նախադէպ հանդիսացած Աղթամար կղզու նման դրանք եւս կարող ենք դարձնել զբօսաշրջական վայրեր: Յատկապէս պէտք է կազմակերպել մէկօրեայ շրջայցեր: Դէպի կղզիներ շրջայցեր կազմակերպելով՝ ջրասուզային զբօսաշրջութիւնը եւս կարող ենք զարգաց-

նել եւ տեղացի, օտարերկրացի զբօսաշրջիկներին կարող ենք ուղղորդել դէպի քաղաք: Նոր ձեւաւորուող Թուրքիայի զբօսաշրջութեան եւ զարգացման գործակալութեան հետ միասին այս երկու կղզիներում զբօսաշրջութեան նոր ուղղութիւններ կարող ենք զարգացնել»:

Աղթամար կղզու Նման՝ Կտուց եւ Լիմ կղզիներն էլ են Պահպանութեան Տակ Առնուել

Նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի ստորագրութեամբ «Ռեւմի Կազեթ»ում հրատարակուած հրամանով Վանայ լճի՝ բնական արգելավայր դարձած մեծ կղզիներից Յը հռչակուեցին «Նիստ պահպանութեան տակ առնուած

տարածքներ»: Վանայ լճի կապոյտ ջրերի միջից վեր խոյացող եւ զբօսաշրջիկների ամենաշատ այցելած վայրերից մէկը համարուող Աղթամար կղզու հետ միասին Կտուց եւ Լիմ կղզիները եւս հռչակուեցին «Նիստ պահպանութեան տակ առնուած տարածքներ»: Կղզիներում, որոնք իրենց տարածքում գտնուող Աղթամար եկեղեցու, Կտուց եւ Լիմ վանքերի շնորհիւ քաղաքի առաջատար զբօսաշրջական արժէքների մէջ են ներառուած, յաւելեալ միջոցառումներ են ձեռք առնուելու դրանք աւելի լաւ պահպանելու համար:

Եաշար Քեմալի Շնորհիւ՝ Աղթամար կղզին Վերջին Պահին Փրկուեց Քանդուելուց

Հայերի համար նշանաւոր Աղթամար կղզին եւ եկեղեցին ճարտարապետական տեսանկիւնից միջնադարեան հայկական արուեստի ամենափայլուն նմուշներից է: 1951թ. կառավարութեան հրամանով եկեղեցին քանդուելու որոշումն ընդունուեց, որը կասեցուեց այդ ժամանակ լրագրող եւ դէպքի մասին պատահաբար իմացած Եաշար Քեմալի միջնորդութեամբ: Գրող Եաշար Քեմալը հետեւեալ կերպ է ներկայացնում Աղթամարի փրկութիւնը. «Բժշկի հետ միասին շարժուեցինք ուղիղ Աղթամար կղզի: Վանայ լճի ջուրն էլ կախարդական էր: Ակնթար-

Mousa Ler

Association of California


Քալիֆորնիոյ Մուսա Լեր

Հայրենակցական Միութիւնը

Կը Շնորհաւորէ Բոլորին
Նոր Տարին Եւ Ա. Ծնունդը

Վանայ Լճի Երկու Կարեւոր Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Աւերակները Սպասում են Վերանորոգման

Թից ակնթարթ գոյնը փոխուում էր: Մի փոքրիկ մակույկով կղզի հասանք: Դեռ եկեղեցուն հերթը չէր հասել, գրեթէ վերջացնում էին վերջինիս մօտ գտնուող փոքրիկ մատուռի քանդման աշխատանքները: Հազարապետն ասաց. «Մինչեւ ես չգամ՝ այդ եկեղեցու վրայ մի խաղ անգամ չենք անելու: Ես գնում եմ նահանգապետի մօտ»: Բանուորները կանգ առան, նրանց ղեկավարն ասաց. «Ասում ենք, հրամանատար»: Եկանք Վան: «Ճում-հուրիեթ» թերթի խմբագրատունը գանգեցինք: Այդ օրը մինչեւ երեկոյ սպասեցինք, չէին պատասխանում: Յաջորդ օրը՝ վաղ առաւօտեան, կրկին գանգահարեցինք: Մի քանի ժամ անց Նատիր պէյն իմ դիմաց էր: Դէպքի մասին պատմեցի այն, ինչ իմացել էի հազարապետից: Նատիր պէյն ասաց. «Մի՛ նեղուէք: Անի պէյը կը լուծի այս հարցը: Նրան լաւ եմ ճանաչում. քաղաքակիրթ մարդ է»: Անի Պաշմանն այդ տարի ազգային կրթութեան նախարարն էր: Երկու օր անց Իլիաս Քիթափչըն բժիշկ, հազարապետից ծախիթ պէյի հետ եկաւ հիւրանոց: Ուրախ էին: Անի Պաշմանը նահանգապետին հեռագիր էր ուղարկել եկեղեցու քանդումը դադարեցնելու համար: Աղթամարի եկեղեցին փրկուեց 1951թ. Յունիսի 25ին»:



գիւղի մօտակայքում է: Կղզի կարելի է հասնել գիւղի նաւամատոյցում գտնուող նաւերով: Տեղի բնական տարածքը չխախտելու պատճառով այն փակ է զբօսաշրջութեան համար: Կղզում է գտնուում Ս. Յովհաննի վանքը, որը ենթադրաբար կառուցուել է 9րդ կամ 11րդ դարում: Կառույցից, որը յիշատակուում է որպէս Կտուց վանական համալիր, այսօր միայն եկեղեցու հատուածն է կանգուն: Կղզում կան բազմաթիւ կենդանատեսակներ, որոնք հնարաւոր չէ տեսնել Թուրքիայի մէկ այլ վայրում:

Կղզու Պատմութիւնը

Ենթադրուում է, որ կղզին մինչեւ 100 տարի առաջ իրականում թերակղզու մաս է եղել: Երբ Վանայ լճի ջրերը արագ կշռոյթով բարձրացել են, մի հատուած

ցամաքի հետ իր կապը կտրել եւ վերածուել է կղզու: Կղզու եւ վանքի վերաբերեալ երկու գրաւոր փաստաթղթեր են մնացել՝ 1414թ. թուագրուած: Եկեղեցական կառույցների առկայութեան շնորհիւ պատերազմներից այն շատ չի վնասուել, սակայն բազմաթիւ երկրաշարժեր են եղել: 1703թ. տեղի ունեցած երկրաշարժի պատճառով վանքի մի մեծ հատուած քանդուել է, որը 1712-1720թթ. ընթացքում պիթիսցի Կասկապեր վարպետի կողմից վերակառուցուել է: Հայկական վանքը 1918թ. շրջանում տեղի ունեցած անկարգութիւնների պատճառով դատարկուել է: Կառույցը ներկայում աւերման վտանգի տակ է:

Կղզում Գտնուող Վանքը

Կղզու վրայ գտնուել են 9րդ եւ հետագայ դարերում կառուցուած

հոգեւոր շինութիւններ: Մեծ վանական համալիրից միայն եկեղեցու հատուածն է կանգուն: Կտուց անուամբ յիշատակուող վանքը գտնուում է կղզու հիւսիսային հատուածում: Վանքի մատուռը, քարոզի համար նախատեսուած դահլիճները, գրադարանը, հիւրատունը, ճաշասենեակն ու ննջասենեակները եւ միւս սենեակները այսօր չկան: Վանքի գերեզմանատունն էլ ներկայում լիովին անհետացել է: Մէկ այլ աւանդազրոյցի համաձայն, այս վանքը կառուցուել է Ս. Սաչի, Ս. Հոփսիմէի, Ս. Գրիգորի, Ս. Յովհաննի պատուին: Վանքի՝ 1700ական թթ. մնացած արձանագրութեան մէջ առկա տեղեկութիւններից բացի՝ այդ կառույցի մասին որեւէ այլ փաստաթուղթ չկայ: Կայ ենթադրութիւն, որ եկեղեցու մեծ մասը 1462թ. էթիոպիական զինուորի կողմից վերանորոգուել է: 15րդ դարում Լիմ կղզում գտնուող վանքում ապրած կուսակիցները, շրջանում երկար ժամանակ տեսած պատերազմներից մէկի ժամանակ իրենց հոգեւոր առաջնորդ Ներսէսի մահից յետոյ հեռացել են վանքից եւ հաստատուել Կտուց վանքում:

Վանքի Ճարտարապետական Առանձնայատկութիւնները


Ընդարձակ վանական համալիրից, որն ունէր գրադարան, մատուռներ ու հիւրատներ, այսօր միայն եկեղեցու հատուածն է կանգուն մնացել: Դրսից այն ուղղանկիւն է, իսկ ներսը՝ խա-

ձանաչում էք Կտուց կղզին
Կտուց կղզին Վանայ լճի հիւսիսարեւելեան շրջանում գտնուող Վան քաղաքին կից Ջիթեորէն

Glendale Mobil Service

1028 S. Brand Blvd.,
Glendale, CA 91204
818-244-0151

Wishing
all our family
and friends
health and prosperity
throughout the year



Հայ Քոյրերու Վարժարանի
մեծ ընտանիքը
Կը մաղթէ հայ ժողովուրդին՝
ի սփիւռս աշխարհի
եւ հայրենիքի
Բերդեհեմի խորհուրդով
լուսաւորուած
Սուրբ Ծնունդ
եւ
Խաղաղ ու բարեբեր
Նոր Տարի

Վանայ Լճի Երկու Կարեւոր Կղզիներում Գտնուող Պատմական Կառույցների Աւերակները Սպասում Են Վերանորոգման

չաձեւ: Սաչի կարծ թեւերը ծածկուած են կամարով: Գմբէթը երկու առանձին ոտքերի վրայ է տեղադրուած: Ազատ խաչաձեւ կոչուող ճարտարապետական ձեւով կառուցուած եկեղեցու արտաքին պատերը հասարակ զարդաքանդակներով են պատուած: Կղզուն մօտ՝ նոյն լճի մէջ գտնուող Աղթամար կղզու եկեղեցու հետ համեմատած՝ այս եկեղեցու ներսի պատերը որմնանկարներով զարդարուած չեն: Դարձեալ Աղթամարի եկեղեցու հետ համեմատած՝ այս եկեղեցու արտաքին պատերն էլ բաւականին անշուք են: Ներսի պատերին գաճ օգտագործուած չէ: Եկեղեցու մուտքի դուռը (Թագէ դուռը) ցուցատախտակով եւ խաչերով է զարդարուած: Հիւսիսային եւ հարաւային պատերի վրայ նիւշեր, իսկ արեւելեան պատին մեծ պատուհան կայ: Եկեղեցին սպիտակ, կաթնագոյն եւ մոխրագոյն քարերով է կառուցուած, միայն գագաթին է սեւ տուֆն օգտագործուել՝ յարդարանքի նպատակով:



զբօսաշրջութեան համար: Նախորդ տարիներին ներկերով եկեղեցու պատերը սեւացուել են, ինչը է՛լ աւելի է վատացրել առանց այն էլ վնասուած կառուցի վիճակը: Կղզին պահպանելու համար նշանակուած որեւէ հսկիչ չկայ: Աւելի վաղ մի քանի անգամ նախաձեռնութիւններ են եղել կղզին զբօսաշրջական կենտրոն դարձնելու ուղղութեամբ, սակայն դրանք չեն ընդունուել այն պատճառաբանութեամբ, թէ կարող է վնաս հասցուի ճայերի վերարտադրութեանը: Կղզու հողի վրայ ճայերը խառնիխուռն թուխս են նստում, այստեղ կան տեսակներ, որոնց Թուրքիայի մէկ այլ վայրում անհնար է հանդիպել: Ներկայում կղզի քիչ են այցելում, այցելողներն էլ միայն ցանկանում են եկեղեցին տեսնել եւ հեռանալ: Կղզուն կից գիւղի նաւամատոյցից

կամ էլ Վանի նաւամատոյցից կղզի կարելի է հասնել մէկ ժամ 40 րոպէում:

Գիտէի՞ք, Որ Լիւմ Կղզում եկեղեցի եւ Մատուռ կայ

Լիւմ կղզին Վանայ լճի ամենամեծ կղզիներից մէկն է: 10րդ դարում այնտեղ բնակավայր է եղել: Կղզում են գտնուում Լիւմ վանքը, Ս. Գէորգ եկեղեցին եւ Ս. Սիոնի մատուռը: 1305թ. կառուցուած վանքը եւ 1621թ. կառուցուած եկեղեցին աւերուած են, իսկ 1766թ. կառուցուած մատուռն ու ժամատունը դեռեւս կանգուն են: Յատկապէս գարնանը կղզին դառնում է ճայերի ձուլադրման վայր: Ձուլադրած մեծ քանակութեամբ ճայերին եւ ձուլերին վնաս չհասնելու ուղղութեամբ յատուկ միջոցառումներ են ձեռնարկուել:

Մի ձեռագրում տեղեկացուած է, որ եկեղեցին վերանորոգուել է Չաքարիա Առաջինի կողմից: Այն փոքրածաւալ, ազատ խաչի նախագծով կառույց է: Անկիւնային պատերի վրայով բարձրացող դրսից զլանաձեւ, շրջանաձեւ, կոնաձեւ կենտրոնական գմբէթի վրայ չորս կողմից խաչի թեւերն են տարածուում: Չախ թեւն աւարտուում է կիսաշրջանաձեւ աբսիդով: Աբսիդի երկու կողմերում տեղ գրաւող ուղղանկիւն խորանների հիւսիսային եւ հարաւային թեւերին մէկական խուցեր կան: Եկեղեցու վերակառուցման ժամանակ արեւմտեան մուտքի մօտ քառակուսի ժամատուն է աւելացուել: Թեւերը դէպի դուրս խաչաձեւ եկեղեցիների կարելի է հանդիպել քրիստոնէական սկզբնական ժամանակաշրջանում, հետագայում դա օգտագործուել է բիւզանդական ճարտարապետութեան մէջ՝ շրջանի եկեղեցիների յատկապէս ծեր կազմելու ժամանակ, սակայն հետագայ տարիներին այլեւ չի կիրառուել:

Հայկական ճարտարապետութեան ամենավաղ նմուշները 7րդ դար թուագրուող Կովկասում գտնուող Աշտարակի, Արթիկի եւ Լմբատավանքի եկեղեցիներն են (առաջին հայկական եկեղեցիներն ու վանքերը կառուցուել են 4րդ դարում-«Ակունք»): Աբսիդի ձեւով Լիւմի եկեղեցին նման է 11րդ դարին պատկանող Կաղզմանում գտնուող Չենկելի եկեղեցուն:

Ներկայիս վիճակը

Կղզին 2007 թուականից փակ է

DR. LEO POLOSADIAN

CARDIAC RHYTHM SPECIALIST

Շնորհաւոր Նոր Տարի Եւ Ս. Ծնունդ Համայն Հայութեան Թող Նոր Տարին Ըլլայ Առողջութեամբ, Խաղաղութեամբ Եւ Երջանկութեամբ Լի Տարի Մը

Դուկա. Եւ Տիկ. Տիրան Եւ Շաքէ Արոյեաններ

Կը Շնորհաւորենք Համայն Հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը Եւ Կը Մաղթենք Բոլոր Իղծերու Իրականացում

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՀԱՄՊՈՒՐԿԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԼԵՁՈՒԻ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԽՕՍ, ՀԱՅԵՐԷՆ Blog ԳՐԱԿԱՆ ԿԱՑՔԻ ԽՄԲԱԳԻՐ ԻՇԽԱՆ ՁԻՖԹՃԵԱՆԻ ՀԵՏ

«Ստեղծել Ընթերցողի Կարծիք, Ընթերցո՛ղ Ստեղծել»

Վարեց՝ ՎՐԷԺ ԱՐՄԷՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը 2019ը հռչակեց «Հայ մամուլի տարի»: Զանազան առիթներ եղան, որպէսզի արտայայտուինք մեր մամուլի վիճակին մասին: Փափաքեցայ, տարին չաւարտած, նաեւ այդ մասին գրուցել Իշխան Ձիֆթճեանի Հետ, որ Հայ գիր ու գրականութիւն կը դասաւանդէ Համպուրկի համալսարանին մէջ (Գերմանիա) եւ, իր այլազան մտաւորական աշխատանքներուն կողքին, ահա երեքուկէս տարիէն աւելի խմբագիրն ու վարիչն է Հայերէն blog գրական բեղուն կայքին (<https://hayerenblog.wordpress.com>): Զրոյցը տեղի ունեցաւ հեռուէ հեռու, քանի մը փուլերով՝ օգտուելով հաղորդակցութեան ներկայ դիւրութիւններէն:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ.- Կրնա՞նք ըսել, թէ անկում մը եղած է սփիւտահայ մամուլի անցեալի մակարդակներէն:
ԻՇԽԱՆ ՁԻՖԹՃԵԱՆ.- Երբ անդունդին մէջ նստած ես, դեռ ո՞ւր պիտի իյնաս: Իյնալիք տեղ չէ մնացած: Ելլելու մասին պէտք է մտածենք, որովհետեւ անկումը շատոնց տեղի ունեցած է արդէն: Հարկ է փորձել, որ անկումը մնայուն կացութեան չվերածուի: Չ'ուրախանանք, որ տակաւի՛ն

հայատառ մամուլ կայ: Այդ «տեղեկութիւնը» զիս չ'ուրախացներ: Նման կացութեան մէջ ծոյլ մարդիկ դիմացդ կ'ելլեն եւ կ'ըսեն. «Վաղը այս ալ պիտի չգտնես»: Այո՛, եթէ իրենց պէս մտածողներուն եւ չգործողներուն թիւը շատնայ, այդ իրենց ըսածը պիտի ըլլայ: Իմ ճամբաս հոսանքն ի վար չէ, պէտք է գիտնաս:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ.- Միջազգային մամուլի չափորոշիչները նկատի ունենալով, հայ մամուլը ընդհանրապէս ու սփիւտահայ մամուլը մասնաւորապէս ո՞ւր կը գտնուին ներկայիս՝ բաղդատմամբ մեզի ծանօթ օտար թերթերուն: Վիճակագրական տեղեկութիւններ չէ որ կ'որոնեմ, անշուշտ, այլ՝ ընդհանուր գնահատում մը: Կրնա՞ս նշել այդ չափորոշիչներէն կամ սկզբունքներէն քանի մը հատը:

ԻՇԽԱՆ ՁԻՖԹՃԵԱՆ.- «Հայ մամուլը ընդհանրապէս ու սփիւտաքահայ մամուլը մասնաւորապէս» շատ ընդարձակ կալուածներ են: Աւելի ճիշդ պիտի ըլլար, եթէ ըսէի, որ շատ աւելի կը հետեւի սփիւտաքահայ, քան Հայաստանի մամուլին: Անշուշտ այստեղ համացանցային մամուլն ալ նկատի ունիմ: Մամուլի մասնագէտ՝ մամլագէտ ըլլալու ես, որ միջազգային մամուլի «չափորոշիչներուն» տեղեակ ըլլաս: Ես պարզապէս հետեւող-ընթերցող մըն եմ, որ կրնայ քանի մը յատկութիւններ



Իշխան Ձիֆթճեան

ընդգծել միայն, ըսենք, ընթերցողի փորձառութենէն մեկնած: Արհեստավարժութիւն՝ ընդգէմ պատահականութեան. ձեռներէցութիւն եւ համարձակութիւն, ընթերցողի կարծիք, քննարկումի միջավայր, գաղութային հարցերու արծարծում. ահաւասիկ քեզի փունջ մը նիւթ եւ մօտեցման ձեւ, զորս ես կը փնտոնեմ մեր մամուլին մէջ, յաճախ՝ ի դուր (Յաճախ չոր ու ցամաք տեղեկատուութիւն մը նոյնիսկ կիսկատար կը ներկայացուի. կամ ձեռնարկին վայրը չի յիշուիր, կամ՝

թուականը): Մամուլի ներկայ ամլութեան յստակ պատճառը այն է, որ մեր մամուլը ընդհանրապէս լուրջի չէ առնուած զանոնք հրատարակող հաստատութիւններուն կամ անհատներուն կողմէ: Այլապէս ինքզինք եւ մամուլը լուրջի առնող որեւէ հաստատութիւն ինչպէ՞ս կրնայ լեզուական, քերականական բազմաթիւ ու բազմազան սխալներով լեցուն մամուլ հրատարակել: Բովանդակութեան մասին չենք խօսիր: Սխալներ կը սպորդին հարկաւ ամէն տեղ, միջազգային մամուլին մէջ ալ, սա-

Նոր Տարուան
 Եւ Ս. Ծննդեան
 Առիթով
 Լաւագոյնը
 Կը Մաղթենք
 Հայ Ժողովուրդին

Սարօ Եւ Այտա
 Գօթոյեաններ
 Քրիս
 Եւ Սարին

ՄԱՇՏՈՑ
 ՔՈՒԵՃ

Լաւագոյն
 մաղթանքներով
 կը շնորհաւորենք
 մեր
 հայրենակիցներուն
 Նոր Տարին
 եւ Ս. Ծնունդը

«Ստեղծել Ընթերցողի Կարծիք, Ընթերցո՛ղ Ստեղծել»

կայն չի նշանակեր, որ անոնց մեծ մասին սրբազրույթիներ անկարելի բան մըն է: Ո՞վ կ'արգելէ, որ, օրինակ, այս կամ այն դասարանի աշակերտները խմբագրատուն ժամանեն եւ իբրեւ դասանիւթ կամ թերեւս արտադասարանային աշխատանք՝ այս կամ այն յօդուածին վերստուգում-սրբագրումը կատարեն, հարկաւ՝ փորձի համար: Իսկ եթէ այդ այցելութիւն-դասերը ականդութեան վերածուին, աշակերտը խմբագրատան ճամբան սորվի, զէ՞ջ կ'ըլլայ: Ձեռներէցութիւն կը հասկնամ ըսելով՝ ասանկ ձեռնարկութիւններ, որոնք տեղի չեն ունենար դժբախտաբար: Ո՞վ պիտի ծրագրէ եւ ո՞վ պիտի կատարէ նման բան. խմբագիր եւ ուսուցիչ՝ հարկաւ, որոնք յաճախ գոյութիւն չունին. երբեմն գոյութիւն ունին, սակայն հեռու են իրենց կոչումէն, պաշտօնէն, երբեմն նոյնիսկ՝ սեփական ուղեղէն: Ջարմանալի թող չթուին ըսածներս, ոչ ալ՝ չափազանցութիւն: Ես այս կացութեան հետ հաշտուած եմ: Միջին Արեւելքի մէջ, ուր աշխարհագրական հեռաւորութիւնները մեծ հարցեր չեն, կարելի է մամուլ-դպրոց կազմակերպել, որ այսօր գրեթէ գոյութիւն չունի: Մանկապատանեկան էջերն ալ մէկ-երկու հոգիի վիզէն կախուած բաներ են, հաւաքական աշխատանք չեն ձեւաւորեր դժբախտաբար: Աս ըսածներուս փաստը այն արդիւնքն է, որ հետաքրքրութիւն եւ մթնո-

լորտ չի յառաջանար այդ էջերուն եւ մամուլին շուրջ: Իրենք իրենց՝ առկախ գոյութիւն մը կը ներկայացնեն անոնք: Ճամբայ չեն ելլեր, որ տեղ հասնին: Արհեստավարժութեան համար դրամ պիտի յատկացուի, որպէսզի որակի փոփոխութիւն տեղի ունենայ: Բայց ոչ մէկ կազմակերպութիւն պատրաստ է այսօր իր թերթին դրամ յատկացնելու (խօսքը չի վերաբերիր աշխատակիցին պատուագին վճարելու տակաւին չընդհանրացած, հոս ու հոն կիրարկուող նորամուտ, օտարամուտ, ոչ հայկական սովորութեան, որ ինծի կը յիշեցնէ, ներող եղիր, շան երախը ոսկոր նետելու գործողութիւնը: Ծատ աւելի հիմնական հարցեր կան, զարգացման աշխատանքային մնայուն հանդիպումներ, որոնք շան ոսկորի գինէն աւելի կ'արժեն): Ատոր համար ալ մամուլը ընդհանրապէս անորակ է: Ես կը խորհիմ, որ նաեւ հայերէնը իբրեւ լեզու, որուն միջավայրը կոչուած է ըլլալ մամուլը Սփիւռքի մէջ, կարելորութիւն չունի մեզի համար: Ահաբեկելու համար չէ, որ կ'ըսեն: Ծատ փորձեր կատարած եմ: Օրինակ մը տամ. բարեկամ մը հայերէնի մասին ծանուցողական յօդուած մը շարադրած էր. «պէտք է սիրել»ներու, «պէտք է սորվիլ»ներու սովորական անպէտք շարք մը: Իրեն հարցուցի, որ եթէ ինք իր գաւակներուն այս «ճառ»ը կարդար,



**Տէր Եւ Տիկ.
Տարօն
Եւ Մարլէն
Տէր Խաչատուրեան**

**Կը Մաղթեն
Հայութեան
Ազգային Իղձերու
Իրականացում**

**ՀՕՄԻ
«Մարօ»
Մասնաճիղ**

**Լաւագոյն
Մաղթանքներով
Կը Շնորհաւորեն
Բոլորին
Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը**

«Ստեղծել Ընթերցողի Կարծիք, Ընթերցո՛ղ Ստեղծել»

նկատի պիտի առնելի՞ն իր խրատը: Պատասխանը դրական չեղաւ: Երբ մարդուս զուակներն իսկ պատրաստ չեն ընդառաջելու՝ սորվելու կամ սիրելու սա լեզուն, ինչո՞ւ հետու հասցէներու կ'ուղղենք մեր խօսքը, ազգի՛ն զուակ-

լեզուն տանդ դռնէն ներս մտցնելու համար, որոնց հորիզոնն անգամ զգալու պատրաստ չենք այսօր:

Իրամը քաղաքական գործերու համար է: Մեր մշակոյթը մեր քաղաքականութեան հետ կապ չունի, ասիկա փաստ է՝ հակառակ բոլոր շանքարոզներուն, որոնք զիս շատոնց չեն հետաքրքրեր: Մէկը ոտքի ելլելով՝ հանրութեան մէջ թող չըսէ, որ մենք մշակութասէր ազգ մըն ենք կամ մեր մամուլին կամ մշակոյթին արժէք եւ կարեւորութիւն կու տանք: Միայն երգիծանքի նիւթ կրնան ըլլալ նման արտայայտութիւններ, ուրիշ ոչինչ:

Քաղաքականութիւն-մշակոյթ կապը կը տեսնես, օրինակ, երբ խօսինք Թէքէեանի, Շանթի, Աղբալեանի, Վրացեանի անձերուն մասին, յիշելու համար քանի մը ծանօթ անուններ: Կ'անդրադառնանք բնականաբար անոնց քաղաքական-մշակութային-գրական գործունէութեանց համակցութեան: Այս կացութիւնը երկու կալուածներուն համար ալ բախտորոշ դեր խաղացած է, ըստ իս: Մէկը միւսէն սնունդ ստացած է: Թերեւս քաղաքագէտներ համաձայն չըլլան, նոյնիսկ վնասա-



ներուն, առանց որեւէ նախաձեռնութեան դիմելու: Քաղաքը մաքրելու մասին ճառելէ առաջ մէյ մը դրա՛նդ առջեւը մաքրէ, եթէ կրնաս: Հիմնական, արմատական աշխատանքներ կան կատարելիք,



կար համարեն այդ գուզընթացութիւնը: Կը հասկնամ: Իմ շեշտադրումը, սակայն, այդ կացութեան դրական պտուղներուն կ'երթայ:

Կը վերադառնամ մամոնայի հարցին. կը պատմուի, որ Մշոյ Ս. Կարապետ վանքի նշանաւոր վարդան վարդապետը յաճախ շեշտած է, որ իրեն ոսկի ու միայն ոսկի տան, որպէսզի կաշառքով թէ պետական հարստահարիչ կողմը, թէ ալ քրտական կեղեքիչ ուժերը զսպէ ու կշտացնէ: Ես կը խորհիմ, որ այսօր այդ չյատկացուող դրամ-ոսկին իսկ չի բաւեր «հայկական ուժերը» կշտացնելու համար:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ.- Քիչ մը աւելի ընդլայնենք վերելքը նշած նիւթերդ, առաջին հերթին գէթ անոնց առաջին երկուքը՝ արհեստավարժու-

թիւն ընդդէմ պատահականութեան. ձեռներեցութիւն եւ համարակութիւն: Արհեստավարժութիւնն ու պատահականութիւնը անպայման խոտոր չեն համեմատիր: Ձեմ գիտեր, պատահականութիւն ըսելով՝ ի՛նչ ունիս ի մտի, սակայն մամուլը, յատկապէս՝ օրուան անցուդարձերուն արձագանգող մամուլը, մեծ մասամբ պատահականութեան կախում ունի, ճիշդ ատենին ճիշդ տեղը գտնուելու նարտարութեան ալ: Քու նշած բառդ ժխտական իմաստ մը կ'ենթադրէ՝ ծրագրումի պակաս, հետուն նայելու, մեր յաջորդները ապահովելու թերացում եւ այլն: Համաձայն ես այս բանաձեւումի: Ձեռներեցութեան ու համարակութեան պակասն ալ այդ լոյսին տակ եթէ նայինք, կը հասկնանք, որ մեր թերթերը նոր ուղիներ որոնելու չեն ելած, գիտց-

ՄԱՆԹԱ ՄՈՆԻՔԱ

ՀՕՄ-Ի

«ԿԱՐՄ»

ՄԱՍՆԱԾԻԻՂԸ

Չերմօրէն
Կը Շնորհաւորէ
Իր Բոլոր
Անդամ-Անդամուհիներուն
Նոր Տարին եւ Ս. Ծնունդը,
Մաղթելով Երջանիկ
Տարիներ

Աւօ Տօնոյեան

եւ իր անձնակազմը
կը շնորհաւորեն իրենց
յաճախորդներուն եւ
բարեկամներուն
Նոր Տարին
եւ Ս. Ծնունդը

Donoyan
Insurance
Agency

1727 N. Vermont Ave., #207
Los Angeles, CA 90027
323-663-8541

«Ստեղծել Ընթերցողի Կարծիք, Ընթերցո՛ղ Ստեղծել»

ուած տարազներով ու մտեցումներով կը շարժին՝ վախճանով մտքը փորձել, քիչ մը անկախ արահետներէ ընթանալ: Կրնա՞ս նշել ձեռնարկեցութեան ու համարակազմութեան ոլորտներ կամ դաշտեր, որոնք իրրելու մարտահրաւեր կատարուի առնուելու են:

ԻՇԽԱՆ ՉԻՖԹՃԵԱՆ. - Պատահականութիւնը ինքնին ժխտական երեւոյթ չէ, սակայն երբ կանոնի կարգ անցնի, այսինքն հրաժեշտ առնենք կազմակերպ ու ծրագրեալ աշխատանքէն, որ արհեստավարժին գործն է, այն ատեն անք կը գործէ պատահականութիւնը: Եւ ներկայիս մենք կը գտնուինք աներակներու մէջ ճիշդ այդ պատահականութեան պատճառով: Փողոցէն եթէ մէկը անցնի, որ պատահամբ երեք բառ հայերէն գիտէ, ներս կը հրաւիրենք, խմբագրատուն, յաջորդ օրն ալ յօդուածագիր կ'ընենք զայն: Տեղւոյն վրայ մեր պէտքերը կը հոգանք, իբր թէ ծակ մը աւելի կը գոցենք այդ ձեւով, կը խորհինք: Այսպիսի առժամեայ լուծումներու պատճառով է, որ հոս հասած ենք: Այս երեւոյթը ինձի կը յիշեցնէ Հայաստանի կուլտուրայի, բայց ծակոտկէն պողոտաներն ու ճամբաները եւ զանոնք «կարկտնելու» արարողութիւնը: Երբ երեւանէն հեռանաս ինքնաշարժով, կը հասկնաս, թէ ինչի՛ կ'ակնարկեմ: Չենք մտածեր յօդուածագիր պատրաստելու գործընթացին մասին: Որո՞ւն հոգն է ատիկա: Այդ մէկը մամուլին գոր-



ծը չէ, կ'երեւի: Ծատ դրուագներ կան, երբ ասոր կամ անոր ուշադրութիւնը ճակատագրական դեր խաղացած է անձի մը յայտնաբերումին համար: Ա. Ալիքեան կը պատմէր, որ Պէյրութ, իր պատանութեան, օրին մէկը, պատահամբ (ահա՛ քեզի շնորհալի պատահականութիւն) փողոցէն անցնող ուսուցիչ մը, եթէ ճիշդ կը յիշեմ, «Ազգակ»-ի իր բարձրագոյն ընթերցումը լսելէ ետք համոզած է իր հայրը, որ փոխանակ զայն սափրիչի աշակերտ կարգելու՝ ճեմարանի աշակերտ դարձնէ: Այսօր ո՞վ կը զբաղի իր ուշադրութեան զգայարանը զարգացնելով:

Խմբագիրները, ուսուցիչները: Լռելը աւելի ճիշդ պիտի ըլլար հոս: Հարկաւ այդ ուշադրութեամբ թուրքեր չէ, որ պիտի պատրաստուին ու արտադրուին, որոնք գոց կը սորվին քանի մը նախադասութիւն, սխալ-մխալ, ու սորվածին կը գրեն: Այս ալ՝ ուրիշ հարց: Թուրք-ուսուցիչէն թուրք-աշակերտ կարելի է ակնկալել միայն:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ. - Այո՛, ինչպէս որ նիւթի մը ծանօթ ըլլալը չի՛ բաւեր զայն դասաւանդել կարենալու համար, մանկավարժութիւն ալ սորված պիտի ըլլաս, գրել գիտ-

նալը չի բաւեր լրագրող, հրատարակագիր կամ խմբագիր ըլլալու համար. իսկ դուն տակաւին կ'ակնարկես գրել չգիտնալուն ալ, որ աւելի՛ տխուր կը դարձնէ պատկերը:

ԻՇԽԱՆ ՉԻՖԹՃԵԱՆ. - «Գրել գիտնալ»-ը սխալ մըն է, սիրելի՛ վրէժ-Արմէն: «Գրել չգիտնալ»-ն է նախապայմանը լրագրող կամ գրող ըլլալուն այսօր: «Գրել չգիտնալ»-ուղ համար գնահատանքի ու դրամաշնորհի ալ կրնաս արժանանալ: Չեմ հեզներ: Այսօր կը քաջալերուի «ինչպէս որ կ'ուզես, կրնաս գրել» ծակ փիլիսոփայութիւնը նոյնքան ծակ փիլիսոփաներու կողմէ: Այլապէս կը խրտչին եղեր... լրագրողները: Հայերէնին չտիրապետող լրագրողը եւ գրողը ոչ միայն պէ՛տք է որ խրտչին, այլ պարզապէս գրիչը վար դնեն եւ ուրիշ գործերով զբաղին կամ ալ անյապաղ հայերէնի դասընթացքի հետեւին՝ իրենց գոյութեամբ մամուլը բռնաբարելու փոխարէն: Եթէ կ'ուզենք, որ մամուլը որակ փոխէ, ճամբաներէն գլխաւորը այս է: Իսկ անոնք, որոնք կը կարծեն, թէ «առանց սորվելու կարելի է... սորվիլ», թող մէյ մը ուրիշ լեզուներու պարագային կիրարկեն այդ յայտնագործութիւնը: Մեր հայերէն Blog-ը պատրաստ է օգտակար դառնալու, ամէն պարագայի, սորվիլ ուղղորդելուն: Բաց հրաւեր մը թող ըլլայ ասիկա բոլոր հետաքրքրուողներուն համար: →

Քալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութիւնը

Չերմօրէն կը շնորհաւորէ իր բոլոր անդամներուն եւ համայն հայութեան Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթելով երջանիկ օրեր

Կը Շնորհաւորենք Նոր Տարին Եւ Սուրբ Ծնունդը, Մաղթելով Ամենայն Բարիք 2020 ին

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաք. Եկեղեցի

Սան Ֆրանսիսքո

«Ստեղծել Ընթերցողի Կարծիք, Ընթերցո՛ղ Ստեղծել»

Ձեռներէցութիւնը յանդգնութիւն ու համարձակութիւն կը նշանակէ: Ես չեմ յիշեր օր մը ինքնաքննադատական տողեր կարդացած ըլլալ մեր «դասական» մամուլին մէջ, օրինակ, ձեռնարկի մը ձախողութեան մասին, ուր կազմակերպիչը իր ամբողջական ձախողութիւնը ընդունի: Կարելի՞ քան է: Անկարելի չէ, իրականութեան մէջ, նոյնիսկ օգտակար է, ըստ իս: Անշուշտ՝ ոչ ցուցադրական ձախողութիւն, ըսելու համար՝ «տեսէ՛ք, մենք ինքնաքննադատ ենք»: Կարգ մը պաշտօնաթերթերու ինքնագովական ինքնաներկայացումները ինծի կը յիշեցնեն Փաշիստական Գերմանիոյ «փրփականտ»ի մամուլը: Ի՞նչ նորութիւն, ի՞նչ փնտրուող:



Մամուլի մեր ներկայացուցիչները իրենց այս կամ այն տարեգարձը տօնելով՝ իրենց հնութեամբ կը պարծենան ու չեն անդրադառնար, որ այդ պարծանքին երկրորդ ու աւելի կարեւոր երեսը իրենց նորոգումի կարողութիւնը ըլլալու է: Այս կարողութիւնը արհեստագիտական արդիականացումը չէ հարկաւ, այլ կապը՝ մանաւանդ երիտասարդին ու նոյնիսկ պատանիին հետ: Մամուլը հսկայական դպրոց ու հաստատութիւն կրնայ ըլլալ, եղած է կարգ մը պարագաներու, ուր բոլոր տարիքի մասնակիցներ դեր կրնան ստանձնել: Ներկայիս այս իմաստով կատարուած ճիգերը տկարէն մինչեւ անբաւարարի սահմաններուն մէջ են՝ գործին արդիւնքէն դատելով: Քանի՞ երիտասարդ կարգալու նիւթ կը գտնէ հոն, որ պատճառ ունենայ զայն ձեռք առնելու: Հիմա պիտի ըսես՝ չկարգալը համաշխարհային երեւոյթ է: Ծա՛տ աղէկ: Եթէ այդպէս է, ուրեմն մեր բոլոր հարցումներուն պատասխանները միանգամընդմիջ տրուած են: Ինչո՞ւ կը զրուցենք ընդհանրապէս: Ինչո՞ւ կը յիտորտանք տեղի-անտեղի, որ մենք իբր թէ հոսանքին դէմ կը թիավարենք, որ էլք ու ճար չմնացած տեղը հնար կը գտնեն խենթերը: Ո՞ւր են այդ խենթերը: Միայն երգերո՞ւն մէջ: Թող մէջտեղ ելլեն: Ինչո՞ւ կը

պահուրտին: Կ'առաջարկես, որ ձեռներէցութեան ոլորտներ եւ դաշտեր նշեմ: «Ընթերցողի կարծիք»ի բաժին մը գոյութիւն չունի ընդհանրապէս: Գիտենք, որ ընթերցող գրեթէ չունի մեր մամուլը, սակայն խմբագրութիւն կոչուածը նաեւ ընթերցողին կարծիքը լսելու է ի վերջոյ, երբեմն հարցնէ, հետապնդէ, հրահրէ, կապ ստեղծէ սակաւթիւ ընթերցողներուն հետ: Ընթերցողի կարծիք հաւաքելով, օրինակ, կարգ մը նիւթերու մասին, գանձնք դէմ դիմաց դնելով, կարելի է «քննարկումի բեմ» ալ ստեղծել: Ահա քեզի երկու դաշտ՝ «ընթերցողի կարծիք» եւ «քննարկումի բեմ»:

ՎՐԷԾ-ԱՐՄԷՆ.- Ահա արդէն կ'ակնարկես այն չափորոշիչներուն, որոնք օտար մամուլի ամէնէն սովորական երեւոյթներն են: Անշուշտ կան բազմաթիւ այլ յատկանիշներ, որոնք բերք մը բերք կ'ընեն, իւրայատկութիւն կ'ընծայեն անոր, ընթերցող կը հրապարակեն: Քանի որ պատրաստութեամբ մարտարայնութեամբ, բովանդակութեամբ չափ ինծի համար անյնքան կարեւոր է թերթի մը տեսքը՝ էջադրութիւնը, տառատեսակը, տառաչափը, վերագրելու արուեստը, մկարագրողութեամբ, նաեւ՝

նիւթերու տեսականին: Եթէ այս բաներուն կարեւորութիւնը չտրուի, իրաւունք չենք ունենար ընթերցողի պակասին մասին խօսելու եւ այդ պակասը արտաքին ազդակներու վերագրելու: ԻՇԽԱՆ ՉԻՖԹՃԵԱՆ.- Համաձայն եմ արտաքին տեսքին կարեւորութեան, սակայն հարցերը շատ աւելի հեռու կ'երթան: Քսան տարի առաջ գունաւոր, փայլփլուն ու արդիականաչակ հանդէսներ սկսան լոյս տեսնել Պէյրութի մէջ, ուր ծանուցումներ յատուկ առաքելութիւն ունէին. կանացի կիսաբաց սրունք ու կուրծք յատուկ դեր ունէին հոն: Մօտեցումը տեղ մը հասկնալի է ու թերեւ ալ՝ օգտակար, բայց՝ ոչ բաւարար: Անոր միանալու է բովանդակութիւնը: Բովանդակութեան հոգ տանելը հասունութիւն եւ աշխատանք կ'ենթադրէ, ինքնաբերաբար տեղի չ'ունենար բովանդակութեան որակափոխումը:

ՎՐԷԾ-ԱՐՄԷՆ.- Այդ մասին չեմ կրնար 100 տոկոսով համաձայն չըլլալ քեզի: ԻՇԽԱՆ ՉԻՖԹՃԵԱՆ.- Ուրեմն, բովանդակութեան մասին ալ այս մէկ օրինակը տամ. մէկս դուն կրնաս բազմապատկել՝ քանի մը ձեւերով. առիթով մը նշմարեցի, որ հայ մամուլին ու ազգային կեանքին մէջ «նուիրականացած» անուններ, հայոց հողի իրականութենէն գինովացած, նոր իմն թուաբանութեամբ մը, 900 տարուան անկախութեան բացակա-

LARK MUSICAL SOCIETY
 542 ARDEN AVENUE · GLENDALE · CA 91203

LARK MUSICAL SOCIETY

Լաւագոյն Մաղթանքներով
 Կը շնորհաւորէ բոլորի
 Նոր Տարին
 Եւ Սուրբ Ծնունդը

Վասպուրականի Հայրենակցական Միութիւն

Կը Մաղթենք, Որ
 Քալիֆորնիահայութիւնը
 Նոր Տարին Դիմաւորէ
 Միասնականութեամբ,
 Համախոհութեամբ Եւ
 Հանդուրժողութեամբ

«Ստեղծել Ընթերցողի Կարծիք, Ընթերցո՛ղ Ստեղծել»

յութենէ ետք միայն Հայաստանի Հանրապետութեան հռչակման վրայ շեշտ կը դնէին. աս բոլորին մէջ սխալ բան մը չկայ. հոգ չէ, թէ մենք մեր հաւաքական յիշողութեան մէջ գիտենք, որ Առաջին Հանրապետութեամբ «Հինգ դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացան»: Կարծեմ հասկնալի է, որ կիլիկեան ամբողջ ժամանակաշրջանը հաշուի չէին առնել այդ իմաստունները, որովհետեւ կիլիկիան «Հայրենի հող» չէ, հայկականացած օտար հող է: Այդ իմաստուն տգէտները չեն գիտել, որ կիլիկիան ամբողջ շրջանի քրիստոնեաներուն հովանաւորութիւնը իր վրայ առնելէ անկախ՝ բերած էր Հայութեան քաղաքական, մշակութային ու աստուածաբանական նոր դիմագիծ, իր բոլոր անպատեհութիւններով ու առաւելութիւններով: Հետեւաբար կիլիկեան անկախ թագաւորութիւնը Հայրենի հողի վրայ չըլլալուն համար չյիշատակելը, հայ քաղաքական կեանքի բացակայութիւնը 600էն 900ի բարձրացնելը պատմութեան հանդէպ ոճիր մըն է:

ՎՐԷԺ-ԱՐՄԷՆ.- Եւ ամօ՞ք մը. կարծես հպարտութիւն մը, բարեմիշ մը ըլլար 300 յաւելեալ տարիներ առանց անկախ պետականութեան մնացած ըլլալը:
ԻՇԽԱՆ ԶԻՖԹՉԵԱՆ.- Քանի որ հայ մամուլին մէջ կ'արտայայտուին այս եւ նման տգիտութիւններ, հարկ է որ հոն իրենց վիճարկու մը տեղի ունենայ, ինչ որ սակայն

անկարելի է, որովհետեւ ո՛չ վիճարկումի գետին կայ, ո՛չ ալ մեծագոյնի միջնադարեան մտածողութենէն դուրս եկած ենք:

Հեքիաթի պէս պատմեմ նաեւ հետեւեալը, որ անշուշտ իրականութիւն է: Թերթ մը կը կատարէ ծանուցումը երկու հատորներու լոյս ընծայման, առաջինը կը պատկանի Վարդգէս Ահարոնեանի գրչին, իսկ երկրորդը՝ ոչ: Սակայն քանի որ երկու հատորներուն լոյս ընծայումը միաժամանակ տեղի ունեցած է, լուրը ընդօրինակող այլ մամուլ մը, «առանց խելքը աշխատցնելու», ինչպէս կ'ըսենք, երկու հատորներն ալ Ահարոնեանին կը վերագրէ, ինքն իրեն որոշում կու տայ եւ Ահարոնեանը կը դարձնէ, մէկի տեղ, երկու հատորի հեղինակ...
Այս ալ պատահական է, պիտի ըսես հարկաւ, ինչպէս՝ մեր գոյութիւնը, եթէ ուզես, սակայն այս երեւոյթները ցոյց կու տան, որ մենք մեզ ամէն օր լրջութեան կը հեռացնենք:

Արտաշէս Զիլինկիրեան եւ Պօղոս Սնապեան երկարաշունչ խմբագիրներ եղած են, եւ մասամբ նաեւ իրենց հետապնդող շունչին արդիւնքն են իրենց հրատարակած հանդէսները: «Հայրենիք»ի եւ «Բագին»ի ծանօթ ընթերցողները գիտեն, թէ ինչի՛ մասին կը խօսին: Ռուբէն Գարբինեանի նամակները գիտապաշտօնացած են, թէ մարդը ինչպիսի՛ հետեւողականութեամբ աշխատակից հրաւիրած է: Ինծի ծանօթ են անձնական նամակներէդ նաեւ քո՛ւ խմբագիրի նախանձախնդրութիւնը, հետեւողականութիւնը, աշխատակիցներուդ հետ անձնական կապերը: Ես կը խորհիմ, որ մամուլ-ընթերցող կապ մը ներկայիս կը բացակայի, այսինքն՝ հիմնական հարց մը: «Անկոխ արահետ»ի դեռ չմտեցանք, առաջարկ է պարզապէս ստեղծել ընթերցողի կարծիք եւ անկէ առաջ ալ՝ ընթերցող: Թուիմակի ու «փրփակականտիստ»ի մասին չէ խօսքս հարկաւ:

...Բայց ես քեզի հարցում մը ունիմ. այսքան լրջութիւն շատ չէ՞ մեր մամուլին համար, ուր յաճախ ձաբտուք կը կարդամ՝ իբրեւ յօդուած: «Ձախ» ձեռքով, հապճեպ գրուած յօդուած մը «եղածին պէս» լոյս կը տեսնէ այս կամ այն թերթին մէջ: Ստացողը յաճախ չէ իսկ կարդացած յօդուածը: Ասիկա համատարած անփութութիւն մըն է, որ շատ բնական դարձած է, եւ ասոր մասին խօսող ոչ թէ չկայ, համաժողովները ազգային, արժեհամակարգային եւ չեմ-գիտեր-ինչային հարցերով զբաղած են, այլ ըսուածը տգէտ արհամարհանքի իսկ չ'արժանանար: Մենք կ'ապրինք տարբեր կողմերու վրայ եւ կապ չունինք իրարու հետ: Դեռ քանի մը օր առաջ կը կարդայի յօդուած մը, ուր քանի մը նախադասութեան մէջ նոյն բառը կը կրկնուէր չորս անգամ, չորս անգամ ալ՝ սխալ ուղղագրութեամբ: Յօդուածագիրը հայերէնի ուսուցիչ է: Պատահական է, պիտի ըսես: Համաձայն կ'ըլլայի այդ տեսակ պատահականութեան, եթէ ոչ թէ չորս, այլ նման քառասուն օրինակներ մեր աչքին առջեւ չտողանցէին ամէն օր, ամէն տեղ, ամէն ժամ: Ես անձամբ ո՛չ այդ պատահականութեան լուռ վկան, ո՛չ ալ այդ «կղզի»ին բնակիչը կը դառնամ: Մեր ազգային գործիչները, քառասուն տարի առաջ, միաժամանակ մտաւորականներ էին: Մեր քաղաքական կեանքի հիմը դնողները յատկապէս ուսանողական շարժումները եղած են անցեալ դարերուն: Այսօրուան ազգային գործիչներէն ոչ թէ մտաւորական, այլ հայերէնի մասնագէտ ակնկալելը չուայլութիւն է: Պիտի գոհանա՞նք ափ մը մարդոց ներկայութեամբ: Պիտի գոհանա՞նք հայ մամուլի ներկայ վիճակով:

Յ. Օշական առիթով մը, իսլամացած հայու մը պարագան պատմուածքով ներկայացնելէ ետք, եզրափակիչ եւ հետտրական հարցում մը կ'ընէ. «Բայց ինչպէ՞ս թաղել, ո՞ր հողքին ներքեւ տաճկութիւնը մեր հոգիներուն, մեր, այսօրուան հոգիներուն, որոնք աւելի սեւ եղան, քան հաւատք փոխողներունը»: Հոգիներու տաճկացումը Օշականէն ասդին թափով կը շարունակուի մեր մէջ, գրեթէ ամէն ճակատի վրայ (մամուլը անոնցմէ մէկն է), եւ անոր թաղման աշխատանքը արագացնելու առաքելութիւնը սրբազան է ինծի համար:

«Դաւթեան-Մարիամեան»
Կրթական
Հաստատութիւն
Davidian-Mariamian
Educational
Foundation
Սրբազին
Մաղթանքներով
Կը Շնորհաւորենք
Ձեր Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը

Տէր Եւ Տիկ.
Տիգրան Եւ Մակի
Պապիկեան
Եւ զաւակները
Նոր Տարուան
Եւ Ս. Ծնունդի Առիթով
Կը Մաղթենք, Որ
Պահանջատիրական
Մեր Պայքարը
Իր Վերջին
Վճռական Փուլին
Հասնի

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ԱՍՊԱՐԷԶ»Ի 111ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

10,000–15,000

ACF Dro 15,000

Armen-Art, Inc. – Nazareth Kevonian 10,000

Anonymous 10,000

5000

Barigian Revocable Trust

Closet World

1000–2500

Dr. Seta Panossian 2,500

Razmig & Taleen Chahmelikian and Family 2,000

Salpi Pakradouni 1,500

Kasparian and Aghjayan Families 1,111

ARSS Flooring – Raffi Ohanian 1,000

BEC Elect. Corp. – Mardig Bouldoukian 1,000

Berdj Karapetian 1,000

Hamlet & Greta Chraghchian 1,000

Holy Martyrs Armenian Apost. Church 1,000

Dr. Murat & Flora Ookhtens 1,000

Sinianian Development Inc. 1,000

Alice Navasargian 1,000

ACF Lernavayr 1,000

415–555

Harout & Lena Soghomonian 555

ACF Arshavir Shiragian 500

Airplus Engineering Consultants, Inc. 500

Alec and Dr. Alenoush Baghdasaryan 500

ARS Regional Executive 500

Dikran & Maggie Babikian 500

Haig and Argine Kelegian, Michelle Shrikian and Families 500

Haigoush Kohler 500

Herman Hintiryan 500

Meridian Foundation 500

NK Supply, Inc. – Ara Khachikian 500

Raffi Kradjian 500

St. Vincent Jewelry Center 500

Vartan & Sonia Fundukian 500

Suren Seropian 415

200–333

ACF Aram Manoukian 250

ACF Karekin Njdeh 250

Armenian Missionary Assoc. of America 333

ARS LA Mayr Chapter 250

AYAC 250

Dr. Haig & Sylvia Minassian 250

Friend of Asbarez 250

Garbis & Maida Bezdjian 250

Hamazkayin Regional Executive 250

Raffi Cultural Association 250

Rafi & Arous Melkonian 250

Stepan & Vana Boyadjian, Hrayr & Melina Boyadjian 250

Vahan Hatoutian 250

Yerevan Ohannessian & Family 250

Abraham & Seta Chorbajian 222

Armen Garo Haytayan 222

Dr. Vahaken Arslanian 222

Garbis & Zovak Karamardian 222

Keghanoush Baghdasarian 222

Shavarsh Chrissian 222

Simon Simitian 222

Varouj & Hranoush Aghajanian 221

ACF Rosdom 200

Gaidzag & Zovig Zetlian 200

Hagop Ashjian 200

Hrair & Asdghig Tejirian 200

In memory of Jacques Hagopian 200

Khachadour & Alice Tankian 200

Mangasar Fermanian & Sosse Fermanian 200

Ronald & Goharik Gabriel 200

Roubina Pakradouni 222

Sam & Annette Apelian 200

Sarkis Pastry 222

Sossi & Karnig Gabriel 200

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ԱՍՊԱՐԷՋ»Ի 111ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

- | | |
|---------------------------------------|--|
| Vahakn Savoulian 200 | Donoyan Insurance Agency, Inc. |
| Vahe & Aida Hayrikian 200 | Dr. Armen & Aznive Goenjian |
| Dr. Onnig & Kristine Keshishian 220 | Dr. Avo & Vanna Babian |
| | Dr. Carmen Ohanian |
| 120-150 | Dr. Jirair & Meline Roubinian |
| Dr. Vartan Tachdjian 150 | Dr. Mike & Jackie Hagopian |
| Drs. Christopher & Laurie Chalian 150 | Dr. Raffy & Vicky Hovanessian |
| Khachig & Rosemary Janoyan 150 | Elizabeth Chouldjian |
| Mardig & Arpy Keushkerian 150 | Emma Oshagan |
| Mardig Chanchanian 150 | Fr. Vicken Vassilian |
| MGM Auto Body – | Garabed & Alice Krumian |
| Raffi & Lucine Mardirossian 150 | Garo & Nirva Kamarian |
| Yeprem & Varsenik Baghboudarian 150 | Garo & Salpi Agopian |
| Zare David Makasjian 150 | Gary & Maco Setrakian |
| Elise Yacoubian 125 | Glendale Mobil Service |
| Rita Hintlian 125 | Group Services – Kahren Beniasians |
| Varoujan Kalenian 125 | Hagop & Marilyn Tchakerian |
| Falafel Arax 120 | Hagop & Aida Dakessian |
| | Hagop & Nazel Khatcherian |
| 111 | Haig & Sona Bostanian |
| Abraham & Sossy Poladian | Houri Tavitian |
| Abraham Karabajakyan | Hourig Kalebdjian |
| Aida Babayan-Alrayes | Hrant Dostounian |
| Alfred & Rima Boghossian | Hratch & Dzaghig Kahdian |
| Ankine Chemsian | Hrayr & Lucie Sabounjian |
| Antranig & Annie Harboyan | Hrayr & Sona Avedian |
| Apo & Jeanette Yessayan | In Loving Memory of |
| Ara & Maro Papazian | Dr. Misak & Hourig Abdulian |
| Ara & Nevart Chalian | In Memory of Khajag Sarkissian |
| Arpik Ananian | Jenny’s Consulting Services – Jenny Aprahamian |
| Arpine Garboushian | John & Marina Kossakian |
| ARS Anahid Chapter | Joseph Megerdichian |
| Arsen & Leone Mooradian | Knar & Rita Manjikian |
| Arshag & Madeleine Shahinian | Krikor & Kohar Sulahian |
| Arto Keuleyan | Krikor & Magda Hovsepien |
| Aznive Sabonjian | Levon & Irene Keshishian |
| Bedros & Mary Garabedian | Levon Tateossian |
| Boghos Kupelian | Madlene Mardirossian |
| Daglian Law Group | Mako Mgrdichian |

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ԱՍՊԱՐԷՋ»Ի 111ՐԴ ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Maral Anjaroglian	100-110
Marie-Rose Abousefian & Armen Shamamian	Armenouhi Aznavuryan 110
Maro Altibarmakian	ACF Papken Seuni 100
Mashdots College – Dr. Garbis Der Yeghiayan	Alex Andranian 100
Meline Najarian	Avedis & Suzanne Kelejian 100
Mesrob & Vartouhi Chelebian	Friend of Asbarez 100
Michael Hatzbanian	In Memory of Eujenie Bartoumian 100
Michel & Liza Minassian	Katia & Vartouhi Kuserian 100
Minas & Taline Hasholian	Marie Sarkissian 100
Minas Vayedjian	Melik Hovagimian 100
Nairi & Khatoune Pakradouni	Panos Titizian 100
Nora & Henry Sahagian	Sara Chitjian 100
Nvair Gaboudian	Sarkis & Manoushag Yegenian 100
Ohan & Artemis Bedros	Sona Tchobanian 100
Org. of Istambul Armenians	Toros & Anni Keuseyan 100
Hilda & Raffi Santikian	Varoujan & Haigo Barsamian 100
Raffi & Ramona Ohanian	Vehik Gabrielian 100
Randy Baloian	Yervant & Josephine Berejiklian 100
Sarkis Tatikian	Zareh & Annie Chalian 100
Sarkis & Elizabeth Dervishian	Zaven & Mayra Abikian 100
Sarkis & Lousin Aghazarian	
Sarkis & Suzy Tarpinian	10 - 50
Sarky Mouradian	Anoush Babayan 50
Shant & Lisa Barseghian	Arshalus Samarghachian 50
Shirak & Seta Khojayan	Hourie Torikian 50
Simon & Anahed Kolian	Hygo Ohanessian 50
Sirop & Alice Ghazourian	Kirkor Kohayan 50
Stepan & Anita Altounian	Loussik Derderian 50
Superior Electric Motor Service, Inc.	Nazareth & Helen Khdiguian 50
Vahe & Georgette Kradjian	Sarkis & Ani Manoukian 50
Vahram & Knar Kortoshian	Taniel & Adrine Tufenjkian 50
Varant & Christine Hovnanian	Zaven & Halina Berberian 50
Vartan & Clare Gregorian	Markrid Barsamian 30
Vartan Yeghiayan	Hermineh Yahinian 25
Vartkes & Grace Ghazarian	Jirair Zmrukhtyan 25
Vartkes & Sona Apelian	John & Laure Abrahamian 25
Clara Melkonian	Joan Quinn 20
Yaproohie Dancer	Anahit Kupelian 11
Zaven & Sonia Akian	

**Garo and Sossy
Eshgian
Nareh and Koko**

**May You and Your Family
Enjoy All the Warmth
At This Festive Season.**

*Have A Wonderful
Merry Christmas
And A Happy New Year
Filled With Love
And Blessings.*

Organize your Home

- custom closets
- home offices
- pantries
- wall beds
- garage flooring
- sliding glass doors

- garage cabinets
- laundries
- hobby rooms
- wall organizers
- wall units
- sliding mirror doors



Call for a free in home design consultation and estimate

1-800-452-5673

www.closetworld.com

closet world®

Ասպարեզ



ԳՐԻՉԸ
ՍՈՒՐԵՆ
ՅԶՕՐԷ



«Շիրակ» Կեդրոնը Եւ Terchoonian Home Children's Foundation-ը Կը Շնորհաւորեն ձեր Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը

Քաղաքական մշակոյթի եւ համաձայնութիւններու
 զարգացման «Շիրակ» կեդրոնը
 հիմնուած է 2006ին, Գիւմրիի մէջ

Կեդրոնին հիմնական առաջադրանքներն են

- Աջակցիլ քաղաքական մշակոյթի ձեւաւորման ու ամրապնդման
- Երիտասարդութեան առաջնորդութեան հմտութիւններու զարգացում
- Չանագան հասարակական, ընկերային եւ քաղաքական խմբաւորումներու միջեւ համախոհական միաւորումներու
- Քաղաքացիական ազատութիւններու իրաւունքներու պաշտպանութիւն
- Դասընթացքներու եւ սեմինարներու կազմակերպման միջոցով քաղաքացիական կրթութեան ծաւալում

2019ին կեդրոնին միջոցաւ կատարուած են հետեւեալ ծրագիրները.

- Անապահով ընտանիքներու դպրոցահասակ երեխաներու օգնութիւն
- Վառելափայտ տրամադրուած է անապահով եւ անօթեւան ընտանիքներու
- Աջակցութիւն ժամանակաւոր կացարաններու մէջ բնակող բազմազաւակ ընտանիքներու եւ միմակ տարեցներու



Please make your
 taxable donations
 directly to
 Shirak Centre
 via their website
<https://shirakcentre.am/hy/>
 or
 Terchoonian Home
 Children's Foundation,
 21700 Greenfield Rd
 Suite 324,
 Oak Park, MI 48237



This page is sponsored by MR. & MRS. HERMAN HINTIRYAN

Կիլիկիոյ Սիւ Մայրաքաղաքի Աւանդութիւններն Ու Կրօնական Բարբերը

Համադրեց՝ ՆՈՒՊԱՐ ՏԷՄԻՐՃԵԱՆ

Անցեալին առիթը ունեցած եմ գրելու Սիւի, սիսեցիներու, Սիւի պատմական կաթողիկոսութեան, կաթողիկոսութեան Սիսէն Անթիլիաս փոխադրութեան մասին եւ այլն: Այսօր պիտի անդրադառնանք սիսեցիներու ամուսնական դանազան աւանդութիւններուն, կրօնական սովորութիւններուն՝ օգտուելով «Յուշամատեան»-ի կայքէջէն, որոշ կրճատումներով:

ԽՕՍՔԿԱՊ

Սօսքկապ եւ յետագային ամուսնութիւն, նաեւ տեղի կ'ունենայ օրօրոցէն կամ մանկապատանեկան շրջանին, եւ այդ մէկը կը կոչուի թրքերէնով՝ «Պէշշիկ քերթմէ», դժբախտաբար սիսեցիներ եւ Կիլիկիոյ կարգ մը ուրիշ քաղաքներու հայ բնակչութիւնը



Վարդավառ եւ Շողակաթ (Շահկարէ) Տէմիրճեաններ, 1925թ.

իրենց գաւառաբարբառը չեն ունեցած ու մնացած են թրքախօս: Կ'ըսուի թէ «Պէշշիկ քերթմէ»-ն կը կնքուի դանակով օրօրոցին վրայ նշան մը դնելով: Այսպիսի կանուխ ամուսնութիւնները տեղի կ'ունենան իրար շատ մօտ, յաճախ ունեւոր եւ փոխադարձ յարգանք վայելող ընտանիքներուն միջեւ: Այդ օրէն ընտանիքները կը գտնուին խնամիական յարաբերութիւններու մէջ, նոյնպէս տղան եւ աղջիկը՝ ապագայ փեսացուն ու հարսնցուն: Սակայն համեմատած ուրիշ շրջաններու, այս մէկը հազուադէպ սովորութիւն եղած է եւ այս ձեւը աստիճանաբար անհետացած է Սիսէն:

Ըստ աւանդութեան, աղջիկներուն համար ամուսնութեան յարմար տարիքը նկատուած էր 15ը, իսկ տղաներուն համար՝ 18էն 20ը: Սիսեցի աղջիկները իրենց ծնողներուն կողմէ կը դաստիարակուէին բացառապէս որպէս տնային աշխատանքներու կին եւ ապագայ մայր: Մինչեւ ամուսնութիւնը անոնք կը թրծուէին տնային գործերու համար՝ լուացք, կար, խոհանոցային

գործեր, կով կթել, խնոցել (կաթը ծեծել կարագ հանելու համար), ինչպէս նաեւ մանուկները լողցնել, օրօրել, լաթերով փաթթել եւ այլն: Աղջիկներուն արգելուած էր առանց ծնողքին թոյլատուութեան տունէն դուրս ելլալ, միայն տօնական եւ Կիրակի օրերուն կրնային եկեղեցի երթալ՝ մասնակցելու եկեղեցական արարողութիւններուն: Այդ արարողութիւնները կարելոր նշանակութիւն ունէին յատկապէս երիտասարդներուն համար. գեղեցիկ, տօնական հագուստներով զարդարուած երիտասարդ աղջիկներ եւ տղաք կը հաւաքուէին եկեղեցիին բակը, ինչ որ առիթ կու տար իրար տեսնելու ու ծանօթանալու, սակայն ամուսնութեան վերաբերեալ բոլոր բանակցութիւնները պէտք էր վարէին անոնց ծնողները:

Ամուսնութիւնները իրականացնելու մէջ մեծ դեր ունէին նաեւ միջնորդ կիները, որոնք սովորաբար փորձառու եւ ճարտասան կիներ կ'ըլլային, անոնք կ'այցելէին հարսնցուն տունը եւ բանակցութիւններ կը վարէին անոր ծնողներուն հետ: Ապա փեսացունին ծնողներուն հետ կ'այցելէին հարսնցուն տունը եւ կը ծանօթանային աղջկան շարժուածեւորուն, գործելակերպին ու բարեկրթութեան, որպէսզի հասկնային թէ արդեօք աղջիկը կը համապատասխանէ՞ր իրենց ընտանիքին թէ ոչ: Սովորութիւն կար, որ աղջկան ծնողները անմիջապէս չհամաձայնէին, խօսկապի համար եկած հիւրերը հարկադրուած քանի մը անգամ կրկնէին իրենց այցելութիւնները: Առնուազն երեք անգամ կը կրկնէին այցելութիւնները, ան ալ քահանայի ու ազգեցիկ մարդոց մասնակցութեամբ, մինչեւ որ աղջկան ծնողները համաձայնութիւն տային: Երբ հիւրերուն սուրճը կը հրամցուէր առանց շաքարի, ապա այդ կը նշանակէր մերժում, իսկ անոյձ սուրճի պարագային՝ համաձայնութիւն: Հիւրերը մինչեւ վերջնական խօսքը չլսէին, սուրճը չէին վերջացնէր: Համաձայնութեան պարագային՝ սուրճը կը հրամցուէր հարսնցունին ձեռքով:

ՆՇԱՆՏՈՒՔ

Սօսքկապին կը յաջորդէ նշանտուրը, որ սովորաբար տեղի կ'ունենայ Կիրակի երեկոներուն: Փեսացունին ընտանիքին կողմէ կը պատրաստուի օշարակ, եւ երկու կողմերուն ազգականներն ու բարեկամները կը հաւաքուին նշանտուրի արարողութեան, շատ մը պարագաներուն նշանտուրը տեղի կ'ունենայ աղջկան տունը, օշարակով կը հիւրասիրեն ներկայ շնորհաւորողները եւ յաջորդօրը օշարակ կը զրկեն չմասնակցողներուն: Մինչեւ 1900ական թուականները հարսնցուն ու փեսացուն իրաւունք չունէին ներկայ գտնուելու



նշանի օրհնութեան, սակայն 1900ականներէն յետոյ զոյգին կը նստեցնէին տան մէջտեղը, իսկ ծնողներն ու հարազատները իրենց շուրջ: Քահանան ստանալով երկու կողմերուն համաձայնութիւնը՝ կը կատարէ օրհնութիւնը ու իր ձեռքով կը կատարէ մատանիներուն փոխանակումը: Սակայն 1900ականներու առաջին տասնամեակի վերջաւորութեան, սովորութիւնը փոխուելով, հարսնցուն ու փեսացուն իրենց «Այո»-ն ըսելէ ետք սկսած են փոխանակելու մատանիները: Մատանիներու փոխանակման արարողութեան կը յաջորդէ քահանային օրհնութիւնն ու աղօթքը: Ծնորհաւորանքներու ընթացքին նաեւ կը հրամցուի օշարակը, ու այս առիթով փեսացունին ծնողները նուէրներ կու տան քահանային, ժամկոչին եւ ազգային հաստատութիւններուն:

Փեսացուն տունը կը սկսի երգն ու պարը, խրախմանքն ու գինարբուրը: Այս ուրախ առիթով փեսացուն հարսնցունին կը նուիրէ արծաթեայ կամ ոսկեայ ապարանջան, ինչպէս նաեւ ոսկի մատանի, օղ, ոսկեդրամ, կօշիկ եւ գուլպա, իսկ հարսնցունին ծնողները փեսային կը նուիրեն ոսկի մատանի եւ ժամացոյց:

Նշանտուրէն յետոյ տեղի կ'ունենան շնորհաւորական այցելութիւններ: Տօնական օրերուն խնամինները գիրար կը հրաւիրեն հիւրասիրութիւններու եւ ընթրիքի: Կեսուրը, կեսուր հայրը եւ մօտ ազգականները նուէրներով կը հիւրընկալուին հարսնցունին կողմէ, իր կարգին հարսնցուն պարտաւոր է մէկիկ-մէկիկ անոնց ձեռքերը համբուրել: Ամենայատկանշականը այն է, որ ներկաները հետեւելով փեսացունին ծնողներու օրինակին՝ փոխառութիւն-

ներ կ'ընէին, իսկ փեսացունները կը վերադարձնէին մասնակցելով՝ այդ գումարները նուիրողներու հարսանիքին: Նշանտուրի արարողութեան սկսեալ, նշանուած հարսնցունին արգելուած է խօսիլ փեսային ու իր ազգականներուն հետ, իսկ հարսնցուն ու փեսացուն, նոյնիսկ երկար ժամանակ նշանուած ըլլալով, իրար հանդիպելու կամ այցելելու հնարաւորութիւն չունէին: Այս կը համարուէր առաքինի քայլ:

ՀԱՐՍԱՆԻՔ ԵՒ ՊՍԱԿ

Հարսանեկան արարողութիւնները կը սկսին հարսնցունի հագուստը ձեւելու արարողութիւններով: Գերձակը մինչեւ որ զանազան նուէրներով չզոհանայ, չի սկսիր իր գործը՝ անընդհատ կրկնելով, թէ «մկրատը չի կտրեր»: Հագուստի իւրաքանչիւր մասը ձեւելէն յետոյ կը սկսին բարձրաձայն բարեմաղթանքներ: Մօտ հարազատները երթալով հարսնցուն տունը՝ իրենց հետ կը տանին չուշմայի իւղով պատրաստուած հրուշակ, բերուած անուշեղէններէն հարսնցուն իրաւունք չունի համտեսելու, քանի որ ըստ աւանդութեան, այդպիսով կը խուսափէր դժբախտութենէ: Որպէսզի փեսան ալ այդ արարողութեանը մասնակցի, կիներէն մէկը կը կերակրէ գինք այն հացի կտորով, որ նախապէս քսուած է հարսնցունին երեսին:

Պսակի բուն արարողութեանը կը նախորդէն բազմաթիւ ծէսեր, որոնք սիսեցիներու հարսանեկան արարողութեան կարելոր մասը կը կազմէն: Հարսանիքէն շաբաթ մը առաջ, երգ ու պարով կը պատրաստէն հարսանեկան հացը: Բոլոր ծանօթները, բարե-

ASBAREZ

Address: 1203 N. Vermont Ave.,
Los Angeles, CA 90029
ASBAREZ (ISSN 0004-4229)
Armenian Daily Newspaper published daily except Sundays, Mondays and the days following Federal Holidays and Armenian Holidays.

Published by: Armenian Media Network,
1203 N. Vermont Ave., Los Angeles, CA 90029.

Periodicals postage paid at Los Angeles, CA. POSTMASTER: Send address changes to: ASBAREZ, 1203 N. Vermont Ave., Los Angeles, CA 90029.

Address Changes should be sent to the Circulation Desk five days in advance.
ANNUAL SUBSCRIPTION RATES:
PLEASE CALL (323) 284-9222
United States: \$150 for Daily, \$80 for Weekend Edition.
Canada and Mexico: Air mail \$250, Weekend/English Edition \$150.
Other countries: Air mail \$500, Weekend/English Edition \$250.

ADVERTISING RATES:
Display Ads: (323) 284-9222
Display: Rates will be given upon request
Classified Ads: (323) 284-9222
Classified: \$60 for 6 consecutive days



Կիլիկիոյ Սիւ Մայրաքաղաքի Աւանդութիւններն Ու Կրօնական Բարբերը

Կամներն ու դրացիները կը դրկեն «չեւիրմէ» կակուղ սաճի հաց, որպէսզի իրենց մասնակցութիւնը ունենան այդ արարողութեանը: Ի դէպ Յը «չեւիրմէ» հաց փեսայի տունէն կը դրկուի հարսնացուին տունը, իսկ 10ը «չեւիրմէ» հաց հարսնացուի տունէն կը դրկուի փեսային, վերածելով կենտ, անգոյգ թիւը՝ գոյգի: Տօնական օրերուն, ինչպէս Մանդեան ու Ջատիկի տօներն են, փեսայի ընտանիքը կերակուրներով լեցուն ափսէ մը կ'ուղարկէ հարսնացուին տունը, որը «սինի տօնաթմբը»՝ ափսէ զարդարել կը կոչուի:

Փայտ բերելու գիշերային սովորութիւնը, որ կը կոչուի «տիւլին օտընը»՝ «հարսանիքի փայտ», սխեցիներու հարսանեկան արարողութիւններուն նախորդող երեւոյթ մըն է: Փեսայի բարեկամներէն հինգ- վեց հոգի այծով մը կամ ուրիշ ուտելիքներով կ'երթան գիշերով փայտ բերելու, փայտուն գոյներով զարդարուած եւ փայտով լեցուն բեռներով ձիերէն մէկը կը տանին փեսային տունը, միւսը՝ հարսին:

Ոտղերով ընթացող հարսանեկան խրախճանքները շատ անգամ կը սկսին Կիրակի օրերը, երբեմն ալ՝ Հինգշաբթի, եւ կը շարունակուին մինչեւ յաջորդ Կիրակի օրը, այսինքն պսակի օրը: Առաջին երկու գիշերները կը սկսին մատանիի խաղով, «եւրգիւք», երբ քանի մը տասնեակ հոգի կը բաժնուին երկու խումբի եւ կը խաղան կանխիկ գումարի վրայ: Ափսէի վրայ կը շարէն սուրճի սկահակները, որոնցմէ մէկուն տակ կը պահուի մատանին: Յաղթողը պէտք է գուշակեր, թէ ո՞ր սկահակին տակը կը գտնուի մատանին: Եթէ յաղթող խումբը մէկ անգամէն գուշակէ մատանիին տեղը, ապա այն կը կոչուի «տէստէ կիւլ»՝ «խուրձ մը վարդ», որ այս պարագային կը խորհրդանշէ յաջողութիւն, խաղը կրնայ տեւել ժամեր: Յաղթողը շահած գումարով կը գնէ քանի մը այծ, որոնցմով կը պատրաստեն օրուան խորոված: Մատանիի խաղէն յետոյ, կէս գիշերին փեսային տունէն խումբ մը՝ խմիչքներով բեռնաւորուած կ'երթան հարսին տունը՝ հարսը գովաբանելու ու միասնաբար քեֆն ու պարը շարունակելու:

Յաջորդ օրը հանդիսաւոր թափօր մը հարսին տունը կը տանի գիրուկ այծ մը, «ղընա տաւարը», հարսին յատկացուած հինան եւ հարսանեկան հագուստը: Նոյն տան մէջ ցուցադրութեան կը դրուին հարսին օժիտը՝ «ճեհիգ», իսկ աղջկան պարագաները կը յայտարարէն նուիրատուներուն անունները: Իւրաքանչիւր հարս պարտաւոր է ունենալու անտուկ մը, մեծ հայելի եւ բաւականաչափ հագուստ ու սպիտակեղէն: Հարսին օժիտը նաեւ կ'ամբողջացուի ազգականներու ու բարեկամներու նուէրներով:

Ուրբաթ օրը փեսային տունը կը կանչուի սափրիչը: Փեսան եւ կնքահայրը սկիզբը կը սափրուին, ապա մնացած ներկայ երիտասարդները: Պարտադիր կը համարուի սափրիչին դրամական նուիրատուութիւն ընել, որ կը դրուի անոր ափսէին մէջ, այդ աճուրդի ձեւով հարսանեկան արարողական մըն է, ու ներկա-



Շուրջ 60 Կարուայ հնութիւն ունեցող խմբանկար մը, որ կը ներկայացնէ երեք փարբեր սերունդներ, երեք սերունդը՝ ծնած Սիսի մէջ, իսկ միւսները՝ գաղթականութեան ճամբուն վրայ, ներառեալ՝ ես:

Սիւ ծնած սերունդը, անշուշտ ուրիշներ ալ կան, որ սոյն լուսանկարի մէջ չեն, իրենց առաջին ապագային պարականութիւնը նկատած են Սիսը վերականգնել Պուրճ Համուրի մէջ՝ անուանելով «Նոր Սիս», ու իրենց առաջին պարականութիւնը սեպած են կանգնեցնել Ս. Սարգիս եկեղեցին ու Ապագային Լուսինեան վարժարանը, «Մ. Ապիւրեան» մանկապարտէզը, ապագային «Մ. Ապիւրեան» կեդրոնն ու ակումբը: Անշուշտ պարականութիւնը երկար է, քանի մը փողով կարելի չէ ներկայացնել, կը փորձեն յետագային գրել այդ մասին: Ձախէն աջ ուրքի՝ Հայկակուն Յակոբեան, Թորգոմ Աղա Սարգիսեան, Կարապետ Սիսիարեան, Արշակունի Ռաֆայելեան, Սարգիս Տէմիրճեան, Եփրեմ աբեղ. Թապագեան, Լիբանանի թեմի առաջնորդ Տաճար արք. Ուրֆայեան, Պուրճ Համուրի քաղաքապետ Յակոբ Աշճեան, Ելմիկ վրդ. Փալայեան, Յովհաննէս քհնյ. Պողոսեան, Բակուր Աղա Սարգիսեան, Հայկ Նուրեան, Արշակի Կիրոյանեան, Պողոս Գիպիւրեան:

Ծուկիկ՝ Սարգիս Աշքեան, Յակոբ Օվայեան, Սարգիս Կիրոյանեան, Ամբար Նուրեան եւ Նուպար Տէմիրճեան:

ներէն մէկը բարձրաձայն կը յայտարարէ՝ նուիրատուներուն անունները: Նուիրատուները դրամի փոխարէն կրնան տալ նաեւ տասնեակ մը մետաքսէ թաշկինակներ, որոնք կը դրուին կնքահօր ուսին: Սափրուելու ատեն ներկաները կը շնորհաւորեն կնքահօր ծնողները: Կնքահայրերը ընդհանրապէս կ'ըլլան երիտասարդներ կամ փոքր մանչեր: Սափրուելէն յետոյ ամենաբարձր գին վճարողները միայն իրաւունք ունին կնքահօր եւ փեսային ձեռքերը խաչաձեւ հինայելու: Սափրուելու ընթացքին տեղի կ'ունենայ փեսայի «կեղծ կորուստը», երբ երիտասարդները պէտք է փնտռեն «կորսուած» փեսացուն՝ «Նորհուրդ Նորին» երգելով: Հարսանեկան աճուրդը տեղի կ'ունենայ նաեւ հարսնացուին տունը, աճուրդէն գոյացած գումարը նուիրատուութիւն կ'ըլլայ թաղի եկեղեցիին:

Փեսան այդ գիշեր ազատ կ'ըլլայ քնանալու, իսկ առաւօտեան դարձեալ շքախումբը կը պատրաստուի ու կը դրկուի հարսին տունը՝ օղիով ու «մեղէներով» բեռնաւորուած «մուհապալէթ» ընելու, սիրալիր ժամանակ անցընելու համար. Շաբաթէն Կիրակի անցնող գիշերը պարտաւոր են լուսցնել, յատկապէս փեսայի տունը մատանիի խաղ խաղալու, իսկ արդէն առաւօտեան կողմը կը սկսի շուրջպարը տանիքներու վրայ: Առաւօտեան կը սկսի նաեւ հարսին ու փեսային հագցնելու արարողութիւնը: Փեսային կը հագցնեն երիտասարդները «Նորհուրդ Նորին» երգելով եւ իւրաքանչիւր անգամ նշելով հետեւեալ խօսքերը թրքերէնով՝ «բարով թող ըլլայ, իրենց տեսնելիքը միայն այս ըլլայ» եւ երբեմն ալ կատակելով՝ «պատակելով փեսային, հագուելէն ետք փեսան ու կնքահայրը կը համբուրեն ներկաներուն ձեռքերը եւ թամատայի գլխաւորութեամբ, մեծ շքախումբով լապտերներով, եղենափայտի խոշոր ջահերով ու նուագարաններու ուղեկցու-

թեամբ կ'երթան հարսին տունը, իսկ այդ ընթացքին հարսին տունը օրիորդներու ներկայութեամբ տեղի կ'ունենայ հարսանեկան հագուստը հագցնելու արարողութիւնը, երգերով ու պարերով: Հարսանեկան զգեստին հետ միասին հարսին երեսը կը ծածկեն թափանցիկ քօղով (գունաւոր եւ նուրբ հիւսուածքներով պատրաստուած կ'ըլլայ, հարսը այդ քօղը պարտաւոր է կրել մինչեւ առաջին անգամ մայրանալը)՝ կնքամայրին կողմէ պատրաստուած շրջանակաձեւ մոմակիր կարկանդակը հարսին գլխուն բռնած երգելով:

Հարսը տունէն դուրս բերելու արարողութիւնը տեղի կ'ունենայ երգերով, պարերով եւ բացառանջութիւններով, որպէս հրաժեշտի խօսք կ'ըստին հետեւեալ խօսքերը՝ «առինք ձեր աղջիկը, շունը թող լըէ ձեր երեսը» եւ այլն: Այնուհետեւ հարսն ու փեսան շքեղազարդ ձիերով կ'երթան դէպի եկեղեցի, անոնց կ'առաջնորդեն փեսացուին երիտասարդ ընկերները: Եկեղեցական պսակի արարողութիւններէն ետք, սովորաբար եկեղեցի տանող նոյն ճամբով ետ չեն վերադառնար, այլ կ'ընտրեն ուրիշ ճամբայ: Ճանապարհին բոլոր հարեւանները ու ազգականները բաց կը պահեն իրենց տան դռները եւ կը հիւրասիրեն հարսնետուրներուն, նաեւ այնպիսի նուէրներ կու տան, ինչպիսին են ընտանի կենդանիներ, հագուստ, կօշիկ, իսկ հարսի եւ փեսայի գլխուն նաքար, ցորեն եւ դրամներ կը նետեն: Փեսային տունը հասնելուն պէս, հարսին ի պատիւ կարաս կամ սափոր գետին կը նետեն, իսկ հարսը նուռ կը նետէ դրան վրայ, եւ եթէ նուռը կտրուի, ապա, ըստ աւանդութեան, ան կը դառնայ տան իրաւ տէրը: Կնքամայրն ալ վառած մոմերով շրջանակաձեւ կարկանդակը երեք անգամ կը պտըտցնէ հարսին գլխուն, որպէսզի հարսին միտքն ու ոգին միացուին ընտանեկան ուխտին:

Փեսային տան բակը կը մորթ-

ուի ոչխարը եւ կը բաժնուի աղքատներուն: Մատաղը բաժնելէ ու ճաշելէ յետոյ, կը սկսի պարելու բաժինը, կնքահօր մայրը պարելով կը գուարճացնէ ներկաները, անոր կը միանան փեսային մայրը, հայրը ու մնացած ազգականները: Սովորաբար հարսին ու փեսային մէջտեղը կը դրուի բարձ մը, որուն վրայ անոնք կը դնեն իրենց աջ ոտքերը, փեսան իր ոտքը կը դնէ հարսին ոտքին վրայ՝ իր հեղինակութիւնը ցուցադրելու ու տարածելու մտադրութեամբ:

Կինները կը հաւաքուին, ու այդ օրը տեղի կ'ունենայ հարսին լողացնելու ու գլուխը յարդարելու արարողութիւնը, որ կը կոչուի «պաշ երգամաք» (գլուխը լուսի), ու այդ ժամանակ մկրատով կը կտրեն հարսին մազերէն փոքր փունջ մը, հարսին միեւնոյն ատեն հարցնելով, թէ մազը կտրե՞լ, թէ լեզուն. լեզուն կտրել կը նշանակէ կեսուրին հետ արգիլել խօսիլը: Հարսին մազերը յարդարելու իրաւունքը կը պատկանի կնքամորը:

Երգերէն մէկուն թարգմանութիւնը հետեւեալն է.

«Կնքամայր, լուսաւորութեան մէջ ըլլաս, Աստուած սէր ու բարեկամութիւն պարգեւէ, եթէ գայլ են՝ ոչխար թող ըլլան, Աստուած թող երջանկացնէ, կու տամ, սակայն ետ չեմ ընդունիր: Այս թող ըլլայ իրենց տեսնելիքը, մէկ բարձի վրայ ձերանան, տարուք իրենց գաւակներուն»:

Յաջորդ օրը փեսային մօտիկ ազգականներով կ'այցելէն հարսին հօր տունը, հարսին ընտանիքը պարտաւոր է այդ օրը հացկերոյթ կազմակերպել, այդ արարողութիւնը կը կոչուի «կիւլէի տաւեթի» (փեսայի հրաւէր), նոյնպէս այդ օրը փեսան կը ստանայ նուէրներ: Մէկ շաբաթ շարունակ հարսին մայրը տարբեր տեսակի կերակուրներ կը դրկէ փեսային տունը, իսկ քառասուներորդ օրը հարսը կ'երթայ եկեղեցի, ապա այնտեղէն կ'երթայ ծնողքին տունը, ուր շաբաթ մը կը մնայ:



Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, կը շնորհաւորենք մեր սիրելի ծնողները եւ աշակերտները, ինչպէս նաեւ վարժարանիս բարեկամներն ու բոլոր անոնք, որոնք անցեալ 45 տարիներուն ընթացքին անցան «Շամլեան»ի յարկէն:

Շնորհաւոր Նոր Տարի Եւ Ս. Ծնունդ

Շամլեան ազգային վարժարանի ուսումնական մարմին, տնօրէնութիւն, պաշտօնէութիւն, ուսուցչական կազմ եւ յարակից մարմիններ

Chamlian Armenian School extends its heartfelt wishes to our community during this holiday season.

May we keep the spirit of Christmas alive as we welcome the year 2020.

Chamlian joins the community in congratulating the many organizations that are celebrating milestone accomplishments this year as it celebrates 45 years of success in educating generations of young Armenians.

We are very grateful for our community's support and are touched by those whose generosity has inspired the school to thrive and become one of the best schools in the region, now serving 670 students from Kindergarten to 8th grade.

We will continue to promote academic excellence, preserve our Armenian heritage, and develop students of high integrity in our innovative, safe learning environment.

We promise to lead, celebrate and build toward the next 45 bright years.



With warmest wishes for a Merry Christmas and a Happy New Year!

Հայկական Տաղասացութիւն (1100 – 1722)

ՆՈՐԱՅՐ ՏԱՏՈՒՐԵԱՆ

Ա. Մաս

Հայ ընթերցողի հորիզոնին վրայ երեւելի են Հայկական գրականութեան փայլուն շրջանները ինչպէս՝ Ոսկեդարը, Զարթոնքի շրջանը եւ Գեղապաշտ շրջանը: Անոնք կ'արժանանան գրասէրի ուշադրութեան ու անոնց լաւագոյն օրինակները կը վերահրատարակուին նորատիպ գիրքերու շապիկի տակ: Գժբախտաբար, յարգելի ընթերցող, յաճախ անտես եւ անտիպ կը մնայ Հայկական միջնադարեան տաղասացութիւնը, աշխարհիկ բնոյթ ունեցող հեղինակային ստեղծագործութիւններու 600 տարուայ հարստութիւն մը: Այսօր կը փափաքիմ ձեզի հետ բաժնեկցիլ ու ճաշակել այդ գանձարանէն պատասխաններ: Նախ կ'ուզեմ յետադարձ ակնարկ մը կատարել ու տեսնել, թէ Հայ տաղասացը, աշխարհիկ թէ հոգեւորական, իր մատենադարանին մէջ ի՞նչ գանձեր ունէր, իր նախորդները ի՞նչ ժառանգած էին անոր ու եթէ ան ուզէր տաղ, գանձ, առակ, ողբ, ներբող, վարք կամ խրատ հեղինակել՝ իր ձեռքին տակ ի՞նչ պաշար ունէր: Կարճ պատասխան. գրական հարուստ անցեալ մը: Մանրամասնօրէն՝ հետեւեալները...

Հայկական լեռնաշխարհի կամ Կիլիկիոյ մէջ գործող Հայ բանաստեղծին ծանօթ էր Դաւթակ Քեր-



թողը եւ անոր ներբող-ողբը՝ «Ողբ Ի Մահն Զեւանչերի Մեծի Իշխանին»: Ան գրուած էր Աղուանից աշխարհի իշխանի մահուան կապակցութեամբ ու կը համարուի Հայկական աշխարհիկ քերթողութեան հնագոյն օրինակը: Հետաքրքրական է գիտնալ նաեւ, թէ «այբբենական» բանաստեղծութիւն է ան, որուն

առաջին ութը տունները կը սկսին այսպէս. Աստուածածին, Բեկումն, Գլորեցաւ, Դարձաւ, Երկին, Զանգիւտ, էր նստեալ, Ընդ ամենայն..., ու այսպէս մինչեւ «Քէ»: Հայ տաղասացին ծանօթ էր նաեւ ծայրակապ բանաստեղծութիւնը, այսինքն այն ստեղծագործութիւնը, որուն տուններուն սկզբնատառերը եթէ վերէն վար

հաւաքէք՝ կը յայտնաբերէք հեղինակին անունը կամ այլ բառ մը: Ծայրակապ բանաստեղծութեան գեղեցկագոյն նմոյշներէն մէկը մեզի տուեր է Սահակագուխտ երաժշտուհին: Տրդ դարու մենակեաց երգահան էր ան, որ կ'ապրէր Գառնիի ձորի քարանձաւներէն մէկուն մէջ ու կը դասաւանդէր

Սաութ Պէյ

ՀՅԴ

«Արամ Մանուկեան»

Կոմիտէ

ՀՕՄԻ

«Արարս» Մասնաճիւղ

Այս Նոր Տարուան Սեմին

Որոշենք Վառ Պահել

Հայութեան

Պայքարի Չափը

Տէր Եւ Տիկ.

Երեւան

Եւ Ռուզաննա

Օհաննէսեան

Կը Շնորհաւորեն

Չէր Նոր Տարին

Եւ

Ս. Ծնունդը

Christmas
is all about caring,
sharing and giving

Merry Christmas
and Happy New Year

**Glendale Hye Funeral
Services**

**St. Mary's
Adult Day Health Care**


1829 S. Brand Blvd., Glendale, CA 91204

Հայկական Տաղասացութիւն (1100 – 1722)

դէր վարագոյրի ետեւէն: Անոր հեղինակած «Սրբուհի Մարիամ» երգը ունի Ս, Ա, Հ, Ա, Կ, Գ, Ո, Ի, Ս եւ Տ տառերով սկսող ինը տուն: Մեր բանաստեղծին ծանօթ էր նաեւ դիմառնութիւնը: Գրական արտայայտութեան ձեւ մըն է ասիկա, ուր անշուշտ առարկան (ինչպէս՝ քաղաք մը) կը ներկայանայ, կը խօսի, կ'ողբայ կամ կ'ուրախանայ որպէս մարդ: Մեր գրականութեան ամենայայտնի դիմառնութիւններէն մէկն է ներսէս Շնորհալիի «Ողբ եղես-

ին», «...չարին»: Իսկ բաղաձայններու եւ ձայնաւորներու կրկնութեամբ գրաւոր միտքը շեշտաւորելու ընտիր գիտն ու արուեստը կը պատկանի Գրիգոր Նարեկացիին: Ականջ տանք «ծ» եւ «չ» ձայներուն. «Մաւայէր ծաղիկ ծովային», «Շուշանն չողէր հովտին, չողչողէր դէմ արեգականն»:

Ահա այս պատուանդանին վրայ կառուցուեցաւ նոր գրականութիւն մը, որ լի էր երկրային կեանքը եւ անոր շնորհները լի-



իոյ» ստեղծագործութիւնը: Այդ երկարաչուն քերթուածի մէջ եղեսիա քաղաքը կը ներկայանայ որպէս վշտահար որդեկորոյս մայր. «...ես մայր էի բազմորդի, / Անթիւ ծնայ դուստր եւ որդի / Ձորս մայրաբար դիեցուցի, / Գեղեցկատիպ յօրինեցի, / Վայելչապէս զարդարեցի»:

Բանաստեղծութիւններու վերջին բաղադրիչներն են յանգը, բաղաձայնոյթը եւ առձայնոյթը: Առաջինին ամենայայտնի օրինակն է Գրիգոր Պահլավունի Մագիստրոսի «Հազարտողեան Առ Մանուէլ» ստեղծագործութիւնը: Անոր 1016 տողերը յօրինուած են միեւնոյն հանգով («-ին»), ինչպէս՝ «...պատկերին», «...հրեշտակա-

վին ապրելու տրամադրութեամբ: Անոր լայնօրէն նպաստեցին Արեւելեան Հայաստանի մէջ Ջաքարեաններու իշխանութիւնը, իսկ Կիլիկիոյ մէջ՝ Ռուբինեան եւ Հեթումեան թագաւորութիւններու գոյութիւնը: Այդ շրջանը «Հայկական գրական վերածնունդ» մըն էր, որ ունէր աշխարհիկ ուղղութիւն, մարդասիրութեան եւ հայրենասիրութեան ընդհանուր գաղափարներու ներքոյ փառաբանեց սէրը, ծաղիկը, գարունը եւ գեղեցկուհին, խորապէս թափանցեցաւ նաեւ իմաստասիրական հարցերու, ինչպէս՝ «կեանք-մահ», «հոգի-մարմին»: Իսկ, երբ երկիրը օտարներու ասպատակութեան եւ իշխանութեան ենթակայ

կ'ըլլար, հայ տաղասացը կ'երգէր ազգին վիշտը եւ կը ստեղծէր պանդխտութեան սրտածմբիկ տաղեր: Ժամանակի գրական լեզուն միջին հայերէնն էր, կամ՝ ուսուցողէն, պարզ, անմիջական, բոլորին համար հասկնալի: Այդ շրջանի երեւելի բանաստեղծներէն Ֆրիկ ըսեր է. «Ֆրիկը հանցեղ պարզ է խօսել, որ ամենայն մարդ իմանայ»: Իսկ հիմա, յարգելի ընթերցող, վայելենք հեղինակներու փունջ մը՝ ժամանակագրական կարգով:

Նախ յիշենք ինքնատիպ բանաստեղծ Գրիգոր Տղայ Գ. կաթողիկոսը (1133-1193): Ան դասական սերունդի եւ նորերու միջեւ կամուրջ մը եղաւ: Որպէս կաթողիկոս յաջորդեց ներսէս Շնորհալիին: (Շնորհալիի աւագ եղբոր Վասիլին տղան էր): Բացի դաւանաբանական եւ միջկեղեցական բազմաթիւ գործերէ, Գրիգոր Տղայն ազգը դաստիարակելու համար գրի առաւ նաեւ խրատական բանաստեղծութիւններ: Կարդանք

նմոյշ մը. «Մի՛ շարժեր զքո լեզուդ, որ քեզ օգուտ չէ, / Եւ մի՛ խօսիր բանս որ քեզ կորուստ է: / Լեզու, լցեալ հրով, նա սուր սրեալ է, / Անիրաւ գորոյ պարծանք եւ զարդարանք է»: Յաջորդ քառեակի մէջ հեղինակը կ'ապրի մարդկային տեսչերու եւ իրականութեան ստեղծած հակասութեան խոր տառապանքը. «Կայ եւ հուր սիրոյ, բայց սառուցեալ է, / Եւ հողմն քաղցրածի՞ք՝ խորշակահար է: / Ջերմ եմ առ Աստուած, այլ ցուրտն մերձ է, / Կամի՞մ բուսացանել, բայց տօթն չար է»:

Յովհաննէս Պլուզ Երզնկացի (մ.թ. 1220-93) խոհա-խրատական քառեակներու ուսուցիչն է: Մնած եւ ապրած է Եկեղեցաց գաւառի Երզնկա քաղաքին մէջ: Հոգեւոր գրականութեան առընթեր, ան մշակեց նաեւ տիեզերագիտական, քերականական եւ իմաստասիրական աշխատութիւններ, Երզնկայի հայ արհեստաւորներու «Եղբայրութիւն» կազմակերպութեան կանոնագրութիւնը: Յ. Երզնկացի կ'ուզեմ յիշել իր հայերէններով (քառեակներ, որոնք իւրաքանչիւր տողի վրայ ունին տասնհինգ վանկ): Անոնց մէջ կը տեսնենք կեանքի եւ մահուան իմաստասիրութիւնը՝ աշխարհիկ գեղեցկութիւններու ենթապատկերի վրայ... «Աշխարհս է ի ծով նման, ով որ գայ՝ անթաց չմնայ, / Յայս ծովս ես ի նաւ մտայ, գնաց նաւս եւ ես չիմացայ, / Յեզեր մօտեցել եմ ես, վախեմ թէ քարի դիպենայ, / Քակտի իմ աղուոր շինուածս, ու տախտակս մէկմէկանայ»:

Բանաստեղծին ակնարկած «աղուոր շինուած»ը մեր աշխարհիկ կեանքի ձեռքբերումներն են, գործ, տուն եւ այդ տան կողքին փոքրիկ պարտէզ մը, զոր կը մշակենք, եւ որուն պտուղը կ'ուզենք վայելել: Սակայն մահն է, որ կու գայ եւ այդ պարտէզը արմատախիլ կ'ընէ: Իսկ «տախտակս մէկմէկանայ» արտայայտութիւնը, սարսափելի բան է, մեզի կը յիշեցնէ կեանքի անխուսափելի վախճանը, այն իրականութիւնը, թէ աշխարհը եւ անոր փայլը անցաւոր են: Մէկ այլ

MERRY CHRISTMAS & HAPPY NEW YEAR FROM OUR FAMILY TO YOURS!

VARTAN GHARPETIAN Councilmember Vartan Gharpetian and Family

www.ElectVartan2020.com (818) 929-1722

VARTAN GHARPETIAN FOR GLENDALE CITY COUNCIL

→

Լաս Վեկաս

**ՀՅԳ «Իշխան»
Կոմիտե**

**Կը Մաղթենք,
Որ Մեր Դասը
Նոր Յաղթանակի
Նոր Հողեր
Նուաճէ**

Լաս Վեկաս

Ս. Կարապետ Հայց.
Առաքելական եկեղեցույ
հովիտ՝ Վահան քինյ.

Կոստանեան,
Հոգաբարձութիւնն
Ու Տիկնանց Միութիւնը
Կը Շնորհաւորեն Լաս
Վեկասի Շրջանի
Հայութեան Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը

St. Garabed Armenian Apostolic Church
of Las Vegas
2054 E. Desert Inn Rd.
Las Vegas, NV 89169
Phone/Fax: 702.834.6344
E-mail: infostgarabed@LVcoxmail.com

**Ատրուշան
Եւ Նորա
Արմէնեաններ**

**Լաւագոյն
Մաղթանքներով
Կը Շնորհաւորեն
Բոլորին
Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը**



**ARS
Shoushi Chapter
of Las Vegas**

**And Verjine Koujakian
Saturday School**

**1020 New Creek Ave.,
Henderson, NV 89015**

Հայկական Տաղասացուիքից (1100 – 1722)

քառեակի մէջ Յ. Երզնկացին մեզ կը զգուշացնէ որ մարդը չնմանի օձին, այսինքն չունենայ երկճիւղ լեզու. «Լեզուն է գործիք բանի / եւ արդարոյն զերդ խալաս ոսկի,

կան նիւթերու առաջին բանաստեղծն է: Ապրած է մոնղոլական ասպատակութիւններու եւ տիրապետութեան օրերուն: Ֆրիկը հայրենասէր է, ժողովրդասէր, արդարամիտ: Երկրի քաղաքական անկայունութեան եւ ընկերային քայքայման խնդիրներով այրող, դառնացած անհատ է ան: Ֆրիկը կ'ենթարկուի հարստահարութեան եւ գերեվարութեան: Ընդվզելով՝ հասարակութեան անունով եւ անոնց լեզուով կը պոռթկայ, հանդէս կու գայ Աստուծոյ առջեւ ու արդարութիւն կը պահանջէ: Ահա այսպէս են Ֆրիկի խօսքերը.



«Աստուած արդար եւ յիրաւի... / Հանդէս ունիմ բան մի վիճի, / Թէ դու լսել քո ծառայի... / Որքա՞ն տանջեն զմեզ յաշխարհի, / Եւ կեղեքեն զկեանս մեր յայտնի, / Եւ դու ներես յամենայնի / Անտես առնես զմեզ ի վշտի / Գիտես, մարմին ենք մսեղի, / Գէմ արձան չեմք ինչ երկաթի»: «Գանգատ» բանաստեղծութիւնը կ'օգտագործէ հակադրութեան հնարքը ու կը նկարագրէ երկրի բեւեռացուած վիճակը. «Մէկին հազար ձի եւ ջորի, մէկին ոչ ուլ մի, ոչ մաքի.../

զՄարդոյն է մէկ փերթ արել եւ օձին է երկու ճրղի, / Էնց մարդն որ երկու խօսի՝ զմէկն քաղցր ու մէկն լեղի, / Եղբայր է օձին եղել ու զնորա անէծքն ընդունի»: Ֆրիկը (13րդ դար) հասարակա-



Մէկին հազար դեկան* ոսկի, / մէկին ոչ փող մի պղնձի»: Այդպէս էր եղած ընկերութեան վիճակը, որովհետեւ՝ «...Որ թաթարն եղաւ թագաւոր, / Ու գողերն եղիր (դրաւ) մեծաւոր»: Բայց, յարգելի ընթերցող, պիտի անցնին տասնամեակներ, զարուներ դարձեալ պիտի գայ, հայկական տաղասացութիւնը իր պայծառ գոյներով եւ պատկերներով դարձեալ պիտի ծաղկի Հայկական լեռնաշխարհին մէջ, ու այս անգամ պիտի յայտնուին վարդի եւ սոխակի այլաբան երգիչը՝ Կոստանդին Երզնկացին, երազի եւ իրականութեան հակադրութեան մէջ տառապող Սաչատուր Կեչառեցին, Յովհաննէս Թլկուրանցին, որ սէրը պիտի երգէ անկաշկանդ պոռթկումներով, այրի նկարիչ Մկրտիչ Նաղաշը, որ պիտի դառնայ պանդուխտի ձայնը, բաժանման եւ կարօտի երգիչ տարագիր կաթողիկոս մը՝ Գրիգորիս Աղթամարցին եւ ուրիշներ: Այն ժամանակ սէրը պիտի յաղթահարէ չարին եւ մահուան:

տանդին Երզնկացին, երազի եւ իրականութեան հակադրութեան մէջ տառապող Սաչատուր Կեչառեցին, Յովհաննէս Թլկուրանցին, որ սէրը պիտի երգէ անկաշկանդ պոռթկումներով, այրի նկարիչ Մկրտիչ Նաղաշը, որ պիտի դառնայ պանդուխտի ձայնը, բաժանման եւ կարօտի երգիչ տարագիր կաթողիկոս մը՝ Գրիգորիս Աղթամարցին եւ ուրիշներ: Այն ժամանակ սէրը պիտի յաղթահարէ չարին եւ մահուան:

* Ոսկի դրամի միաւոր:

Merry
Christmas
and
Happy
New Year!

Arto
Keuleyan


Merry Christmas
and
Happy New Year
to all our family
and friends

Ara & Silva
Khatchikian
Cynthia, Stephanie
and Angelina

«ԺԱՄԱՆԱԿ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԷՏ, ՀԱՅ ԳԻՐԻ ՀԱՒԱՏԱԻՈՐ ԱՐՏԱՇԷՍ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆԻ ՈՐԴԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ

«Յուզիչ է Տեսնել, Որ Մարդուն Աշխատանքը, Մահէն Քսանհինգ Տարի Ետք Աւելի Զօրաւոր Եւ Արդիւնաբեր Ձեւով Մէջտեղ Կ'ելլէ Եւ Նոր Պրպտումներու Դուռ Կը Բանայ»

Վարեց՝ ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ



Հայաստանի Ազգային գրադարանի մէջ վերջերս կազմակերպուած Հայ մամուլի երկօրեայ գիտաժողովին կը մասնակցէին նաեւ սփռուքահայ նշանաւոր մատենագէտ, լեզուաբան, բառարանագէտ, քերականագէտ, բանահաւաք, պատմագէտ, խմբագիր եւ դասախօս-ուսուցիչ՝ Արտաշէս Տէր Սաչատուրեանի որդիները՝ Տարօն եւ Զարեհ Տէր Սաչատուրեանները: Գիտաժողովը նուիրուած էր Հայ առաջին տպագիր թերթին՝ «Ազգարար»ի Հիմնադրման 225ամեակին: Արտաշէս Տէր Սաչատուրեան գիտական եւ հոգեկան կապերով կապուած էր հեռաւոր 1794 թուականին Մատրասի մէջ հայր Յարութիւն քհնյ. Շմաւոնեանի մամուլ Հիմնելուն եւ Հայ մամուլին լոյսը այդ տեղէն Հայաշխարհին տարածելու գործին՝ զայն համարելով սրբազան առաքելութիւն, որ փոխանցուած է սերունդէ սերունդ եւ ինքն ալ իր կարգին պատասխանատուութիւն մը վերցուցած էր՝ այդ լոյսը վառ պահելու եւ փոխանցելու:

տութեան, անձնական գրադարանին մէջ ունեցած էր «Ազգարար»ի երկու թիւ՝ 1 եւ 2 տետրակները, զորս մատենագէտին որդիները նուիրած էին Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանին: Անոնք ձեռնունայն չէին եկած նաեւ Հայաստան: Գիտաժողովին բացումէն անմիջապէս ետք, Տարօն եւ Զարեհ Տէր Սաչատուրեանները Հայաստանի Ազգային գրադարանին հանդիսաւոր կերպով նուիրեցին Արտաշէս Տէր Սաչատուրեանի անձնական գրադարանէն հնատիպ եւ հնագոյն նկատուող արժէքաւոր գրա-


կանութիւն մը՝ քառասունէ աւելի գիրքեր (1550-1960) եւ ձեռագիր մամուլի օրինակ մը: Այդ նուիրատուութեան մէջ էր 1550 թուականին հրատարակուած լատիներէն Նոր Կտակարանը՝ Novvm Testamentvm Graece et Latine (Basileae Bryling, Greek Ancient) եւ 1669 թուականին տպագրուած Առաքել Դաւրիթեցիի «Գիրք

բէն Զարդարեանի, Գրիգոր Զօհրապի, Արշակ Ալպոյանեանի, Ղուկաս Ինճիճեանի, Ճանիկ Արամեանի, Յ. Մ. Հաճեանի, Ա. Մ. Գարագաշեանի, Ա. Ահարոնեանի եւ այլոց գիրքերէն, որոնց քանի մը հատը ինքնագիրերով էին, ինչպէս օրինակ՝ Արշակ Զօպանեանի՝ 1912 թուականին Փարիզի Կ. Ներսէսեան տպարանին մէջ



Պատմութեանց»ը՝ Ամսթերտամի «Ս. Էջմիածին եւ Ս. Սարգիս» տպարանին մէջ ոսկերիգ էջերով տպագրուած գիրքը: Արտաշէս Տէր Սաչատուրեանի գրադարանէն նուիրատուութեան ճամբով Հայաստան հասած են նաեւ Ռու-

հրատարակուած «Հայ էջեր. Մեր Նախնեաց Բանաստեղծութիւնն Ու Արուեստը» գիրքը: Բոլոր գիրքերուն վրայ դրոշմուած է Արտաշէս Տէր Սաչատուրեանի գրադարանին կնիքը: Նուիրատուութիւնը



Ս. Աստուածածին Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւներն Ու Հոգաբարձութիւնը

**Քրիստոսաբոյր ջերմ սիրով կը շնորհաւորեն ձեր
Նոր Տարին, Ս. Ծնունդը եւ
Աստուածայայտնութեան Տօները
Մաղթելով բոլորին օրհնաբեր,
քաջատոյժ եւ արեւշապ օրեր:
Մանուկ Յիսուսի Ծննդեան խորհուրդը թող
սէր եւ խաղաղութիւն սփռէ համայն
աշխարհին եւ յարկապէս մեր հայրենիքին ու
սփիւռքահայ գաղթօճախներուն:**

«Յուզիչ է Տեսնել, Որ Մարդուն Աշխատանք, Մահէն Քսանհինգ Տարի Ետք Աւելի Զօրաւոր Եւ Արդիւնաբեր Ձեռով Մէջտեղ Կ'ելլէ Եւ Նոր Պրպտումներու Դուռ Կը Բանայ»



Թեան մէջ էր նաեւ «Շարժում» գրական ամսաթերթի առաջին թիւին ձեռագիր տարբերակը: Այս բոլորը, ինչպէս նաեւ իր հարուստ գրադարանի միւս նմուշները, Արտաշէս Տէր Սաչատուրեան ձեռք բերած է իր կեանքին ընթացքին՝ անձնական պրպտումներով, թանկարժէք մասունքներու պէս հաւաքելով, գնելով եւ փրկելով հայատառ ամէն ինչ, որուն հանդիպած է իր ճանապարհին:

Այս օրերուն, պայմանաւորուածութիւն ձեռք բերուեցաւ նաեւ Հայաստանի Ազգային գրադարանի մէջ ստեղծելու շտեմարան մը, որուն մէջ պիտի ամբարուին Արտաշէս Տէր Սաչատուրեանի գրադարանէն ուրիշ գիրքեր, ձեռագիրներ եւ տպագիր ժառանգութեան այլ օրինակներ: Հայաստանի Ազգային գրադարանի տնօրէն Հրաչէայ Սարիբէկեան Տէր Սաչատուրեան ընտանիքին յանձնեց չնորհակալարգիր մը՝ հայ գրաւոր ժառանգութեան պահպանման, տարածման եւ հռչակման գործին իրենց մատուցած ծառայութիւններուն համար:

Գիտաժողովէն ետք Տարօն եւ Զարեհ Տէր Սաչատուրեանները հարցազրոյց մը տուին «Ժամանակ»ին, ինչպէս նաեւ մեր թերթին տրամադրեցին Արտաշէս Տէր Սաչատուրեանի անտիպ լուսանկարներէն:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ.- Դուք ասկէ առաջ ալ այցելած էք Հայաստան, բայց այս այցելութիւնը կարծես առանձնայատուկ է, քանի որ ձեր հօր գործին հետ կապ ունի: Ի՞նչ զգացումներ ունիք:

ՏԱՐՕՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- Երբ Հայաստանի Ազգային գրադարանը մամուլի գիտաժողովը կը կազմակերպէր եւ հրատարակէր Տէր Սաչատուրեան ընտանիքին կողմէ սրտի խօսք մը ըսելու, բնական էր, որ սրտի խօսքէն շատ աւելին պիտի ըլլար: Յստակ է, որ Հայաստանի կողմէն Սփիւռքի ճանաչումին մէջ մամուլը մեծ դեր ունի. մինչեւ Սորհրդային Միութեան փլուզումը Հայաստան-Սփիւռք կապերը այդքան ալ բնական չէին, եւ կարծէք Հայաստանը առիթը չէր ունեցած Սփիւռքի մամուլը հարիւր տոկոսով կամ մեծամասնութեամբ քննելու եւ վերլուծելու կամ հիմնական տուեալները ունենալու: Արտաշէս Տէր Սաչատուրեանի գործը Սփիւռքի մէջ օգնեց, որ այդ ճանաչողութիւնը աւելի լաւ կատարուի, իսկ հիմա արդէն Համացանցը կայ, եւ այդ աշխատանքը աւելի ջուրին երեսը էլաւ: Մեր այս այցելութիւնը, գիտական բաժինէն, գիտաժողովին ելոյթ ունենալէն եւ գիրքերը նուիրուելէն բացի, երկրորդ բաժին մըն ալ ունի, այն է՝ Արտաշէս Տէր Սաչատուրեանի հանգանակին յաւելեալ ծանօթացումը, հայրենի գիտական աշխարհին եւ անոր գործին առերեսումը անգամ մը եւս կատարելը: Մենք այն տպաւորութիւնը ունէինք, թէ Արտաշէս Տէր Սաչատուրեանի գործը Սփիւռքի մէջ շատ լաւ ճանչցուած էր իր ապրած օրերուն, իսկ Հայաստանի սկսաւ զինք աւելի լաւ ճանչնալ յետ մահու՝ իր գրութիւններուն տպագրութեամբ եւ օրինակներ

րուն ճիշդ ձեռով հոս հասնելուն միջոցով: Համացանցը եւ իր աշխատանքներուն թուայնացումը առիթը ընծայեցին, որ նաեւ Հայաստանի գիտաշխատողները ճանչան զայն, եւ մենք տեսնք, որ Արտաշէս Տէր Սաչատուրեան իր մահէն քսանհինգ տարի ետք Հայաստանի մէջ սկսած է լաւ ճանչցուիլ:

ԶԱՐԵՀ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- Ինձի համար տպաւորիչ էր, որ Ազգային գրադարանի ղեկավարութիւնը, իր բարձրագոյն մակարդակին վրայ, մեծապէս արժեւորեց մեր ներկայութիւնը, եւ վստահ ենք, որ այդ արժեւորումը մեր հօր չնորհիւ էր: Նկատելի էր, որ գիտաժողովին երկու օրերու զեկուցումներուն մեծ մասին մէջ անպայման տեղ մը ակնկարկութիւն, մէջբերում կ'ըլլար Արտաշէսին գործին: Յուզիչ է տեսնել, որ մարդուն աշխատանքը, մահէն քսանհինգ տարի ետք աւելի զօրաւոր եւ արդիւնաբեր ձեռով մէջտեղ կ'ելլէ եւ նոր պրպտումներու դուռ կը բանայ: Իմ տպաւորութիւնն է, որ Արտաշէս Տէր Սաչատուրեան իր բոլոր ուսումնասիրութիւններուն մէջ եզրագիծ մը սահմանած է, եւ հետո չէ այն օրը, երբ այդ չափանիշը հաստատուի արդէն մասնագէտներու կողմէ:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ.- Ան, ինչպէս գիտեմք, հայագիտութեան մէջ ունեցած ձեռքերունմանը հասած է ինքնաշխատութեամբ: Արդեօք ցանկութիւն ունէ՞ր այդ ասպարէզին՝ հայագիտութեան, մատենագիտութեան, աղբիւրագիտութեան ուղղութեամբ կրթութիւն մը ստանալու:

ՏԱՐՕՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- Իր Համալսարանական կրթութիւնը պատմագիտութիւնն էր, իսկ Հայ մամուլին Հանդէպ սէրը ան ունեցած է պատանի տարիքէն՝ հաւաքած է թերթերէն պատառիկներ կամ ամբողջական հաւաքածոներ կազմած: Ծատ մանրամասնօրէն կ'ընթերցէր լիբանանեան թերթերը, յատկապէս Փրանսերէնով եւ անգլերէնով, բայց իր սէրը Հայ մամուլին հանդէպ էր: Ես, յետադարձ Հայեացքով վերլուծելով այդ անսահման սէրն ու նուիրումը, այն եզրայանգումին հասած եմ, որ Յեղասպանութենէն ետք Հոգեբանօրէն ընկճուածութիւն մը ապրած է

Հայրս, մենք կորսնցուած էինք հող, հայրենիք. կ'ենթադրեմ, որ իր միտքին մէջ երկուութիւն մը եղած է, հաւանաբար մտածած է, որ եթէ մենք այսքան յառաջողմ մշակույթ եւ այսքան յառաջողմ քաղաքական միտք ունէինք եւ կորսնցուցինք՝ մարդկային կորուստին հետ նաեւ նիւթական մեծ կորուստ ունենալով, իր մէջ հոգեբանօրէն ջանք մը արթնցած էր ցոյց տալու, որ մենք նաեւ մշակութային մեծ կորուստ ունեցած ենք: Օսմանեան կայսրութեան տարածքին տպագրուած մամուլը, յառաջդիմութիւնը յաւելեալ ի յայտ բերելով, ցոյց կու տար, թէ որքան մեծ եղած է նաեւ մշակութային եղեռնը: Ան Համայն աշխարհին կը փորձէր ցոյց տալ, թէ հայութեան յառաջդիմութիւնը դուր չէր տեսնել: Իր այս նպատակին մասին ան չէ խօսած, բայց ես այդպէս կը վերլուծեմ:

ԶԱՐԵՀ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- Ինչ կը վերաբերի կրթութեան, ըսեմ, որ Արտաշէս Տէր Սաչատուրեան 1957 թուականին իր առաջին վկայականը կը ստանայ Լիբանանի Ամերիկեան Համալսարանէն, իսկ ես եօթ տարեկանիս ներկայ եղած եմ իր 1965 թուականի մագիստրոսի տիտղոսի ստացման, կրկին Ամերիկեան Համալսարանին մէջ: Սակայն, 13-14 տարեկանին Արտաշէս կ'երթայ վանք, սարկաւազ կ'ըլլայ եւ հոն կը շարունակէ մինչեւ 15-16 տարեկանը: Ան սենեկակիցն էր վախճանեալ Գարեգին Ա. Ամենայն Հայոց վեհափառին, որուն հետ եղբոր պէս եղած են եւ գրչեղբայրներ էին մինչեւ իրենց կեանքին վերջին օրերը: Արտաշէս վանքին մէջ չի կրնար շարունակել եւ վարդապետ օծուիլ, որովհետեւ ընտանիքին մէկ Հատիկն էր. դուրս կու գայ վանքէն, սակայն իրեն հետ դուրս կը հանէ աւանդական վանականի՝ Հայ վանականի բոլոր հետաքրքրութիւնները, ապրումները եւ ատիկա կը պահէ մինչեւ իր կեանքին վերջին օրը: Արտաշէսին համար հայերէն գիրք եւ թերթ հաւաքելն ու ուսումնասիրելը խելագարութեան հասնող մոլուցք մըն էր, այնպէս, ինչպէս մէկը բախտախաղի մոլուցքով տարուած կ'ըլլայ:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ.- Արտաշէս Տէր

Սաչատուրեան յարգուած եւ սիրուած եղած է նաեւ իր արուեստագի: Ի՞նչ կը պատմէք իր մանկավարժական գործունէութեան մասին:

ԶԱՐԵՀ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- Ուսուցչութիւնը իր հիմնական ասպարէզն էր, ուր գործած է երկար տարիներ, 35-40 տարի դասաւանդած է Պէյրութի զանազան Հայկական վարժարաններուն մէջ, 1957-1961 թուականներուն ալ Հայկապի մէջ ուսուցչութիւն ըրած է: Ի միջի այլոց, գիրքերուն, հրատարակութիւններուն մեծ մասն ալ ան գնած է՝ ուսուցչութեամբ վաստակածին մեծ մասը ծախսելով ատոր վրայ: Իր կեանքի վերջին տաս-տասներկու տարին ալ դասախօս եղած է Համազգայինի Հայագիտական Հիմնարկէն ներս՝ լեզուաբանութիւն, գաղութներու պատմութիւն եւ այլ առարկաներ դասաւանդելով: Իր ուսուցչական ասպարէզին մէջ իսկ ան որպէս պարզ ուսուցիչ չէ գործած, զարմանալի կապ մը ստեղծուած էր իր ու աշակերտներուն միջեւ, որպէս երկրորդ Հայր, որպէս բարեկամ, որպէս անհատականութիւն: Ասիկա մենք չենք ըսեր, իր աշակերտները եւ զինք ճանչցողները կ'ըսեն, իր մասին յետմահու տպուած առաջին Հատորին մէջ այդ մասին վկայութիւններ կան: 30-40 հազար աշակերտի մասին է խօսքը, որոնք այսօր տարածուած են աշխարհի տարածքին՝ Լիբանան, Գանատա, Միացեալ Նահանգներ եւ ամէնուր:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ.- Գիտեմք, որ գիրքերու եւ թերթերու զգալի հատուած մը Պալիսէն ձեռք բերած է: Ինչպէ՞ս եղած է իր կապը Պալսայ հետ:

ՏԱՐՕՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ.- Ինչ որ լսած ենք եւ ինչ որ ինք գրած է, Հայկապ գտնուած միջոցին շատ բաներ ձեռք ձգած է: Երբ ատկէ ետք ուսուցչական խումբով, նաևով Հայաստան այցելեց, արդէն մէջը շատ զարգացած էր գիրքի, թերթի հանդէպ սէրը. Հայաստանի մէջ գրողներու ալ կը հանդիպի, եւ աւելի իրական կ'ըլլայ իրեն համար այդ ամէնը: 1967 թուականին Եգիպտոս սկզբնական այցելութենէն ետք, շատ բան կը գտնէ եւ կ'որոշէ Պոլիս երթալ: 1967 թուականէն առնուազն մինչեւ 1977

«Յուզիչ է Տեսնել, Որ Մարդուն Աշխատանքը, Մահէն Քսանհինգ Տարի Ետք Աւելի Զօրաւոր Եւ Արդիւնաբեր Ձեռով Մէջտեղ Կ'ելլէ Եւ Նոր Պրպտումներու Դուռ Կը Բանայ»

Թուականը ան ամէն տարի գտնուած է Պոլիս: Պոլսոյ նշանաւոր «Աբրահամեան» գրատունէն գնած է բազմաթիւ գիրքեր եւ տպագիր նիւթեր, եւ երբ Աբրահամեանը մահացած է ու զաւակները չեն ուզած պահել գրադարանը, ամբողջութեամբ գնած է զայն: Մենք կը յիշենք, որ Պէյրութէն հանրաշարժներ կ'երթային Պոլիս եւ անոնց վարի բաժինին մէջ գաղտնի կերպով կը տեղափոխէր այդ գրադարանին ապրանքը: Այդ գիրքերուն մէջ ահագին բաներ կային՝ Թէոդիկի տարեցոյցներ, մամուլ, հնատիպ գիրքեր... Պոլիսը, ըստ իրեն, կեդրոն էր, ուր կը հասնէին աշխարհի տարածքին տպագրուած հայերէն գիրքերը՝ Ամսթերտամէն մինչեւ Վենետիկ, Երուսաղէմ, մինչեւ Կովկաս, ո՛ւր, ի՛նչ տպուած էր, Պոլիս կը գտնէր: Երբ Աբրահամեանին գրատունը կը գոցուի, ինք կը դիմէ քահանաներուն, խնդրելով օգնել իրեն, որպէսզի տուններէն գտնէ գիրքեր եւ կը հարցնէր՝ ո՞վ կը մահանայ, որո՞ւն տունը ի՞նչ կայ, եւ այդպէս կը հաւաքէր: Իր տասը գտածէն ետք Պոլիսէն է, մէկը՝ Եգիպտոսէն, իսկ միւսները՝ Սուրիա, Լիբանան եւ այլ վայրերէ:

ՋԱՐՈՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. - Այդ քահանաները տարուան ընթացքին կ'ընէին այդ հաւաքման գործը, եւ ինքը ամառը կ'երթար, կը տեսնէր, ինչ որ կայ, կը գնէր.



կու գար: Անգամ մը ես հետը գացած էի. երբ հնատիպ գիրք մը տեսնէր, ուրիշ աշխարհ մը կը մտնէր, մանաւանդ, երբ վրան հեղինակի մը ձեռագիրը տեսնէր, օրինակ՝ Գրիգոր Զօհրապին կամ ուրիշ մը մակագրութիւնը, յաջողած կը սեպէր իր այցելութիւնը: Ասիկա ապրելու տարբեր կերպ մըն էր, որ մեր հասունութեան շրջանին կրնայ ըլլալ, որ որոշ բաներ մեզի խորթ թուէին, բայց շատ կարճ ժամանակի մէջ մենք մեր միտքերը լարեցինք իր ուղղութեամբ՝ զինք հասկնալու, զինք ըմբռնելու եւ իրեն հետ լիովին գործակցելու համար:


ՏԱՐՈՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. -

Մեր տան մէջ միշտ Պոլիսէն հասած թերթ կար, հայրս մտերմութիւն ունեցած է Գօշունեաններուն հետ, յարգանք ունէր թէ՛ «Ժամանակ»ին, թէ՛ «Մարմար»ին հանդէպ եւ անոնց խմբագիրներուն ու արտօնատէրերուն հետ մտերիմ էր: Մենք փոստով թէ՛ «Ժամանակ»ը կը ստանայինք, թէ՛ «Մարմար»ն, ինչպէս նաեւ՝ «Յառաջ»ը՝ Փարիզէն, «Հայրենիք»ը՝ Պոսթրնէն... Կէսօրէն ետք մեր սեղանին վրայ կ'ըլլային այս թերթերը, որոնք Պէյրութի օրաթերթերուն հետ կ'ընթերցուէին: Ան նաեւ մեր տունը կը բերէր Պէյրութ այցելող նշանաւոր հայ արուեստագէտները, գրողները...

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ. - Հայ առաջին տպագիր պարբերականին՝ «Ազդարար»ին հետ Արտաշէս Տէր Խաչատուրեան առանձնակի հոգեկան կապ մը ունէր եւ «Ազդարար»ը մասնայատուկ կապուած էր իր անունին: Ինչպէ՞ս յառաջացած էր այդ կապը:

ՏԱՐՈՆ ՏԷՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ. - Ինք այսպիսի մօտեցում մը ունէր. եթէ մենք ունեցած ենք զօրավար Անդրանիկ, Նժդեհ, ունեցած ենք Բաֆֆի, ունեցած ենք Հայկ Նահապետ եւ Ռաչատուր Աբովեան, հինգ մատի վրայ հաշուուող հայ մեծերու կարգին ան կը դնէր եւս մէկ հերոս՝ Յարութիւն քահանայ Շմաւոնեանը: Ինք այն աստիճան բարձր պատուանդանի վրայ դրած էր մամուլը իր բոլոր երեսակներով՝ գաղութ կազմակերպելու, հետեւելու եւ ղեկավարելու, առաջնորդելու իմաստով, որ այդ ասպարէզին նուիրուեցաւ մինչեւ վերջ, մամուլը եղած է ամենամեծ ասպարէզը, ուր գործած է եւ մամուլի ցուցահանդէսներ կազմակերպած՝ Հալէպ, Պէյրութ, Միացեալ Նահանգներ:

Մամուլը, իր ունեցած դերով, ան կը դնէր դպրոցի եւ եկեղեցիի կողքին, եւ հայ առաջին մամուլը հիմնողը, այն ալ օտար երկրի մը մէջ, իրեն համար ազգային հերոս մըն էր, այնքան մեծ, որ առաջին նկարը, զոր մենք, իբրեւ երեխաներ, մեր տունը կախուած տեսած ենք՝ Յարութիւն քահանայ Շմաւոնեանի մեծագիր նկարն էր: →



The Honorary Consulate of the Republic of Armenia in Fresno

Extends its warmest wishes for the New Year and the Armenian Christmas

May the New Year rekindle the spirit of dedication and commitment to the Republic of Armenia

Շնորհաւոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

Honorary Consul of the Republic of Armenia – Fresno

Berj K. Apkarian

Հայ Հարսերու Լեզուն՝ Հարսներէն

ԼԻԼԻ ԹՈՐՈՍԵԱՆ

Մեր գրականութեան մէջ գիւղագիր Յակոբ Մնձուրի իր «Մունջ» անուն պատմուածքով առաջին անգամ ըլլալով անդրադարձած էր Արեւմտեան Հայաստանի մէջ տարածուն սովորութեան: Ըստ այդ պատմուածքին՝ Հարսերը պարտաւոր էին մունջ

ներկայացումը կայացաւ 15 Նոյեմբերին, Թորոնթոյի 14րդ «Նուռ» շարժապատկերի փառատօնին ընթացքին: Եւրոպայի Համալսարանին մէջ Հաղորդակցութեան գիտութիւններու եւ խանգարումներու նիւթով դոկտորայի իր տեսութիւնը պաշտպանող Քէքէճեանի ժապաւէնին մասին Հայ մշակոյթի H-Pem Հարթակի կայքէջին հրատարակուած անգ-



պահել մինչեւ, որ ծնի անդրանիկ որդին: Կին անհատը ստրկացնող այդ սովորութիւնը ու նմանները յետադիմական շրջանակներու կողմէ փառաբանուեցան, իբրեւ «նահապետական ատաթ»: Ամերիկահայ հեղինակ եւ բեմադրիչ Քարլա Քէքէճեանի «Հարսներէն՝ Հայ Հարսերու Լեզուն» վաւերագրական ժապաւէնին առաջին

լերէն յօդուածը կը ներկայացնեն թարգմանաբար:

«Հարսներէն՝ Հայ Հարսերու Լեզուն» վաւերագրական ժապաւէնը լռութեան դատապարտուած երեւոյթի մը վրայ ուշադրութիւն հրաւիրելով՝ լոյս կը սփռէ գրեթէ անծանօթ լեզուի մը վրայ: Լեզու մը, որուն պարտադրած լռու-


Մենք՝ չորս-հինգ տարեկան էինք, երբ աչքերնիս բանայինք մեր անկողինին մէջ, մեր ծնողքը տեսնելէն առաջ, Շմաւոնեան քահանան կը տեսնէինք: Իր մօտեցումը ա՛յս էր՝ եթէ Սուրբ Գիրքը չես կրնար կարդալ, առանց Մննդոցը կարդալու, չես կրնար նաեւ Հայութեան պատմութեան մասին խօսիլ, առանց մամուլի դերին ծանօթանալու, առանց Հայ առաջին պարբերականին մասին գիտնալու:

զաւակներուն դաստիարակութեան հարցերով, բայց Համահայկական հարցերուն մէջ իրեն Համար Հայկականութիւնը խօսքով չէր, այլ՝ գործնական քայլերով, եւ միշտ գործնականին ետեւէն գացած է, Հակառակ որ վաճառականական միտք չէ ունեցած, բայց ծայրերը կը դրոյնելու, Հարթեցնելու դիւանագիտութիւն մը ունեցած է, այդ պատճառով ալ ամէն կողմէ սիրուած էր:

Իր հետաքրքրութիւններէն մէկն ալ Հայ գեղարուեստն էր՝ Հայրենի եւ սփիւռքեան անուանի նկարիչներուն գծագրութիւնները, իւղանկարները հաւաքած է: Շահան Պէրպերանի աշակերտը ըլլալով, ան թէ՛ Շահան Պէրպերեանէն, թէ՛ միւս ուսուցիչներէն ժառանգած էր գեղագիտութեան եւ գիտութեան հանդէպ սէրը: Շահան Պէրպերանի մասին գրած յօդուածներն ու պատրաստած հատորները նոյնպէս բացառիկ են:

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ.- Իբրեւ իր գաւակները, ի՞նչ ժառանգած էք իրմէ: **ՏԱՐՕՆ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ.-** Իմ պարագայիս՝ Հայրենասիրութիւն, աշխատանքի հանդէպ սէր եւ յարգանք եւ տարագրեալ ժողովուրդի մը զաւակը ըլլալով՝ Հայ մշակոյթին տէր եւ նեցուկ կանգնելու մղում, որպէսզի փոքրաթիւ եւ աշխարհասփիւռ ազգ մը ըլլալով, Հայութիւնը առայայտ կանգուն մնայ: **ՋԱՐԵՀ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ.-** Ան անսահման կերպով Հայաչունչ մեծցուցած է մեզ՝ կապուած եկեղեցիին, ակումբին. վայրեր, ուր կարգապահօրէն կ'այցելէինք փոքր տարիքէն: Տեսակ մը գինուորի պէս կը վարուէր մեզի հետ, պատճառաբանելով, որ ես սերունդներ կը դաստիարակեմ, եթէ չկրնամ իմ զաւակներս դաստիարակել, ինչպէ՞ս մարդիկ իրենց զաւակները ինձի պիտի վստահին: Իմ միտքիս մէջ զրոյշումն էր խօսք մը ունի՝ եթէ բան մը պիտի ընես եւ վախճալով պիտի ընես, մի՛ ըներ, համարձակութեամբ եւ պատասխանատուութեամբ նետուէ որոշած գործիդ: Իսկ ամենակարեւոր բանը, որ միշտ կը յիշեմ, այն է, թէ «պէտք չունիմ, որ իմ անունիս վրայ բան մը աւելցնէք, բայց այնպէս մի՛ ընէք, որ իմ անունէս բան մը պակսի...»

ԱՆՈՒՇ ԹՐՈՒԱՆՑ.- Հայութեան հարցերուն շուրջ ի՞նչ կը մտածէք, մանաւանդ որ Հայաստանի անկախութիւնն ալ տեսաւ: **ՏԱՐՕՆ ՏԷՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ.-** Հայրս կը հաւատար համասփիւռ Հայութեան, կը հաւատար Հայութեան միասնականութեան, կը հաւատար, որ նոյնիսկ միայն Սփիւռքով առաջնորդուելով եւ շիտակ առաջնորդութեան ճամբայ ունենալով (ակնարկելով նաեւ Մատթարը, իբրեւ օրինակ) կարելի է ունենալ այդ միասնականութիւնը: Հայաստան-Սփիւռք կապերուն, էջմիածնական-անթիլիասական հարցերուն մէջ կը հաւատար, որ պէտք է ըլլայ փոխզիջողականութիւն եւ հանդուժողականութիւն: Ան պահանջկոտ էր բազմաթիւ հարցերու մէջ. ինչպէս՝ եկեղեցիին, կուսակցութեան առնչուող,



թեան, «Թապու»ներուն եւ իրաւագրկումին հետեանքով կը նահանջեն ենթական, անունը եւ խօսքը: Սերունդներ շարունակ բազմաթիւ Հայ հարսեր մշակութային ճնշումով յատկանշուած վարմունքի մը հետեանքով դատապարտուած են պարտադիր չիսուկանութեան: Երբեմն այս կիներուն միջեւ զարգացած է Հաղորդակցութեան անձայն լեզու մը: Շարժումներով եւ նշաններով արտայայտուող այս լեզուն, որ կը կոչուէր Հարսներէն, դադրած է գործածական ըլլալէ եւ միայն Հայաստանի կարգ մը առանձնացած գիւղերուն մէջ կը յիշուի այսօր: «Հարսներէն՝ Հայ Հարսերու Լեզուն» վերնագիրով վաւերագրական կարճ ժապաւէնին մէջ հեղինակ, բեմադրիչ եւ հետազօտող Քարլա Քէքէճեան այս խորհրդաւոր լեզուին գաղտնիքները լուսաբանելու նպատակով կ'ուղեւորուի դէպի Բաղանիս գիւղը, որ կը գտնուի Ատրպէյճանի հետ Հայաստանի վտանգաւոր սահմանին մօտ: Արդիւնքը՝ մտերմիկ առեւտու մըն է այսօր ալ զգալի աւանդութեան եւ ցաւցնող յիշողութեան մը հետքերուն հետ: «Չիսուկանութիւն բարձր ինքնին անիսուկութիւն կը նշանակէ»: 17 վայրկեան տեւողութեամբ վաւերագրական գրաւիչ ժապաւէնը կը սկսի այս նախադասութեամբ եւ իբրեւ նիւթ կը ներկայացնէ ամուսնացած Հայ կիներու պարտադրուած անիսուկութեան հետեւանքով ձեւաւորուած նշաններու

լեզուն՝ Հարսներէնը: Հետաքրքրական է, որ չիսուկանութեան ետին թաքնուած պատուի Հասկացողութեան եւ մշակութային «Թապու»ներու շերտերը բացայայտելու իբրեւ միջոց՝ ժապաւէնը հիմնուած է բազմաթիւ երկխօսութիւններու վրայ: Ժապաւէնը կ'անդրադառնայ Հարսներէնի գործածութեան եւ ապա՝ մոռացութեան: Ուշագրաւ կերպով կը ներկայացնէ Հայ կնոջ դերակատարութեան եւ պատասխանատուութեան մասին տակաւին գոյատեւող, նաեւ՝ Հոլովոյթ ապրող ընկալումները: Գժուար է հաւատալ, թէ ժապաւէնին հեղինակը արհեստավարժ բեմադրիչ մը չէ, այլ Եւրոպայի Համալսարանի մէջ Հաղորդակցութեան գիտութիւններու եւ խանգարումներու նիւթով դոկտորայի իր թէզը պաշտպանող ուսանող մը: Իսկ ինչո՞ւ ընտրել վաւերագրական ժապաւէնի միջոցը: «Կը հաւատամ ակադեմական գիտելիքները զանգուածներուն մատչելի դարձնելու մէջ լսատեսողական միջոցներու հզոր ուժին: Հետեւաբար, ինչո՞ւ այս նիւթը չներկայացնել վաւերագրական կարճ ժապաւէնի միջոցով», կ'ըսէ հեղինակը՝ h-pem-ին: «Լուռ» լեզուն լոյս աշխարհ բերող ստեղծագործական երթին պատմութիւնը սկիզբ առած էր նոյնիսկ նախքան բեմադրիչին անդրադառնալը: 2014ի ամրան Հայ երիտասարդաց Դաշնակցութեան (ՀԵԴ) կազմակերպած «Երիտասարդական ջոկատներ» աշխատանքային ճամբարին իբրեւ

Հայ Հարսերու Լեզուն՝ Հարսներէն

Կամաւոր մասնակից՝ Քէքէճեան Լուս Անճելլաքէն աւելի քան 11 հազար քիլոմեթր ճամբայ կը կտրէ եւ կը հասնի Հայաստանի սահմանամերձ Բաղանիս գիւղը: Այդ ժամանակ ան նոյնիսկ տեղեակ չէր հարսներէնի գոյութեան մասին: Սակայն նոյն տարուան աշնան Քալիֆորնիոյ Ըրվայն համալսարանին մէջ տարբեր երկիրներու մէջ կիրարկուող նշաններու լեզուներու մասին լեզուագիտութեան դասընթացքէ մը ներչնչուած՝ կը ձեռնարկէ Հայաստանի տարածքին նշաններու լեզուներու գործածութեան հե-

տազօտութեան մը: Իր պրպտումներուն ընթացքին համացանցի վրայ կը հանդիպի յղումի մը, որ կը հետաքրքրէ զինք: «Կայքէջը կ'ըսէր, թէ Հայաստանի մէջ խուլերու եւ համրերու օգտագործած նշաններու լեզուն տարբեր էր ամուսնացած Հայ կիներու օգտագործած նշաններու այն լեզուէն, զոր անոնք կը գործածէին, երբ իրենց համար խօսիլը «թապու» էր», կ'ըսէ բեմադրիչը եւ կ'աւելցնէ. «Առաջին անգամն էր, որ կը լսէի միայն մէկ սեռի կողմէ գործածուող եւ յատկապէս հայերու պատկանող հաղորդակցութեան նման միջոցի մը մասին: Նիւթը անմիջապէս ներգրաւեց զիս»:



Կայքէջին տեղեկութիւնը այսքան էր միայն: Այնուհետեւ Քէքէճեանի համար աւելին գիտնալու փնտտուքը վերածուած է հետեւողական ծրագրի, աւելի ճիշդ՝ բուռն հետազօտութեան:

Քանի մը ամսուան արխիւային հետազօտութիւններէ ետք Քէքէճեան ի յայտ բերած է 1935ին կատարուած ուսումնասիրութիւն մը, որ թէեւ ուսերէնով էր, սակայն միակ ծանօթ գիրքն էր Հիւսիսային Ամերիկայի մէջ: Քէքէճեան առանց վհատելու յաջողած է գտնել զայն եւ թարգմանել տուած է



անգլերէնի: Այս աղբիւրին ընծայած Հիմնական տեղեկութիւնը կատարուած ուսումնասիրութեան աշխարհագրական վայրերն էին՝ չորս գիւղեր Հայաստանի մէջ:

Քէքէճեան 2016ի ամրան կը ձեռնարկէ նշեալ գիւղերուն մէջ ուսումնասիրութեան մը: Բախտը բերած էր, որ գիւղերէն մէկը նոյնինքն Բաղանիսն էր: Գիւղապետին ծանօթ ըլլալով՝ Քէքէճեան իր ուսումնասիրութիւնը կը սկսի այս գիւղէն: Բաղանիս կը գտնուի Ատրպէյճանի սահմանէն շուրջ մէկ քիլոմեթր հեռաւորութեան վրայ: Նոյն այս պատճառով յաճախ կ'ենթարկուի հակառակորդի կրակոցներուն: Սակայն գիւղը հարսներէնի ետին թաքնուած գաղտնիքները լուսաբանե-

լու առումով կարելի էր նշանակութիւն ունէր Քէքէճեանի համար, երբ նոյնիսկ չէր գիտեր, թէ Բաղանիսը շուտով պիտի դառնար գլխաւոր դերակատարը՝ Քալիֆորնիոյ մէկ դասարանին մէջ սկիզբ առած իր սրընթաց երթին:

Յուսալով լոյս սփռել այս զարմանահրաշ, բայց առեղծուածային նշաններու լեզուին գաղտնիքներուն վրայ, Քէքէճեան կը սկսի փնտնել պատասխանը հետեւեալ հարցումներուն. ինչպէ՞ս զարգացած է այս լեզուն, կիներ ի՞նչ պայմաններու տակ գործածած են զայն, ի՞նչ են լեզուին ծանօթ կիներուն կողմէ յաճախ գործածուած նշանները եւ շարժումները: «Հարսներէն՝ Հայ կիներու Լե-



Season's Greetings!

WE WISH YOU A JOYOUS AND WONDERFUL HOLIDAY SEASON AND A SAFE & PROSPEROUS NEW YEAR!

THE KASSAKHIAN
COURTNEY, ARMEN, AND ARDY



Իբրեւ Ամերիկահայեր՝ շատ բաներու շնորհակալ ենք 2019 թուականին, Հայոց Յեղասպանութեան բանացելի զոյգ յաղթանակները Քոնկրետին եւ Ծերակոյտին մէջ, եւ ամէնէն կարեւորը՝ Հայաստանի եւ Արցախի առողջ ընթացքը եւ բարգաւաճումը:

Կը մաղթեմ յաւելեալ յաջողութիւններ 2020ին, յատկապէս ձեր քուէարկութիւններով: Յիշեցէք արձանագրուիլ եւ քուէարկել 3 Մարտ, 2020ի նախնական ընտրութիւններուն եւ ձեր երեք ձայներէն մէկը թող ըլլայ Կլեմէնտիի քաղաքապետարանի խորհուրդի թեկնածու Արտի Քասախեանին:



Հայ Հարսերու Լեզուն՝ Հարսներէն

զուն» վաւերագրական ժապաւէնը արդիւնքն է բազմաթիւ անակնկալներու, որոնց հանդիպած է Քէքէճեան իր ստեղծագործական երթին ընթացքին: Ան կ'ըսէ. «Ժապաւէնը հարուստ է վաւերականութեամբ: Պիտի նշմարէք, թէ ինչպէ՛ս կը տարբերին արեւելահայերէնը եւ արեւմտահայերէնը: Պիտի լսէք շահագործումի եւ ցաւցնող յիշողութիւններու անհատական պատումներ. պատումներ, որոնք դժուար ընդունելի են, սակայն զանոնք բաժնելը եւ ընկալելը խիստ կարեւոր է: Վկան պիտի դառնաք գրկընդխառնումներու, համբոյրներու եւ խնդրքի: Բոլորը՝ իրական եւ հարազատ: Կը յուսամ, որ հանդիսատեսը տեսնէ եւ զգայ այս բոլորը»:

«Դէ՛, աղջիկ ջան, հարսներէն ենք խօսում». գիւղապետին օգնութեամբ Քէքէճեան կը հիւրընկալուի գիւղացիներու տուններուն մէջ: Ան կը պատմէ, թէ բնական հունով ընթացող իրենց գրոյցները զինք առաջնորդած են իր կատարած ամէնէն զարմանալի յայտնութեան: «Սկիզբէն գրուցակիցներս յայտնեցին, թէ ամուսնացած հայ կիներու գործածած շարժումներու եւ նշաններու այս լեզուն կը կոչուի հարսներէն: Նախապէս իմ գտած աղբիւրներուս մէջ երբեք չէր նշուած այս անունը»: Տեղին է ուրեմն, որ վաւերագրական ժապաւէնին հիմնական տիպարները ըլլային Բաղանիսի կիները եւ տղա-

մարդիկը. այսինքն անոնք, որոնք նշաններու այս լեզուին անունը տուած են գէթ այս նիւթը պեղող անձին:

Քէքէճեանի հարսներէն խօսող գրուցակիցներէն ամէնէն տարեցը 92 տարեկան էր, իսկ ամէնէն երիտասարդը՝ 49: Քարլա կ'աւելցնէ. «Ամուսնանալէ ետք որոշ ժամանակ անխօս մնացած (այսինքն տակաւին ամբողջութեամբ չանհետացած չխօսկանութեան հետեւած), սակայն այլեւս հարսներէն չգործածող ամէնէն երիտասարդ գրուցակիցս 19 տարեկան էր»: Վաւերագրական ժապաւէնը այս գիւղացիներուն միջոցով ի յայտ կը բերէ հարսներէնին բարդ բնոյթը, ընդհանրապէս կիներուն լռութիւն պարտադրելու վարմունքը, ինչպէս նաեւ՝ այս պարտադրանքին հետեւանքով շարունակուող ընկերային եւ հոգեբանական ազդեցութիւնները, որոնք մինչեւ այսօր նկատելի են Հայաստանի մէջ:

Քէքէճեանի հետազոտութեան ամէնէն տպաւորիչ պահը եղած է այն, երբ գրոյցին ընթացքին տարեց կին մը թեւերը լայն բանալով ըսած է, թէ խօսելու թոյլտուութիւն ստանալէ ետք իբրեւ առաջին բարբառում՝ «երգած է լեռներուն»:

Ժապաւէնին աւարտին Քէքէճեան այս լեզուին եւ մեր ազգային ժառանգութեան մէջ անոր ցաւցնող դերակատարութեան վերաբերեալ կը կատարէ հետեւեալ խորաթափանց հարցազրուիւմը. «Հարսներէ-



նր կը մղէ հարց տալու, թէ արդեօք որքան կիսատ մնացած է հայ մշակութային ժառանգութիւնը եւ պատմութիւնը, երբ երկրին բնակչութեան շուրջ կէսը իր կեանքին կարեւոր մէկ ժամանակահատուածին ընթացքին բռնի մնացած է համր»:

Քէքէճեանի համաձայն, հարսներէնը կարելի է հետազօտել եւ-

թայի համայնարանին մէկ գիտաշխատանոցին մէջ կամ՝ Հայաստանի գիւղական մէկ եկեղեցիին: Յարդ հարսներէնի ուսումնասիրութեան համար գրոյցներ տեղի ունեցած են տուններու, եկեղեցիներու եւ հանրային կեդրոններու մէջ:

«ԱԿՕՍ»

*Merry Christmas
and a Happy, Healthy
and Peaceful
New Year*

**Zaven and Sonia Akian
and Family**

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳՐՈՂ ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ ՀԵՏ

«Գրելու Համար Ապրել է Պէտք»

Ջրուցեց՝ ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ

Քաղաք, անհատներ, ճակատագրեր, երջանիկ ու դժբախտ մարդկանց երազանքներ, կարոտներ ու սէրեր. այս մասին է գրում ժամանակակից հեղինակ Դաիթ Սամուելեանը, գրող, որի «Արտագաղթած Կարոտ», «Ռոդենի Ձմեռը», «Հակաքաղաքական» գրքերն արժանացել են ընթերցողների բարձր գնահատականին: Գրականություն, քաղաքի, մտահոգությունների ու անհանգստությունների մասին «Արմենպրես»-ի թղթակիցը զրուցել է Դաիթ Սամուելեանի հետ՝ փորձելով բացայայտել հեղինակի գաղտնիքները:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Մասնագիտությամբ աստուածաբան էի, բայց հանրության լայն շրջանակը ձեզ ցանաչում է որ-

ժամանակ շատ եմ կարդացել. նաեւ ինձ Համար էին շատ կարդում՝ սկսած թունանեանի, Գրիմ եղբայրների, Անդերսենի հեքիաթներից, աւարտուած տարբեր ժողովուրդների հեքիաթներով: Երբ ինքս սկսեցի ընթերցել, կարդում էի ամէն տարիքին բնորոշ գրքեր, միանգամից նիցչէ կամ Շոպենհաուեր չեմ կարդացել: Սիրում էի արկածային, պատմական գրականություն:

Եթե որդեգր դասարանում սիրահարուել էի Գոհարին: Նա գանգրահեր էր, գեղեցիկ, ասես սարերի աղջիկ լինէր: Կարդացածս Համարների զգացմունքներին հետ ու թունանեանի «Մարո» պոէմի ոճով մի գործ գրեցի: Այն չնուրեցի Հասցէատիրոջը, բայց տետրը, որում գրել եմ, պահպանուել է:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Ինչո՞ւ չնուիրեցիք, ի՞նչը խանգարեց:



ՎԻՏԱԿՆԱՆՆԻ ՆԱԳՐԱՆԻՊՈՒՄ

պէս գրողի: Աստուածաբանութիւնը տարաւ դէպի գրականութիւն, թէ՞ հակառակը:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Աւելի յաճախ ասում են կրօնագէտ, ոչ աստուածաբան: Կրօնական իմացություն շատ քիչ մասն օգտագործուեց իմ գրական գործերում, այն էլ սկզբնական շրջանում: Երբ 2014 թուականին տպագրուեց «Նա եւ Նրա» գիրքը, մինչ այն ընթերցելը, մարդկանց թուում էր, որ «նա»ն հակառակ սեռի ներկայացուցիչն է, բայց խօսքն Աստուծոյ մասին էր: Կարծում էին՝ ոտմանտիկ ոճով գրուած գիրք է, բայց բոլորովին այլ գրոյց էր: Այդ գիծը շարունակուեց «Ռոդենի Ձմեռը» գրքում, որում գետեղուած պատմութեանը խորհրդանշական, ուսուցանող նոտաներ կան: «Չորրորդ Փողոց» պատմութեանը գործողութիւնները ծաւալուում են եկեղեցու շինարարութեանը զուգահեռ: Այն ընթերցելով՝ շատերը կարծում էին, որ դէմ եմ եկեղեցուն, բայց այդպէս չէ: Փորձել եմ օրյեկտի (առարկայական-Նմբ.) լինել ու ցոյց տալ բոլոր կողմերը, քանի որ մեր օրերում այնպէս չէ, որ ամէն բան լաւ է կամ ամէն բան վատ է: Ե՛ւ լաւը կայ, ե՛ւ վատը:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Խօսեցիք ձեր երկու գրքերից, իսկ յիշո՞ւմ էի, թէ ե՛րբ եւ ի՞նչ հանգամանքներում է ծնուել առաջին ստեղծագործութիւնը: Ինչի՞ մասին էր այն:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Փոքր

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Ամալկոտ էի: Կարծում էի՝ եթէ խոստովանեմ զգացմունքներս, գուցէ կորցնեմ նրան: Չէի գիտակցում, թէ ի՞նչ եմ կորցնելու. գուցէ նրան չկորցնէի: Հաճելի էր այդ զգացողութիւնը: Երբ երրորդ դասարանում առաջին անգամ սիրահարուել էի, չէի հասկանում, թէ ինչ է հետս կատարում, լաց էի լինում: Նրա դիմագծերը տպաւորուել էին, անընդհատ աչքիս առաջ էր:

Եթե որդեգր դասարանում գրածս ստեղծագործութիւնից յետոյ չեմ գրել: Նորից գրեցի 2005 թուականին. բանաստեղծութիւն էր: Սեմինարի էի մասնակցում ու ձեռքիս տակ տետր ու գրիչ կար: Փոխանակ դասախօսութեանը հետեւելու, տողեր գրեցի, քանի որ կրկին սիրահարուած էի: Յոյց տուեցի դասախօսիս, նա ասաց, որ անհրաժեշտ է այն տպել: Ընդդիմացայ, բայց չլսեց ինձ ու ԳՀԻ թերթում տպագրեց այդ բանաստեղծութիւնը:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Ձեր մտքում մնեցրը, մտահոգութիւններն ու յուշերը թղթին վիճակացելն ինքնաարտայայտման միջոց է, թէ...

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Ժամանակին ստեղծագործելն իմ մենակութիւնն էր լցնում: Այնպիսի շրջան էր, որ անգամ արտաքին աշխարհից էի կտրուած: Բանտարկուած չէի, բայց այդտեղ այլ բան էր կատարում, աշխարհում՝ այլ: Մտաւայում էի: Իսկ երբ աչ-



խատում էի Սեւանի «Վազգէնեան» հոգեւոր ձեւարանում, հասկացայ Լեւոն Շանթի «Հին Աստուածներ»-ը: Յաճախ ենք ինքներս մեզ հետ խօսակցութիւնը յանձնում թղթին:

Ըստ իս՝ ստեղծագործելը ճննդաբերութեան պէս է: Երբ ներսումդ խորուում է նիւթը, հոգիդ ցաւում է: Գրում ես ու գրում, երբ վերջակէտ պէտք է դնես, ազատում ես, ու ծնուած գործը դառնում է երեխադ:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Գրում էի մարդկային յոյզերի ապրումների, ցանկութիւնների ու նպատակների մասին: Ձեր գործերում իր ուրայն տեղն ունի նաեւ քաղաքը: Ըստ ձեզ՝ ի՞նչ գոյն ունի Երեւանը այսօր: Ի՞նչ դրական կամ

բացասական փոփոխութիւնների է այն ենթարկուում տարեցտարի:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Մի օր վաղ առաւօտեան բարձրացէք Մոնումենտ («Յաղթանակի այգի»-ին տարածքը-Նմբ.) ու նայէք քաղաքին, կը տեսնէք, թէ ի՞նչ հաստ շերտով ծուխ է իջել քաղաքի վրայ: Անգոյն է դարձել քաղաքը, քաղաքային կոլորիտը կորել է, քանի որ ուրբանիզացիայի (քաղաքակեդրոնացում-Նմբ.) արդիւնքում տարբեր մարդիկ են յայտնուել քաղաքում՝ բերելով իրենց մշակոյթն ու հակամշակոյթը: Երբեմն չես հասկանում, թէ ինչ է կատարում շուրջդ. մարդիկ անընդհատ շտապում են, խելաները շտապել են, ու խելառ լինելն է մոդայիկ դարձել: Դիմա-



«Գրելու Համար Ապրել է Պէտք»

գիծը կորել է: Երբ տարիներ առաջ ճանաչեցի քաղաքը, այն ինքնատիպ էր, դէմք ունէր, հանգստանում էի այստեղ: Մեզ քաղաքում պահում են մարդիկ, եւ իմ վերջին գրքում նման տողեր կան. «Եւ ի՞նչ են քաղաքները, եթէ ոչ մարդիկ»: Քաղաքը մարդկանցով եւ սիրում, դատարկ քաղաքը ոչ ոքի պէտք չէ:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Կանադայի վարչապետ Ջասթին Տրիդոն «Ունիտարի Թայտարար» գրքում իրախուսում է մշակութային բազմազանությունը՝ նշելով, որ այն հարստացնում է Կանադան...

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Կանադան կարող է նման բան թող տալ, քանի որ չունի իր իրական մշակույթը: Նրանք պէտք է պահպանեն այն, ինչ ունեն ուրիշները: Մի բան էլ կայ. այն, ինչ գալիս է, ոչ թէ պէտք է աւերի, այլ պէտք է զարգացնի:

Այսօր եթէ մէկին հարցնես, թէ ի՞նչ արժեհամակարգի կրող է, նա կը զարմանայ, որովհետեւ չի լսել այդ բառը եւ չունի այդ հարցի պատասխանը: Եթէ արժեհամակարգ ունեցող մարդիկ են ապրում քաղաքում, զարգացում կարող է լինել: Կանադան ամէն մէկին չի ընդունում է մարդկանց, որոնք կարող են օգտակար լինել իրենց, իսկ մեր երկրից հեռանում են բարձր արժեհամակարգի կրողները:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Ասում են՝ գրականությունը հա-

սարակութեան արտայայտութիւնն է, ինչպէս որ բառը՝ մարդու:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Իւրաքանչիւր գրականութիւն իր ժամանակաշրջանի ծնունդն է, եւ կապ չունի, թէ ինչ ես գրում, որովհետեւ բառը դառնում է գիր, իսկ բառը կրողն այն մարդն է, որն ապրում է տուեալ ժամանակաշրջանում: Երբ դէմ ես այդ շրջանին, հակաուտոպիա (հակապատրանք-Նժժ.) ես գրում, եթէ կառչած ես, գրականութիւնդ իրատեսական է՝ ստացւում, եթէ քեզ չես գտնում այդ երկրագնդի վրայ, առաջ է գալիս գրական ֆանտաստիկան (երեւակայածին գրականութիւնը-Նժժ.), իսկ եթէ շատ ես զգում, ձգտում ես դէպի բարին, սէրը, եթերայինը:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Վերջերս ընթերցողներին ներկայացրիք «Հակաբաղադրական» գիրքը, որը, ինչպէս ասել էք, կապ չունի բաղադրականութեան հետ: Կը բացէ՞ք փակագծերը:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Վերնագիրը գրաւիչ է, բայց մարդկանց չփոթութեան մէջ է գցում: Այն քաղաքականութեան մասին չէ: Իմ հերոսներն այլ արժեհամակարգով են ապրում, այլ առօրեայ ունեն, ճակատ-ճակատի հանդիպում են քաղաքական դրսեւորումներին ու դէմ դուրս գալիս դրանց: Ոստել եմ հասարակութեան մէջ եղած դրսեւորումների մասին, որոնք անընդունելի են

ինձ համար: Երբեմն կարծում եմ, որ շատ եմ իղէալիստ, բայց երբ մարդը բանուոր է, նրա երեսից, մատներից չպէտք է երեւայ դա, եթէ ֆինանսապէս վատ վիճակում է, չպէտք է բարոյալքուի, չպէտք է սրիկայ դառնայ: Դա կախուած է նաեւ մարդու կրթութեան մասին: Այսօր ամբողջ աշխարհում մարդիկ արդարացնում են ստորութիւնը, քաղքենիութիւնը սոցիալական վատ վիճակով: Ես չեմ ասում, որ պէտք է աղքատ ու հպարտ լինել, բայց ինչո՞ւ պէտք է բոլորը քո ցաւով ապրեն, ինչո՞ւ ես դու այդքան կեղտոտ թէ՛ ներքուստ, թէ՛ արտաքուստ:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Դառնացած էք երեսում:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Բնաւ: Իրականութիւնն է այդպիսին:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Դաւիթ, իսկ գրականութիւնն ի՞նչ կարեւորութիւն ու դերակատարութիւն ունի արժեհամակարգի ձեւաւորման հարցում: Հաւանաբար, կը համաձայնէք, որ յատկապէս վերջին տարիներին մարդիկ սկսել են կարգաւ, սիրել գիրքը: Հրատարակչությունները լաւ աշխատեցին, գրողներն ակտիւացան... Լաւ, այդ գրականութիւնը չի՞ կարող տալ հարցերի պատասխաններ ու նպաստել բաղադրական հասարակութեան ձեւաւորմանը:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Հարցն այն է, թէ մարդն ինչո՞ւ է կարողում, ի՞նչ նպատակով: Եթէ փողոցում որեւէ մէկին կանգնեցնենք ու հարցեր ուղղենք, նա կատարեալ պատասխաններ կը գտնի, բայց երբ հարցը վերաբերում է կիրառելուն, նա չի անում դա, որովհետեւ մենք բոլորս ուսուցիչներ ենք, նախագահներ: Իհարկէ, գրականութիւնը կրթում է, բայց ազդեցութիւնը քիչ է, քանի որ, երբ մարդը դուրս է գալիս փողոց ու իր կարգացածի հակառակն է տեսնում, յուսահատում է:

Երբ Աստուածաշունչ ես կարողում, ուզում ես հոգիդ բարութեամբ լցնել: Դուրս ես գալիս փողոց ու տեսնում ես, որ Սողոմ Գոմորում ես ապրում. ինչպէ՞ս կարող ես բարի լինել, ախր վրայովդ կ'անցնեն: Գրքում ասում եմ, որ ազնիւ լինելու համար, հաւանաբար, միամիտ պէտք է լինել: Երբեմն մտածում եմ, որ անհրաժեշտ է կենցաղի ձեւը որոշել, ընտրել միջավայր ու ականջները փակել: Այս քաղաքում ապրելու համար կա՛մ խենթ պէտք է լինես, կա՛մ սրիկայ:

ԱՆԺԵԼԱ ՀԱՄԱՐՁՈՒՄԵԱՆ.- Մի առիթով ասել էք, որ որպէս հեղինակ պէտք է պատասխանատու լինել բ'լ ասածի, բ'լ գրածի համար: Սկզբում քայլի՞ք էք:

ԴԱԻԻԹ ՍԱՄՈՒԷԼԵԱՆ.- Ոոստումները չպէտք է տալ դրժելու
→



Haig and Argine Kelegian & Family Michelle Shrikian & Family

Wish You a Happy, Healthy & Prosperous New Year

Երանի Այն Աչբերին, Որ Տեսնում են...

ԼԻԼԻԹ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Շուէդ Հանրայայտ գրող, Նոբելեան մրցանակի դափնեկիր Սելմա Լագերլեոֆը խորապէս հաւատացեալ մարդ էր եւ լիովին համոզուած էր, որ երեխան որպէս անհատականութիւն է ձեւաւորուում փոքր հասակում, երբ լսում է մեծերի պատմած հեքիաթներն ու պատմութիւնները. այդ ժամանակ է նա ստանում բարոյականութեան մասին իր առաջին պատկերացումները: Եւ Յիսուս Նազովրեցու կերպարը բացայայտ կամ անտեսանելիորէն ներկայ է Լագերլեոֆի բոլոր ստեղծագործութիւններում: Յիսուս Քրիստոսի մէջ նա տեսնում էր մարդկութեան պատմութեան կենտրոնական կերպարը, իմաստն ու նպատակը:

Լագերլեոֆը համոզուած էր, որ ամէն մի քրիստոնեայ պարտաւոր է իմանալ Աստուածաշունչը. նա,

ով չի ճանաչում Աստծուն ու չի քայլում նրա խօսքի համաձայն, նման է խաւարի մէջ խարխափող մարդու... Իսկ քրիստոնէութեան եւ աստուածաշնչեան դէպքերի մասին երեխաներին պատմելը հեշտ չէր, եւ նա ընտրեց իր՝ միանգամայն ինքնատիպ ուղին: Աւետարանական դէպքերի մասին պատմող նրա ստեղծագործութիւնը կոչուեց «Լեգենդներ Յիսուսի Մասին». այն գրուած էր պարզ, երեխաներին մատչելի յորինուածքով: Շարքը բաղկացած է տասներկու պատմութիւններից, որոնք հեղինակը գրել է Սուրբ երկիր կատարած ճանապարհորդութիւնից յետոյ: Պատմութիւններից իւրաքանչիւրը նուիրուած է Յիսուսի երկրային կեանքի որեւէ իրադարձութեան, սակայն ավետարանական դէպքերը ներկայացուած են ոչ թէ կանոնական ձեւով, այլ երեխաների համար հարազատ գոյներով ու ոգով:



դրա շնորհիւ իրար կարծես աւելի են մօտենում ժամանակները, երկինքն ու երկիրը, մարդկանց սրտերը... Աշխարհը լցում է աստուածային լոյսով ու անսահման գթասրտութեամբ, մարդկանց սրտերը՝ Աստծոյ մեծութեան ընկալման բերկրանքով ու ցնծութեամբ... Ու ամբողջ տիեզերքը դառնում է անբաժանելի միութիւն...

Բայց երկրի ու երկնքի համապարփակ այս ուրախութեան, ցնծութեան, երգեցեղութեան մէջ յանկարծ հոգումդ սուր կսկիծով են արձագանգում համընդհանուր յաղթանակի, յոյսի ու լոյսի բառերը, որովհետեւ դրանց խորհուրդը յայտնի է միայն Տիրամորը.

Համար, բառերը պէտք է չասուն մոռացուելու համար: Մենք սովոր ենք կատեգորիկ (բացարձակ-Պմբ.) բառեր օգտագործել՝ յաներժ, միշտ, երբեք: Մի՛ ասա բաներ, որոնց համար կ'ափսոսաս, մի՛ տուր խոստումներ, որոնք չեն կարող կատարել: Մէկ-մէկ խոստովանում եմ, որ երկնքից աստղեր բերող տղայ չեմ: Աւելի լաւ է չասեմ ու բերեմ:

Նշեմ, որ այս պահին նոր ստեղծագործութիւնը մտքումս է,

բայց դեռ թղթին չեմ յանձնել... Ինձ համար մուսան կեանքն է: Մի հանդիպումը կարող է մտածելու տեղի տալ, մի պահի ապրած լաւ զգացողութիւնը կարող է գրելու առիթ դառնալ: Ապրել է պէտք: Ես չեմ հասկանում այն գրողներին, որոնք կարող են սենեակում փակուել, գրել ու ջնջել՝ չիմանալով, թէ ի՞նչ է կատարում աշխարհում: Գրելու համար ապրել է պէտք:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

Շարքի առաջին պատմութիւնը «Սուրբ Գիշեր»ն է (ներկայացւում է ստորեւ). երկրի վրայ ծնուեց մարդկութեան Փրկիչը. «Փառք Աստծուն երկնքում, երկրի վրայ՝ խաղաղութիւն»:

Յիսուս մանուկի ծննդեան հրաշքի մասին Սելմա Լագերլեոֆի պատմութիւնը հիւսուած է մանկական ամենաթանկ յիշողութիւնների, ընտանեկան ջերմիկ զգացումների, տխուր եւ ուրախ ապրումների, գոյների ու ձայների նրբին թելերով. գուցէ հէնց

«Մնուեց Փրկիչը, որ քաւելու է աշխարհի մեղքը». ծնուեց Գառն Աստուծոյ: Տիրամայրը գիտի ու հեղութեամբ պատրաստ է Զոհաբերութեանը. «...Մարիամն այդ ամէնը պահում էր իր սրտում եւ մտորում: (Ղուկ. 2.19):

«Գեղեցիկը կը փրկի աշխարհը», ասում էր Ֆ. Դոստոեւսկին, եւ դա բացարձակ ճշմարտութիւնն էր: Իսկ այդ գեղեցկութեան մարմնաւորումը նրա համար Ռաֆայելի «Սիքստինեան Տիրա»

Wishing You Peace,
Love and Joy
for This Season

Krikor and Magda
Hovsepian

Julie, Dina and Christopher

Երանի Այն Աչքերին, Որ Տեսնում են...

մայր»ն էր: Տիրամօր այս կերպարի մէջ ամփոփուած կանացի զգայականութիւնից ու քնքշութիւնից, մաքրութիւնից ու հմայքից, ոգեղենութիւնից ու սրբութիւնից, անհուն սիրուց ու զոհաբերութեան պատրաստ խոնարհութիւնից միահիւսուած այս Գեղեցկութիւնն է, որ կարող է փրկել աշխարհը:

Եւ ամէն տարի Սուրբ Ծնունդին, երբ երկնքում ու երկրի վրայ հրեշտակներն աւետում են մեր Տիրոջ ու Փրկչի Ծնունդը, եւ մենք ցնծում ու շնորհաւորում ենք միմեանց, յիշենք Տիրամօրը եւ փորձենք աշխարհում եւ մեր սրտերում աւելացնել սէրն ու գթասրտութիւնը... գեղեցկութիւնը, որը պիտի փրկի աշխարհը...

«Սուրբ Գիշեր»

ՍԵՆՄԱ ԼԱԳԵՐԼԵՈՅ

Երբ ես հինգ տարեկան էի, ինձ հետ շատ մեծ դժբախտութիւն պատահեց: Աւելի մեծ դժբախտութիւն դրանից յետոյ ես կարծես թէ չեմ ունեցել: Մահացաւ տատիկս: Մինչեւ կեանքի վերջը նա օրերն անցկացնում էր իր սենեակում՝ անկիւնային բազմոցին նստած, մեզ հեքիաթ պատմելով: Տատիկը առաւօտից մինչեւ երեկոյ հեքիաթ էր պատմում, իսկ մենք՝ երեխաներս, նրա կողքին



լուռ նստած, լսում էինք: Հրաշալի կեանք էր: Ուրիշ երեխաներ մեզ նման չէին ապրում: Յիշողութեանս մէջ տատիկիս մասին քիչ բան է պահպանուել: Յիշում եմ, որ նա գեղեցիկ ձիւնածերմակ մազեր ունէր, որ քայլում էր բոլորովին կորացած եւ միշտ գուպա էր գործում: Յիշում եմ, որ երբ վերջացնում էր ինչ-որ հեքիաթ պատմելը, ձեռքը դնում էր գլխիս ու ասում. «Եւ այս ամէնը նոյնքան իրական է, որքան այն, որ մենք հիմա տեսնում ենք միմեանց»: Յիշում եմ նաեւ, որ նա սքանչելի երգեր էր երգում, սակայն երգում էր դրանք շատ հազուադէպ: Այդ երգերից մէկում պատմում էր ասպետի եւ ծովային արքայադստեր մասին, եւ այն այսպիսի կրկներգ ունէր. «Եւ

սառնաշունչ քամի փչեց ծովի վրայով»: Յիշում եմ նաեւ այն փոքրիկ աղօթքն ու սաղմոսը, որ նա ինձ սովորեցրեց: Բոլոր այն հեքիաթների մասին, որ տատիկն ինձ պատմում էր, շատ աղօտ ու աղքատիկ յիշողութիւններ են պահպանուել: Դրանցից միայն մէկն է որ այնքան լաւ եմ յիշում, որ կարող եմ վերապատմել: Դա Քրիստոսի ծննդեան մասին փոքրիկ լեզենդ է: Ահա գրեթէ այն ամէնը, ինչ կարողանում եմ մտաբերել տատիկիս մասին, բացի մեծագոյն կորուստի զգացումից, որն ունեցայ, երբ նա հեռացաւ մեզանից, - եւ դա յիշում եմ բոլորից լաւ: Յիշում եմ այն առաւօտը, երբ անկիւնում դրուած բազմոցը դատարկ էր մնացել, եւ անհնարին էր պատկերացնել, թէ ե՞րբ է աւարտուելու այդ օրը: Դա ես երբեք չեմ մոռանայ: Եւ յիշում եմ, թէ ինչպէ՛ս մեզ՝ երեխաներիս, մօտեցրին ննջեցեալին, որ հրաժեշտ տանք նրան ու համբուրենք նրա ձեռքը: Մենք վախենում էինք համբուրել հանգուցեալին, բայց ինչ-որ մէկն ասաց, որ վերջին անգամ է, երբ մենք կարող են շնորհակալութիւն յայտնել տատիկին բոլոր այն ուրախութիւնների համար, որոնք նա մեզ պարգեւում էր:

Յիշում եմ, թէ ինչպէ՛ս բոլոր երգերն ու հեքիաթները, երկար սեւ արկղի մէջ դասաւորուած, տատիկի հետ գնացին մեր բակից ու այլեւս երբեք չվերադարձան: Այն ժամանակ ինչ-որ բան հեռացաւ մեր կեանքից: Ասես ընդմիջտ կողպուեց այն դուռը, որ տանում էր դէպի լայնարձակ, գեղեցիկ կախարդական աշխարհը, որտեղ մենք նախկինում ազատօրէն շրջում էինք: Մենք աստիճանաբար սովորեցինք խաղալ տիկնիկներով ու խաղալիքներով ու ապրել այնպէս, ինչպէս ապրում էին միւս երեխաները, եւ կարող էր թուալ, թէ մենք այլեւս չենք տիրում տատիկի համար ու չենք յիշում նրա մասին: Բայց նոյնիսկ այս պահին՝ քառասուն տարի անց, երբ նստած մտաբերում եմ Քրիստոսի մասին լեզենդները, որոնք ես լսել եմ Արեւելքում, յիշողութեանս մէջ յանում է Քրիստոսի ծննդեան մասին այն զրոյցը, որը սիրում էր պատմել տատիկս: Եւ ես ուզում եմ ինքս պատմել ու ընդգրկել այն իմ ժողովածուի մէջ:

Սուրբ Ծննդեան ճրագալոյցն էր. տատիկից ու ինձից բացի՝ բոլորը գնացել էին եկեղեցի: Եւ մենք կարծես մենակ էինք ամբողջ տանը: Մեզ չէին տարել իրենց հետ,

որովհետեւ մեզանից մէկը շատ փոքր էր, իսկ միւսը՝ շատ ծեր: Երկուսս էլ շատ վշտացած էինք, որ չենք կարող ներկայ գտնուել հանդիսաւոր արարողութեանն ու տեսնել Սուրբ Ծննդեան մոմերի շողարձակումը: Ու երբ մենք նստած էինք մեր միայնութեան մէջ, տատիկը սկսեց պատմել.

«Ինչ որ ժամանակ մի մարդ մութ գիշերով փողոց դուրս եկաւ՝ կրակ հայթայթելու: Նա մի խրճիթից միւսին էր անցնում ու թակում դռները:

- Օգնեցէ՛ք ինձ, բարի մարդիկ, - ասում էր նա, - կինս նոր է երեխայ ունեցել. ես պէտք է կրակ վառեմ, որ տաքացնեմ նրանց:

Բայց խոր գիշեր էր, եւ բոլոր մարդիկ քնած էին: Ոչ ոք չէր արձագանգում նրա խնդրանքին: Մարդը աւելի ու աւելի հեռու էր գնում: Վերջապէս առջեւում ինչ-որ տեղ թրթռացող կրակ նշմարեց: Նա այդ կողմն ուղեւորուեց ու հասաւ բացօթեայ խարոյկին, որի շուրջը բազմաթիւ սպիտակ գառներ էին քնած, իսկ ծեր հովիւր, նստած, հսկում էր իր հօտը: Երբ կրակ փնտռող մարդը մօտեցաւ գառներին, տեսաւ, որ հովուի ոտքերի մօտ երեք շուն կար քնած: Նրա մօտենալուն պէս երեքն էլ արթնացան եւ լայն բացեցին իրենց հսկայական երախները, կարծես պատրաստուած էին հաջելու, բայց որեւէ ձայն դուրս չեկաւ նրանցից: Մարդը տեսաւ, թէ ինչպէ՛ս շների մէջքի մազերը ցից-ցից կանգնեցին, ինչպէ՛ս սպիտակ ատամները շրջուցիչ փայլեցին խարոյկի լոյսից, եւ նրանք նետուեցին իր կողմը: Ձգաց, ինչպէ՛ս շներից մէկը բռնեց իր ոտքը, միւսը՝ թեւը, երրորդը ատամները խրեց իր կողմը: Սակայն ծնօտներն ու ատամները չէին ենթարկուում շներին, եւ նրանք մի կողմ քաշուեցին՝ առանց դոյզն-ինչ վնասելու:

Յետոյ մարդն ուզեց առաջանալ, սակայն գառները մէջք-մէջքի այնքան խիտ էին պտուկած, որ նա չէր կարողանում անցնել դրանց միջով: Այդ ժամանակ դէպի կրակը գնաց գառների վրայով: Եւ գառներից ոչ մէկը չարթնացաւ ու չչարժվեց»:

Մինչ այս պահը տատիկը պատմում էր առանց դադարի, բայց ես չկարողացայ զսպել ինձ, որ չընդհատեմ նրան.

- Բայց ինչո՞ւ նրանք չչարժուեցին, տատիկ. չէ՞ որ գառներն այնքան երկչոտ են:

- Ծուտով կ'իմանաս, - ասաց տատիկը եւ շարունակեց իր

Phoenix - Arizona

**ARF Kevork Chavoush
ARS Ararat Chapter
AYF Kedashen Chapter
Homenetmen Phoenix
ANC of Arizona**

**Հայ Դատի
պահանջատիրական
պայքարին
մեծ ուսում մը
կը մաղթենք**

Երանի՛ Այն Աչքերին, Որ Տեսնում են...

պատմությունը.

«Երբ մարդը բաւականաչափ մօտեցաւ խարոյկին, հովիւր բարձրացրեց գլուխը. մի մոայլ ծերունի էր, որ կոպիտ ու անբարեհամբոյր էր բոլորի հետ: Եւ երբ նա տեսաւ, որ իրեն անծանօթ մարդ է մօտենում, արագօրէն վերցրեց երկար, սրածայր ցուպը, որով միշտ շրջում էր հօտի հետ, ու նետեց մարդու վրայ: Յուպը սլացաւ ճիշդ մարդու ուղղութեամբ, բայց չեղունեց ու գնաց դէպի դաշտի միւս ծայրը»:

Եւ կրկին ընդհատեցի տատիկին.
- Բայց ինչո՞ւ ցուպը չկաւ մարդուն:

Տատիկը ոչինչ չպատասխանեց ու շարունակեց.

«Այդ ժամանակ մարդը մօտեցաւ հովուին ու ասաց նրան.

- Բարեկա՛մս, օգնի՛ր, կրակ տուր ինձ: Կինս նոր է երեխայ ունեցել. ես պէտք է կրակ վառեմ, որ տաքացնեմ նրանց:

Մերունին կը գերազասէր մերժել, բայց երբ յիշեց չներին, որոնք չկարողացան կծել այդ մարդուն, գառներին, որոնք չփախան նրանից, ցուպը, որը չդիպաւ նրան,- չհամարձակուեց մերժել նրա խնդրանքը:

- Վերցրո՛ւ որքան որ անհարածեչտ է,- ասաց հովիւր:

Բայց կրակը գրեթէ մարել էր, եւ ոչ մի կտոր փայտ, ոչ մի տաշեղ չէր մնացել այլեւս. մի կոյտ շիկածուխ կար միայն: Իսկ անծանօթը ո՛չ բա՛հ ունէր, ո՛չ թիակ, որոնցով կարողանար շիկացած

ածուխի կտորները վերցնել: Դա տեսնելով՝ հովիւր կրկնեց՝ վերցրո՛ւ որքան պէտք է՝ ներքուստ ուրախանալով այն մտքից, որ մարդը չի կարողանայ իր հետ կրակ տանել: Բայց մարդը խոնարհուեց, ձեռքերով կրակից մի քանի ածուխ ընտրեց ու դրեց հագուստի քղանցքի մէջ: Եւ ածուխները չայրեցին նրա ափերը, երբ նա վերցնում էր դրանք, ու չայրեցին նաեւ նրա հագուստը. մարդը տարաւ ածուխներն այնպէս, կարծես խնձորներ կամ ընկոյզներ լինէին»:

Այստեղ ես երրորդ անգամ ընդհատեցի.

- Տատի՛կ, իսկ ինչո՞ւ ածուխները չայրեցին նրան:

- Յետոյ կ'իմանաս,- պատասխանեց տատիկը եւ շարունակեց:

«Երբ չար ու ջղային հովիւր տեսաւ այս ամէնը, շատ զարմացաւ. «Այս ի՞նչ գիշեր է, որ չները չեն կծում, գառները չեն երկնչում, ցուպը չի սպանում, եւ կրակը չի այրում»: Նա կանգնեցրեց անծանօթին ու հարցրեց.

- Այս ի՞նչ գիշեր է: Եւ ինչո՞ւ բոլոր կենդանիներն ու իրերը գթառատ են քո նկատմամբ:

- Ես չեմ կարող դա քեզ բացատրել, եթէ դու ինքդ չես տեսնում,- պատասխանեց անծանօթը եւ գնաց իր ճանապարհով, որպէսզի շտապ կրակ վառի ու տաքացնի իր կնոջն ու երեխային: Հովիւր որոշեց տեսադաշտից չկորցնել մարդուն այնքան ժամանակ, մինչեւ չպարզի, թէ այս ամէնն ի՞նչ

է նշանակում: Նա վեր կացաւ ու հետեւեց մարդուն մինչեւ նրա կացարանը: Պարզուեց, որ անծանօթը հիւղակ անգամ չունի ապրելու համար, որ նրա կինն ու նորածին մանուկը պառկած են սառը քարայրում, որտեղ ոչինչ չկայ՝ լերկ, քարէ պատերից բացի: Հովիւր մտածեց, որ անմեղ մանուկը կարող է սառչել ու մեռնել այդ քարայրի մէջ, ու թէ-եւ նա անողորմ մարդ էր, արաստուելու աստիճան յուզուեց ու որոշեց օգնել փոքրիկին: Ուսից իջեցնելով պարկը՝ այնտեղից հանեց գառան ճերմակ փափուկ մորթին ու տուեց անծանօթին, որպէսզի նա երեխային պառկեցնի դրա վրայ: Եւ նոյն վայրկեանին, երբ պարզ դարձաւ, որ հովիւր նոյնպէս կարող է գթասիրտ լինել, նրա աչքերը բացուեցին, եւ նա տեսաւ այն, ինչը մինչ այդ չէր կարողանում տեսնել, եւ լսեց այն, ինչը մինչ այդ չէր կարողանում լսել: Նա տեսաւ, որ իրեն խիտ օղակով շրջանակել էին արծաթաթել հրեշտակները. իւրաքանչիւրի ձեռքում տաւիղ կար, եւ բոլորը զրնգուն ձայներով երգում էին այն մասին, որ այդ գիշեր ծնուել է Փրկիչը, որ քաւելու է աշխարհի մեղքը: Այն ժամանակ հովիւր հասկացաւ, թէ ինչո՞ւ բնութեան մէջ ամէն ինչ ուրախանում էր այդ գիշեր, եւ ինչո՞ւ ոչ ոք չէր կարողանում վնասել Մանուկի հօրը: Հովիւր շուրջը նայեց ու տեսաւ, որ հրեշտակ-

ներն ամէնուր էին: Նրանք նստած էին քարայրում, իջնում էին սարերից, ճախրում էին երկնակամարում... Նրանք հսկայական խմբերով անցնում էին ճանապարհով, եւ երբ հասնում էին քարայրին, կանգ էին առնում ու բերկրալի հայեացք նետում Մանուկան կողմը: Եւ ամէնուր ցնծութիւն էր, ուրախութիւն, երգեցողութիւն, խնդրութիւն... Այս ամէնը հովիւր տեսաւ գիշերային խաւարում, որտեղ նախկինում ոչինչ չէր նշմարուում: Եւ նա, ուրախացած, որ իր աչքերը բացուել են, ծնկեց ու աղօթեց՝ Աստծուն յայտնելով իր երախտագիտութիւնը»:

Այս խօսքերի վրայ տատիկը խոր հոգոց հանեց ու ասաց.

- Գիտե՞ս, այն, ինչ տեսաւ հովիւրը, մենք էլ կարող էինք տեսնել, որովհետեւ ամէն տարի Սուրբ Մննդեան գիշերը հրեշտակները ճախրում են երկնակամարում: Եթէ միայն մենք կարողանայինք տեսնել... Եւ ձեռքը դնելով գլխիս՝ տատիկն աւելացրեց.

- Յիշի՛ր, որովհետեւ դա նոյնքան իրական է, որքան այն, որ մենք հիմա տեսնում ենք միմեանց. կարեւորը մոմերն ու լամպերը չեն, եւ ոչ էլ արեւն ու լուսինը, այլ այնպիսի աչքեր ունենալը, որոնք կարողանում են տեսնել ԱՍՏՄՈՅ Մեծութիւնը...

Թարգմ.
ԼԻԼԻԹ ՏԷՐ ԳՐԻԳՈՐԵԱՆ

**Mr. & Mrs. Meher & Satig
Der Ohanessian
& Family**

**We wish
all our family and friends
a Happy, Healthy and Prosperous
New Year**

Մեր Նախնիները Ինչպես Էին Դիմաւորում Նոր Տարին

Բարձր Հայքում ձերմակ ցորենի Հաց էին թխում, կէսը ուտում էին Հին տարում, միւս կէսը՝ նոր տարում, կարծես խնդրելով Հայոց աստուածներին, որ Նոր Տարին Հին տարուայ պէս Հացառատ լինի:

Աղձնիքում Նոր Տարուայ ուտելիքներով ծանրաբեռնուած սեղանի վրայ մի քանի բուռ Հացահատիկով փոքր բլուր էին պատրաստում եւ ասում.


«Հիմա Անահիտ աստուածուհին կը գայ, կը շնորհաւորի Նոր Տարին, մի պատառ Հաց կը վերցնի ու գալիք տարում ցորենի բլուրներով կը վարձատրի մեր արդար աշխատանքը»:

Տուրուբերանում Նոր Տարուայ սահմանազլխին թոնիր էին վառում եւ թարմ լաւաշի բոյրով լցնում տունը:

Վասպուրականում Նոր Տարուայ նախօրեակին գինու բոլոր կարասների ու տիկերի բերանները փակում էին, կարծելով, թէ Հայոց Ամանորի պատանի աստուածը կարող է գինի խմել, Հարբել ու մոլորուել: Բայց, նկատի առնելով, որ Ամանորը երկար ճամբայ է անցել եւ կարող է քաղցած լինի, նրա Համար կարասների եւ տիկերի բերաններին մէկական կտոր թարմ Հաց էին դնում:

Մոփքում ցորենը աղանձ էին անում, մի մասը ուտում էին, մի մասը լցնում գետը կամ առուն՝ նուիրելով անձրեւի աստծուն՝ գալիք տարին ցորենաբեր լինելու Համար:

Կորճայքում տան գլխաւորը չորքթաթ շրջում էի սենեակի մէջ



եւ Նոր Տարուայ Համար թխած լաւաշից կտորներ էր տալիս տան անդամներին: Դրանով կարծես ասել էր ուզում, որ Նոր Տարուն աստուածները Հացը կը տան նրան, ով մէջքը ծռած կ'աշխատի օրնիբուն:

Պարսկահայքում Նոր Տարուայ Հացի խմորը չաղում էին Կապուտան լճի ջրով, յուսալով, որ Նոր Տարում երաշտ չլինի: Պարսկահայերն ասում էին, թէ երաշտի տարիներին Կապուտանը փոթորկում է, նրա ցայտքերը թռչում են երկինք, ապա անձրեւ դառնալով, թափւում շոգից տոչորած արտերի վրայ:

Սիւնիքում Նոր Տարուայ չեմին իրարից խոտված մարդիկ պէտք է ուտէին Հացի նոյն կտորից, այլապէս Աստուած բերքառատ չէր անի նրանց արտերը:

Արցախում ցորեն էին խաշում, լցնում մեծ ամանի մէջ եւ դնում սեղանին: Սաշուելուց Հատիկները ուռչում էին եւ սովորականից երկու անգամ մեծանում: Արցախացին դրանով յիշեցնում էր աստուածներին, որ Հաճելի կը լինի, եթէ Նոր Տարում ցորենի Հատիկները այդքան խոշոր լինեն: Փայտակարանում Նոր Տարուց

մի քանի ժամ առաջ տան եղած գարին տանում էին գոմ կամ մի այնպիսի գաղտնի անկիւնում էին պահում, որ Ամանորի աստծու աչքին չերեւայ, չասի, թէ ունէք եւ Նոր Տարին ցորենաբեր չանի: Ուտիքում տան չեմին կախում էին մի կտոր Հաց, ցանկանալով ասել, որ ամէն մարդ կարող է Հիւրասիրուել եւ մի կտոր Հաց ուտել:

Գուգարքում Ամանորը դիմաւորում էին բոլոր ջրաղացները աշխատեցնելով:

Արարատում Համոզուած էին, որ Նոր Տարին ձիւնափայլ լաւաշի խուրճերը ուսին իջնում է Մասիսի կատարից եւ Հաց բաշխում նրա աշխատաւորներին, յետոյ մնացածը տալիս Հարուստ ծոյլերին եւ ծոյլ աղքատներին:

Աղբիւր՝ Հայկ Սաչատրեանի Նոր տարի, «Հազարամեակների Սահմանազլխին» օրացոյցից

ՕՐԵՆՃ ՔԱՌԻՆԹԻ

Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ Հովիւր, Հոգաբարձութիւնը, Տիկնանց Միութիւնը եւ Յարակից Մարմինները

Կը Շնորհաւորեն Համայն Հայութեան Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը, Յոյս Յայտնելով, Որ Հայ Ժողովուրդի Յաղթարշաւը Շարունակուի Նաեւ 2020ին



M E R R Y
CHRISTMAS
& HAPPY NEW YEAR



2020

Designed by www.karnign.com

**AMERICAN
TIRE DEPOT**

Complete Auto Care

*From
The
Tchaghlassian
Family*



**ՏԷՐ ԵՒ ՏԻԿ.
ՎՐԷԺ ԵՒ ԱՐՄԻԿ ԹՈՄՊՈՒԼԵԱՆ
ՍԻՆԹԻԱ ԵՒ ՍԻԼՎԻԱ**

**Կը Շնորհաւորեն Իրենց Յարգոյ
Յաճախորդներուն,
Ազգականներուն
Եւ Բարեկամներուն
ՆՈՐ ՏԱՐԻՆ
ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ**



VREJ PASTRY

www.kingofpastry.com



**1074 North Allen Ave.
Pasadena, CA
626-797-2331**

**11148 Balboa Blvd.
Granada Hills, CA
818-366-2526**

Merry Christmas Et Happy New Year



GARIBIAN & ASSOCIATES

An Accountancy Corporation, celebrating 31 years of providing excellent quality accounting and tax services

The Garibian & Associates Accountancy Corporation has just celebrated its 31st anniversary of providing excellent quality accounting and tax services.

Our core values as an organization are integrity and reliability. Using our values, we are committed to utilizing our knowledge, technical experience, and quality oriented philosophy to help with the growth of your Company and save tax dollars with timely planning. We remain proactive in finding effective, creative and personalized solutions for all our clients' financial needs.

Our team is passionate about our profession and we embrace the growth opportunities that it brings. We recognize the value of open communication and the importance of meeting our clients' needs.

- ▶ Audit and review services
- ▶ Tax projections
- ▶ Write up services
- ▶ Tax representation
- ▶ Property management accounting
- ▶ Accounting services
- ▶ Tax preparation
- ▶ Planning and consulting
- ▶ Litigation support services



Eva Garibian, CPA

Identifying cost-saving opportunities, developing profitable strategies for growth, providing financial guidance and designing programs to maintain healthy cash flow are just some of the services we offer to help ensure our clients' success. Let us help you improve your bottom line.

To learn more about how we can help you improve your bottom line, schedule a complimentary consultation



GARIBIAN & ASSOCIATES
417 South 1st. Avenue, Arcadia CA

1-626-445-3665
www.garibiancpa.com

ՀՅԳ «Լեռնավայր» Կոմիտեություն
 Փաստինայի Ս. Սարգիս Հայց. Առաք. Եկեղեցի
 ՀԵԳ «Նիկոլ Գուման» Ուխտ
 ՀՅԳ Պատանեկան Միություն
 ՀՕՄԻ «Սօսէ» Մասնաճիւղ
 ՀՄԸՄԻ «Ազատամարտ» Մասնաճիւղ
 Համազգայինի «Շահան Շահնուր» Մասնաճիւղ
 «Լեւոն Եւ Յասմիկ Թալեան» Ազգ. Մանկամտուր
 Տարեցներու Միութեան Փաստինայի Մասնաճիւղ

ՅԱՐԱՏԵՒ ՊԱՅՔԱՐ՝ ՄԻՆՉԵՒ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՒ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

Կը Շնորհաւորենք
 կեդրոնի բարերարներուն,
 ուղղեկից միութիւններուն,
 Շրջանի Եւ Համայն Հայութեան
 Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը

Կաղանդի Ծառեր՝ Հայաստանէն Սփիւոֆ

ԱՆԻ ԱՍՏՈՒՐԵԱՆ

Կաղանդի նուիրուած այս թիւով «Ասպարէզ» ընթերցողին կը հրամցնէ գրական երեք կտորներ, որոնց առանցքը կը հանդիսանայ Կաղանդի ծառը: Հայրենի բանաստեղծ Յովհաննէս Գրիգորեանի «Եղեւնին», «Ամանոր 95, 96, 97...», Վեհանոյշ Թեքեանի «Կաղանդի ծառը» եւ Մարուշ Երամեանի «Կաղանդի պատմութիւնը» կը խօսին կեանքին, բնութեան, մարդ արարածին եւ մարդկային ընկերութեան առնչուող հարցերու մասին: Տարբեր միջավայրերու մէջ ծնած ու ապրած այս գրագէտները բնականաբար իրարմէ կը տարբերին իրենց ոճով եւ լեզուով, բայց ուշադիր ընթերցողին կրնան ներկայանալ զիրենք իրարու միացնող իրենց ճիւղերով: Կաղանդի ծառը կարծես ըլլայ խաչմերուկի պէս բան մը, ուր իրարու կը հանդիպին մարդկային հարուստ հոգիներ ու խորունկ մտածումներ:

Յ. Գրիգորեանի համար եղելին խորհրդանիշն է կեանքին, որ ունի ուրախ եւ տխուր պահեր եւ կը յայտնուի միայն մէկ անգամ. մէկ կեանք ունինք մենք՝ մարդիկս, ինչպէս ծառը, որ անտառին մէջ կ'աճի, բայց կը բաժնուի անկէ, մեր տունները զարդարելու համար:

Վ. Թեքեան կ'ըսէ՝ «չհարցուցինք իրեն՝ կ'ուզէ՞ր պոկուիլ իր հողէն» ու քիչ մը անդին քմծի-

ծաղով կ'աւելցնէ՝ «գոհ են չափահասները, ի վերջոյ փրկեր են Ծառը օգոնի թոյնէն»... Բնապահպանման առաջադրանքներով բնորոշուող այս ժամանակաշրջանին, Թեքեանի վերոյիշեալ տողերը այժմէական են եւ հատուկ, ինչպէս Յ. Գրիգորեանին այն տողը, որ կ'ըսէ. «Եղեւնին... իր ծննդեան օրն է յիշում հիմա, հեռու ու հեռաւոր անտառում»:

Մարուշ Երամեանի պատմութեան մէջ սակայն, ծառը չի հատուիր. կը մնայ հոն, ուր է՝ փողոցին մէջ, տուններուն առջեւ, եւ կը զարդարուի առանց բաժնուած ըլլալու իր հողէն: Ահա՛ զաղափար մը, որ թերեւս կարելի ըլլայ զարգացնել յառաջիկային, լուծումներ գտնելու համար բնութիւնը վտանգող ծառահատման խնդիրին: Եթէ օր մը այդ լուծումը որդեգրուի, Կաղանդէն ետք չենք ունենար Թեքեանի բառերով նկարագրուած, փողոց նետուած ծառը. «Անցած է ժամը. ա՛լ աւարտեր է կախարդանքը եւ պաշտօնը անթերի կատարած Ծառը չպրտուեր է դո՛ւրս, իր նախնիներուն նման»:

Լուծումը գտնողները մենք պիտի ըլլանք, մենք՝ մարդիկս, եւ մեր արարքը պիտի նմանի Մ. Երամեանի գրողական արարքին: Արդարեւ, Երամեան, իր «Կաղանդի պատմութիւն» կտորով ցոյց կու տայ, թէ գրողէն կախեալ է պատմութեան ընթացքը, իրարու յաջորդող դէպքերու ազդեցութիւնը պատմութեան հերոսին

վրայ: Գրողը ամենակարող է եւ գրիչի իր շարժումով կը նմանի այն կախարդին կամ պարիկին, որ ճիպտի մէկ հարուածով՝ մահ եւ աւեր, կամ հակառակը՝ կեանք ու հրաշք կը բերէ:

Յ. Գրիգորեանի «Ամանորը» կը խօսի Հայաստանի բնակչութեան համար դժուար տարիներու մասին, երբ խաւարն ու ցուրտը կը տիրէին, եւ «մուրացկաններ փոքրիկ եւ ստահակներ մեծ» կը վխտային Երեւանի փողոցներուն մէջ:

Երամեանի պատմութեան մէջ յղումներ կան Ափրիկէի սովահար երեխաներուն, Չեչենիոյ ցրտահար մանուկներուն կամ Քոսովոյի մորթուած տղոց: Յստակ է, որ զրազիտուհիին սիրտը կը թրթռայ ընկերային անարդարութիւններու եւ պատերազմներու պատճառով արհաւիրքով: Ան պիտի ուզէր Մուշիի տուններուն առջեւ եղելները տնկել՝ «լոյսերով, շագանակներով, չիր ու չամիչով» զարդարուած:

Թեքեան եւս կ'անդրադառնայ արդարութեան անհրաժեշտութեան աշխարհի մը մէջ, ուր կայ «երկու տուփ կեղծիք, տուփ մը ժողովրդավարութիւն, չորս տուփ բռնատիրութիւն», բայց կ'ըսէ, թէ արդարութիւնը չի՛ դարձաներ անձկութիւնն ու հոգեկան վէրքերը:



Այս բոլորով հանդերձ, երեք գրագէտներն ալ յոյսի պատուհան մը բաց ձգելու չեն մոռնար եւ կը յորդորեն մեզի զարդարե՛լ եղելները. «Դուք չմոռնա՛ք կախել



ճիւղերից Խաղալիքները հին՝ Յոյսը, հաւատը ու սէրը կրկին», կը յիշեցնէ Յ. Գրիգորեան. Վ. Թեքեանի եղելինը, որուն պատրաստութեան եղանակը բանաստեղծութիւնն իսկ է, «ամէն շիւղին՝ կապոյտ յուռութք, նարնջահոս մեղեդիներ» կախեր է, մինչ Մ. Երամեան մեզի կը նուիրէ իր պատմութիւնը. «Ձերն է ան, ինչպէս ձերն են ձեր լաւագոյն երազները եւ գեղեցկագոյն ցանկութիւնները: Պարզապէս պէտք է հաւատալ անոնց, ինչպէս ես կը հաւատամ Կաղանդի հեթաթիւն»:

Ընթերցողներուն կը մնայ պտրտիլ այս երեք արժէքաւոր հեղինակներու պուրակներուն մէջ եւ պարուրուիլ անոնց ծառերէն հասնող լոյսով:

Բարի ըմբռնում եւ բարի կաղանդ:

Wishing Everyone the Best of Health during the Holidays and Beyond
From DIGNITY MEMORIAL Management and Employees of ETERNAL
VALLEY MEMORIAL PARK's "The Garden of Sardarabad"

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՒ Ս. ԾՆՈՒՆԴ

Sahag Tateosian
Pre-Planning Advisor
(818) 248-2069
Serving all Greater Los Angeles Market



Եղեւնին

Ահա մի պատմութիւն որը չի կրկնուում
մէկից անիւնի անգամներ
Եղեւնին որը պիտի զարդարենք դեռ անում է
անտառում:

Ուրախութեան համար կան բազմաթիւ պատմանքներ.
ահա օրը բացուեց
ահա ամպերը փունցին արեւի երեսին...
Եղեւնին, որը պիտի զարդարենք
իր ծննդեան օրն է յիշում հիմա
հեռու ու հեռաւոր անտառում:
Իսկ տխրութեան համար եւս կան բազում պատմանքներ.
ահա օրը բացուեց.
ահա, ամպերը փունցին արեւի երեսին...
Եւ միայն կեանքը, որ չի կրկնուում երբեք
մէկից անիւնի անգամներ՝
ահա կանգնած է միայնակ
եւ շողշողում է
ուրախ ու տխուր պատմանքներով
զարդարուած:

Ամանոր-95, 96, 97... Եւլն

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

Զարդարէ՛ք տօնածառը:

Կեանքն անցնում է:

Շուտով նոր թուեր կը շարունեն կողմ-կողմի,
Նոր ձիւն կը տեղայ հին փողոցների վրայ,
Եւ խաւարը կը ծածկուի փայփայած երազներով:
Զարդարէ՛ք տօնածառը՝

Ով ինչով կարող է:

Նոր խաղալիքներ են յայտնուել հին խանութներում՝
Փոփոխիկ նաւթավառներ, չենջի (change/exchange)
կրպակներ,

Մուրացկաններ փոփոխիկ եւ ստահակներ մեծ:

Նաւթի բիզնեսներ, հացի կտրոններ,

Բարեգործական մաշարաններ, անշարժ տրուներուներ

Փախստականներ ու գաղթականներ,

Կաշառակներն բոլոր չափերի եւ բոլորն այնքան

Փայլուն ու սիրուն, հմուտ պատրաստուած՝

Ոսկէ ծոպերով, երիզներով գոյնզգոյն...

Խաւար է ու ցուրտ: Բայց մի՛ վհատուէք:

Սառած մատներով ու դողդղալով

Զարդարէ՛ք տօնածառը՝ ով ինչով կարող է:

Զարդարէ՛ք տօնածառը:

Բայց դէ՛ նորերը ինչքան էլ փայլուն ու սիրուն լինեն,

Դուր չմոռնա՛ք կախել ճիւղերից

Խաղալիքները հին՝

Յոյսը, հաւատը ու սէրը

Կրկին...

**Airplus
Engineering Consultants
Wishing the Community
a Merry Christmas
And Happy New Year**

For all your engineering services, contact us at

(818) 980-7583

Կաղանդի Ծառ

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵՍՆ

Պատրաստութեան եղանակը

Ծառը պոկել, տուն բերել, վրան զարդարել,
Նախ անկիւն մը ընտրել, որ պատուհանէն դուրս կ'երեւայ,
Լոյսերը ոլորել նիւղերուն մէջէն,
Տարիներու ընթացքին հաւաքուած զարդերը կախել,
Աչքառունները՝ առջեւ
Կտրած հինգածները՝ ետեւ, պատին կողմը:

Ծառը թարմ պէտք է մնայ, ջուր գետեղել որ չծարանայ,
Վրան հրեշտակներ կախել, քիչ մը բլիթ,
Այնքան կը թռչկոտին, որ շուտով կ'անօթեման,
Արդէն առանց հրեշտակի բան մը երկար չի դիմանար:

Երբեմն աչքի պոչով դիտել: Ծառը կը խօսի,
Իր նակատագրի այն պահն է
Երբ վառուելով վառուելով պիտի չորնայ,
Այլեւս պիտի չսարսոյ
անտառային եղանակներու գինովութենէն:
Չհարցուցինք իրեն՝ կ'ուզէ՞ր պոկուիլ իր հողէն,
Անուրջի եւ գգուանքի պահանջ ունիմք.
Ինչ ցնծութեամբ մտցուցինք գայն տուն,
Եւ հակառակ որ իր կեանքի երազներուն մաս չէր կազմեր
Մեր տունը գալ «...մեծ օր մը ձիւնի մէջէն միս միմակ...»
Եկեր է եւ իր սրսփուն անկիւնէն
նառագայթներ սփռէ պիտի
Մոգական թելեր, յիշողութեան թաւիչ.
Արդէն ի՞նչ կ'արժէ տօն մը եթէ չունի լուսապսակ:



Ամէն տարի Կաղանդ չենք տօներ,
Սուգ կ'ըլլայ, հեռաւորութիւն կ'ըլլայ
անհամութիւն կ'ըլլայ.
Եթէ երեխաներ կան՝ տօնելու է Կաղանդը
Ինչո՞ւ.
Է՛հ, ամէնուն պէս մենք ալ կ'ուրախանանք:
Այս օրուան մէջ պէտք է տեղաւորել
Կաղանդ Պապային հասցէներու ծանր կապոցը
եւ մեր անկշռելի յոյսը.
առաջ Մասիս սարէն կու գար,
Հիմա՝ բոլոր թաղերու բոլոր անկիւններէն:



**Բժիշկներ
Արմէն-Արա
Եւ Ժուլիանա
Չալեան
Եւ Փոքրիկն Արա**

*Կը շնորհաւորեն
բոլորին
Նոր Տարին
եւ Ա. Ծնունդը*

*Նոր Տարուան
բարիքներով
եւ Ա. Ծնունդի
խորհուրդով
թող լեցուին
մեր կեանքերը*

**Տոբթ. Բաֆֆի
Եւ Թամար
Չալեան
Եւ զաւակները՝
Անի եւ Էմմա**

Կաղանդի Ծառ

Առածին Ձափ Ալիւր

Աստուած սիրես, քափէ սա կեղծ ծաղիկները,
 որ որոշած են չթառամիլ.
 Արդէն կեանքին մեծ մասը անցանք,
 Մեր անձկութեան դարմանը արդարութիւնը չէ,
 Անհրաժեշտ է արդարութիւնը
 բայց չի դարմաներ վէրքը.
 Եւ ժամանակը խամանիկի պէս
 Քիթ-քերանը ծեփած կեցեր է մեր դիմաց
 Կը սպասէ հաստափոր Կաղանդ Պապային, որուն աչքերը
 ուղղութիւն կու տան Նոր Տարուան.
 Անոր գուարթ կուզին դիմաց
 Իրենց ամբողջ կեանքը շիփ-շիտակ կայնած մոմերը
 մեղմիւ կը սկսին հալիլ,
 Մինչ մենք ձեռք, գոյնի
 տուփ բանալու խաղեր կը խաղանք
 Եւ կը խարուինք, երբեմն լաւ, երբեմն գէշ,
 Որովհետեւ տուփին մէջ մեր տեսածը՝ ուրիշ,
 Նոր Տարուան բերածը՝ ուրիշ...

Հրամցնելու Ձեռ-Թիւ Մէկ

Պատանեկան խինդը որմով կ'արթնան օրերը
 Կաղանդի Ծառին տակ կը դնեն
 Մէկ տուփ ֆաղցրութիւն
 Երկու տուփ զսպուած բարկութիւն
 Մէկ տուփ յայտնի բաներ
 Երեք տուփ գաղտնիքներ

Տուփ մը համով-հոտով բարեկամութիւն
 Երկու տուփ ազգականական անհամութիւն
 Տուփ մը պաշիկ
 Երկու տուփ կեղծիք
 Տուփ մը ժողովրդավարութիւն
 Չորս տուփ բոնասիրութիւն
 (ասոնց համար արեան գին վնարուած է):
 Անգոյն յոյսեր, որոնց վրայ բազում գոյներ փաթթուած են
 Եւ սրտարուխ-բուխ-բուխ ֆարտեր տեղաւորուած.
 Թափանցիկ տրամութիւններ
 Որոնք եթէ նիշդ պեթըրին գործածես
 մահ շնչելով կը շրջին:
 Ասոնք բոլորը, շուկան գիտցողը գիտէ,
 Վաճառքէ գնուած են
 վերջին գինէն տաս առ հարիւր գեղչով:

Թարմ է Ծառը տակաւին, ոտնամանին մէջ
 Ջուր անելցնել որ չչորնայ, որ վառ պահէ
 Պապեկական ջահը,
 Մեր չորս կողմը տարածուած
 Երեսուն տուփ լուծումներու
 Եւ հարիւր տուփ հրատապ հարցերու:
 Կաղանդ Պապան այս բոլորը Ձարի-Բարիի կը վերագրէ,
 գլուխը կ'առնէ-կ'երթայ,
 Կաղանդ տօնելուն վերջը ի՞նչ պիտի ըլլայ,
 Էհ, ամէնուն պէս մենք ալ կ'ուրախանանք:

Հրամցնելու Ձեռ-Թիւ Երկու

Կաղանդի յատուկ սպասներ գետեղեր ենք
 Պաստեղ, ընկոյզ, անուշապուրի հովանոց,

GASMA inc.
 AND DEVELOPMENT
 100 West Broadway, Suite 950
 Glendale, CA 91210

Merry Christmas & Happy New Year

*There is no greater gift
 this festive season than
 spending time with family
 all around the Christmas tree*

Կաղանդի Ծառ

Խնձորներ, որ եղեմական հեփիաթներ կը վերապրին
 Կանկառներ, որ գործը աւարտած տանտիկինի պէս
 Բովիներուն հետ գրոյցի նստեր են.
 Ոտերը երկինք տնկած հաւիկներ
 Նարինջ, ուր արեւի շունչը կը թրթռայ,
 Մինչ այդ կը պայթի շամփայնի կարնատեւ հրաբուխը,
 Իսկ օրուան թերթը կը պատմէ
 թէ՛ հին հայոց մէջ ինչպէ՛ս կը տօնէին Կաղանդը,
 Տափ-տափ խաշած նակնդեղը գինեմուրի նայուածով
 կը դիտէ շուրջը:

Բայց կեդրոնը Ծառն է, Կաղանդի Ծառը,
 Որուն շուրջ կը դառնան մանուկները,
 Վառեր է հազարամէկ լոյսերը
 Ուր ձմրան փաթիլներն անգամ
 Փափուկ առագաստներ դարձած՝ կը սահին:
 Գոհ են չափահասները,
 Ի վերջոյ փրկեր են Ծառը օգոնի թոյնէն,
 Իր հողին վրայ ծերանալու ողբերգութենէն,
 Հաւաքականութեան մը մաս կազմելու
 անյայտ անլեզու մնալու նակատագրէն:

Օրուան Խորհուրդը

Չարագուշակ փողոցը
 Համբերութեամբ սպասեր է այս օրուան.
 Անցած է ժամը. ա՛լ աւարտեր է կախարդանքը,
 Եւ պաշտօնը անթերի կատարած Ծառը
 շարտուեր է դո՛ւրս,
 Իր նախնիներուն նման:
 Հիմա աղբահաւաքներ հեռուները տանին պիտի

Հազարամէկ նրագներ պլպլացուցած,
 Յոգնա՛ծ թեւերը իր,
 Եւ իր հրեղէն ծառութենէն
 ափ մը փա՛յտ պիտի մնայ:
 Ծարտուեր է մայթին,
 Հիշող այն պատնառով՝ որ իր սեփական
 Արմատներէն կտրուելէ ետք
 տակաւին լոյս ու հրնուանք հագաւ,
 Աստղի ոսկին ափերուն մէջ
 մութ անցեալին՝ օրհնութիւն
 իսկ ներկային խորհուրդ տուաւ:
 Անէութիւն ապրած չէր,
 Ամէն շիւղին՝ կապոյտ յուռութ՝
 նարնջահոս մեղեդիներ կախեր էր:
 Իր անցեալէն ու իր փառքէն մերկացած
 ափսոսներ է դարձեալ
 Ծարտուեր է մութի՛ն նիշող այն տան առջեւ
 Որուն լամբերու պաղած դէմքերէն՝
 իր կրակը անցուց.
 Եւ քերթողի իր էութեան տենդասարսուռ մատներով
 Ձմրան լոյսէն՝ աստղին մոխիրը վերցուց:

Նոր անդրադարձած մարդկային դաժանութեան
 Ինկեր է Ծառը կողահար՝ բացայայտ ձիւնին,
 Եւ մնչածածկ մայթին միջեւ.
 Իր սառած երակներուն մէջ հիմա՛
 Բակուած Կեանքէն լուռ-լուռ չորցած երակներ:

«Անունդ եւ Անդունդ», 1994

**Dr. Onnig
 &
 Mrs. Kristine
 & Nareg
 Keshishian**

*Wishing all our
 family and friends
 health and
 prosperity
 throughout
 2020*

**Հայկուշ
 Քեղինեան-
 Քոհլըր**

**Ի յիշատակ
 իր ծնողներուն
 Պետրոս
 եւ Մանուշակ
 Քեղինեաններուն**

Կաղանդի Պատմութիւն «Մօրս Գոգնոցը» Հատորէն –2002–

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

Կ'ուզեմ պատմութիւն մը գրել, Կաղանդի պատմութիւն, Կաղանդի ծառի պատմութիւն, որ ըլլայ Կաղանդի պէս հեքիաթային եւ ծառի պէս թարմ: Գնեմ դռներուն առջեւ, մարդիկ անցնին, նային անոր եւ լեցուին ուրախութեամբ ու յոյսով. ոտքերը ամուր, ճիւղերը՝ բարձր ու խիտ ճիւղերը, զարդարուած գունաւոր հաւատալիքներով? մարդիկ նային, հաւնին, եւ ի՞նչ հաւնին, տանին իրենց հետ, իրենց տունները գունաւորելու, իրենց նայուածքը պայծառացնելու:

Կաղանդի ծառին չափ հեքիաթային եւ թարմ պատմութիւն մը:

Անդիմագիծ, անտուն եւ անհող տղայ մըն եմ. տասնչորս տարեկան եմ. Կաղանդը մօտ է, ու ես Կաղանդի ծառ մը կ'ուզեմ:

Այսպէս պիտի սկսիմ պատմութիւնը, զոր կ'ուզեմ գրել եւ որուն անունը «Կաղանդի Պատմութիւն» պիտի ըլլայ: Անոր հերոսը մեր տան աղբահաւաքը պիտի ըլլայ, վտիտ, դեղնած ու միշտ ժպտուն այդ տղան, որ ինչպէ՛ս ներս կը նայի մեր կիսաբաց դռնէն:

Երբեք Կաղանդի ծառ չեմ ունեցած. չեմ իսկ ուզած ունենալ. չեմ մտածած այդ մասին. այս անգամ, սակայն, կ'ուզեմ մեծ, գեղեցիկ, բնական եղելին մը, որ ի՛մս ըլլայ եւ ըլլայ ամենագեղեցիկը Կաղանդի ծառերուն:

Իրե՛ն համար կ'ուզեմ գրել այս



պատմութիւնը:

Կարծեմ նաեւ ինծի՛ համար կ'ուզեմ գրել զայն, որպէսզի ամէն գիշեր մղձաւանջի սեւ հրէշը չլափէ զիս, երբ պատկերասփիւռը մարեմ ու քնանալու երթամ, որպէսզի Քոսովոյի մորթուած տղոց աչքերը ծառիս վրայ չչարուին՝ լոյսերու փոխարէն, եւ Չէչէնիոյ պաղէն մեռած մանուկները ձիւնափաթիլներու փոխարէն չզղարչեն ծառս սարսափով. ի վերջոյ կ'ուզեմ, երազիս մէջ գոնէ, Շուշիի իւրաքանչիւր տան առջեւ եղեւնի մը տնկել, լոյսերով, շագանակներով, չիր ու չամիչով:

Ամբողջ շաբթուան ընթացքին, իւրաքանչիւր թաղ որ մտայ, լաւ մը տեսողեցի ծառերը նայուածքովս: Եւ ի վերջոյ, հատ մը գտայ. գիտէ՞ք ուր... մե՛ր թաղը, ճիշդ մեր տան մուտքին:

Մառը գտայ, հիմա պէտք է զարդարեմ զայն. բայց ինչո՞վ. լոյսերով, գունաւոր գնդակներով:

- Ի՞նչ ունիս, տղա՛ս, շաբաթ մըն է մտահոգ ես. չըլլայ նորէն մէկու մը հետ հարց ունեցար,- կ'ըսէ մայրս:

Միշտ ալ մէկը պիտի ըլլայ, որ հարց ունենայ հետս. լեզու չկրցայ գտնել աղբահաւաք տղոց հետ. շատ կուտազան են. թէեւ ես ալ կրնամ կուռիլ, բայց ի՞նչ համ ունի ամէն պարապ բանի համար կուռիլը: Մէկը ըլլա՛ր, հետս երազ-երազ խաղար. քրոջս տղան կայ, բայց շատ պզտիկ է, չենք կրնար նոյն խաղերով խաղալ:

**MERRY
CHRISTMAS
& HAPPY
NEW YEAR**

**Dr. Vahaken
R. Arslanian
and Family**

Clovis, CA

**Լաւազոյն
Մաղթանքներով
Կը Շնորհաւորենք
Համայն Հայութեան
Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը**

**Մարտիկ
Եւ Լիզա
Կապուտեան**

Կաղանդի Պատմություն «Մօրս Գոգնոցը» Հատորէն -2002-

Ժամանակին ե՛ս ալ կը սիրէի այս խաղը խաղալ. յետոյ, անկեղծօրէն, սկսայ ամչնալու? Ի՞նչ երեսով երազ-երազ խաղամ, երբ սեւամորթ մանուկները՝ շնչելէն յոգնած կը մեռնին, իսկ ճանճերը իրենց քիթէն ու ականջէն ներս կը թափանցեն: Այստեղ, սակայն, ի՛մ հերոսս պիտի խաղայ այս խաղը՝ իմ փոխարէն եւ բոլոր աներազ մարդոց փոխարէն, մեծ ու չքեղ այս խաղը, մէկ անգամ գոնէ յաղթելով: Մէ՛կ անգամ. շատ չէ, չէ՞, մէկ անգամը, ամբողջ կեանքի մը համար:

Հոգ չէ՛. մինակ կը խաղամ:
 - Ի՞նչ կը մտածաս, մա՛նչս:
 Ամէն անգամ, երբ մայրս մանչս կ'ըսէ, իր հիւանդ ձայնով, ես կը փլիթ ներսէս:
 - Հէ՛ջ, մա՛մ, կը մտածեմ, թէ ի՛նչ նուիրեմ քեզի Կաղանդին:

Անշուշտ կատակ էր ըրածս. բայց ըսելու չէի. մայրս գոցեց աչքերը, կ'երեւի թէ, որ հոն չտեսնեմ ծուխը իր յիշատակներուն:

Քոյրս խնդրեց, որ իր մանչը հետս գործի տանիմ:
 - Մեր վարպետին կինը կանչեց. տունը գործ կայ ընելիք. դուն գործը վերջացնելէ ետք տուն գացէք, ես ալ հոն կու գամ, - ըսաւ ինծի:

Երբ եկաւ, հետը տոպրակ մը ծառի զարդեր բերեր էր, բոլո՛րն ալ կոտրած, փրթած, գունաթափ:
 - Ծառ ունենայինք եթէ, կը զարդարէինք, - ըսաւ քոյրս եւ տոպրակը տղուն առջեւ դրաւ:

Ծառ ունէինք. իմ ծառս, սակայն, կոտրած զարդերով չէ՛ որ պիտի զարդարեմ, բայց ինչո՞վ, Տէ՛ր Աստուած, ինչո՞վ:

Յանկարծ, կարծես գիտաւր մը անցած ըլլար միտքիս երկինքներէն, յիշեցի.

- Մա՛մ, եթէ քեզի թելեր բերեմ, կրնա՞ս կապեր հիւսել ինծի համար:
- Ուրկէ՞ թելեր պիտի բերես, - տազնապով հարցուց մայրս. գիտե՛մ, կը սարսափի գողութենէն:
- Գործարանի պատին տակ միշտ ահագին թելեր թափուած են, թէ-եւ կը կարծեմ, որ թնճուկուած կ'ըլլան:
- Խնդիր չէ, կը քակեմ, բայց ի՞նչ կապ:
- Քսան-քսանհինգ սանթիմոնոց գունաւոր, հիւսուած կապեր:
- Ի՞նչ պիտի ընես:
- Հէ՛ջ:

Ասկէ ետք կրնամ շարունակել այնպէս, ինչպէս կը թելադրէ կեանքը՝ իր ամբողջ անհեթեթութեամբ եւ անարդարութեամբ: Այսպէ՛ս:

Բերի գունաւոր թելերը, բայց մայրս բան մըն ալ չկրցաւ հիւսել, որովհետեւ շատ փտած էին: Կաղանդի գիշերով ծառս մնաց մերկ: Բայց շատ կ'ուզէի տարբեր բան մը ընել այդ օր:

- Մա՛մ, եկո՛ւր քիչ մը պտրտինք, այնքան լաւ զարդարուած են փողոցները, տուներու պատշգամները:

Դժուար համոզուեցաւ. մտիկ չըրի դժգոհանքին՝ շատ պաղ է, չեմ դիմանար, շատ յոգնած կը զգամ:
 Կառքին վրայ, քովս նստեցուցի զինք. լաւ մը մաքրեր էի աղբերը, լուացեր էի կառքը, բայց հօտը տախտակներուն մէջ մտերմնացեր էր. հարց չէր. ես ալ, մայրս ալ, վարժուած էինք անոր:

Իշուկս, գլուխը կախ, գնաց իր սովորական ճամբաներէն: Գիշերով ուրիշ տեսք ունէին փողոցները. գրեթէ բոլոր պատուհաններուն ետեւէն կ'երեւէին Կաղանդի ծառերը, զարդարուն, լուսաւոր, հեքիաթային: Մայրս լուռ կը դիտէր, ու ես զինք կը դիտէի՝ ի՞նչ կը մտածէ արդեօք:

- Այսքան մսխումի փոխարէն, կրնային ամբողջ քաղաքին աղքատները կերակրել, - ըսաւ յանկարծ, կարծես լսած ըլլար հարցումս:

- Յետոյ տուն վերադարձանք:
- Մա՛մ, - ըսի, - քեզի համար Կաղանդի ծառ մը պատրաստած եմ. միայն քեզի համար չէ՛, նաեւ ինծի համար:
- Խե՞նթ ես, ո՞ւր է:
- Հո՞ն, - ըսի եւ մնացի ափ ի բերան:

Յայգաստղը ինկեր էր ծառիս կատարին եւ ճերմակ լոյսի շղարչներով պատեր զայն:

- Կարծեմ քաղաքին գեղեցկագոյն ծառն է ասիկա, - ըսաւ մայրս:

Աւելի մեծ նուէր չէի կրնար ունենալ:

Յաջորդ առտու, քաղցր ժպիտ մը դէմքին՝ մեռած գտայ զինք անկողնին մէջ:

Կրնամ այսպէս աւարտել այս հեքիաթը. բայց շատ տխուր կ'ըլլայ, չէ՞:

Կրնամ նաեւ անսպասելիօրէն բարի ընծայել զայն. այն ատեն թերեւս չհաւատար անոր: Ինչո՞ւ չհաւատալ սակայն, երբ Կաղանդի պատմութիւն է պատմածս, իսկ Կաղանդը իրականացող հեքիաթներու ժամանակն ու միջոցն է, մեր կեանքին, կամ մեր մանուկ զաւակներու կեանքին մէջ, ինչ որ նոյնն է գրեթէ:

Պարոն Եուսէֆ Ասֆահանին տուն կը վերադառնար գործէն, յոգնած, պաղած եւ անօթի: Լաւ որ արեւ կար դուրսը, թէեւ թոյլ ճառագայթներով, բայց նախընտրելի՝ գրասենեակին անարեւ մթնոլորտէն: Կաղանդը կը մօտենար եւ անոր հետ, ամէն տարուան նոյն մտահոգութիւնը՝ քա-

ղաքը զարդարել նոր ձեւով եւ աժան միջոցներով: Աժանը հասկցանք, կ'ըսէր պարոն Եուսէֆ ինքնիրեն, ամէն տարի, թէեւ նոյնը նաեւ տնօրէնին կ'ուզէր ըսել, բայց ան տնօրէն է, ամէն բան չ'ըսուիր անոր, մանաւանդ երբ գիտէ ստանալիք պատասխանը՝ ատիկա ձե՛ր հարցն է, պարո՛ն Ասֆահանի:

- Լա՛ւ, աժան կ'ընենք ձեւով մը, բայց նո՞ր, եղբա՛յր, Կաղանդի զարդարանքին նորը ո՞րն է, եւ ի վերջոյ՝ ինչո՞ւ այս ամբողջ տաղտուկը, երբ զարդարուելիքը փողոցն է, տուն չէ:

- Այո՛, պարոն Ասֆահանի, - կ'ըսէր տնօրէնը, - փողոցն է, բայց Կաղանդը տարեդարձի պէս բան մըն է, ժամանակին տարեդարձը:
 - Ես քո՛ւ ալ, ժամանակին ալ:

Պարոն Եուսէֆը ժամանակ չունեցաւ ամբողջացնելու հայհոյանքը, որովհետեւ այն, ինչ տեսաւ, զինք բերանաբաց ձգեց:

Ամբողջ փողոցին վրայ ինկած էր ծառի մը շուքը, եղեւնիի մը շու-



St. Vincent Jewelry

Time to Bling in the NEW YEAR

WHOLESALE PRICES DIRECT TO THE PUBLIC

650 S. Hill Street DTLA | DTLAglam.com

Կաղանդի Պատմութիւն «Մօրս Գոգնոցը» Հատորէն -2002-

քը, եւ անոր վրայ, տեղ-տեղ, լոյսեր կը պսպղային. չէ՛, լոյսեր չէին, այլ՝ ցոլացումներ, գունաւոր եւ ճառագայթող: Պարոն Եուսէֆ յիշեց մանկութեան իր տաժանքը կիրակնօրեայ պատարագին անվերջանալի ժամերուն, երբ միակ ձեւը նստարանին վրայ ինքզինք հանդարտ պահելու՝ գետին ինկած գունաւոր լոյսերուն դանդաղ գնացքը հսկելն էր, երբ արեւին հետ կը շարժէր նաեւ շուքը գունաւոր պատուհաններուն:

- Ի՞նչ է:
- Եուսէֆ ցնցումով վերադարձաւ ներկային. քովը մանչ մը կեցած էր ու պատասխան կը սպասէր:
- Ի՞նչ:
- Ի՞նչ է ծառը. աղուոր է, չէ՞:
- Ինչպէ՞ս փողոցին ծառը քուկդ կրնայ ըլլալ,- չհասկցաւ Եուսէֆ:
- Ե՛ս ընտրեցի, ե՛ս զարդարեցի,- ըսաւ տղան արտօնատէրի հպարտութեամբ ու նայեցաւ վեր, ծառէն կախուած ապակեայ կտորտանքներուն: Եուսէֆն ալ նայեցաւ:
- Դո՞ւն զարդարեր ես. ինչո՞վ, ինչպէ՞ս:
- Ասո՛ր պէս,- ու տղան գրպանէն հանեց ծառին վրայ դրուելիք ապակիի վերջին կտորը եւ երկարեց: Եուսէֆ շարժում չըրաւ վերցնելու: Մի՛ վախնար, տաշեր եմ, չի վիրաւորեր՝ շարունակեց տղան:
- Տաշուած, բաց սրճագոյն ապակիի կտոր մը, որ արդի արուեստի աշխատանքի պէս գրաւիչ եւ անհասկնալի թուեցաւ Եուսէ-

- ֆին:
- Բոլորն ալ ես տաշեր եմ, տարբեր ձեւերով, տարբեր գոյներով:
- Բայց ինչո՞ւ ծառ ունենալ փողոցը, արդէն փողոցները պիտի զարդարուին:
- Իմ ծառս ուզեցի բոլորին համար զարդարել, ոչ թէ պատուհանիս ետեւը բանտարկել զայն: Ինչո՞ւ կը խնդաս:
- Իրապէս ալ պարոն Եուսէֆի դէմքին վրայ մեծ, ծիածանի չափ պայծառ ժպիտ մը կազմուած էր այն պահուն, երբ անդրադարձած էր, թէ ինչպիսի՛ գիւտ մը տուեր էր իրեն այս անծանօթ, բայց միաժամանակ կարծես մտերիմ տղան:
- Դպրոց կ'երթա՞ս:
- Այո՛, բայց ի՞նչ կապ ունի:
- Համալսարան պիտի երթա՞ս:
- Ես կ'ուզեմ երթալ. ուսուցիչս կ'ըսէ, թէ կրնամ բան մը ըլլալ, եթէ ուսումս շարունակեմ, բայց արդեօք կրնամ շարունակել. չե՛մ գիտեր:
- Լա՛ւ, մոռցի՛ր համալսարանը, հիմա քովս կ'աշխատի՞ս:
- Ի՞նչ պիտի ընեմ:
- Այսպիսի ապակիներ պիտի հաւաքես, տաշես, պատրաստես:
- Ահաւասիկ նոր եւ աժան ձեւ մը քաղաքը զարդարելու... ցերեկը արեւը կը լուսաւորէ դանոնք, իսկ գիշերը՝ փողոցներու մեծ լամպերը:
- Կաղանդը, իր հեքիաթային կառքով արդէն իսկ քաղաք մտեր էր: Հիմա այս պատմութիւնը կրնամ դնել մեծ հայրիկի մը բերանը, մեծ հայրիկը դնել չքեղ մենատան



մը կրակարանին քով եւ զինք թողնելով շրջապատել: Ամենամեծ թողնիկը՝ տասը տարեկան, կը հարցնէ.

- Ուրեմն ա՛յդ մարդն էր, որ քեզ դպրոց ղրկեց:
- Յերեկները իրեն քով կ'աշխատէի, իրիկունները դպրոց կ'երթայի: Յետոյ դարձայ իր գործերուն տնօրէնը, որովհետեւ ունեցեր էր իր անձնական գործը, եւ երբ ուզեցի ե՛ս եւս անձնական գործի մը սկսիլ, ինք առաջարկեց գործընկեր ըլլալ իրեն:
- Դահլիճը ողողուեր է ճաշերու

հոտով: Մեծ, թարմ ու զարդարուած եղեւնի մը կ'երեւի պատուհանէն դուրս:

Բայց կը նախընտրեմ այսպէս չընել: Ձեզի կու տամ այս պատմութիւնը. դրէք հո՛ն, ուր կ'ուզէք... Կ'ուզէք՝ շարտեցէք ձեր միտքէն դուրս. կամ՝ կախեցէք Կաղանդի ձեր ծառին վրայ: Ձե՛րն է անիկա, ինչպէս ձերն են ձեր լաւագոյն երազները եւ գեղեցկագոյն ցանկութիւնները: Պարզապէս պէտք է հաւատալ անոնց, ինչպէս ես կը հաւատամ Կաղանդի հեքիաթին:

FALAFEL ARAX

Wishing
All Our Customers
In the Armenian
Community
A Merry Christmas
And A Happy New Year

5101 Santa Monica Blvd., Suite 2
Los Angeles, CA 90029
(323) 663-9687

Վահէ Եւ Լեւոս Պօզոյեան Եւ Ընտանիք

Կը մաղթենք
որ յառաջիկայ
Նոր Տարին
մեր ժողովուրդի
երկնակամարը
միշտ պայծառ
պահէ

Նախաբան

ՊՕՂՈՍ ԳՈՒԲԵԼԵԱՆ



Երբեք պիտի չզարմանայի, եթե ինձի հարց տրուէր, թէ ինչո՞ւ գրուեցաւ ու հրատարակուեցան յանձնուեցաւ երգիծական ծաւալուն այս գործը: Արդեօք Հեղինակին կողմէ իր շրջապատին մէջ յայտնուող տարօրինակ երեւոյթները երգիծելու ու ձաղկելու, կամ պարզապէս ընթերցողը զուարճացնելու, անոր շուրջ կենտուրախ մթնոլորտ ստեղծելու՝ կենցաղագիտական միամիտ պահանջք է սպասուած մղուած: Եթէ քիչ մը խորացնենք մեր պրպտումները, ապա վերջին հաշուով, ամէն գրական գործ, ի՞նչ սեռի ալ պատկանի, անպայման Հեղինակին միտքին մէջ նպատակ մը կը հետապնդէ ու յատուկ առաքելութեամբ մը ճամբայ կը հանուի:

Անկեղծ ըլլալու համար ըսեմ, որ բաւական երկար խորհեցայ այդ մասին: Ներկայ գործին ձեռնարկելուս բուն նպատակը՝ սիրելի Հայ ընթերցողին վերադարձնելն էր հայերէն գիրք կարդալու, ընթերցանութեան լծուելու հաճոյքը եւ այդ մէկը՝ ուրախ տրամադրութեամբ: Թերեւս ժամանակի ընթացքին, մեր Հեղինակներուն մօտ գրելաոճի եւ թեմայական փոփոխութիւններ յառաջ եկան: Ու այս վերջին շրջանին, գրեթէ անտեսուած է իմ նախասիրած՝ երգիծական թեման, ան ալ մեր մամուլի էջերու երկայն-

քին: Ի՞նչ պատահեցաւ: Արդեօք երգիծական ուսուցող ու զուարճալի սեռին հանդէպ ընթերցողին մօտ հետաքրքրութեան պակասը մեր տաղանդաւոր երգիծագիրները մղեց լուրջութեան, թէ մեզի համար անորոշ ուրիշ պատճառներ... Օրինակ, մեր կարգ մը խմբագիրներու անտարբերութիւնը կամ սարսափը՝ երգիծական սեռի քիչ մը խնդրայարոյց, կձո՞ղ նիւթերէ:

Ներկայ հատորը իր մէջ կը պարունակէ վաթսուներեք զանազան չափի կտորներ, որոնք գուցէ չեն հնազանդիր գուտ երգիծական սեռի պահանջներուն: Իմ համեստ կարծիքով, կատարած

երգիծական փորձերս զուարճախառն պատմուածքներ կամ նշմարներ են, զորս տարիներու ընթացքին գրի առած եմ, ու անոնցմէ որոշ թիւ մը լոյս տեսած է Հայ մամուլին մէջ: Եւ քանի որ մինչեւ վերջերս «Արասան» ֆոնթը կը գործածէի, ստիպուած եղայ ներկայ հատորը ամբողջութեամբ Sylfaen նորագոյն ֆոնթով գրելու եւ խմբագրելու:

Այստեղ հարկ կը զգամ նաեւ Հայ ընթերցողին յիշեցնելու, թէ գուտ մանկական յատուկ նիւթերու կողքին, դարուս ընկերային ու քաղաքական դարտուղիութեանց ու սեռային այլանդակութիւններուն «հիմուր»ով անդրադարձներ եղած են ներկայ հատորի երկայնքին: Չկայ ծիծաղելի ու հետաքրքրաշարժ երեւոյթ մը, որ խուսափած ըլլայ Հեղինակիս սրաբիբ, ամենատես աչքերէն: Հատորին մէջ գործածուած լեզուն անպաճոյճ ու հաճելի է, ու տեղական «քոլորիտ»ը պահպանելու մտահոգութեամբ, տեղ-տեղ դիմած եմ օտարաշունչ բառերու եւ ասացուածքներու:

Այո՛, ներկայ գործով, իբրեւ Հեղինակ՝ մասնաւորապէս փորձած եմ ընթերցանութեան հաճոյքը վերադարձնել Հայ ընթերցողին: Թէ որքանով յաջողած է այդ մէկը՝ ի՞նք, Հայ ընթերցողը պիտի ըսէ...

Հեղինակ

Սպիտակ Տան Գորշ Կարտինալը...

Նմբագրատունէն երբ դուրս ելայ

ու կորաքամակ դէպի մեքենաս կը քալէի՝ մտորելով իմ քիչ առաջ լսած անմօրուք տէր հօր պատմութեան մասին, այդ դէպքը ինձի յիշեցուց աւելի զուարճալի պատահար մը, զոր ես ինձի խոստացայ գրի առնել բարեղէպ օր մը եւ խմբագիր բարեկամիս նուիրել՝ առ ի մխիթարութիւն Հայ դպրութեան սիրոյն անոր ապրած առօրեայ նահատակութեան ու տառապանքին:

Տասնհինգ տարիներ առաջ ինձի պատահածը տէր հօր պատմութեանէն ահաւոր էր ու միեւնոյն ատեն՝ ծիծաղաշարժ: Հայաստան երրորդ այցելութիւնս էր: Ատրպէյճանցիներու կատարած սպանդն ու քաղաքական ոտնձգութիւնները գլուխնիս զարկած ըլլալով՝ կրտսեր մանչիս հետ ելանք ու այդ ցուրտ ձմրան շրջապատեալ հայրենիք ուղեւորուեցանք, ազատագրութեան նորագոյն պայքարին բարոյական մեր բաժինը բերելու:

- Այդպիսի բարբարոս եղանակի ի՞նչ գործ ունէիք Հայաստան, - հարց պիտի տային խելքը գլուխը մարդիկ: Հայր ու որդի, գուցէ գաղտնօրէն, զառանցանքը կ'ապրէինք՝ ձակատ մեկնելով Ղարաբաղի գոյապայքարին մասնակցելու: Այդ ուղղութեամբ դիմում ալ կատարեցինք:

- Կոտուղ շատ ունինք, - մեզի տրուած քաղաքավար պատասխանն էր, - սակայն «փրփականտ»ի պատերազմը յառաջ տա-

**We wish
all our friends
& relatives
a Merry Christmas
& a Happy
New Year**

**Dr. & Mrs.
Haig & Sylvia
Minassian**

Law Offices of Ani M. Garikian
Certified Family Law Specialist

**Wishing
all of our clients,
friends, and family
a joyous Holiday
Season
and a prosperous
New Year**

Engaged exclusively
in the practice of Family Law

Consultation, Litigation, Collaborative Law
and Mediation

818-539-2209

Նախաբան

ներու ատակ, անգլերէնի քաջատեղեակ մարդ չունինք...,- ըսին ու տղաս արտաքին գործոց նախարարութիւն տեղաւորեցին, իսկ իմ պարագայիս, զիս վերէն վար չափելէ ետք՝ «մեր գոյապայքարին, դո՛ւք, պարոն Կուպելեան, շատ աւելի օգտակար եղած կ'ըլլաք, եթէ Ամերիկա վերադառնալով դրամահաւաքի ձեռնարկէք, քան թէ գլուխէն կերած սփիւռքահայու ձեր հազար ու մէկ քմայքներով ճակատ մեկնիք ու մեր գլխուն պատուհաս (պելա) դառնաք... ատկէ բացի, դեռ «վերտալիոթ»ի մէջ ձեզի համար տեղ չունինք, զինամթերք կը տանինք, վիրաւոր կը բերենք...,- աւելցուցին անոնք սրտցաւ շեշտով:

Անշուշտ, ճիշդ ա՛յդ բառերով չարտայայտուեցան: Սակայն իմ տարիքիս հասած՝ հանած-վառած, կերած ու կալոններով «ուխի» խմած անհատէ մը կ'ակնկալուէր ըսուածէն աւելի չըսուածն ալ հասկնալ: Իմ վեցերորդ զգայարանքս ինծի կը թելադրէր, որ Հայրենի այդ օրերու դեկավարութեան բուն սարսափը դաշնակցակա՛ն հակումներով գրող-հրապարակագիրի մը կենդանի ներկայութիւնն էր դարաբաղեան տարածք, երբ մինչեւ 1992 թուական իշխանաւորներէն գրեթէ ոչ ոք խիզախած էր Ղարաբաղ մեկնիլ: Սակայն, հակառակ անոնց շիջաչիւններուն, եթէ մարդուն ճակատը գրուած է հերոսանալ, հակառակ ոմանց «մաքիավելիութեան», ապա այդ մէկը անպայման իրականութիւն կը դառնայ: Իսկ իմ կարգիս, եթէ հէջ բան մը չեմ ըրած-նէ այդ պատիւին արժանանալու համար, ապա գոնէ «Քաջ Նազար» թերթի խմբագիրներուն հետ տարիներով բարեկամութիւն ըրած եմ ու հաց կիսած...
Այդ տարին, մեր բախտէն, ամբողջ Հայաստանը սպիտակ վերմակով ծածկուած էր, եւ ջեռուցման դրոյթէն ու ելեկտրական հոսանքի պակասէն՝ նորածին մանուկները իրենց մայրերուն գիրկը կծկուելով կապտագոյն գունդերու վերածուած էին: Իսկ մեծահասակները, պարզապէս կը սարսուային իրենց տեղաշրջերուն մէջ: «Տուրիստ»ի մը համար բաւական երկար մնացած ըլլալով Երեւանի մէջ, արդէն իսկ վարժուած էինք տեղացիներուն գործադրած վերապրումի ճիգերուն: Պանդոկները փակ էին, քանի մը հատ ու կենտ արտասահմանեան այցելուներ կային: Նելքը գլուխը «չեթին» հայրենասէրներն անգամ, արեւոտ օրերու կը սպասէին՝ հայրենիք այցելելով Ազգերնորին քղանցքը համբուրելու եւ անոր կողքին լուսանկարուելու համար: Մեզի նման «փերուշան»ներն ալ, բարեկամի մը դատարկ յարկաբաժինը կայք հաստատելով՝ կը փորձէինք քիչ մը ջերմութիւն ու կենդանութիւն ներմուծել մեր հայրենակիցներուն անարեւ գոյութեան: Եւ... սպասել «վերտալիոթ»ի մը ազ-

դանշանին, ուստում մը կատարելու համար Արծուաբոյն: Տակաւին, հակառակ իրենց անյոյս վիճակին, տեղական մտաւորականութիւնը եւ ինչո՞ւ չէ նաեւ պետական այրերը մեզ իրենց անվերապահ գուրգուրանքին կ'արժանացնէին: Սակայն, այս բոլորին մէջ ո՞ւր էր հերոսութիւնը: Մի՛ աճապարէք: Մեզի նման անուղղայ ճակատագրապաշտները ջերմօրէն կը հաւատան «եթէ գրուած է, կը պատահի» սկզբունքին: Գուցէ տեղացիներուն համար այս ամբողջը անակառկա էր, արեւադարձային իր երկրին «էքզոթիկ» համն ու հոտը հետք բերած՝ տեղացիներու քիմքին կը քսէր... Անկեղծ ըլլալու համար չեմ ալ գիտեր, թէ տեղացիներու աչքին մեզ ի՞նչն էր հետաքրքրական դարձնողը: Մէկ-երկու անգամ պատկերասփիւռէն ելլելէս ետք, սաղ Երեւանին սիրելին դարձանք: Նոյնիսկ երբ խանութէ մը գնում կ'ընէինք, յաճախ կը մերժէին փող վերցնել: Իսկ «թաքսի»ի վարորդը մեզ խփելու կ'ելլէր, եթէ շատ առարկէինք:
- Արա, ամօ՛թ կ'ընէք... Դուք եկեր էք հայրենիքի պաշտպանութեան համար ձեր կեանքը մատուց ընելու:
Սակայն այդ բոլորը ոչի՛նչ՝ բազմապատկազմ այն «օյուն»ին, զոր տեղական ազգեցիկ թերթ մը սխալմամբ կատարեց՝ մէկ օրուան ընթացքին սփիւռքահայ սանձանօթ գրողը հոչակաւոր դարձնելով ամբողջ Սովետի տա-

րածքին: Սա՛ ալ աւելցնեմ, որ, հակառակ ելեկտրական հոսանքի ընդհատումներուն, տեղական մամուլը՝ իր նոր ձեռք բերած ազատութեան մթնոլորտէն խանդավառ, թերթերը յամառօրէն լոյս կ'ընծայէր, եւ, պէտք է խոստովանիմ, որ իմ քիչ մը յախուռն ու յանդուզն դիրքորոշումներս՝ քաղաքական ու ազգային հարցերու կապակցութեամբ, տուեալ խենթութիւն փնտուռած ապրանք կը դարձնէին ամբողջատիրական կարգերու տակ կեանք մը ամբողջ տուայտած Հայրենի մտաւորականութեան աչքերուն: Արդարեւ, անոնք լապտերով, խրոխտ, անվախ այցելու կը փնտռէին... Հարցազրոյցի՛:

Այդ պայմաններուն տակ, «Հայաստան» թերթին հետ ունեցած հարցազրոյցս շատ բնական էր որ անստուեր անցնէր: Երիտասարդ թղթակիցը՝ անխորտակ կամքով, գիշերը ցերեկին խառնելով պատրաստեց թղթակցութիւնը, եւ ինծի ըսուեցաւ, որ յաջորդ օրն իսկ լոյս տեսաւ՝ թերթին ամբողջ մէկ էջը գրաւելով: Հայաստանի տարածքին մեր գրողները ստեղծագործելէ ու սերնդագործելէ, ծխելէ ու կալոններով օդի սպառելէ բացի ուրիշ զբաղմունք չունէին: Սակայն, գէշը հոն էր, որ թերթին այդ թիւը քիչ մը ուշացումով պիտի հասնէր ձեռքս:

Հարցազրոյցի հրատարակումով, մէկ օրէն միւսը, անձիս հանդէպ անբնականօրէն ուշադիր վերա-

րածքին: Սա՛ ալ աւելցնեմ, որ, հակառակ ելեկտրական հոսանքի ընդհատումներուն, տեղական մամուլը՝ իր նոր ձեռք բերած ազատութեան մթնոլորտէն խանդավառ, թերթերը յամառօրէն լոյս կ'ընծայէր, եւ, պէտք է խոստովանիմ, որ իմ քիչ մը յախուռն ու յանդուզն դիրքորոշումներս՝ քաղաքական ու ազգային հարցերու կապակցութեամբ, տուեալ խենթութիւն փնտուռած ապրանք կը դարձնէին ամբողջատիրական կարգերու տակ կեանք մը ամբողջ տուայտած Հայրենի մտաւորականութեան աչքերուն: Արդարեւ, անոնք լապտերով, խրոխտ, անվախ այցելու կը փնտռէին... Հարցազրոյցի՛:

Այդ պայմաններուն տակ, «Հայաստան» թերթին հետ ունեցած հարցազրոյցս շատ բնական էր որ անստուեր անցնէր: Երիտասարդ թղթակիցը՝ անխորտակ կամքով, գիշերը ցերեկին խառնելով պատրաստեց թղթակցութիւնը, եւ ինծի ըսուեցաւ, որ յաջորդ օրն իսկ լոյս տեսաւ՝ թերթին ամբողջ մէկ էջը գրաւելով: Հայաստանի տարածքին մեր գրողները ստեղծագործելէ ու սերնդագործելէ, ծխելէ ու կալոններով օդի սպառելէ բացի ուրիշ զբաղմունք չունէին: Սակայն, գէշը հոն էր, որ թերթին այդ թիւը քիչ մը ուշացումով պիտի հասնէր ձեռքս:

Հարցազրոյցի հրատարակումով, մէկ օրէն միւսը, անձիս հանդէպ անբնականօրէն ուշադիր վերա-

**Vahe & Arda
Benlian
and Family**

**Wishing You
And Your Family
The Gift Of Faith,
The Blessing
Of Hope And
The Peace
Of His Love
At Christmas
And Always.**

**Պապուճեան
Ընտանիք**

**Թո՛ղ նորահաս
տարին
մեզի բերէ նոր
յաջողութիւններ**

Նախաբան

բերմունք ցոյց կը տրուէր, ո՛ւր ալ գտնուէինք: Առաւօտ մը, մանչիս հետ սեւ մեքենայով արտաքին գործոց նախարարութիւն գացինք՝ Բաֆֆի Յովհաննէսեանի հրաւերով: Երբ նախարարութենէն դուրս եկանք պաշտօնական մեր հագուստով, ճէյրանի արտաքինով, «պոյով-պոսով» հայուհի մը մանչս մէկ կողմ քաշելով անոր հարց տուաւ, թէ Իրանի նոր դեսպա՞նն էի արդեօք... Հերոսանալու մարմա՞ջ երբեւիցէ չեմ ունենած, բայց, ինչո՞ւ մեղքս պահեմ, գրականութենէն դուրս ամէնէն սիրած զբոսանքս եղած է քաղաքականութիւնը: Ափրիկէի խորերը օտարները զուր տեղի մեզ «Հայաստանի դեսպան» չէին կոչեր: Ասոր իբրեւ հետեւանք, մանչս ու տեղացի շարժավարը՝ կատակը ծայրայեղութեան հասցնելով, պաշտօնական մեր այցելութիւններուն ընթացքին անոնք կ'աճապարէին պետական մեքենային ետեւի դուռը բանալու նուաստիս առջեւ:

Այդ գիշեր, քանի մը բարեկամներով «Լա Մաֆիա» կոչեցեալ ճաշարանը այցելեցինք: Բոլոր գլուխները, պետական այրերէն սկսեալ մինչեւ մաֆիայի կնքահայրերը, անոնց փափկասուն սիրուհիներն ալ ներառեալ, յանկարծ մեր կողմը դարձան, երբ ուշ ժամուն ներս մտանք: Ես դեռ հարցազրոյցը չէի կարդացած: Հոն յայտնուած յախուռն միտքերուն վերագրեցի հանրութեան մօտ հետաքրքրութեան յանկար-



Սպիրակ Տան Գորշ Կարփինալը...

ծակի սրումի: Այդ գիշեր քանի մը սեղաններէ խմիչք հասաւ մեզի, իսկ կիսամութին մէջ այդ «ժեստ»ը յանձն առնող անձանօթ անձնաւորութիւնը ոտքի կանգնելով մեր կենացը կը խմէր: Առաջնակարգ խմիչքներէն աւելի՝ մեր հոգիները ջերմացնողը երեւանցի դիցուհիներու խաժ աչքերուն կիզող նայուածքն էր...

Երբ գիշերը ուշ ատեն տուն կը վերադառնայինք, կրպակէ մը «Հայաստան» թերթին տուեալ թիւը վերցուցի: Ի պատիւ նորելուկ այս հերոսին, այդ գիշեր հոսանքը անընդմէջ կը լուսաւորէր լուսատենչ երեւանի մէն մի փո-

ղոցը: Գիշերանոցս անցրնելով՝ անկողին մտայ ու անյապաղ թերթը բացի:

Աչքերուս չհաւատացի... Իրարու հետ բնաւ չառնչուող զոյգ մը յօդուածներ թերթին առաջին էջերը գրաւած էին: «ՍՓԻՒՔԱՀԱՅ ՄԻ ԳՐՈՂԻ ՍՐՏԻ ԽՕՍՔԻ Է ՍԱ...». այսպիսի «զօրլու» եւ սրտայոյզ խորագիր մը մարդու տունը չէ քանդած: Աստուծո՞ւմ դեռ «պելա» մը կ'ուզէք կոր, պարո՞ն Կուպելեան...

Իսկ անոր ճիշդ դիմացի էջը՝ «ՍՊԻՏԱԿ ՏԱՆ ԳՈՐՇ ԿԱՐՏԻՆԱԼԸ», եւ գրութեան կեղտոնը՝ գորշ կարտինալին լուսանկարը: Գլուխս քիչ մը քէֆ վիճակի մէջ, յանկարծ

այնպէս մը ճշացի, որ քիչ մնաց բնակած թաղիս բոլոր նախկին «ՔէՅ. ՃԻ. ՊԻ.»ները իրենց տեղաշորերով փողոց նետուէին:

«Մօ՛, ես կը ճանչնամ այս մօրուքաւոր թուխ մարդը...», գոչեցի: Ապա, վստահ ըլլալու համար, անկողինէն ելլելով հայելին մօտեցայ՝ մօտէն ես զիս զննելու: Չէի սխալած, իմ դիմակս փոխառած էին: Սպիտակ տան յայտնի մաֆիոզին, կամ «էմինանս կրին»՝ պարոն Կենադի Բուրբուլուին, մարդկային դիմագիծ տալու համար, իմ լուսանկարս իր սիւնակին տակ գետեղած էին, իսկ իմ սիւնակիս գլուխը՝ տխրահոչակ ուս պետական մարդուն, կամ՝ «ճանավար»ին լուսանկարը:

Առեղծուածը լուծուեցաւ... Ասոր համար ճաշարանի մաֆիական ու գլանային պարագլուխները, որոնք աւելի կլոր փորեր ունէին քան պարելու ատակ ֆիզիքական կազմուածք, շուրջս կը կտորուէին: Ու ես, հայ անփորձ խմբագրի մը շեղումով, մէկ օրուան ընթացքին ամբողջ Հայաստանի եւ գուցէ Սովետ Միութեան ամէնէն յարգուած մաֆիայի կնքահայրը դարձայ: Իսկ Հայաստանի մաֆիոզներու առաքինութիւններուն երբեւիցէ՝ մաս չէ կազմած թերթի մը մէջ երեւցող յօդուած մը ամբողջութեամբ ծայրէ ծայր կարդալը. այսինքն, խորագիրէն ու լուսանկարին տակ գետեղուած տեղեկութենէն ան-

**Տօնոյեան
Ընտանիք**

Կը շնորհաւորեն
ձեր Նոր Տարին
եւ Ս. Ծնունդը՝
մաղթելով անսահման
խաղաղութիւն
աշխարհին եւ մեր
ժողովուրդին

**Լեւոն
եւ Եսթեր
Իսահակ**

Նոր Տարուան
ընթացքին եղէք
առողջ
եւ Երջանիկ

Նախաբան

դին երթալով՝ մխրճուիլ գրու-
թեան խորքը:

Տղայէս խնդրեցի, որ ձայն չհա-
նէ, քիչ մը երկարաձգելու համար
խեղկատակութիւնը: Եւ դեռ,
թերթի խմբագրութեան հեռա-
ձայնելով, Անմօրուք Տէրտէրին
մանչուն նման վրիպանք պիտի
չխնդրէի: Այսպիսի բախտ մար-
դուս կեանքին մէջ մէկ անգամ կը
պատահի: Ուստի որոշեցիք վա-
յել մեզի բաժին ինկած առանձ-
նաչնորհումը: Ձէի կրնար պատ-
կերացնել, թէ համայնավարու-
թեան լուծէն ազատագրուած մեր
«ազիզ» ժողովուրդը այնքան
խոր պատկառանք ու ակնածանք
կը տածէր այնպիսի անձնաւորու-
թեան մը հանդէպ, որ գորչ
երանգ կը կրէր իր նկարագրին
մէջ: Վստահ եմ, որ տեղացի շատ
ընթերցողներ չէին կրցած իմաստ
մը հագցնել «Գորչ Կարտինալ»ին:
Միակ կարտինալը, որուն մասին
գաղափար ունէին անոնք, պազ
պատերազմի օրերուն պապական
թեկնածու հայ ծիրանաւորն էր:

Եթէ երբեք Հայաստանը կառա-
վարող մափիան ու գլանայիննե-
րը քիչ մը յոգնէին ու յանձն առ-
նէին զգայացունց խորագրէն
անդին անցնիլ, հետեւեալ «չա-
փօ»ն պիտի պարզուէր անոնց
աչքերուն. «Պէտք է կարծել, որ
Ռուսաստանի կառավարութեան
նախագահի առաջին տեղակալ,
պետական քարտուղար Կենադի
Բուրբուլսը, նախկին գաղափա-
րախօս Միխայիլ Սուսլովի աշխա-
տանքային գրասենեակը զբաղեց-

նելուց յետոյ ձեռք է բերել նաեւ
ժուռնալիստներին դասեր տալու
սովորութիւնը»:

Երանի՜ Սուսլովի աշխատասեն-
եակը աշխուժացնելու չափ կարո-
ղութիւն ունենայի: Ամէնէն առաջ
կրքոտ մեր մտաւորականութեան
ազնուութեան դասեր կը սկսէի
տալու:

Փոխարէնը, իմ սիւնակիս սկիզ-
բը հազիւ ընթեռնելի փոքր տա-
ռերով գրուած էր. «Օրերս
խմբագրութեան հիւրն էր ամե-
րիկահայ անուանի - ներողու-
թիւն՝ փերուշան - գրող, հրա-
պարակախօս Պ.Գ.: Ձեզ ենք ներ-
կայացնում մեր աշխատակիցի
հարցազրոյցը նրա հետ»:

Ուրեմն ի յայտ կու գայ, որ տե-
ղական մափիայի ղեկավարները,
արտաքին երեսօթէն դատելով,
կարծեք են, թէ իրենցմէ «գոր-
լու» մափիոզ մը արինոտ իր թա-
թերը կ'երկարէ յերկիր Նայիրի.
Գորչ Կարտինալի նշանակութեան
ալ վարժ չէր ալքուէն բթացած
անոնց «ինթելեքթ»ը. մանչիս
բացատրութեամբ՝ «անպայման
անոնք գորչ ածականը գայլի կամ
իրենց նման մարդակերպ գաղա-
նի հետ կապեցին...»: Ես ալ իմ
կարգիս, սկսայ վայելելու նոր
գտած ժողովրդականութիւնս:

«Յիսուն տարիէ ի վեր կը գրես,
տէ՛տ», ակնարկեց մանչս, «օր մը
օրանց բաժակ մը գինի հրամցնող
չեղաւ քեզի...»:

Հանրային վայրերու մէջ եւ փո-
ղոցը վայելած ժողովրդականու-
թիւնս՝ հէ՛չ: Օր մը, Ամերիկեան

համալսարանի բացման հանդի-
սութեան առիթով տրուած «քոք-
թէյլ»ին, պատահամբ Նիու
ձրրգիէն բարերար եղբայրներէն
մէկուն հանդիպեցանք:

- Պարո՛ն Գորչ Կարտինալ,- գո-
չեց ամերիկահայ բարերարը,-
մեզ գլեցի՛ր անցար... այլեւս
երեսնիս նայող չկայ:

- Պարո՛ն բարերար, այս ի՛նչ
պատուհաս եկաւ գլխուս,- պա-
տասխանեցի նիուձրրգեցի գոր-
ծարարին,- քիչ առաջ պաշտօնա-
կան ամպիոնէն պարոն նախագա-
հը այնպիսի թթու արտայայտու-
թեամբ մը կը նայէր ինձի, որ
կարծես բացայայտօրէն կ'ուզէր
ըսել. «Եթէ աչքդ նախագահական
աթոռիս վրայ է... եկուր, նստէ՛
ալ վերջանանք... խէրը անիծածս
դեռ Մարուխեանին ձեռքէն
չպրծած՝ Հիմա Գորչ Գայլ մը, նե-
րողութիւն, Գորչ Կարտինալ մը
բուսաւ դիմացս... Այս ի՛նչ «պե-
լալը» պաշտօն է եղեր...»:

Սրատես մանչիս աչքերէն բան
չէր փախեր... Յաջորդ օրը, նա-
խաճաչի ատեն, ինձմէ խնդրեց, որ
այլեւս Լոս Անճելըս վերադառ-
նամ՝ Ղարաբաղի համար դրամա-
հաւաքը գլուխ հանելու:

- Ի՛նչ է, տղաս, արդէն իսկ
ձանձրացա՞ր հօրմէդ...

- «Նօ՛», պապ, գիտես, որ են-
թադրութիւնդ ճիշդ չէ:

- Հապա՞... դեռ նոր սկսանք տե-
ղական մթնոլորտին վարժուելու:

- Ճիշդ ա՛յդ է, որ մտահոգութիւն
կը պատճառէ ինձի: Վերջերս
օտարոտի սկսար «աքթ» ընելու:

- Ի՞նչ ըսել կ'ուզես:

- Անգլերէն դիպուկ խօսք մը
կայ՝ «They have created a mon-
ster...»: Գուն չես նկատեր, որ
վերջերս շատ փոխուեցար. նայ-
ուածքդ, քալուածքդ, նոյնիսկ
խօսուածքդ փոխուեցան:

- Տղա՛ս,- ըսի համախոհութեան
հասնելու ջանքով,- ամբողջ
կեանքս ամէն վայելքի գինը վճա-
րած եմ տառապանքով ու արին-
քրտինքով: Հիմա, որ բախտը
ժպտեցաւ ինձի, ձգէ՛ որ քիչ մը
վայելեմ...

- Dad, stop it, please... Իբրեւ
գրող-հրապարակագիր, արդէն
ծանօթ անուն ես: Մի ոմն՝ Գորչ
Կարտինալի մը տիտղոսը իւրաց-
նելով չէ, որ աւելի պիտի փայլիս:
Մանչս իրաւունք ունէր... Անգ-
գալաբար, աժան ժողովրդակա-
նութիւն ձեռք բերելու համար
սկսած էի բառացիօրէն հոգիս
սատանային ծախելու: Գոնէ սա-
տանայ կոչեցեալին հետ սկսած
էի սակարկութեան մէջ մտնելու:
Յանկարծ մօրս ասացուածքներէն
մէկը միտքս եկաւ. «Մէկ օրուան
թագաւորութիւնն ալ թագաւո-
րութիւն է...», եւ մատնեցուս
ծայրով անշուղի հեռացայ մափ-
իական ու գլանային միջավայրէն
ու անոնց շնորհած «զըխըմ» ըլ-
լալիք բեմահարթակէն:

Գորչ Կարտինալի երանելի օրե-
րէն իբրեւ յիշատակ մնացին
թերթի մը երկու էջերը, ուր յա-
ւիտեան բանտարկուած էի ինձի
չպատկանող օտարոտի մափիա-
հունչ սիւնակի մը մէջ...

Wishing you
Peace,
Love and Joy
For This
Holiday Season

Harout, Sona
& Shant
Hamassian
Along With
Raffi and Christine
Hamassian

Մանուկ
Եւ Լուսի
Չուխաճեան

Լաւագոյն
Մաղթանքներով
Կը Շնորհաւորեն
Չեր Նոր Տարին
Եւ Ս. Ծնունդը



«Ասպարէզ»ի Բարեկամ

Նորթ Հովիվուս
ՀՅԳ
«Բարգէն Սիւնի»

**Նոր Տարուան
 առիթով,
 պայքարող մեր
 ժողովուրդին
 կը մաղթենք
 նոր եւ մեծ
 նուաճումներ**

**Նորթ Հովիվուսի
 Հայց. Առաքելական
 Եկեղեցւոյ
 Հովիւ Ու
 Հոգաբարձութիւն**

**Կը Շնորհաւորեն
 Համայն Հայութեան
 Նոր Տարին
 Եւ
 Ս. Ծնունդը**

Նորթ Հովիվուս
ՀՄԸՄ
«Չաւախք»

**Թո՛ղ նորահաս
 տարին մեզի բերէ
 նոր
 յաջողութիւններ**

ՀՕՄԻ
«Մեղրի»
Մասնաճիւղ

**Ձեր Նոր Տարին
 թող ըլլայ
 իրականացումներու
 մեծ եւ կարեւոր
 հանգրուան մը**

Մկրտիչ Խրիմեան Հայրիկի Ծննդեան 200ամեակը (1820–2020)

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

Այս տարի, 2020ին, Հայ ժողովուրդը ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, արժանավայել շուքով եւ արդար հպարտութեամբ, պիտի նշէ Հայ ժողովուրդի հոգեւոր, կրթական, քաղաքական-հասարակական ականաւոր գործիչներէն Մկրտիչ Խրիմեան Հայրիկ կաթողիկոսի ծննդեան երկու հարիւր ամեակը:



Ղարոցներ բացաւ, եկեղեցիներ կառուցեց եւ գիրքեր հրատարակեց:

1869ին կ'ընտրուի Պոլսոյ պատրիարք: Հոն եղած շրջանին, իր յաճախակի քննադատութիւններուն, յանդուգն եւ կորովի գործելակերպին պատճառաւ, թրքական իշխանութիւնները զինք Երուսաղէմ կ'աքսորեն:

1878ին, Պոլսոյ պատրիարք Ներսէս Վարժապետեանի կարգադրութեամբ, Խրիմեան Հայրիկ, Մինաս Չերազի եւ Նարպէյի ընկերակցութեամբ կը մեկնի Պերլին, իբրեւ Հայկական պատուիրակութեան նախագահ:

Այդ պատուիրակութեան նպատակն էր Պերլին երթալ, հոն տեղի ունեցած մեծ տէրութեանց ժողովին ներկայանալ եւ անոնցմէ խնդրել, որ իրականացնեն Հայկական նահանգներու բարեկարգութեանց, Սան Ստեֆանոյի մէջ մեծ տէրութեանց ժողովի 16րդ յօդուածով առնուած որոշումին գործադրութիւնը: Յայտնի է Համայն Հայութեան, թէ մեծ պետութիւններ, քաղաքական մութ Հաշիւներով եւ Ռուսիոյ դէմ քայլ մը առնելով, Պերլինի մէջ 16րդ յօդուածը փոխարինեցին 61րդ յօդուածով, որուն հիման վրայ եւրոպական վեց պետութիւններ պիտի հսկէին Հայկական գաւառներու բարենորոգման աշխատանքները, փոխանակ միայն Ռուսիան ընէր այդ գործը:

Պոլիս վերադարձին Խրիմեան Հայրիկ ժողովուրդին կը պատմէ ժողովին մանրամասնութիւնները, պատահած խեղդատակութիւնը եւ «Երկաթեայ շերեփ» հանրածանօթ առածը:

Մէկ կողմէն Խրիմեան Հայրիկ կը յայտնէ այդ ժողովին իր յուսախաբութիւնը, միւս կողմէն՝ Հայ ժողովուրդին կը յորդորէ, որ հոգեփոխուի եւ զիտնայ արժէքը գէնքի ուժին եւ ինքնապաշտպանութեան:

Խրիմեան Հայրիկի անձին, հոգեւորականին, Հայրենասէրին եւ ազգասէրին մասին հիացմունքով արտայայտուած են իրեն ժամանակակից մտաւորականներ եւ գործիչներ, իսկ ժողովուրդը պաշտամունքի հասնող սէր եւ յարգանք ունէր «Հայրիկին» հանդէպ: Այսպէս Աւետիս Ահարոնեան կը գրէ. «Խրիմեան այս օրինական հոգեւորականը մէն միւս մի խորունկ խորհուրդ է: Անոր կեանքը, նիստ ու կացը, հագուելու եղանակը, նրա կերակուրը անգամ (հոգաւոր թանկ ապուրը) անսահման սէր եւ հետաքրքրութիւն կը ստեղծէր ժողովուրդին մօտ: Նրա ամէն մի խօսքը անքննադատելի եւ վսեմ պատգամ է»:

26 Սեպտեմբեր 1893ին, էջմիածինի մէջ ձայներու միաձայնութեամբ զինք Ամենայն Հայոց կա-

թողիկոս կ'ընտրեն: Իսկ Հայ ազատագրական շարժման ձեւաւորման եւ գաւառի հայութեան զարթոնքի գործին մէջ իր անփոխարինելի դերը կատարած է Խրիմեան Հայրիկ, որուն որպէս հետեւանք Վանի մէջ ծնունդ առին «Սեւ Սաչ», «Պաշտպան Հայրենեաց» եւ «Արմենական Կուսակցութիւն» ինքնապաշտպանական ջոկատները: Կարելի չէ գրել Խրիմեան Հայրիկ



կաթողիկոսին մասին, առանց յիշելու, թէ ան հակառակ իր արտակարգօրէն զբաղած ըլլալուն, բազմաթիւ գրութիւններ եւ հատորներ ունի, որոնց մէջ կ'անդրադառնայ հողի սիրոյն, Հայ ընտանիքի գաղափարին, Հայ աւանդութեանց պահպանման, հօր եւ զաւակի յարաբերութիւններուն, Յիսուսի վերջին շաբթուան (Աւագ շաբթին), խաչի ճառին, ժամանակին եւ խորհուրդին մասին:

Խրիմեան Հայրիկ կը հաւատար, թէ՛ «աշխարհի մեծագոյն մարգրիտը Աւետարանն է, առանց Աւետարանի առաջնորդութեան ուրիշ ուղիղ ճանապարհ չկայ»: Ունի նաեւ «Հայ Գոյժ» եւ «Վան Գոյժ» երկու նշանաւոր գործերը, որոնք կը պատկերեն թրքահայութեան եւ Վանի հայութեան աղէտները:

Խրիմեան Հայրիկի գլուխ գործոցը կը նկատուի «Պապիկ եւ Թոռնիկ» գործը, ուր պայտիկը իր թոռնիկին կը փոխանցէ Հայկական հողին սէրը, ընտանեկան սրբութիւններուն եւ աւանդութեանց պաշտամունքը:

1929ին Նիւ Եորքի մէջ հրատարակուեցաւ հսկայածաւալ հատոր մը, որ կը պարունակէ Խրիմեան Հայրիկի գրական ամբողջական գործերը:

Խրիմեան Հայրիկի ժամանակակիցները կը վկայեն, թէ ան ինքզինք հոգեւորականի չափ բանաստեղծ կը համարէր: Խրիմեան անմասն Հայրիկ արտաքինով, փարթամ հասակով, առնական գեղեցկութիւն ունէր: «Ոչ մէկ նկարով կարելի չէր պատկերացնել Խրիմեան Հայրիկին դէմքը, մանաւանդ անոր խոշոր կապոյտ աչքերը», կը վկայեն զինք մօտէն ճանչցողները:

Խրիմեան Հայրիկ սրամիտ էր. նոյնիսկ լուրջ եւ ամենահանդիսաւոր պահերուն չէր մոռնար իր բնածին հիւմորը:

էջմիածինի մէջ, Խրիմեան Հայրի-

Պոլսահայ Միութեան

Հոգաբարձութեան, Գործադիր
Յանձնախումբի
եւ յարակից յանձնախումբերու
եւ ենթալանձնախումբերու վարչութիւնները
կը մաղթեն միութեան բոլոր անդամներուն,
համակիրներուն եւ համայն հայութեան,
առողջ, բարգաւաճ ու խաղաղ
Նոր Տարի եւ ուրախ Ս. Ծնունդ

The Board of Trustees,
the Executive Committee
and all the Committees
and subcommittees
of the Organization
of Istanbul Armenians, wish to all
members, friends, and fellow
Armenians, a healthy, prosperous
and peaceful New Year
and a joyous Christmas

Կոմիտասի 150ամեակը Գահիրեի Մէջ

ՍԵՒԱՆ ՍԵՄԷՐՃԵԱՆ

Կոմիտաս Վարդապետին ծննդեան 150ամեակն է այս տարի: Այս առիթով, ոչ միայն Հայաստանի, այլ տարբեր երկիրներու եւ հաւանաբար Հայկական բոլոր Համայնքներուն մէջ Համերգով մը, որոշ տեղեր ալ՝ Համերգներով, նշուեցաւ պանծալի այս ամեակը: Ինչ խօսք, որ Հայկական ժողովրդական երգերու խմբերգային մշակումներու որպէս վիթխարի ներկայացուցիչ, Կոմիտասի 150ամեակին նուիրուած այս Համերգներուն մեծամասնութիւնը խմբերգային էր: Երգեցին բոլոր, բոլոր երգչախումբերը...

Իրենց հոս ու հոն տուած փայլուն ելոյթներով, Կոմիտասի ամենահրաշալի ստեղծագործութիւնները բեմ հանեցին Հայկական արհեստավարժ գրեթէ՝ մեծ ու փոքր բոլոր երգչախումբերն ու Համոյթները եւ անոնց կողքին անպայմանօրէն՝ Սփիւռքի ամենատարբեր Համայնքներուն մէջ կազմուած սիրողական բոլոր



կին կը ներկայանար բանաստեղծ մը իր փոքրամարմին տիկնոջ հետ: Խրիմեան կը նայի տիկնոջ, ապա հարց կու տայ բանաստեղծին.

- Տիկին՞նդ է, որ քեզ կը ներշնչէ եւ կ'ոգեւորէ բանաստեղծութիւն գրելու:

- Այո,- կը պատասխանէ բանաստեղծը:

- Ձուակս, աղէկ ըրած ես, չարիքներուն փոքրագոյնը ընտրած ես:

Սրախօսութիւններու հսկայ ժառանգ մը ձգած է Խրիմեան Հայրիկ, որոնցմով Հատորներ կարելի է լեցնել:

Վեփահառ Մկրտիչ Խրիմեան Հայրիկի բազմաբեղուն կեանքին վերջին կոնդակն ալ Հայրենասիրութեան եւ ազգասիրութեան փայլուն օրինակ մըն է՝ իր կեանքին եւ իր խօսքին.

«Այժմ իմ Հայրապետական կոն-

դակով, տարաբախտ ազգիս վշտալի Հայրապետս, որ հասել եմ իմ կեանքի մայրամուտին, յորդորս եմ կարդում ձեզ, մեր բոլորի սիրելիներին, որ իսպառ թօթափեն սրտերից ատելութիւնը, մեծատուրթիւնը եւ լինեն ընդմիշտ մի սիրտ եւ մի հոգի, Համերաշխ եւ եղբայրական սիրով գործեն այնպիսի խոհեմութեամբ, իմաստութեամբ, որ իրենց գործունէութեան արգասիքները վնաս չբերեն մեր ազգին, այլ օգուտ ու զարգացում»:

Ամենայն Հայոց «Հայրիկ»ի կեանքը վերջ գտաւ 20 Հոկտեմբեր 1907ին: Մովածաւալ բազմութիւն մը ներկայ եղաւ անոր թաղման արարողութեանը, եւ թաղուեցաւ նախորդ կաթողիկոսներուն պէս, Ս. Էջմիածինի մէջ:

Իբր յարգանք անոր յաւերժալոյս եւ անմահ յիշատակին:

երգչախումբերը... Երգչախումբերու այս մեծ թիւին մէջ, այսօր մեզի առաւելապէս հետաքրքրողը վերջին խումբն է՝ սիրողականները:

Յատակ պէտք է ըլլայ, որ մեր առանձնացումը երբե՛ք արհեստավարժ երգչախումբերուն անտեսում կամ թերագնահատում մը չէ. հակառակը, այսօր, վաղը եւ միշտ, անկախ անցած ու գալիք ամեակներէն, անոնց բարձրորակ ելոյթները լուսաւոր կէտեր են ու կը մնան, մեր ժամանակին մէջ խուռներամ բազմութիւններու կողմէն գնահատուող անգոյն ու անդիմազիծ երաժշտական իրականութեան մէջ...

Այդպէս է՝ անկասկած, բայց... Ի՞նչ կը կարծէք:

Դժուարութեան ի՛նչ տոկոս կ'առաջարկէ քով-քովի եկած, երաժշտական բարձրագոյն կրթութիւն ստացած, արհեստա-

վարժ խումբ մը երգիչներու Կոմիտաս կամ օրինակ՝ «Անուշ» օփերայէն Հատուածներ երգելը...

Մեր պատասխանը՝ ոչ մէկ:

Այսպիսի խումբի մը առջեւ դրուած խնդիրը, որ նոյնպէս հեշտ չէ՝ անկասկած, տուեալ ստեղծագործութիւնները ինքնուրոյն եւ իւրովի կատարելն է միայն...

Այլ է խնդիրը սիրողական երգչախումբերու...

Ոչ թէ դժուար, այլ Համարեա՛ անհնար կրնայ թուիլ, պատահաբար հաւաքուած խումբ մը մարդկանց Կոմիտասի խմբերգային գործերը երգեցնելու իրողութիւնը...

Այո՛, ճիշդ է որ այդ երգերուն բնօրինակը գիւղերէն ու գիւղացիներէն հաւաքած էր Կոմիտաս, բայց չէ՞ որ խօսքը արդէն ոչ թէ այդ անմիջական տարբերակներուն, այլ երաժշտականօրէն

**Dr. Armen
& Mrs. Aznive
Goenjian
& Family**

**Merry Christmas
& Happy New Year**

**Շնորհաւոր
Նոր Տարի
Եւ Ս. Ծնունդ**

**Ara
Tavitian**

Los Angeles

**Warmest
Wishes
for Christmas
&
New Year**

Կոմիտասի 150ամեակը Գահիրէի Մէջ

ամենակատարելագործուած մաքրամաքուր մշակումներուն մասին է, ան ալ՝ խմբերգային մշակումներուն, ուր իւրաքանչիւր գրուած ձայն իր տեղով, իր ժամանակով, իր բարձրութեամբ եւ ուժգնութեամբ անփոխարինելի է՝ միանգամայն:

Գիտուար է բարեկամներ... չա՛տ դժուար:

Երաժշտական չքեղ գործիքաւորումներով, բազմաձայն հարուստ նուագակցութեամբ, ականջ ու սիրտ հալեցնող աքորտներով ու հարմոնիաներով լիառատ քանիքանի երաժշտական գործերու անուններ կրնանք թուել, որոնք սիրողական երգչախումբերու կողմէ կրնան կատարուիլ, եթէ ոչ կատարելագործուած, ապա անպայմանօրէն՝ լաւորակ...

Բ. Կանաչեան, Ա. Նաչատուրեան, Է. Յովհաննիսեան, Ս. Աւետիսեան, Ամիրխանեան եւ, եւ... երաժշտութեամբ չաղախուած երգերու աշխարհ մը կ'առաջարկեն բազում այս անունները, բայց նոյն չէ՝ Կոմիտասը. հոգիէն ու միտքէն բխող, սիրտով զգացուող, շունչ ու ձայնալարով սկսող ու երաժշտական ամենատարբեր նրբերանգներով աւարտուող մեղեդիներու միազգաց ամբողջութիւն մը... ահա կոմիտասեան երգը՝ դժուար...

Առ այդ, անվերջ սիրոյ ու խորի՛ն յարգանքի մեր տուրքը կը յայտնենք Գահիրէի Ազգային առաջնորդարանի «Արաքս» երգչախումբին եւ անոր յարգարժան ղեկավար մաէսթրօ Միհրան Ղա-

զէլեանին, որոնք Կոմիտասին նուիրուած համերգներու երկար շարքին մէջ արձանագրեցին առանձնայատուկ ելոյթ մը:

Ինչ խօսք, որ այս առաջին անգամը չէր, որ «Արաքս»ը իր հերթական ելոյթը կը նուիրէր Կոմիտասին. ասկէ 10 տարի առաջ ալ, անոնք ոգեկոչած էին Վարդապետին ծննդեան 140ամեակը...

10 տարի առաջ, 10 տարի վերջ, նոյնն է երեւոյթը մեզի համար...

Համոզուած ենք աներկմիտ, որ անգնահատելի եւ գեղեցիկ երեւոյթով մը, տուն, տեղ ու զուակ, գործ ու զբաղմունք ձգած, միայն սիրով ու անթելազրելի խորի՛ն խորհուրդով մը երգելու համար հաւաքուած այս խումբին, ու նման խումբերուն, Կոմիտաս կատարելն է իսկական դժուարն ու անյաղթահարելի թուացող մարտահրաւէրը, ու ղեռ աւելի՛ն, համոզուած ենք նաեւ, որ միայն մեծաշուք գիտաժողովներու սեղաններուն ու լուսազարդ բեմերուն վրայ յիշելով չէ՛, այլ այսպէս՝ Կոմիտասի մեղեդիներն ու երգերը, մարդոց սովորական աօրեային մէջ մտցնելուն մէջ կը կայանայ անոր իսկական գոյատեւումը...

Մեր արժէքներով ապրինք ու անոնց խորհուրդով...

Առանձնայատուկ երեւոյթ մը եւս. «Արաքս» երգչախումբին յոբելեանական այս ելոյթը, Կոմիտասի 150ամեակին կողքին նեոարած էր նաեւ հայ մշակոյթի այլ երկու երախտաւորներ, որոնց

անունը առյաւէտ քանդակուած կը մնայ հայ ժողովուրդի խիղճին ու գիտակցութեան մէջ, հայկական ազգային առաջին օփերայով՝ Յովհաննէս Թումանեանի ու Արմէն Տիգրանեանի «Անուշ»ով...

Այսպէս, հայ մշակոյթի այս երեք հանճարներուն նուիրուած, սոյն թուականի Գեղտեմբեր 5ին կայացած յոբելեանական ելոյթին ընթացքին հնչեցին Կոմիտասի, առանց նուագակցութեան ու նուագակցութեամբ ամենածանօթ խմբերգային ստեղծագործութիւններէն՝ «Գութաներգ», «Էն Դիզան», «Առաւօտ Լուսաբեր», «Ինչո՞ւ Պինկէօլը Մտար», «Իմ Ձինարի Եարը», «Էսօր Ուրբաթ է», «Երեւան Բաղ Եմ Արել» եւ այլն:

Հանդիսատեսի ջերմ ծափողջիւններով գնահատուեցան «Անուշ» օփերային ամենասիրուած խմբերգային հատուածները. նախերգանքը՝ «Ափսոս, Անուշ», «Ամպի ճակից»ը, «Համբարձում Եայլա»ն եւ այլք:

Միայն երգով չէ՛, երիտասարդ շնորհալի աղջիկները պարային հատուածներով ալ ոգեկոչեցին մեր յոբելեարները. «Հարսի Պարը»՝ «Անուշ» օփերայէն եւ «Հոյն ազան»՝ Կոմիտասէն:

Առանձնապէս պիտի նշենք մենբերիչ Ռուբէն Սաատը, որ կատարեց «Անուշ»էն «Սիրուն Աղջիկ»ն ու Ալ. Յարութիւնեանի հանրածանօթ «Հայրենիքիս Հետ» երգին մենբերգային բաժինը:

«Արաքս» երգչախումբի երիտասարդ աղջիկները այս անգամ ալ

ելոյթ ունեցան ե՛ւ Ա. Տիգրանեանի, ե՛ւ Կոմիտասեան կատարումներով՝ «Ասում են Ուռին», «Կուժն Առայ» եւ «Գնա Գնա»:

Ձեռք կրնար չնշել, որ յոբելեանական այս ելոյթը իր տպաւորիչ մեկնաբանութեամբ վարեց եւ մեծ հանճարներն ու անոնց ստեղծագործութիւնները հանդիսատեսին ըստ արժանւոյն ներկայացուց Լալա Նիկոլեանը:

Ջերմապէս ողջունելի կը համարենք, «Արաքս»ին տարիներէ ի վեր սկսած ու շարունակած, հանդիսատեսը ելոյթին ու կատարումներուն հետ հաղորդակից դարձնող, խմբավար Միհրան Ղազէլեանին պատրաստած գրքոյկը, որուն մէջ ծայրաստիճան բժախնդրութեամբ գետեղուած են յոբելեարներուն կենսագրականները, անոնց նշանաւոր ասոյթներէն գեղեցիկ հաւաքածոյ մը ու ելոյթի բոլոր կատարումներուն խօսքերը:

Յատկապէս պիտի ողջունենք նաեւ «Արաքս» երգչախումբի օժանդակ յանձնախումբը, որուն ջանքերով իրականացաւ ելոյթին յաջող կազմակերպութիւնը:

Այսպէս...

Անցեալ ելոյթին, այս ելոյթին, անգամ մը եւս յուզախառն սիրով, բա՛րձր պիտի գնահատենք սիրելի «Արաքս» երգչախումբին բոլոր երգիչ-երգչուհիներն ու անոր ղեկավար Միհրան Ղազէլեանը:

Սրտագին մեր շնորհաւորանքը բոլորիդ՝ անխտիր:

Ձեր ձայներն անսպա՛ռ ու հոգիները դալար:

In Memory of
Varoujan Koundakjian

Armine Koundakjian and Family

Ron & Goharik Gabriel & Family


We wish
 our friends & family
 A Merry Christmas
 & a Happy
 New Year

2020ի Յորելենականներ

Պատրաստեց՝ ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Իւրաքանչիւր յորելենական թուականի կամ տարեդարձի նշում խորքին մէջ մեր կեանքը վերարժեւորելու ձգտում մըն ալ ունի իր ետին թաքնուած: Եւ երբ ամէն անգամ զանոնք հրապարակային կերպով կը յիշենք, կը նշենք, կը նշանակէ, որ մենք զմեզ կ'արժեւորենք: Այս բոլորը դրական պատեհութիւններ են, որ սփիւռքեան մեր ճակատագրի պահպանման եւ կազմութեան մէջ մեծ դերեր ունեցած են: Ու այս թուարկումներով արդէն մտած կ'ըլլանք Հայոց պատմութեան մէջ՝ տեսնելու համար հոն խարսխուած հայրենասիրութիւնը, հայապահպանումը, հայու ոգիի սաւառնումն ու հայակերտումը, մշակոյթի եւ ազատութեան սէրը, հայու կամքն ու մարտնչումը, ընդվզումն ու յեղափոխութիւնը:

- Ու այս տարի կը նշենք.
- Աղասի Այվազեան (1925) - 95ամեակ
- Անդրանիկ Օզանեան (1865) - 155ամեակ
- Արամ Ա. կաթողիկոսի գահակալութիւն - 25ամեակ
- Արամ Հայկազ (1900) - 120ամեակ
- Աւետիք Իսահակեան (1875) - 145ամեակ
- Գառնիկ Աթթարեան (1925) - 95ամեակ
- Գրիգոր Արծրունի (1840) - 175ամեակ
- Գրիգոր Պըլլտեան (1945) - 75ամեակ
- Եղուարդ Պոյաճեան (1915) - 105ամեակ
- Երուխան (1875) - 150ամեակ
- Թովմաս Թերզեան (1840) - 80ամեակ
- Ժանսէն (1920) - 100ամեակ
- Ինտրա (1875) - 145ամեակ
- Խաչատուր Աբովեան (1805) - 215ամեակ
- Խորէն Աբրահամեան (1930) - 90ամեակ
- Խորէն Պալեան (1935) - 85ամեակ
- Կոստան Զարեան (1885) - 135ամեակ
- Համաստեղ (1895) - 125ամեակ
- Հայր Ղեւոնդ Ալիշան (1820) - 200ամեակ
- Ղազարոս Աղայեան (1840) - 180ամեակ
- Մայքըլ Արլէն (1895) - 125ամեակ
- Մանուկ Աբեղեան (1865) - 155ամեակ
- Մարտիրոս Սարեան (1880) - 140ամեակ
- Մկրտիչ Խրիմեան (1820) - 200ամեակ
- Յակոբ Կարապենց (1925) - 95ամեակ
- Յովհաննէս Աբելեան (1865) - 155ամեակ



- Նուպար Զարխուտեան (1920) - 100ամեակ
- Ռաֆայէլ Պատկանեան (1830) - 190ամեակ
- Րաֆֆի (1835) - 185ամեակ
- Ռուբէն Սեւակ (1885) - 135ամեակ
- Սեւրի դաշնագիր (1920) - 100ամեակ
- Ստեփան Մալխասեանց (1875) - 145ամեակ
- Վահան Տէրեան (1885) - 135ամեակ
- Վարդան Աճէմեան (1905) - 115ամեակ

*Merry Christmas
and Happy New Year
from all of us
at JM Tobacco, Inc.*



www.jmtobacco.com

2020՝ Առնետի Տարի

Պատրաստեց՝ ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Այս տարի չինական 4717րդ տարին է, որուն լուսնային օրացոյցին համաձայն, նոր տարին, որ կը սկսի 25 Յունուար 2020ին, կ'անուանուի Առնետի տարի:

Չինական ականդրութեան համաձայն, երբ Պուտտան երկինք պիտի բարձրանար, ուզած էր իր հետ, իր աստուծոյն տանիլ 12 կենդանիներ: Անմիջապէս իր խնդրանքին ընդառաջած էր մուկը կամ առնետը, ապա անոր յաջորդած էին՝ ցուլը, վագրը, ճագարը կամ նապաստակը, վիշապը, օձը, ձին, ոչխարը, կապիկը, աքլորը, շունը եւ խոզը:

Իր կարգին, Պուտտան իւրաքանչիւր անասունին անունը տարուան մը անունով մկրտած է: Այս ձեւով չինական առաջին տարին սկսած է մուկով, եւ անոր յաջորդած են միւսները: Ամէն 12 տարին անգամ մը կրկնուած է անասունին անունը:

Չինական աստղագիտութիւնը տարիները բաժնած է 12 կենդանիներուն անուններով:

Այս որդեգրումը ընդունուած էր քրիստոնէական օրացոյցի ծնունդէն շատ առաջ եւ բաժնուած էր 12ի, որովհետեւ մարդիկ նշմարած էին, թէ իւրաքանչիւր տարուան ընթացքին լուսինը 12 անգամ լիալուսին կը տեսնուէր:

Իւրաքանչիւր կենդանի ունի իր յատուկ նկարագիրը՝ միւսներէն տարբեր:

Առնետը կը գրաւէ այս շարքին Ա. տեղը:

Ստորեւ չինական տարիներու բաժանումները՝ իրենց տարիներու դասաւորումով.

1. Առնետ.- 1900-1912-1924-1936-1948-1960-1972-1984-1996-2008-2020
2. Յուլ.- 1901-1913-1925-1937-1949-1961-1973-1985-1997-2009-2021
3. Վագր.- 1902-1914-1926-1938-1950-1962-1974-1986-1998-2010-2022
4. Նապաստակ.- 1903- 1915-1927-1939-1951-1963-1975-1987-1999-2011-2023
5. Վիշապ.- 1904-1916-1928-1940-1952-1964-1976-1988-2000-2012-2024
6. Օձ.- 1905-1917-1929-1941-1953-1965-1977-1989-2001-2013-2025
7. Ձի.- 1906-1918-1930-1942-1954-1966-1978-1990-2002-2014-2026
8. Ոչխար.- 1907-1919-1931-1943-1955-1967-1979-1990-2003-2015-2027
9. Կապիկ.- 1908-1920-1932-1944-1956-1968-1980-1992-2004-2016-2028
10. Աքլոր.- 1909-1921-1933-1945-1957-1969-1981-1993-2005-2017-2029
11. Շուն.- 1910-1922-1934-1946-1958-1970-1982-1994-2006-2018-2030
12. Խոզ.- 1911-1923-1935-1947-1959-1971-1983-1995-2007-2019-2031

Առնետի Տարին Մնածներուն Նկարագիրը

Պուտտային 12 կենդանիներուն մէջ առնետը կը դասուի իբրեւ ամէնէն իմաստունը եւ խելացին:

Հիմնուելով այս վարկածին վրայ՝ այս տարուան մէջ ծնած գրեթէ բոլոր անձերը կ'ըլլան.

- ճարպիկ, լաւագոյնին ձգտող, դէպի բարձունքները տենչող եւ մանաւանդ բախտաւոր:
- Իրենց սխալներէն օգտուող եւ շուտով յաջողութեան հասնող:
- Կը սիրեն միասին աշխատատիլ եւ գործել:
- Սիրուն եւ խելացի են եւ երեւակայութեամբ հարուստ:
- Իրենց անմիջական շրջապատի մէջ իրենք զիրենք շատ հանգիստ կը զգան:
- Ստեղծագործ են եւ դիրքի տէր:
- Զօրեղ անհատականութեան տէր են:
- Հպարտ են իրենց անձով:
- Երկչոտ են, սակայն ընկերային:
- Նպատակին հասնելու համար ամէն բան կը զոհեն:
- Աւանդապահ եւ քիչ մըն ալ ռոմանթիք են:
- Երբեք առանձին չեն ուզեր մնալ կամ ապրիլ:
- Տունէն դուրս միշտ պահպանողական են:
- Մխելն ու խմելը շատ կը սիրեն՝ մոլութեան աստիճան:
- Հարցերէ հեռու կ'ուզեն մնալ. առոյգ եւ կայտառ են:
- Նախաձեռնող եւ ծրագրող կ'ըլլան:
- Նոյնիսկ եթէ կացութիւնը վտանգաւոր ըլլայ, հարցերը դիւրութեամբ կը լուծեն:
- Իւրաքանչիւր մանրամասնութիւն կը քննեն եւ կը զննեն:
- Անակնկալներու չեն ուզեր հանդիպիլ:
- Սուր միտք ունին:
- Շրջապատէն միշտ յարգուած կ'ըլլան եւ սիրալիր կեանք կ'ապրին:

Առնետի Տարուան Նշանաւոր Մնունդները

Անթոնիօ Պանտերաս, նախագահ Պուլ (կրտսեր), Մոնէ, իշխան Չարլզ, նախագահ Նիքսոն, Ճէյմզ Լեպլոն, իշխան Հենրի, Թամ Հոլլընտ, Քրիստիանօ Ռոնալտօ, Լուիզ Համիլթըն:



Առնետի տարին ծնածները ընդհանրապէս կ'ըլլան դերասան, քաղաքագէտ, գրող, մարզիկ կամ արուեստագէտ:

Առնետին համար տարուան լաւագոյն ամիսն է Դեկտեմբերը: Բախտաւոր թիւերն են.- 5 եւ 9

Նախասիրած գոյնը՝ կապոյտ

Նախընտրած ծաղիկը՝ մեխակ

Հետեւեալ տարիները Առնետի տարի կոչուած են եւ պիտի կոչուին.

1900-1912-1924-1936-1948-1960-1972-1984-1996-2008-2020-2032-2044:

**Ալիք
Եւ Մեղրի
Մարտէլեաններ**

**Թո՛ղ 2020 Տարին
Բոլորին Համար
Ըլլայ
Յաջողութիւններով
Լեցուն Տարի Մը**

Ի՞նչ Կ'ըսեն Աստղերը Շան Տարուան Ընթացքին

Պատրաստեց՝ ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

Խոյ (21 Մարտ-20 Ապրիլ)



2020 տարուան առաջին իսկ ամիսներուն առողջական նախկին վիճակիդ պիտի վերադառնաս: Ուրախացիր: Ջգուշութիւնը մեծ դեր պիտի խաղայ ամբողջ տարուան ընթացքին: Ուստի մարզանքներդ շարունակելու չմոռնաս: Տարուան կիսուն ընտանեկան կարգ մը հարցեր շատ սահուն պիտի լուծուին: Քու չափաւոր եւ հաւասարակշռուած կեցուածքով պիտի կարենաս յաղթահարել ամէն դժուարութիւն: Նիւթականի որոշ բարելաւում պիտի ունենաս տարեվերջին:
 Բախտաւոր թիւեր.- 1-20-22
 Բախտաւոր օրեր.- Կիրակի եւ Երեքշաբթի

Յուլ (21 Ապրիլ-21 Մայիս)



Նոր ծրագիրներ պիտի մշակուին տարուան կիսուն, ու դուն մեծ գոհունակութիւն պիտի ունենաս: Այս նոր սկիզբը իր հետ պիտի բերէ նոր ուրախութիւններ: Անակնկալ հիւրերով յաճախ պիտի շրջապատուիս: Նիւթական վիճակդ պիտի կարենաս բարելաւել: Մախսերդ թեթեւցնելու մասին մտածէ: Եթէ ամուսնացած չես, 11րդ եւ 12րդ ամիսները այս ծրագիրին համար ամէնէն յարմարագոյնը կը նկատուին: Միւս ամիսներուն գործիդ մէջ քեզի մեծ պատասխանատուութիւն մը պիտի վստահուի: Լաւ մտածէ եւ յարատեւ գործէ:
 Բախտաւոր թիւեր.- 5-11-28
 Բախտաւոր օրեր.- Ուրբաթ եւ Կիրակի

Երկուորեակ (22 Մայիս-21 Յունիս)



Անմիջական շրջապատդ եւ բարեկամներդ նիւթապէս նեցուկ պիտի կանգնին բոլոր ծրագիրներուդ իրագործման աշխատանքներուն: Յունիսէն ետք կեանքդ աւելի հեղասահ պիտի ընթանայ, եւ տնտեսական վիճակդ հիմնովին պիտի բարելաւուի: Տարուան վերջին ամիսներուն կարճ շրջապատդ մը ծրագիրներ պիտի որոնուին: Լաւ կ'ընես. եթէ իրագործես, որովհետեւ չես գիտեր գալ տարի պայմանները ինչպէս կրնան ըլլալ: Հեռուէն ազգականի մը մեծ յաջողութիւնը քեզ հոգեպէս պիտի ուրախացնէ:
 Բախտաւոր թիւեր.- 5-15-30
 Բախտաւոր օրեր.- Շաբաթ եւ Չորեքշաբթի

Խնցզետին (22 Յունիս-22 Յուլիս)



Տարուան ընթացքին ինքնավստահութիւնդ միտքի ապահովութիւն եւ խոր իմաստութիւն պիտի չնորհէ քեզի: Գործերդ պիտի ընդարձակուին եւ յաջողութեան յաջողութիւն պիտի անցնին: Յաճախ սիրոյ մէջ յուսախաբութիւններ պիտի ապրիս, բայց պիտի անդրադառնաս ու ինքզինքդ շուտով պիտի վերագտնես: Հոկտեմբերէն սկսեալ տարակարծութիւններդ որոշ զիջումներով պիտի հարթուին: Ասոնց չնորհիւ զանազան երազներ իրագործելու տարի մը պիտի ունենաս: Առողջութիւնդ պահելու ճիգերդ չմոռնաս:
 Բախտաւոր թիւեր.- 3-10-16
 Բախտաւոր օրեր.- Երկուշաբթի եւ Կիրակի

Առիծ (23 Յուլիս-23 Օգոստոս)



Առողջ ես: Այնպէս, որ այս գետնին վրայ զանազան մտահոգութիւններ պիտի չապրիս: Միայն կը թելադրուի չափաւորել ուտելիքդ եւ կիրարկել մարզանքներդ: Համբերատար ըլլալդ քեզ շատ յաճախ հարցերէ հեռու պիտի պահէ: Այդպէս ալ շարունակէ: Մայիսին, մէկ կամ աւելի շաբթուայ արձակուրդ մը պիտի ծրագրես: Այս մէկը քեզ հոգեպէս եւ ֆիզիքապէս պիտի կազդուրէ եւ առիթ տայ, որ նոր մղումով եւ խանդավառութեամբ լծուի գործերուդ: Յարատելութիւնդ իր մեծ դերը պիտի ունենայ յաջողութեանդ մէջ:
 Բախտաւոր թիւեր.- 9-17-22
 Բախտաւոր օրեր.- Ուրբաթ եւ Երկուշաբթի

Կոյս (24 Օգոստոս-22 Սեպտեմբեր)



Տարիդ բաւական լաւ վիճակով պիտի սկսիս: Անցեալ տարուան հարցերդ շուտով պէտք է մոռնաս, որպէսզի կարենաս դուն քեզի առիթ տալ նոր ծրագիրներ մշակելու: Բաւականին յաջող տարի մը կրնաս ունենալ, եթէ փորձես նախկին բոլոր խնդիրներդ, ըսի-ըսուներդ ու վէճերդ ամբողջովին մոռնալ: Յուլիսին՝ գեղեցիկ անանկնկալ մը քեզ պիտի փոխէ: Այս տարի ոչ միայն հին պարտքերդ պիտի փակես, այլեւ տնտեսապէս լաւ վիճակ մը պիտի ունենաս: Ուրախ եղիր:
 Բախտաւոր թիւեր.- 3-5-6
 Բախտաւոր օրեր.- Երկուշաբթի եւ Երեքշաբթի

Կշիռք (23 Սեպտեմբեր-23 Հոկտեմբեր)



Մի՛ փորձեր մինակդ դիմագրաւելու ամէն դժուարութիւն: Մէկ ձեռքով երկու ձեռքով պիտի չկարենաս վերցնել: Դիմէ անկեղծ բարեկամներուդ: Մինչեւ Մայիս շուրջ փրճակդ պիտի բարելաւուի: Օգոստոսին վիճակահանութեանէն որոշ գումար մը պիտի շահիս, որուն չնորհիւ պարտք պիտի չունենաս: Ինքնավստահութիւնդ իր բարերար դերը պիտի խաղայ այս տարուան բոլոր ամիսներուն ընթացքին: Բնակարանէդ ներս նոր փոփոխութիւններ պիտի կատարես եւ դուն քեզ նիւթապէս աւելի ապահով պիտի զգաս:
 Բախտաւոր թիւեր.- 7-14-25
 Բախտաւոր օրեր.- Չորեքշաբթի եւ Կիրակի

Կարիճ (24 Հոկտեմբեր-22 Նոյեմբեր)



Այս տարի բոլոր «կարիճ»ները շատ ներդաշնակ կեանք մը պիտի ունենան, ջերմօրէն պիտի կապուին իրարու: Անոնք պիտի պատրաստեն աղուոր ծրագիրներ: Իսկ ամուրիները՝ չնորհիւ նոր հանդիպումներու, պիտի կարենան փայլուն եւ նոր հորիզոններ ծրագրել: Այս երկու պարագաներուն ալ խօսքի, մտածումի եւ կեցուածքի հաւասարակշռութիւնը իր մեծ դերը պիտի ունենայ: Տարուան ընթացքին, քանի մը առիթներով, աննպաստ կացութիւններ պիտի խանգարեն թէ՛ քսակդ եւ թէ՛ ներքին անդորրութիւնդ: Ջգոյշ ըլլալ կը թելադրուի:
 Բախտաւոր թիւեր.- 6-9-18
 Բախտաւոր օրեր.- Երկուշաբթի եւ Շաբաթ

Աղեղնաւոր (23 Նոյեմբեր-22 Գեկտեմբեր)



Նոր գործիդ մէջ հորիզոնը պիտի պայծառանայ եւ պիտի հասնիս նպատակիդ: Պիտի առաջարկուի շատ հետաքրքրական պաշտօն մը, որ պիտի օգնէ ապագայիդ կերտումին: 2020ի չորրորդ ամսուն արդէն տնտեսական վիճակդ պիտի բարելաւուի չնորհիւ նոր կնքած համաձայնագիրին, որուն բնաւ չէիր սպասեր: Օգոստոսէն ետք երկար ճամբորդութիւն մը պիտի առաջարկուի, որուն պիտի ընկերանայ նաեւ հաճոյքը: Առիթը մի՛ փախցնել: Նորանոր հանդիպումներ նորանոր յաջողութիւններու ճամբայ կրնան բանալ:
 Բախտաւոր թիւեր.- 6-13-23
 Բախտաւոր օրեր.- Երեքշաբթի եւ Կիրակի

Այծեղջիւր (23 Գեկտեմբեր-20 Յունուար)



Շատ հաւանաբար տարուան երկրորդ ամսուն սկիզբը գեղեցիկ անակնկալներ պատահին ու քեզ մեծապէս ուրախ պահեն: Համբերատար պէտք է ըլլալ: Միւս կողմէ հեռու պէտք է մնալ ըսի-ըսուներէ եւ թոյլ տալ, որ ժամանակը կարգադրէ, լուծէ հարցերը: Տարուան կիսուն գործին վերաբերեալ ճամբորդութեամբ մը հրապարտած՝ պիտի ընդառաջես: Այս տարի ոեւէ մէկուն դրամ փոխ մի՛ տար, որովհետեւ կրնաս կորսնցնել զայն, այսինքն՝ առնողը կրնայ չվերադարձնել: Աստղեր կը թելադրեն զգուշաւորութիւն: Յաջող ծրագիրներ պիտի ունենաս:
 Բախտաւոր թիւեր.- 5-11-31
 Բախտաւոր օրեր.- Չորեքշաբթի եւ Շաբաթ

Մովանոյշ (21 Յունուար-18 Փետրուար)



Յունուարի կիսուն նոր կապեր պիտի ունենաս բարեկամական թէ՛ գործի մարզերուն մէջ: Բարեկամական այս հանդիպումները օգտակար պիտի ըլլան, նոյնիսկ գործդ փոխելու մասին պիտի մտածես: Կը թելադրուի համբերութիւն: Տարուան լաւագոյն ամիսները Սեպտեմբերէն վերջ պիտի սկսին, որոնց ընթացքին կեանքդ հիմնովին պիտի բարեփոխուի, եւ տնտեսապէս պիտի հարստանաս: Տարին կը պահանջէ կատարեալ պարկեշտութիւն եւ յարգանք:
 Բախտաւոր թիւեր.- 3-4-30
 Բախտաւոր օրեր.- Չորեքշաբթի եւ Կիրակի

Ձուկ (19 Փետրուար-20 Մարտ)



Այս տարուան բոլոր ամիսներուն պէտք է անպայմանօրէն կիրարկել համակերպումի գաղափարն ու դրութիւնը, այլապէս նորանոր դժուարութիւններ կրնան ծնիլ: Յուլիսին նոր եւ բարի անակնկալ մը քեզ դէպի արտասահման ճամբորդութեան պիտի դրկէ: Մի՛ դժգոհիր: Ամբողջ ամիսը կարելիութիւններ պիտի ստեղծուին բնակարանէն ներս կենսական նկատուած փոփոխութիւններ մտցնելու: Այս արդէն կը նշանակէ նիւթական որոշ բարելաւում: Նոր գործի մը առաջարկը չփոթի պիտի մատնէ քեզ: Յաջող տարուան ձգէ այս մէկը:
 Բախտաւոր թիւեր.- 8-12-22
 Բախտաւոր օրեր.- Երկուշաբթի եւ Ուրբաթ



Happy New Year!



SuperKingMarkets.com



ՀՄԸՄի
Արեւմտեան Միացեալ
Նահանգներու
Շրջանային Վարչութիւնը

Կը Շնորհաւորէ Համայն Հայութեան,
Շրջանի Եւ Աշխարհի Տարածքին
Գործող Բոլոր ՀՄԸՄական Քոյր-Եղբայրներուն
Նոր Տարին Եւ Ս. Ծնունդը

Մաղթելով Բոլորին
Յաջող Ու Բարեբեր Տարի Մը

Հաւատարիմ Մնալով
«Բարչրացի՛ր, Բարչրացո՛ւր» Կարգախօսին
ՀՄԸՄը Պիտի Շարունակէ Սրբազան
Իր Առաքելութիւնը,
Պատրաստելով Վաղուան Ազգանուէր Հայր